



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ա. Ա. ՄԵԼՔՈՆՅԱՆ

ԷՐԶՐՈՒՄ

ԷՐԶՐՈՒՄԻ ՆԱՀԱՆԳԻ ՀԱՅ ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ
XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԵՐԵՍՆԱՄՅԱԿԻՆ
(ՊԱՏՄԱԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ)

ՏՊԵՅԱԻ ԳԻՐՔԱՆ ԱՐԴԵԱՄԲԸ
ԱԼԵՔՍ ԵՒ ՄԱՐԻ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԱՌ Ի ՅԻՇԱՏԱԿ ՆՈՐՈԳ ՀԱՆԳՈՒՅԵԱԼ
ՄԱՐԻ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ

Խմբագիր՝ պատմական գիտությունների
դոկտոր պրոֆեսոր Ա. Ս. Համբարյան

Մեկընյան Ա. Ա.

Մ 537 Էրզրում, (Պատմաժողովրդագրական ուսումնասիրու-
թյուն): — Եր.: Հայաստան, ԳԱԱ, 1994, 180 էջ:

Աշխատությունում արխիվային նորահայտ նյութերի և հրատա-
րակված գրականության հիման վրա ներկայացվում է 19-րդ դարի
առաջին երեսնամյակին (1801—1830 թթ.) Արևմտյան Հայաստանի
զգալի մասը կազմող Էրզրումի նահանգի վարչաձևակապակցի պատ-
կերը՝ վարչատարածքային բաժանումը, հայ ազգաբնակչության թվա-
քանակը և տեղաբաշխումը ըստ գավառների ու բնակավայրերի, հայ-
կական բնակավայրերի տեղագրությունը, Էթնոժողովրդագրական
գործընթացներն ու տեղաշարժերը, դրանց սոցիալ-քաղաքական նա-
խադրյալները:

Գիրքը նախատեսված է գիտական և ընթերցող լայն հասարակա-
յան համար: Այն հատկապես մեծ հետաքրքրություն կներկայաց-
նի Ջավախքի, Ախալցխայի, Շիրակի և Սևանի ավազանի հայության
համար, որոնց նախնիների զգալի մասը գաղթել է Էրզրումի նա-
հանգից 1829—1830 թթ.:

Աշխատության հավելվածում տրված են Էրզրումի նահանգի բո-
լոր գավառների քարտեզները և հայկական տեղանունների ցանկը:

Մ 0505000000
701 (ՕՏ) — 93 Զայտարարված

ԳՄԴ 63. 5 (22)

Վերջին տարիներին նկատելիորեն աճել է հետաքրքրու-
թյունը Էթնոժողովրդագրական պրոբլեմների նկատմամբ: Այն
պայմանավորված է արդի էտապում ժողովրդագրական նոր
գործընթացների հանդես գալով: Սակայն ժողովրդագրական
կարևորագույն պրոբլեմների ուսումնասիրությամբ առաջին
հերթին զբաղվող պատմական ժողովրդագրությունը՝ դեմոգրա-
ֆիան, շարունակում է մնալ պատմական գիտության առավել
թույլ ուսումնասիրված բնագավառներից մեկը:

Ավելին՝ ժողովրդագրական հարցադրումների քննությունը
միանգամայն նոր բնագավառ է հայագիտության մեջ: Առ այսօր
հրապարակի վրա չկան լուրջ աշխատություններ, որոնք ներ-
կայացնեն Հայաստանի թեկուզև որևէ պատմաազգագրական
շրջանի հստակ ժողովրդագրական նկարագիրը: Հատկապես
թույլ է հետազոտված Արևմտյան Հայաստանը, որի ժողովրդա-
գրության մի շարք պրոբլեմներ ներկայումս ձեռք են բերում
նաև քաղաքական նշանակություն՝ դառնալով հայ ժողովրդի
պատմության ուսումնասիրության անհետաձգելի խնդիրներ:
Նրանց հետազոտությունը հույժ հրատապ է դարձրել այն հան-
գամանքը, որ վերջին երեք-չորս տասնամյակներում թուրքա-
կան պատմագրությունը հայ ժողովրդի պատմության մի շարք
հանգուցային հարցեր համառորեն նենգափոխում է՝ կարևոր
տեղ հատկացնելով ժողովրդագրական պրոբլեմներին, որոնք
ևս, որպես կանոն, մեկնաբանում է ազգայնական և պանթուր-
քիստական դիրքերից: Բացի այն կեղծ պնդումից, ըստ որի Հայ-
կական լեռնաշխարհը չի հանդիսանում հայերի բնօրրանը և
հայերը եկվորներ են, իսկ թուրքերը՝ տեղաբնիկներ, թուրք
պատմաբաններն այն միտքն են զարգացնում, թե պատմական
բոլոր ժամանակաշրջաններում Արևմտյան Հայաստանում կամ,
ինչպես նրանք են գրում՝ Արևելյան Անատոլիայում «... մի վի-

լայթթ, մի սանջակ, Եուլիսկ մի Եափիե չկա, ուր հայերը մեծամասնություն կազմեին»¹: Անշուշտ, այդ կեղծիքի Եպատակը 1915 թ. հայոց Մեծ եղեռնի և իր մայր հայրենիքի՝ Արևմտյան Հայաստանի Եկատմամբ սփյուռքահայության իրավունքի ժըխտումն է:

Ներկա ուսումնասիրությունը Եկիրված է Արևմտյան Հայաստանի զգալի մասը կազմող Էրզրումի Եահանգի (Էյալթթ) հայ ազգաբնակչության տեղաբաշխման, Էթնիկական տեղաշարժերի, դրանց պատճառների և մի շարք այլ պրոբլեմներին: Ժամանակագրական առումով այն ընդգրկում է հայ ժողովրդի պատմության Եոր ժամանակաշրջանի առաջին երեք տասնամյակները՝ (1801—1830 թթ.), մի ժամանակահատված, որն առանձնանում է հայ ազգաբնակչության լուրջ տեղաշարժերով և Էթնոժողովրդագրական բուռն գործընթացներով, որոնք մեծապես պայմանավորված էին ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական շարժառիթներով՝ առաջին հերթին ուսական կայսրության արևելյան քաղաքականության ակտիվացմամբ և արևմտահայերի ուսական կողմնորոշման ուժեղացմամբ: Զանգի որ ուսումնասիրվող Եահանգը զբաղեցնում է ընդարձակ տարածություն և հետազոտվող խնդիրները բազմազան են ու բազմաբնույթ, աշխատությունում քննության են առնվում միայն հայ ազգաբնակչության հետ առնչվող հարցերը, իսկ երկրամասում ապրող մյուս ժողովուրդների ու Էթնիկական խմբերի մասին խոսվում է այնքանով, որքանով դրանք առնչվում են հետազոտվող թեմային:

Ինչպես Էրզրումի, այնպես էլ ամբողջ Արևմտյան Հայաստանի ժողովրդագրական պրոբլեմների քննության տեսանկյունից խիստ կարևոր է երկրամասի վարչական բաժանման ուսումնասիրությունը: Պայմանավորված մահմեդական ֆեոդա-

լական դասակարգի հողային և ազգային շահերով, Եվանված երկրամասերը պարբերաբար ենթարկվում էին վերաբաժանման, մի սկզբունք, որը հետզհետե դառնում էր օսմանյան վարչական քաղաքականության գլխավոր ուղղությունը: Առանց այն էլ աղքատիկ վիճակագրական տեղեկությունները, որոնց հիման վրա դժվար է վեր հանել որևէ վարչական միավորի Էթնոժողովրդագրական պատկերը, անկալուն վարչական բաժանման պայմաններում, հաճախ կորցնում են իրենց «իրավասության» սահմանը: Այսինքն, պատմական տարբեր ժամանակաշրջաններում միևնույն գավառը իր մեջ միավորել է տարբեր շրջաններ, ուստի Երան վերաբերող վիճակագրական Ելույթերը ընդհանրապես չի կարելի օգտագործել միանշանակ ձևով՝ առանց հաշվի առնելու ժամանակը և վարչամիավորի զբաղեցրած տարածքը: Բնակչության մասին եղած թվական տվյալների գիտական կիրառումը հնարավոր է դառնում միայն կոնկրետ վարչամիավորի սահմանների, Երանում եղած բնակավայրերի թվի, տեղի և այլ հանգամանքների ճշտումից հետո: Ուստի, աշխատությունում ուսումնասիրության առարկա է դարձել Եան օսմանյան կառավարության վարչական քաղաքականությունը Արևմտյան Հայաստանում, գլխավորապես՝ Էրզրումի Եահանգում:

Արևմտյան Հայաստանի ժողովրդագրության խնդիրների համակարգում ոչ պակաս կարևոր տեղ է զբաղեցնում տարբեր ժողովուրդների ու Էթնիկական խմբերի վիճակագրման ճշգրիտ եղանակների մշակման հարցը: Երկրամասին և խնդրի առանձնահատկություններին սակավատեղյակ հեղինակները հաճախ Էթնիկական բոլոր տարրերին հաշվառել են միահավասար, հաշվի չառնելով Երանց ընտանիքների անդամների միջին մեծության, բնակավայրերում ծխերի առկայության և այլ հարցերը: Դա էլ հանգեցրել է լուրջ սխալների:

Նետազոտվող թեմայի բազմաթիվ պրոբլեմների շարքում հատուկ կարևորություն է Եերկայացնում Էրզրումի Եահանգի խոշորագույն բնակավայրերի ուսումնասիրությունը, Երանց տեղագրությունը, բնակչության ազգային կազմի տոկոսային հարաբերությունը և այլն: Սակայն այդ խնդիրների լուծումը կապված է մի շարք դժվարությունների հետ: Հատկապես անլուծելի պրոբլեմ է թվում որևէ կոնկրետ գավառում ամփոփ վիճա-

¹ Uras Esat, Tarihte Ermeniler ve Ermeni Meselesi, Ankara, 1950, էջ 3, թուրքական կեղծարարության քննադատությունը տե՛ս Մ. Ջուլայյան, Պատմության Եենգափոխման մի արտաոոց օրինակ, ՊԲՀ, 1966, № 1, էջ 271—279. Սարգսյան Ե., Սահական Ռ., Հայ ժողովրդի Եոր շրջանի պատմության Եենգափոխումը թուրք պատմագրության մեջ, Երևան, 1963, Սարկիսով Ե. Դ., Սահրատյան Ա. Խ., Պատմության հակագիտական լուսաբանության մի քանի փաստերի մասին, Արևելագիտական ժողովածու, Երևան, 1960, № 1, էջ 379—400 և այլն:

կազրույթան կազմումը՝ պայմանավորված համապատասխան նյութերի բացակայությամբ, մասնավորապես 1801—1827 թթ. վերաբերյալ: Չեռագիր և տպագիր աղբյուրներում կան աղբա-տիկ տեղեկություններ միայն մի խումբ բնակավայրերի մասին, այն էլ հաճախ կրոնական պատկանելության վերաբերյալ թու-ցիկ հիշատակություններով, տեղեկություններ, որոնք ևս խիստ ճշգրտման կարիք են զգում: Միմիայն ճշտելով տարածքում ըն-կած կոնկրետ վարչամիավորի բնակավայրը, թիվը, բնակչու-թյան ազգային կազմը և հաշվարկելով յուրաքանչյուր գյուղի կամ քաղաքի ընտանիքների, նրանց անդամների միջին մեծու-թյունը, հնարավոր է դառնում որոշել ազգաբնակչության մո-տավոր թվաքանակը: Անշուշտ, հիշյալ մեթոդը, որը, բնակա-նորեն չի կարող զերծ չլինել որոշ թերություններից, դառ-նում է գիտական հաշվառման (մանավանդ կոնկրետ վարչա-կան միավորի սահմաններում) ամենահավաստի և եզակի եղա-նակներից մեկը:

Արևմտյան Հայաստանի, հատկապես Էրզրումի նահանգի պատմաաշխարհագրական, ժողովրդագրական պրոբլեմների հիրավի առաջին ուսումնասիրողը եղել է 17-րդ դարի հայ հե-ղինակ Հակոբ Կարնեցին, որի «Շինված Կարնո քաղաքին...»¹ ժամանակագրությունն ունի կարևոր աղբյուրագիտական նշա-նակություն: Այն հնարավորություն է տալիս հաստատապես պնդելու, որ 17-րդ դարի կեսերին, այսինքն Արևմտյան Հայաս-տանի թուրքական նվաճումից մոտ մեկուկես-երկու դար անց, Էրզրումի նահանգը և նրա հարակից գավառները գերազանցա-պես բնակեցված էին հայերով, իսկ թուրքալեզու ժողովուրդ-ների տեսակարար կշիռը աննշան էր:

Դժբախտաբար, ինչպես ամբողջ Արևմտյան Հայաստանի, այնպես էլ Էրզրումի նահանգի պատմական աշխարհագրության և ժողովրդագրության վերաբերյալ վերոհիշյալ ժամանակագրու-թյան նման արժեքավոր գործեր մեզ գրեթե չեն հասել:

Պահպանված տեղագրական ոչ ամփոփ նյութերի մեջ առանձնանում են միայն 17-րդ դարի թուրք հեղինակներ Զյա-

¹ Հակոբ Կարնեցի, Շինված Կարնո քաղաքին... «Մանր ժամանակագրու-թյուններ. 13—18-րդ դդ.»։ Կազմեց Վ. Հակոբյան, հ. 2, Երևան, 1956, էջ 548—577:

թիբ Չելեբիի¹, Էվլիյա Չելեբիի² աշխատությունները, օտար-երկրացի մի քանի ճանապարհորդների ուղեգրությունները³, Սիմեոն Երևանցու «Ջամբո» աշխատությունը⁴ և այլն: 16-րդ դարի առաջին տասնամյակների Բաբերդի սանջակի (գավա-ռի) ազգաբնակչության էթնոկրոնական պատկերը ներկայաց-նելու տեսանկյունից բացառիկ նշանակություն ունեն թուրք պատմաբան Միրոզլուի հրատարակած արխիվային նյութերը⁵, որոնք ևս վկայում են այդ ժամանակաշրջանում հիշյալ գավա-ռում մահմեդական տարրի համեմատությամբ քրիստոնյա ժո-ղովուրդների, առաջին հերթին հայերի, բացարձակ մեծամաս-նություն կազմելու մասին:

Ժողովրդագրական բնույթի լայն հարցադրումներով 19-րդ դարի սկզբին հանդես եկավ Վենետիկի Սխիթարյան միաբա-նության անդամ, անվանի աշխարհագրագետ ու պատմաբան Ղուկաս Ինճիճյանը: 1806 թ. լույս տեսավ նրա «Աշխարհագրու-թյունը», որի առաջին հատորը նվիրված էր Հայաստանին⁶: Այն մեծ նշանակություն ունեցավ Արևմտյան Հայաստանի նահանգ-ների ու գավառների բազմակողմանի ուսումնասիրության գոր-ծում: Հիմնվելով հարուստ արխիվային և տպագիր նյութերի վրա՝ Ղ. Ինճիճյանը մանրամասն ու եզակի տեղեկություններ է հաղորդում Հայաստանի վարչատարածքային բաժանման, տըն-տեսության, բնակչության տեղաբաշխման, տեղաշարժերի, ժա-մանակի ուշագրավ քաղաքական անցքերի մասին:

Ծնորհիվ վերոհիշյալ հեղինակների, հնարավոր է դառնում

¹ Տե՛ս Զյաթիբ Չելեբի, Ջիհան Ելումա, «Թուրքական աղբյուրները Հա-յաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին» (այսու-հետև՝ Թուրքական աղբյուրները), կազմեց Ա. Խ. Սաֆրաստյան, հ. Բ. Ե. 1964, էջ 13—66:

² Տե՛ս Էվլիյա Չելեբի, Թուրքական աղբյուրներ, թարգմանությունը, առա-ջաբանը և ծանոթագրությունները Ա. Խ. Սաֆրաստյանի, հ. Գ. Երևան, 1967:

³ Տե՛ս Tavernier J. B., Les six voyages de Jean Babbiste Tavernier en Perse, et aux Indes, Paris, 1679, Tournesfort Pitton, Relation d'un voyage au Levant, v. I—III, Lyon, 1717.

⁴ Տե՛ս Սիմեոն Երևանցի, Ջամբո, Վաղարշապատ, 1873, էջ 46—47:

⁵ Տե՛ս Miroglu I., XVI. Yuzyilda Bayburt Sancagi, Istanbul, 1975.

⁶ Տե՛ս Ինճիճյան Ղ., Աշխարհագրություն չորից մասանց աշխարհի, հ. Ա., մասն Ա, Վենետիկ, 1806:

լուսաբանել էթնիկական այն գործընթացները, որոնք տեղի են ունեցել Արևմտյան Հայաստանում 16-րդ դարից մինչև 19-րդ դարի սկիզբն ընկած ժամանակաշրջանում:

Ինճինյանի «Աշխարհագրության» օրինակով 19-րդ դարի երկրորդ կեսին ստեղծվեցին անվանի հայագետ Ղևոնդ Ալիշանի մի շարք աշխատություններ, որոնցից խնդրո առարկա թեմայի ուսումնասիրության տեսանկյունից առանձնանում են «Տեղագիր Հայոց Մեծաց» (1853 թ.) և «Այրարատ» (1890 թ.) մենագրությունները: Բազմաբնույթ նյութի օգտագործման հետ, հեղինակը փորձում է վեր հանել Արևմտյան Հայաստանի վարչաժողովրդագրական պատկերը և ներկայացնել թուրքական տիրապետության ժամանակաշրջանում հայկական գավառների աստիճանական հայաթափման միտումները:

19-րդ դարի վերջին տասնամյակներին և 20-րդ դարում ամբողջ Արևմտյան Հայաստանի ընդհանուր վարչաէթնիկական և պատմաաշխարհագրական խնդիրների վերաբերյալ գրված գործերից բացի երևան են գալիս առանձին պատմաազգագրական շրջաններին նվիրված աշխատություններ¹: Դրանցից մեզ համար կարևոր են այն երկերը, որոնք լույս են տեսել դարավերջին և 20-րդ դարի սկզբներին և ունեն աղբյուրագիտական նշանակություն՝ շրջանառություն են հանում որոշակի ռեգիոնի վերաբերյալ արժեքավոր, այդ թվում հայկական բնակավայրերի ազգաբնակչության թվաքանակի վերաբերյալ տեղեկություն-

¹ Տե՛ս Նաթանյան Պ., Արտուր Հայաստանի կամ տեղագիր Բալուա, Զարբերու, Չարսանակի, Ճապաղջուրի և Երզնկայու, Կ. Պոլիս, 1883, Հայկունի Ս., Բագրևանդ ջրաբաշխ գավառ, մասն Ա. Էջմիածին, 1894, Ամատյան Ս., Եկեղյաց գավառ, Արևելյան մամուլ, Ջմյունհիա, 1884 փետրվար—1890 մարտ, Անդրանիկ, Տերսիմ. ճանապարհորդություն և տեղագրություն, Թիֆլիս, 1900, Սմբատյանց Մ., Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գավառի..., Վաղարշապատ, 1895, Աղեքսանդրյան Ա., Պատմություն ականավոր քաղաքին Սեբաստիոն և սահմանաց նորա..., Վենետիկ, 1911, Քոսյան Հ., Բարձր Հայք, 6. Ա—Բ, Վիեննա, 1925—1926, Ատրպետ, Ճորոխի ավազանը, Վիեննա, 1929, Մելիքյան Ե., Վիճակագիր Խնուս (Հարք) գավառի..., Նյու Յորք, 1943, Սյուրմենյան Գ., Երզնկա, Կահիրե, 1947, Արսլանյան Մ., Բաբերդ և շրջակայքը, Փարիզ, 1954, Չարբզ Դ., Հուշամատյան Բարձր Հայքի կամ Կարինապատում, Բեյրութ, 1957, Տաշյան Հ., Տայք, դրացիք և Խոտորջուր, 6. Ա., Վիեննա, 1973, Հակոբյան Գ. Ա., Ներքին Բասենի ազգագրությունը և բանահյուսությունը, Երևան, 1974 և այլն:

ներ: Դրանց մեծ մասի վկայությունները թեև արտացոլում են մի փոքր ավելի ուշ ժամանակաշրջանի իրավիճակը, սակայն հույժ կարևոր են այն պատճառով, որ որոշակի վարչամիավորի կամ պատմաաշխարհագրական մարզի մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի բնակչության վերաբերյալ եզակի հաղորդումներով, երբեմն էլ ուշագրավ վիճակագրություններով, հնարավորություն են տալիս կիրառելու հետադարձ ուսումնասիրություն և լրացնելու ու ամբողջացնելու կոնկրետ վարչամիավորի ամբողջական էթնիկական դիմագիծը: Ներքոհիշյալ աշխատությունների մի մասն էլ, որ լույս է տեսել վերջին չորսհինգ տասնամյակներից, հիմնականում պատկանում է սփյուռքահայ հեղինակների գրչին, կրում է կոմպիլյացիոն բնույթ կամ հուշապատումներ է և վերաբերում է 20-րդ դարի առաջին տասնամյակներին, սփյուռքահայ գաղթօջախներում Արևմտյան Հայաստանի առանձին պատմաաշխարհագրական շրջաններից գաղթած հայ համայնքների կյանքին: Ուստի դրանք մեզ հետաքրքրում են միայն հայկական բնակավայրերի տեղագրության ճշտման և այլ տեսանկյուններից:

Ուսումնասիրվող թեմայի համար կարևոր են հայ հեղինակներ Ս. Կարնեցու, Ն. Սարգիսյանի, Գ. Սրվանձտյանցի, Մ. Միրախորյանի գործերը¹: Քաջատեղյակ լինելով երկրամասին և հաճախ օգտվելով տեղի հայ առաջնորդարանների գյուղացուցակներից և այլ աղբյուրներից, այդ ուղեգրություններում հեղինակները զետեղել են հավաստի ու արժեքավոր տեղեկություններ: Հատկանշական է, որ միաժամանակ նրանցից ոմանք (Մ. Միրախորյան և այլոք) դարասկզբի և ավելի ուշ ժամանակաշրջանի հայկական գավառների բնակչության թվաքանակի մասին զուգահեռ տվյալներ բերելով, փորձում են ուրվագծել

¹ Տե՛ս Մերովբե Կարնեցի, Ուղեգրություն Բաղդատից Էջմիածին 1812 թ., աշխատասիրությամբ Հ. Ն. Խաչատրյանի և Լ. Գ. Խաչերյանի, Երևան, 1968, Սարգիսյան Ն., Տեղագրությունը ի Փոքր և ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864: Գ. Արվանձտյանցն ունի վիճակագրական հարուստ նյութեր պարունակող մի շարք աշխատություններ, որոնք հիմնականում զետեղված են նրա երկերի երկհատորում, տե՛ս Արվանձտյանց Գ., Երկեր, 6. 1—2, Երևան, 1978—1982: Մ. Միրախորյանի ուղեգրությունները տե՛ս Միրախորյան Մ., Նկարագրական ուղևորություն ի հայաբնակ գավառս Արևելյան Տաճկաստանի, մարտ Ա—Գ, Կ. Պոլիս, 1884—1885:

Արևմտյան Հայաստանի ազգաբնակչության տեղաշարժերի դի-
նամիկան, որը մի շարք դեպքերում բնորոշվել է հայկական
տարրի աստիճանական նվազումով և թյուրքական ու քրդական
ծագում ունեցող ժողովուրդների աճով: Այդ փաստը աչքի է
գարնում նաև, երբ համեմատականներ ենք անցկացնում 19-րդ
դարի առաջին տասնամյակների աղբյուրների և 70-ական թվա-
կանների վերջի ու 20-րդ դարի սկզբների տարբեր հեղինակ-
ների¹ կազմած բնակավայրերի ցուցակների միջև:

Հայաստանի էթնովիճակագրության շուրջ ստվարածավալ
գրականություն է ստեղծվել 19-րդ դարի հայ մամուլում: Մեր
օգտագործած տասնյակ պարբերականներից հիշատակության
արժանի են «Փորձ», «Արձագանք» (Թիֆլիս), «Արարատ»
(Վաղարշապատ) և «Արևելյան մամուլ» (Ջմյուռնիա) հան-
դեսները, որոնցում կան բազմաթիվ տեղեկություններ արևմտա-
հայ տարբեր գավառների վիճակագրության մասին: «Արարատ»
ամսագրում արժեքավոր հոդվածաշար է հրատարակել Պ. Մու-
րառյանը², որում հազվագյուտ հաղորդումներ կան առ
այսօր պատմագրության մեջ ընդհանրապես չնշտված
19-րդ դարի առաջին քառորդին էրզրումի նահանգի արևել-
յան գավառներում քրդական ասպատակությունների և հատկա-
պես 1820—1823 թթ. պարսկա-թուրքական պատերազմի հե-
տևանքով ստեղծված սոցիալ-քաղաքական իրավիճակի, դրա
հետևանքով տեղի ունեցած էթնիկական խռչոր տեղաշարժե-
րի, դեպի Իրան բռնագաղթեցնելու պարսից զորքերի փորձե-
րի դեմ հայ բնակչության հերոսական պայքարի մասին:

18-րդ դարի վերջերից Արևելքի Ակատմամբ Ռուսական կայս-
րության հետաքրքրության ուժեղացման հետ մեկտեղ սկսվում

¹ Տե՛ս **Ерицов А.**, Список населенных пунктов бывшей Эрзерумской области, находившейся во временном управлении России, — Известия Кавказского отдела императорского русского географического общества (այսուհետև՝ Известия Кавказского отдела), т. VIII, вып. 1, приложение, Тифлис, 1983, с. 1—113, Ա—Դո, Վանհ, Բիթլիսի և էրզրումի վիլայեթները, Երևան, 1912: Էփրիկյան Ս., Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, 6. Ա—Բ, Վենետիկ 1902—1907:

² Տե՛ս Մուրառյանց Պ. Հ., Ակարագիր ս. Հովհաննու վանուց և վիճակի նորին Բագրևանդա, Արարատ, Վաղարշապատ, 31 հունվար 1889, էջ 34—41, 28 փետրվար, էջ 108—116, 31 մարտ, էջ 139—153, 30 ապրիլ, էջ 194—212, 31 մայիս, էջ 263—278, 30 հունիս, էջ 308—321:

է ռուս ուղեգիրների ու հետազոտողների կողմից մերձավոր-
արևելյան մի շարք երկրների, այդ թվում Օսմանյան Թուրքիայի
գիտական ուսումնասիրությունը¹: Հատկապես 1828—1829 թթ.
ռուս-թուրքական պատերազմի ընթացքում, երբ ռուսական
զորքերը բավականաչափ խորացան Թուրքիայի եվրոպական և
կովկասյան ճակատներում, մի խումբ ռուս հետազոտողներ կա-
րողացան մեծ քանակությամբ բազմաբնույթ նյութ հավաքել
սահմանային վիլայեթների մասին: Արևմտյան Հայաստանի արե-
վելյան նահանգներում հատկապես արդյունավետ եղավ գեներա-
լալ Ի. Պասկևիչի հանձնարարությամբ ռուսական բանակի շտա-
բի գինձորականներից կազմված հատուկ հանձնախմբի աշխա-
տանքը: Կապիտան Կովալևսկին հետազոտեց Բայազետի, Իս-
կրիցկին՝ էրզրումի և Ախալցխայի վարչամիավորները: Հավաք-
ված նյութերի բազմաթիվ տարբերակները համեմատելուց և
ճշտելուց հետո մի քանի անգամ հրատարակվեցին Ն. Ն. Ուշա-
կովի² կողմից: Այս ուշագրավ աշխատությունում հանգամանո-
րեն նկարագրվում են յուրաքանչյուր նահանգի աշխարհագրա-
կան պայմանները, վարչական կառուցվածքը, բնակչությունը,
սոցիալ-տնտեսական կյանքի առանձնահատկությունները: Սա-
կայն բազմաթիվ արժանիքների հետ մեկտեղ, նրանում շատ
դեպքերում աչքաթող են արված 1827—1830 թվականներին
քաղաքական հանգամանքների բերումով տեղի ունեցած էթնի-
կական տեղաշարժերը, երբ կարճատև ժամանակաշրջանում
երկրամասում մի քանի անգամ փոխվեց հայ և մահմեդական
ժողովուրդների միջև տոկոսային-թվային հարաբերակցությու-
նը: Մինչդեռ, Ուշակովի աշխատությունում 1827—1830 թթ.
միջև ընկած ժողովրդագրության վերաբերյալ թվական գրեթե
բոլոր տվյալները ներկայացված են իբրև նախապատերազմյան
(այսինքն՝ 1827 թ.) վիճակն արտացոլող տեղեկություններ:

1829 թ.՝ ռուս-թուրքական պատերազմի շրջանում Արև-
մրտյան Հայաստանում եղած ռուս հեղինակներից էին Ա. Ս.

¹ Տե՛ս **Данциг Б. М.**, Русские путешественники на Ближнем Востоке, М., 1965, с. 4, 45.

² Մենք օգտագործել ենք Վարշավայում 1843 թվականի հաջողված հրա-
տարակությունը: Տե՛ս «История военных действий в Азиатской Тур-
ции в 1828 и 1829 годах», ч. 1, Варшава, 1843.

Պուշկինը¹, Ա. Օ. Դյուգամելը² և ուրիշներ: 19-րդ դարի 30-ական թթ. կեսերից Օսմանյան Թուրքիայում իր գիտական ուսումնասիրությունն սկսեց ռուս անվանի ճանապարհորդ և հետազոտող Պ. Ա. Չիխաչևը, որի «Նամակներ Թուրքիայի մասին»³ գրքում տրվում է հետամնաց Ֆեոդալական Թուրքիայի գիտական խոր վերլուծությունը, բացահայտվում քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ օսմանյան կառավարության վարչաէթնիկական քաղաքականության էությունը:

19-րդ դարի 2-րդ կեսին Արևմտյան Հայաստանի ռուս ուսումնասիրողների թվում էին Ա. Մ. Կոլյուբակինը, Ա. Ի. Գիպպիուսը, Վ. Պոտտոն, Ա. Ի. Ավերյանովը, Գ. Ի. Ռադդեն, Մ. Լիխտսինը, Յա. Դ. Մալաման և ուրիշներ, որոնց մի շարք աշխատություններ⁴, իրենց թերություններով հանդերձ, հարուստ աղբյուրագիտական նյութ են պարունակում ռուսումնասիրվող հարցերի շուրջ:

19-րդ դարի սկզբին Հայաստանի նկատմամբ զգալիորեն աճում է Արևմուտքի երկրների կառավարող շրջանների հետաքրքրությունը: Աճահագտացած Ռուսաստանի արևելյան քաղաքականության ակտիվացմամբ, Անգլիայից, Ֆրանսիայից, Պրուսիայից, մի փոքր ավելի ուշ նաև՝ Ամերիկայից Հայաստան ուղարկվեցին մի շարք դիվանագետներ, զինվորականներ, կրոնական քարոզիչներ: Իրենց երկրների նվաճողական պլաններն իրագործելու միտումով, նրանք ձեռնամուխ եղան Հայաստանի հետազոտությանը և զգալի քանակությամբ նյութ հավաքեցին

նրա պատմության, տնտեսության, աշխարհագրության մասին, որի մի մասը հրատարակվեց ուղեգրությունների, զեկուցագրերի կամ հուշերի ձևով: 1801—1820 թթ. ճանապարհորդած այդ հեղինակների մի մասի գործերը թարգմանվել ու հրատարակվել են Հովհաննես Հակոբյանի կողմից¹:

Մտահոգված Հայաստանում հատկապես կաթոլիկ եկեղեցու որոշ հաջողություններից, իրենց քարոզչական գործունեությունն են սկսում ամերիկացի քարոզիչներ Է. Սմիթը և Հ. Գ. Օ. Դուայթը²: Նրանք ճանապարհորդել են 1830—1831 թթ., այսինքն՝ արևմտահայերի զանգվածային արտագաղթի նախօրյակին, արտագաղթի օրերին և դրանից հետո ընկած ժամանակաշրջանում, ուստի բնակչության մասին նրանց հաղորդած տեղեկությունները հնարավորություն են տալիս պատկերացում կազմելու այդ ընթացքում Էրզրումի նահանգի մի շարք գավառներում տեղի ունեցած էթնիկական տեղաշարժերի մասին: Նույն դեպքերի վերաբերյալ Ուշակովի վերոհիշյալ վիճակագրության վրա հիմնված թվական տվյալներ է պարունակում Ֆ. Ֆոնտոնի աշխատությունը³: Այս հեղինակը եվրոպացի այն եզակի ուսումնասիրողներից է, որ 1820—1829 թթ. Արևմտյան Հայաստանում հայ բնակչության շեշտակի նվազման պատճառը իրավամբ համարում է 1820—1823 թթ. պարսկա-թուրքական պատերազմի ժամանակ պարսից արքունիքի կազմակերպած բռնագաղթն ու սկսված ժանտախտը:

Բացի ուղեգրություններից, նշված հեղինակները հաճախ

¹ St'u Пушкин А. С. Путешествие в Арзрум во время похода 1829 года. // Полн. собр. соч., Издание 4-ое, т. VI, Л., 1978, с. 454—484.

² St'u Автобиография Александра Осиповича Дюгамеля, М., 1885.

³ St'u Чихачев П. А., Письма о Турции, М., 1960.

⁴ St'u Колюбакин А. М., Материалы для военно-статистического обозрения Азиатской Турции, т. I, ч. II, т. II, ч. II, Тифлис, 1888—1890, Гиппиус А. И., Статистические таблицы вилайетов Турецкой империи, ближайших к Закавказью, Тифлис, 1889. Потто В., Кавказская война в отдельных очерках, эпизодах, легендах и биографиях, вып. 4-ый, т. 4-ый, Тифлис, 1888. Аверьянов П. И., Курды в войнах России с Персией и Турцией в течение XIX столетия, Тифлис, 1900. Раdde Г. Равнина верховьев Евфрата. // Известия Кавказского отдела, т. V, № 1, Тифлис, 1877. Лихутин М., Русские в Азиатской Турции в 1854 и 1855 годах, СПб., 1863. Малама Я. Д., Описание Эрзерумского вилайета, СПб., 1874.

¹ St'u Հակոբյան Հ., Ուղեգրություններ: Աղբյուրներ Հայաստանի և Անդրկովկասի պատմության, հ. Ջ (1800—1820), Երևան, 1934: Հաշվի առնելով Պ. ժոբերի և Ռ. Ջեր Փորթերի ուղեգրությունների բնագրերի և Հովհ. Հակոբյանի թարգմանության որոշ տարբերությունները, օգտագործել ենք նրանց աշխատությունների հետևյալ հրատարակությունները, Jaubert P. Am., Voyage en Arménie et, en Perse. Précède d'une notice sur l'auteur, par M. Sodillot, membre de la Société Asiatique, Paris, 1859, Porter R. K., Travels in Georgia, Persia, Armenia, Ancient Babelonia, etc. During the Years 1817, 1818, 1819, and 1820, vol. II.

² St'u Smith E., Researches of the rev. E. Smith and rev. H. G. O. Dwight in Armenia; including a Journey through Asia Minor, and into Georgia and Persia..., vol. I, III, Boston, 1833.

³ St'u Fonton F., La Russie dans l'Asie Mineure ou Campagnes du Maréchal Paskévitch en 1828 et 1829, Paris, 1840.

անդրադառնում են հայ ժողովրդի պատմության, երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակի, ազգային ճնշումների, հարկային քաղաքականության հարցերին, փորձում են տալ ինքնուրույն, երբեմն էլ՝ գիտական մեկնաբանություններ: Այդ տեսակետից հատկանշական է գերմանացի պրոֆեսոր Կ. Կոխի աշխատությունը¹: Ի տարբերություն մյուս ուղեգիրների, որոնք, որպես կանոն, անցել են Հայաստանի քաղաքները կապող գլխավոր ճանապարհներով, նա ընտրել է նաև դժվարանցանելի Բաբերդով, Թորթումով տանող երթուղիները և եզակի տեղեկություններ թողել այդ գավառներում արևմտահայերի 1829—1830 թթ. գաղթից հետո ստեղծված իրավիճակի մասին:

Եվրոպացի մի շարք այլ հեղինակներից² բացի, օգտագործել ենք նաև այլազգի ուղեգիր-ուսումնասիրողների գործեր³, որոնք թեև Արևմտյան Հայաստանի որևէ վարչամիավորի մասին լիակատար և օբյեկտիվ պատկերացում տալուց հեռու են, այնուամենայնիվ օգնում են լուսաբանելու 19-րդ դարի առաջին երեսնամյակի Էրզրումի նահանգի վարչաէթնիկական պատմության մի շարք մուտք էջեր:

Հայ պատմագրությունը որոշ չափով անդրադարձել է Արևմտյան Հայաստանի Էթնովիճակագրության պրոբլեմներին: Սակայն ասպարեզում եղած գրականության մեջ բացակայում է Էթնոժողովրդագրական պրոցեսների գիտական խոր վերլուծությունը, հատկապես ազգաբնակչության տեղաշարժերի, սո-

ցիալ-տնտեսական և քաղաքական նախադրյալների, օսմանյան կառավարության վարչաժողովրդագրական քաղաքականության էության ճիշտ ըմբռնումը, զգացվում է աղբյուրագիտական բազայի, մասնավորապես արխիվային նյութերի պակասը, այն սեփական զննումներով կամ լսածով փոխարինելու միտումը և այլն:

Արևմտյան Հայաստանի 19-րդ դարի պատմության խոր գիտական ուսումնասիրությունը սկսվում է 1950—80-ական թվականներից: Հրատարակվեցին Մ. Ներսիսյանի, Ա. Համբարյանի, Ե. Սարգսյանի, Հ. Ղազարյանի, Մ. Բոջոյանի, Ա. Ներսիսյանի, Թ. Հակոբյանի¹ և այլոց աշխատությունները, որոնցում քննության են առնված Արևմտյան Հայաստանի 19-րդ դարի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմության շատ հարցեր: Սակայն այս հեղինակները իրենց քննարկման առարկա բազմազան ու բազմաբնույթ նյութի մեջ, խնդիր չեն դրել լուսաբանելու նաև Արևմտյան Հայաստանի, առավել ևս նրա կոնկրետ վարչամիավորների էթնոժողովրդագրական առանձին ուսումնասիրություն պահանջող հարցերը: Այդ պրոբլեմներին նրանք անդրադարձել են հիմնականում 19-րդ դարի երկրորդ կեսի օրինակով՝ օգտվելով հրապարակում եղած վիճակագրական տպագիր գրականությունից ու արխիվային նյութերից և

¹ S. Koch K., Wanderungen im Oriente während der Jahre 1843 und 1844. II. Reise im pontischen Gebirge und Türkisch-Armenien, Weimar, 1846.

² St' u. Abix F., Геология Армянского нагорья. Западная часть, Пятигорск, 1889. Kinneir J. M., Journey through Asia Minor, Armenia and Koordistan, London, 1818. Curzon R., Armenia: A Year at Erzerum, and on the Frontiers of Russia, Turkey and Persia, London, 1854, Cuinet Yifal, La Turquie d'Asie, Paris, 1892, Убичини М. А. Изображение современного состояния Турции в географическом, статистическом, религиозном и военном отношениях. Пер. с франц., СПб., 1854. Линч Х. Ф. Б., Армения, Путевые очерки и этюды, т. П., Тифлис, 1910.

³ St' u. Zlaty, Թարիխի Ջևեթ, թուրքական աղբյուրները, հ. Ա., էջ 237—314: Գեորգի Ավալիշվիլի, ճանապարհորդություն դեպի Երուսաղեմ (1820), Կրացական աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, թարգմ. Լ. Մելիքսեթ-Քեկ, հ. Գ., Երևան, 1955, էջ 217—219 և այլն:

¹ St' u. Ներսիսյան Մ. Գ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850—70 թթ., Ե., 1955, Համբարյան Ա. Ս., Ազրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում (1856—1914), Երևան, 1965: Саркисян Е. К., Аграрная политика османского правительства в Западной Армении во второй половине XIX в., Ереван, 1957. Ղազարյան Հ. Մ., Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800—1870 թթ., Երևան, 1967: Боджоян М. Т., Реформы 20—30-х гг. XIX века в Османской империи, Е. 1984, Ներսիսյան Ա. Ն., Արևմտահայերի տնտեսական և քաղաքական վիճակը և նրանց ուսական օրիենտացիան 19-րդ դարի առաջին կեսին, Երևան, 1962: Հակոբյան Թ. Խ., Հայաստանի պատմական աշխարհագրությունը (ուրվագծեր), երկրորդ հրատարակություն, Երևան, 1968: Թ. Հակոբյանը բազմաթիվ հոդվածներ ունի Էրզրումի նահանգի բնակավայրերի մասին Հայկական Սովետական Հանրագիտարանի 12 հատորներում (Երեվան, 1974—1987) և Ս. Ս. Մելիք-Բախշյանի և Հ. Խ. Բարսեղյանի հեղինակ-ցությամբ հրատարակած «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների քառարանի» առաջին հատորում (Երևան, 1986):

բավարարվելով, սակայն, նույնպես խնդրի ընդհանուր կողմերի քննությամբ:

Էթնովիճակագրական պրոբլեմների շրջանցումը, որը բնորոշ է հրապարակի վրա եղած գրականությանը, մեր կարծիքով, հիմնականում արխիվային նյութերի մանրագնին ուսումնասիրության բացակայության արդյունք է: Ուստի մենք հատուկ ուշադրություն ենք հատկացրել Հայաստանի և նախկին ԽՍՀՄ մի խումբ արխիվներում Էրզրումի նահանգի բնակավայրերի մասին եղած թեկուզև աննշան տեղեկություն պարունակող վավերագրերին:

Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի արխիվային ֆոնդերում կան մեծ քանակությամբ նյութեր 19-րդ դարի առաջին երեսնամյակի Արևմտահայաստանի բնակավայրերի մասին: Կաթողիկոսական դիվանում մեր հայտնաբերած տասնյակ վավերագրեր ու փաստաթղթեր Էրզրումի նահանգի զանազան քաղաքների ու գյուղերի բնակիչների զեկուցագրեր ու նամակներ են՝ հասցեագրված Էջմիածնի հայոց կաթողիկոսին, Էրզրումի թեմի առաջնորդին կամ այլոց: Դրանք հետաքրքիր տեղեկություններ են տալիս Կարևո նահանգի բնակավայրերի սոցիալ-տնտեսական վիճակի, հոգևոր գործերի, բնակչության ազգային կազմի, էթնիկական տեղաշարժերի և բազմաթիվ այլ հարցերի մասին: Այդ փաստաթղթերը հետաքրքրություն են ներկայացնում անգամ այն դեպքում, երբ սոսկ անձնական բնույթ են կրում, քանի որ դրանցում որոշակի տեղեկություն կա տվյալ բնակավայրում հայ բնակչության առկայության մասին:

Էրզրումի նահանգի ազգաբնակչության, հատկապես՝ 1829—1830 թվականների տեղաշարժերի վերաբերյալ արժեքավոր նյութեր են պահվում նաև Կարապետ արքեպիսկոպոսի դիվանում: Այստեղ կարելի է գտնել Էրզրումի, Դերջանի, Բասենի և այլ գավառներից հայերի գրած հարյուրավոր գրություններ, որոնք պատմում են հայ բնակչության դեպի ուսասական տերության սահմանները գաղթելու մասին:

Նմանօրինակ և այլ բնույթի նյութեր քաղել ենք նաև Մատենադարանի Ներսես Աշտարակեցու, Ալ. Երիցյանի, Լազարյանների և զանազան այլ հեղինակների արխիվային ֆոնդերից:

Էրզրումի նահանգի Ալաշկերտի, Բայազետի, Դիաղիցի, Խամուրի գավառների մասին 1828 թվականի սեպտեմբերին կազմ-

ված եզակի վիճակագրություն է պահվում Հայաստանի ԳԱԱ պատմության ինստիտուտի արխիվի Լեռնի ֆոնդում: Այն կազմվել է հայերի ձեռքով 1828 թվականին՝ ռուսների կողմից ուսումնասիրվող նահանգի արևելյան գավառների գրավումից հետո, ամենայն հավանականությամբ Արևմտյան Հայաստանի ուսումնասիրության համար Ի. Պասկևիչի կողմից նշանակված Ն. Ուշակովի գիտախմբի հանձնարարությամբ:

Ն. Ուշակովի նույն հանձնախմբի և որոշ ուսա այլ հեղինակների ու զինվորականների Արևմտյան Հայաստանում 1828—29 թթ. կատարած ուսումնասիրությունների արդյունքների այն մասը, որը չի հրատարակվել, բազմաթիվ այլ նյութերի հետ հաջողվել է հայտնաբերել Վրաստանի կենտրոնական պետական պատմական արխիվի (Վրաստանի ԿՊՊԱ), ԽՍՀՄ Կենտրոնական պետական ռազմապատմական արխիվի (ԽՍՀՄ ԿՊՊՊԱ) և Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվի (ՌԱՔԱ) զանազան ֆոնդերում:

ՌԱՔԱ-ի և ԽՍՀՄ ԿՊՊՊԱ-ի արխիվներում կան սկզբնաղբյուրներ, որոնք չափազանց արժեքավոր տեղեկություններ են պարունակում ոչ միայն համեմատաբար լավ ուսումնասիրված 1828—1830, այլև 1801—1827 թվականների ընթացքում տեղի ունեցած էթնիկական տեղաշարժերի մասին: Այդ նյութերի ուսումնասիրությունից պարզվում է, որ սկսած 1804 թվականից Էրզրումի և Կարսի նահանգների մի շարք գավառներից զգալի թվով արևմտահայեր լքել են իրենց բնակավայրերը և հանգրվանել դարասկզբին Անդրկովկասից Ռուսաստանին անցած շրջաններում:

Էթնոտեղագրական նյութի ուսումնասիրության համար առանձին նշանակություն ունեն նաև ռուս և օտարերկրացի զինվորականների ու ուղեգիրների կազմած քարտեզները, որոնց մի զգալի մասը պահվում է ԿՊՊՊԱ-ի № 450՝ «Թուրքիա» ֆոնդում: Նման և որոշ այլ նյութեր քաղել ենք նաև Հայաստանի Կենտրոնական պետական պատմական արխիվի (ՀԿՊՊԱ) և Ե. Չարենցի անվան զրականության ու արվեստի թանգարանի (ԳԱԹ) արխիվներից:

Մեզ հետաքրքրող առանձին արխիվային նյութեր, որոնց մի մասի բնագրերի հետ ծանոթացել ենք նաև Վրացական ԿՊՊԱ-ի, ԽՍՀՄ ԿՊՊՊԱ-ի և ՌԱՔԱ-ի ֆոնդերում, 12 հատո-

րով հրատարակվել են դեռևս 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբին՝ Կովկասյան հնագրական հանձնաժողովի կողմից¹:

19-րդ դարի առաջին երեսնամյակի էթնոժողովրդագրական պրոբլեմների ուսումնասիրության համար հետաքրքրություն են ներկայացնում Հայաստանի ԳԱԱ պատմության ինստիտուտի հրատարակած «Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին» փաստաթղթերի ու նյութերի երկհատոր ժողովածուն² և 1828—1830 թթ. պարսկահայերի ու արևմտահայերի գաղթի վերաբերյալ Մ. Դարբինյանի հավաքած և շրջանառության մեջ դրած նյութերը³:

Այսպիսով, հիմնականում վերոհիշյալ տպագիր գրականության և նորահայտ արխիվային նյութերի հիման վրա լուսաբանել ենք ոչ միայն Էրզրումի նահանգի 19-րդ դարի առաջին երեսնամյակի հայ ազգաբնակչության տեղաբաշխման, տեղաշարժերի և էթնոժողովրդագրական զարգացման հիմնական խնդիրները, այլև աղբյուրների համեմատության շնորհիվ կազմել նահանգի առանձին գավառների հայկական բնակավայրերի ցուցակները և քարտեզները, որոնք ներկայացված են իբրև հավելված: Վերջիններիս հիման վրա էլ կատարել ենք ամբողջ նահանգի հայ ազգաբնակչության մոտավոր հաշվարկն ու ներկայացրել էթնիկական տեղաշարժերի դինամիկան 19-րդ դարի առաջին երեսնամյակի ընթացքում:

Գ Լ Ո Ւ Ւ Ա Ռ Ա Ջ Ի Ն

ԷՐԶՐՈՒՄԻ ՆԱՀԱՆԳԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ 19-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՍՆԱՄՅԱԿՆԵՐԻՆ

1. Էրզրումի նահանգը Արևմտյան Հայաստանի վարչաքաղաքական համակարգում 19-րդ դարի առաջին երեսնամյակին

18-րդ դարի վերջին և 19-րդ դարի սկզբին ավելի խորացավ նախորդ ժամանակաշրջանում օսմանյան տերությունում սկսված ընդհանուր ճգնաժամը: Կայսրության երբեմնի ռազմական հզորության հիմքը հանդիսացող ռազմալեհնային համակարգը գործնականորեն իրեն սպառեց և վերածվեց սոցիալական առաջադիմության ճանապարհին գլխավոր արգելակիչ գործոնի: Մահմեդական ֆեոդալական դասակարգը, այնուհանդերձ, շարունակեց համառորեն կառչել նրանից: Ավելի հստակորեն դրսևորվեց զարգացման կապիտալիստական ուղիով ընթացող Արևմտյան Եվրոպայի մի շարք երկրների համեմատ ռազմաֆեոդալական Թուրքիայի հետամնացությունը:

Բանակի կորիզը կազմող ենիչերիական զնդերն սկսեցին արագորեն քայքայվել: Շահագրգռված շինելով անիմաստ և զրեթե միշտ անհաջողություններ բերող պատերազմներով՝ առաջին հնարավորության դեպքում նրանք վերածվում էին դասալիքների և թողնելով ռազմական գործը, անցնում հողագործության կամ զբաղվում արհեստներով ու առևտրով: Բանակի քայքայումը հանգեցրեց նրան, որ 18-րդ դարի վերջին քառորդին սուլթանական Թուրքիան ունեցավ տարածքային խոշոր կորուստներ:

Ճգնաժամն առավել ցայտունորեն արտահայտվեց ազգա-

¹ Տե՛ս Աкты, собранные Кавказской археографической комиссией (այսուհետև՝ АКАК), тт. I—XII, Тифлис, 1866—1904.

² Տե՛ս Присоединение Восточной Армении к России. Сборник документов. Редактор Ц. П. Агаян, т. I (1801—1813), Ереван, 1972, т. II (1814—1830), Ереван, 1978.

³ Տե՛ս Новые документы о переселении персидских и западных армян в 1828—1830 гг., изд. М. Г. Дарбинян, ԲՀԱ, 1977, № 3, էջ 3—23: Նոր վավերագրեր պարսկահայերի և արևմտահայերի 1828—1830 թթ. գաղթի վերաբերյալ, հրատ. Մ. Դարբինյան, ԲՀԱ, 1973, № 2, էջ 135—146:

¹ Տե՛ս Миллер А. Ф., Турция. Актуальные проблемы новой и новейшей истории. М., 1983, с. 22.

յին շրջաններում: Օգտվելով երկրում տիրող անարխիայից՝ նորից զլուխ բարձրացրին քրդական աշիրեթները, որոնց միջ-
ցեղային բախումների բեմահարթակ դարձավ նաև Հայաս-
տանը: Պետութայն տարածքում հանդես եկան կիսանկախ
բազմաթիվ իշխանություններ:

19-րդ դարի առաջին քառասնամյակին թուրքական կա-
ռավարության քաղաքականության բնագավառում նկատվեց
երկու միտում, որոնցից մեկն ուղղված էր երկրի վարչական
կառավարման կենտրոնացմանը և եվրոպական մի քանի եր-
կրների օրինակով լուսավորյալ արսուլյուտիզմի հաստատ-
մանը, իսկ մյուսը՝ կայսրության տարածքային ամբողջակա-
նության պահպանմանը և նոր պայմաններին ռազմաֆեո-
դալական պետական մեքենայի հարմարեցմանը¹:

Օսմանյան տերության տրոհման և տնտեսական անկման
հետագա խորացման վտանգը հարկադրեց կառավարող շեր-
ջաններին ձեռք առնել միջոցներ: Սուլթան Սելիմ II-ը (1789—
1807) որոշ դեմոկրատական հայացքներ ունեցող Մուստա-
ֆա փաշա Բայրաքդարի² ծրագրով իրականացրեց մի շարք
ռեֆորմներ, որոնք կոչված էին նախկին ենիչերիական գնդե-
րի փոխարեն կանոնավոր բանակի ստեղծմանը: Սակայն այդ
ռեֆորմները ցանկալի արդյունք չտվեցին. Կ. Մարքսի խոս-
քերով ասած ամենացածր և բարբարոսական ստադիայում
գտնվող թուրքական ֆեոդալիզմի³ գոյությունը լիովին բա-
ցառում էր նման միջոցառման հաջողությունը: Ուժեղ բա-
նակ ստեղծելու Բայրաքդարի փորձերը կրեցին կատարյալ
անհաջողություն:

1808 թ. գահ բարձրացած Մահմուդ 2-րդը փորձեց պե-
տական ապարատը վերակառուցել եվրոպական լուսավորյալ
արսուլյուտիզմի սկզբունքներով: Ռեֆորմիստական շարժման
զլուխ կանգնեց երկրի եվրոպականացման կողմնակիցների

նոր սերնդի ներկայացուցիչ Ռեշիդ (Ռաշիդ) փաշան: Պահանջ-
վեց դրեթե շորս տասնամյակ, որպեսզի ճնշվեր կայսրության
հարավային և հարավարևելյան շրջանների կիսանկախ իշ-
խանությունների դիմադրությունը և վերջ դրվեր նրանց քա-
ղաքական ինքնուրույնությանը, ուժեղ հարված հասցվե-
ր ենիչերիական գնդերին, որոշ շափով ամրապնդվեց բանակը:

Կենտրոնացման քաղաքականությունից բացի, Մահմուդ
2-րդն իրականացրեց վարչական և կուլտուր-լուսավորական
մի շարք միջոցառումներ: Սակայն, քանի որ այդ միջոցա-
ռումները չէին շոշափում պետության սոցիալ-տնտեսական և
քաղաքական հիմքերի վերակառուցման խնդիրներ, նույնպես
հետապնդած նպատակին չժառանգեցին և միայն ժամանակա-
վորապես երկարաձգեցին թուրքական պետության հետագա
թուլացման ու քայքայման պրոցեսը: Ռեֆորմների անհաջո-
ղությունը մեծապես պայմանավորված էր այն հանգաման-
քով, որ նրանց նկատմամբ ժողովրդական զանգվածները,
հատկապես ազգային շրջաններում, հանդես չբերեցին շահա-
զրգովածություն, քանզի այդ միջոցառումներն իրականաց-
վում էին հարկային քաղաքականության ուժեղացման և ազա-
տագրական շարժումների դաժան հետապնդումների պայ-
մաններում:

Հայ և քրիստոնյա այլ ժողովուրդներ գտնվում էին ազ-
գային ամենաբիրտ ճնշումների, ազգային արժանապատվու-
թյան ոտնահարման, մարդկային տարրական իրավունքների
անտեսման ու ֆիզիկական բնաջնջման ամենօրյա վտանգի
պայմաններում: «Ղորանը, — գրում է Կ. Մարքսը, — և նրա
վրա հիմնված մուսուլմանական օրենսդրությունը աշխարհա-
գրությունը և տարբեր ժողովուրդների ազգագրությունը հան-
գեցնում են պարզ և հարմար բանաձևի՝ երկու երկրի և եր-
կու ազգության՝ ուղղահավասարների և անհավասարների: Անհա-
վատը դա «խարբին» է՝ թշնամին: Իսլամն անհավասարների
դնում է օրենքից դուրս և ստեղծում է անընդհատ թշնամա-
կան վիճակ մահմեդականների և անհավասարների միջև»⁴:

¹ Сб. Боджолян М. Т., Реформы 20—30-х гг. XIX века в Османской империи, с. 122.

² Մուստաֆա Բայրաքդարի կյանքի և պետական գործունեության մասին մանրամասն տե՛ս Миллер А. Ф., Мустафа паша Байрактар, М.-Л., 1947, с. 50—70.

³ Сб. Маркс К., Лорд Пальмерстон. Маркс К. и Энгельс Ф., Соч., 2-е изд., т. 9, с. 374.

⁴ Сб. Маркс К., Объявление войны. — К истории возникновения восточного вопроса. // Маркс К. и Энгельс Ф., соч. 2-е изд., т. 10, М., 1958, с. 167.

Նախորդ դարերում մահմեդականացրած քրիստոնյաների՝ հետագա թրջացման գործընթացն արագացնելու նպատակով Բարձր Դուռը հրապարակել էր մի օրենք, որը մահապատիժ էր նախատեսում մահմեդականացած բոլոր այն քրիստոնյաների հասար, որոնք կփորձեին վերադառնալ իրենց նախկին կրոնին: Այդ օրենքը իրավաբանորեն պահպանվեց մինչև 1843 թ.²: 19-րդ դարում թուրքական իշխանությունները շարունակեցին հայկական եկեղեցիներն ավերելու կամ մզկիթների վերածելու իրենց հնամենի քաղաքականությունը³:

Ռայա, զիմմի, գյավուր և անհարգի այլ անուններով «կնքված» քրիստոնյաները զրկված էին դատարանում վկայություն տալու, ձի նստելու, շքեղ հագնվելու, զենք կրելու և այլ տարրական իրավունքներից: Պահպանվում էր «ղշլաղու-թյան» հայտնի համակարգը, որը թուլյատրում էր կիսաքոչվոր քրդերին ձմեռելու հայկական գյուղերում: Հայ գյուղացին պարտավոր էր կերակրել քրդերին ու նրանց բազմաքանակ ուխտարներին⁴: 1843 թ. հետո, թեև իրավաբանորեն այդ համակարգը վերացվեց, այնուամենայնիվ քրդերը շարունակեցին ապրել հայկական գյուղերում⁵:

Ամեն մի եղեռնագործություն մնում էր անպատիժ: «Քրիստոնյաների մշտական կոտորածները, — գրում էր Արևմտյան Հայաստանում եղած ուս զինվորական Մ. Լիխուտինը, — կարծես ապացուցում են թուրքական կառավարության միջոցով երկրամասի վրա եվրոպական դեսպանությունների և հյուպատոսությունների ազդեցության ամբողջ անզորությունը»⁶:

¹ Արևմտյան Հայաստանում թուրքերի կողմից հայերի զանգվածային բռնի մահմեդականացման դեպքերն արձանագրվել են 15—17-րդ դարերում (Մատենադարան, ձեռ. № 6332, էջ 552: Հակոբ Կարենցի, Շինուած Կարնոյ քաղաքին) (Մակր ժամանակագրություններ, 13—18-րդ դդ. հ. 2, էջ 554, Ինժեյան Ղ., Աշխարհագրություն, էջ 93—94, 132):

² Տե՛ս Гиргас В., Права христиан на Востоке по мусульманским законам, СПб., 1865, с. 96.

³ Տե՛ս Մատենադարան, Իզմիրլյանի արխիվ, թղթ. 14, վ. 615, թ. 1—9:

⁴ Տե՛ս Արքովյան Խ., ՆժԺ, հ. 8, Ե., 1958, էջ 248, Արարատ, 1889, հունվար 31, էջ 36:

⁵ Տե՛ս Линч Х. Ф. Б., Армения, т. II, с. 544—545.

⁶ Лихутин М., Русские в Азиатской Турции в 1854 и 1855 годах, с. 272.

19-րդ դարի առաջին տասնամյակներին օսմանյան տերու-թյունում ապրող հայության վիճակն ավելի վատթարացավ կրոնական երկու՝ առաքելական և կաթոլիկ համայնքների միջև հակամարտության հետագա խորացման հետևանքով: Այդ պայքարն իր գագաթնակետին հասավ 20-ական թվականներին: Կողմերի միջև կեղծ դատավորի դերում հանդես եկող սուլթանական կառավարությունը չհապաղեց բորբոքել հակամարտությունները: Օգտվելով առիթից՝ Մահմուդ 2-րդը հազարավոր կաթոլիկ հայերի արքայացի Կ. Պոլսից և Արևմտյան Հայաստանի գավառներից՝ 1821 թ. էրզրումում գլխատվեցին բազմաթիվ կաթոլիկ հայեր: Շատերն արքայավեցին այլ երկրներ²: Սակայն, շուտով, 1827 թվականին սուլթանը հրապարակեց հատուկ ֆերման, որով կաթոլիկներին թուլյատրվեց ունենալ ինքնուրույն հոգևոր աթոռ Կ. Պոլսում: Այս երկդիմի խաղի շնորհիվ թուրքական արքունիքը կարողացավ հալածանքների ենթարկել Թուրքիայում եվրոպական, առաջին հերթին՝ Տրանսիսիայի կառավարող շրջանների քաղաքական պլանների մեջ ներքաշված կաթոլիկ հայերին, մյուս կողմից, անհամեմատ ուժեղ հայ առաքելական եկեղեցու դեմ ստեղծել նույն ազգի հակառակորդ դավանանքի հոգևոր կենտրոն, մի հանգամանք, որն ավելի խորացրեց ներհամայնքային պայքարը, պաշտոնական հողի վրա դրեց ժողովրդի հոգևոր երկփեղկման փաստը և հեշտացրեց քրիստոնյա քարոզչական նոր ուղղությունների, հատկապես բողոքականության տարածումը հայ իրականության մեջ: Հազարավոր կաթոլիկ հայեր հանգրվանեցին տարբեր երկրներում:

Ռուսական կառավարությունը քաղաքական նկատառումներով թուլյատրեց Թուրքիայից արքայաված հարյուրավոր հայերի բնակություն հաստատելու Ռուսաստանում³: Հայերի իրավունքների պաշտպանության կոչերով հանդես եկող թուրքիայի ֆրանսիական հյուպատոսները դատարկ խոստումնե-

¹ Տե՛ս Պերպերյան Ա., Պատմություն հայոց, Կ. Պոլիս, 1871, էջ 196—197:

² Տե՛ս Մատենադարան, Կաթոլիկոսական դիվան, թղթ. 38, վավ. 134, թ. 1, Կարապետ արք. արխ., թղթ. 163գ, վավ. 1092, թ. 1:

³ Տե՛ս АВПР, Ф. Главный архив П-19, оп. 63, д. 1, л. 1—3.

րից այն կողմ շանցան օտար ափերում դեգերող հայությանը օգնելու գործում: Անպատասխան մնացին նրանց «օգնությանն» ապավինած էրզրումցի հայերի խնդրագրերը¹:

Դարասկզբին սուլթանական թուրքիան շարունակում էր մնալ դասական հետամնացության ազդարային երկիր: Գործողության մեջ էին կայսրության ստեղծման ժամանակներից հայտնի հողատիրության ձևերը, հարկալին քաղաքականության հնամենի սկզբունքները: Ոչ մահմեդական ժողովուրդների հողերը հայտարարված էին նվաճված հողեր և օգտագործողներին տրվում էին պայմանական իրավունքով՝ հարկ վճարելու կամ բանակում ծառայություն կատարելու դիմաց²: Այդպիսի հողեր էին խասերը, թիմարները և դեամեթները:

Խաս էին համարվում պետական ծառայության համար բարձրաստիճան պաշտոնյաներին՝ վեզիրներին, նահանգների և գավառների կառավարիչներին տրվող ընդարձակ այն հողերը, որոնցից ստացվող եկամուտը կազմում էր 100 հազար ալշեից ոչ պակաս: Զինվորականությանը տրվող 20 հազար ալշեից պակաս եկամուտ ունեցող հողերը հայտնի էին թիմար, իսկ 20 հազարից մինչև 100 հազ. ալշե բերող հողերը՝ դեամեթ անուններով³: Ավելի հստակորեն էր նկատվում այդ հողերը մասնավոր հողերի վերածելու միտում: Դրա կողքին լայն տարածում էին ստանում մասնատիրական մյուլք կոչվող հողերը: Հայկական բարձրավանդակի հարավային քրդաբնակ գավառներում գերակշռում էին հյուքյու-մեթ, օջաքլըք, յուրդլուկ մասնավոր հողերը: Մահմեդական և քրիստոնյա հոգևոր դասին պատկանող հողերը կոչվում էին վակուֆներ: Էջմիածնի կաթողիկոսությունը խոշոր կալվածքներ ուներ գրեթե ամբողջ Արևմտյան Հայաստանում և նրան հարակից հայաբնակ մի շարք նահանգներում:

¹ Տե՛ս Մատենադարան, Կարապետ արք., արխիվ, թղթ. 163ա, վ. 244, ք. 1:

² Տե՛ս Ալպոլաճյան Ա., Պատմական Հայաստանի սահմանները, Կահիրե, 1950, էջ 431:

³ Տե՛ս Аграрный строй Османской империи XV—XVII вв., Документы и материалы, составленные А. С. Тверитиновой, М., 1963, с. 218.

Հայ գյուղացիությունը բազմաթիվ հարկեր [աշար, խարաջ (հողահարկ), ջիզիե (գլխահարկ) մանկահավաք և այլն] էր վճարում պետությանը, թուրք և քուրդ զախմներին, թիմարիներին և խաստերերին: Հատկապես ծանր էր քրդական ցեղապետությունների տարածքում բնակվող հայ գյուղացիության վիճակը, որը հարկման էր ենթարկվում կամայականորեն՝ քուրդ ցեղապետերի, բեկերի և խաֆիրների կողմից: Հարկերից ազատ չէր նաև վակուֆ հողերի վրա ապրող գյուղացիությունը:

16-րդ դարի առաջին կեսին Արևմտյան Հայաստանի վերջնական նվաճման հետ մեկտեղ, Փոքր Ասիայի սելջուկյան պետություններից ժառանգելով կայսրության կազմակերպության գլխավոր տարրերը, վարչական բաժանման հիմնական սկզբունքները, սոցիալ-տնտեսական կյանքի մի շարք կողմեր, օսմանյան թուրքերը ձեռնարկել էին նոր վարչակարգերի ստեղծումը¹: Նվաճված երկրամասի վարչական բաժանումը, պայմանավորված մահմեդական ֆեոդալական դասակարգի ազգային-քաղաքական և տնտեսական շահերով, աչքի էր ընկնում անկայունությամբ և մշտատես փոփոխություններով:

Տերություն տարածքը տրոհված էր վարչատարածքային մեծ ու փոքր միավորների: Դրանցից խոշորագույնները կոչվում էին էյալեթներ (հետագայում նաև՝ վիլայեթներ, հայկական աղբյուրներում՝ նահանգ), որոնց գլուխ կանգնած էին սուլթանի կողմից նշանակված կառավարիչները՝ վալիները: Էյալեթները բաժանվում էին սանջակների (նաև՝ լիվա, գավառ), սանջակները՝ կազաների (գավառակ), իսկ կազաները՝ նահիեների (գյուղախումբ)²: Ընդ որում, հնարավոր էր, որ յուրաքանչյուր լիվա ունենար կամ կազաներ, կամ՝ նահիեներ, ինչպես նաև դրանցից և առաջինը, և երկրորդը:

¹ Տե՛ս Մաֆրաստյան Ա., Օսմանյան կայսրության վարչական բաժանումը 17-րդ դարում (Արևելագիտական ժողովածու), հ. 1, Ե., 1960, էջ 286:

² Վերոհիշյալ վարչամիավորների անվանումների համար հավասարապես գործածում ենք թե պաշտոնական էյալեթ, լիվա կամ սանջակ, կազա և նահիե, թե համապատասխանաբար՝ հայկական նահանգ, գավառ, գավառակ և գյուղախումբ տերմինները:

Լիվանները կառավարվում էին միրլիվանների (կամ սանջակբեյ), կազանները՝ կազինների, նահիենները՝ մյուղիրների (գեղջավազ) կողմից: Սահմանամերձ մարզերի միրլիվանները ևս որպես կանոն նշանակվում էին սուլթանի կողմից, թեև այդ պաշտոնը կարող էին ստանալ նաև համապատասխան վալիից: Բոլոր նշանակումները կաթարվում էին կաշառքով: Պաշտոնավարում էր նա, ով «... ավելի առատաձեռն էր հանդիսանում»¹: 19-րդ դարի սկզբի թուրք պատմագիր Զևեթի վկայությամբ նոր կաշառատունների հայտնվելու հետևանքով «վալիները շուտ-շուտ հեռացվում էին, այնպես, որ մի էյալեթ մի տարվա ընթացքում երկու և երբեմն երեք անգամ մեկից մյուսին էր փոխանցվում»²:

18-րդ դարի վերջին Կ. Պոլսում շվեդական դեսպանության աշխատակիցներից մեկի հավաքած տվյալներով կայսրության տարածքն ընդգրկում էր 26 էյալեթ, որոնք միասին ունեին 163 սանջակ և 1800 կազա՝ 1831 թ. մարդահամարով կար 29 նահանգ՝ 179 գավառով: Արևմտյան Հայաստանը ըստ Ղ. Ինճիճյանի 19-րդ դարի սկզբին բաժանվում էր էրզրում, Սեբաստիա, Կարս, Վան, Դիարբեքիր, Ախալցխա և Բայազետ միավորների: Հայաշատ էին Տրապիզոն, Կեսարիա, Մալաթիա, Մարաշ, Ադանա և այլ էյալեթներ³:

Արևմտյան Հայաստանի նահանգներում հաշվվող գավառների թիվը մի քանիսից հասնում էր երկու-երեք տասնյակի: Ախալցխայի էյալեթն ուներ քսանչորս, Կարսը՝ հինգ⁴, Սեբաստիան՝ յոթ, Վանը՝ տասնյոթ⁵ լիվա:

Օսմանյան տերության արևելյան վարչամիավորների մեջ իր ընդարձակ տարածքով և ռազմաքաղաքական նշանակու-

թյամբ առանձնանում էր էրզրումի նահանգը¹: Նրա վալին, որ համատեղում էր կայսրության արևելյան մարզերի գործերի հրամանատարի՝ սերասկյարի պաշտոնը, կրում էր Հայաստանի կառավարչի տիտղոսը և օգտվում էր բազմաթիվ արտոնություններից²: Նա կարող էր հարկեր գանձել, նշանակել և փոխել անգամ հարակից վարչամիավորների կառավարիչներին, սահմանել մահապատիժներ կամ բեկանել հրամաններ և այլն:

Կենտրոնացված կառավարման այս համակարգում 18-րդ դարի երկրորդ կեսից ի հայտ եկան սուր ճգնաժամային երեվույթներ: Առանձին կառավարիչներ, օգտվելով տեղերում սուլթանական կառավարության ազդեցության հետագա թուլացումից, ստեղծեցին կիսանկախ իշխանություններ, որոնք հաճախ հայտնի էին դերբեյություններ (հովտապետություն) անունով: Արևմտյան Հայաստանում ստեղծված այդպիսի միավորումներից էին Բայազետի, Մանազկերտի, Բաղեշի և այլ իշխանություններ: Վերջիններս իրավաբանորեն վարչամիավորումներ չէին ճանաչված, սակայն նրանց կառավարիչները ստանում էին փաշաների, բեյերի տիտղոսներ³: Այդ իշ-

¹ էրզրումի նահանգը կազմավորվել է 1500—1534 թթ. ընթացքում (Birken A., Die Provinzen des Osmanischen Reiches, Wiesbaden, 1976, էջ 147:

² Տե՛ս ЦГВИА, Ф. ВУА, д. 4643, л. 2.

³ Այդ հանգամանքը ժամանակի և հետագայի մի շարք հեղինակների հիմք է տվել այդ միավորները հաճախ կոչելու փաշայություններ ու բեյություններ և նրանք նույնացնելու նահանգների հետ: Օրինակ. 18-րդ դարի երկրորդ կեսին էրզրումի նահանգի կազմում առաջացած Բայազետի փաշայությունը, ինչպես նշվեց, Ղ. Ինճիճյանի կողմից Արևմտյան Հայաստանի վարչամիավորների շարքում հիշատակվում է իբրև ինքնուրույն նահանգ, նկատի առնվելով այն, որ նրա քուրդ ցեղապետ Մահմուդ փաշան կաշառքի միջոցով ձեռք էր բերել եռոլույան (եռանշան) փաշայի տիտղոս և իր իշխանությունը տարածել հարակից մի քանի գավառների վրա (Ինճիճյան Ղ., Աշխարհագրություն, էջ 113): Սակայն այն, որ Բայազետը շարունակում էր մնալ էրզրումի կազմում, նույն տեղում հիշատակվում է ինքը՝ Ինճիճյանը, նշելով, որ ըստ արքունական դիվանի, այսինքն պաշտոնական աղբյուրների այն էրզրումի սանջակներից էր: Ի դեպ, իբրև էրզրումի մի սանջակ Բայազետը հիշատակվում է նաև ժամանակի թուրք հեղինակ Մուկեյման-Իզզի աշխատությունում (Թուրքական աղբյուրներ, հ. Ա., էջ

¹ Լեո, Հայոց պատմություն, հ. 3, Ե., 1946, էջ 55:

² Թուրքական աղբյուրներ, հ. Ա., էջ 277:

³ Տե՛ս Ubicini M. A., Lettres sur la Turquie, Paris, 1853, p. 44.

⁴ Տե՛ս Belleten, Turk Tarih Kurumu, c. XV, ekim, Ankara, 1951, sayı 60, s. 617—628.

⁵ Տե՛ս Ինճիճյան Ղ., Աշխարհագրություն, էջ 58, 282, 309—384:

⁶ Տե՛ս ЦГВИА, Ф. ВУА, д. 4643, л. 3, 17. История военных действий, ч. 1, с. 57.

⁷ Տե՛ս Belleten, 1951, № 60, էջ 622—623, 626:

խանություններից Բայազետի լիվա-փաշայությունը զբաղեցնում էր էրզրումի նահանգի արևելյան ընդարձակ հատվածը: Նրա փաշան դարասկզբին ուներ 25 հազարանոց զորք¹ և իրեն ենթարկելու համար պատերազմում էր հարևան գավառների կառավարիչների և ինքնակոչ բեյերի դեմ², օգտվում պարսկա-թուրքական սահմանային և պետական այլ հարցեր լուծելու իրավունքից և հաճախ հրաժարվում վերադաս էրզրումի վալիին ենթարկվելուց: Պարզ է, որ այսպիսի պայմաններում կայուն վարչական բաժանումն ու հստակ ենթակայությունը պետք է կրեին ձևական բնույթ՝ հաճախ իրենց տեղը զիջելով անարխիային և քրդական տոհմացեղային սովորութային իրավունքի նորմերին: Այս ամենին գումարվում էին վարչական մշտական վերաբաժանումները, որոնք թելադրված էին նաև սուլթանական կառավարության քաղաքական նկատառումներով՝ հայ և հպատակ այլ ժողովուրդներով բնակեցված մարզերն անընդհատ վերաբաժանումների ենթարկելով՝ հասնել քրիստոնյա հավաք բնակչություն ունեցող գավառների վերացմանը:

Մինչև 1828—1829 թթ. ռուս-թուրքական պատերազմը էրզրումի նահանգը տրոհվում էր էրզրում (Կարին, Օվա կամ Հովտիկ), Վերին Բասեն, Ստորին կամ Ներքին Բասեն, Քրդի, Դերջան, Երզնկա, Բաբերդ, Սպեր և Թորթում լիվաների³: Ինչպես ասվեց, պաշտոնապես նրա կազմում էր նաև Բայազետի լիվա-փաշայությունը, որն իր հերթին բաժանվում էր Բայազետ, Ալաշկերտ (Խալի Յազի, Մրկեզար և Նահին կամ Կարաքիլիսա նահիեներով), Դիադին և Խամուր գավառների⁴: Ինչպես կտեսնենք, նահանգի տարածքը ներառում էր նաև Խնուսի, Կելիկիթի և Շաբին Կարահիսարի լիվաները: Այսպիսով, էրզրումի նահանգն ընդգրկում էր գրեթե ամբողջ պատմա-

190): նկատի ունենալով Բայազետի փաշայության կարգավիճակի այսօրինակ առանձնահատկությունը, նրա համար պայմանականորեն գործածում ենք լիվա-փաշայություն տերմինը:

¹ Տե՛ս Սերովբե Կարնեցի, Ուղեգրություն Բաղդադից էջմիածին, էջ 159—160:

² Տե՛ս Հակոբյան Հ., Ուղեգրություններ, հ. 2., էջ 283:

³ Տե՛ս История военных действий, ч. 1, с. 103.

⁴ Տե՛ս Ինճիճյան Ղ., Աշխարհագրություն, էջ 113, 118:

կան Բարձր Հայքը, առանձին գավառներ Այրարատից, Տուրուբերանից, Տալքից, Աղձնիքից, Փոքր Հայքից: Պատահական չէ, որ այն ժամանակի պատմական բազմաթիվ քարտեզներում նույնացվում էր ամբողջ Հայաստանի՝ Արմենիայի հետ: Հին հայ ավատատիրական բաժանումից թեև շատ ժամանակ էր անցել, որոշ վարչամիավորներ իրենց տարածքով հիմնականում համընկնում էին հայ ֆեոդալական բաժանման հետ: էրզրումի լիվան գրեթե նույնությամբ համապատասխանում էր պատմական Բարձր Հայքի Կարնո գավառին, Բայազետի լիվան՝ Կոգովիտին, Դերջանի լիվան՝ համանուն գավառին և այլն: Պատահական չէ, որ 19-րդ դարի հայ աշխարհագիր Բաղդասար Աբովյանն իր «Տեսրակ վասն աշխարհագրության» անտիպ աշխատության մեջ զարգացնում է այն միտքը, որ թեև «Ասիական Տաճկաստանը բաժանված է քաղաքական կառավարությամբ մասին փաշայութիւններ, բեգութիւններ, սանջակներ և այլն, այնուամենայնիվ այն բաժանումն շատ անհաստատ է, ... ինչքան պատմաբանական բաժանումն է»²: Սակայն արդեն այդ կարգը գավառների ճշնշող մասում դուրս էր մղվում օսմանյան վարչակարգերի կողմից և, բնականաբար, չէր կարող ընկած լինել ամբողջ Արևմուտյան Հայաստանի ընդհանուր վարչական համակարգի հիմքում:

էրզրումի նահանգի տարածքը հարուստ է գետերով: Այնտեղից են սկզբնավորվում Հայաստանի շորս խոշոր գետեր՝ Արևելյան Եփրատը, Արևմտյան Եփրատը, Արաքսը և Շորոխը, որոնք իրենց ջրային խիտ ցանցով ոռոգման լայն հնարավորություններ են ստեղծում: էյալեթի մեծ մասում կլիման խիստ է, ցրտաշունչ ձմեռը՝ տևական: Հացահատիկային կուլտուրաների համար, որոնք նահանգից արտահանվող գլխավոր ապրանքներն էին, առավել բարենպաստ պայմաններ ունեին էրզրումի, Բասենի, Ալաշկերտի և Երզնկայի դաշտերը: Քանի որ նրա գրեթե ամբողջ տարածքը հարուստ էր արո-

¹ Տե՛ս ЦГВИА, ф. 450, д. 276. Карта турецких территорий. Лондон. М-6 1:2700000 (на англ. яз.), д. 400. Карта Турецкой Армении, м-6 1:20000 (на франц. яз.), д. 196. Карта Турецкой империи, м-6 1:2100000 (на франц. яз.).

² Մատենադարան, Պատկանյանների արխ., թղթ. 142, վ. 170, թ. 12ա:

տավայրերով, բոլոր հիմքերը կային անասնապահության զարգացման համար:

Նահանգի ամենաաչքի ընկնող գավառը՝ կենտրոնական էրզրում լիվան էր: Այն ուներ թե՛ տնտեսական և թե՛ ստրատեգիական նշանակություն: Հատկապես մեծ էր նրա դերն այն իմաստով, որ այնտեղ էր գտնվում Արևմտյան Հայաստանի և ընդհանրապես Արևելյան Թուրքիայի խոշորագույն քաղաքը՝ էրզրումը,

17—18-րդ դարերում էրզրումի գավառի կազմում եղած Բաբերդն ու Դերջանը դարասկզբին ինքնուրույն լիվաններ էին: Վերջինիս ենթակա էր Լակզի կամ Լակզո ձոր (Լակձոր) նահիեն¹: Պատմական Եկեղյաց և Դարանաղյաց գավառները իբրև կազաններ միասին կազմում էին մեկ լիվա՝ Ծրզնկա կենտրոնով²: Ինճիճյանի վկայությամբ Կամախի կազմի մեջ իբրև «վիճակներ», այսինքն՝ նահիեններ մտնում էին Կերճանիսը և Գուրուշյը: Կերճանիսը, որը հայտնի էր նաև Ռեփահի անունով, ընկած էր Կամախից հյուսիս-արևմուտք, իսկ Գուրուշյը՝ նրանից հարավ տարածվող խոշոր նահիե էր և տարբեր վարչական կենտրոններ ունենալու պատճառով հայտնի էր նաև Արմտաններ և Հասան-օվա անուններով³: Ծրզնկա լիվայի խոշոր գյուղախմբերից էր Բոլոմորը, որը կրում էր նաև Գուզուշան (Գուզիջան, Խուզուշան) անունը⁴:

Կամախի գավառակից հյուսիս և հյուսիս-արևմուտք Շաբին Կարահիսարն էր, որի վարչական ենթակայության վերաբերյալ հարկ է մտցնել ճշտումներ:

2. Ղազարյանը, վկայակոչելով 1951 թ. հրատարակված թուրքական «Բելլեթենները», պնդում է, որ Շաբին Կարահիսարի լիվան մինչև 1806 թ. Տրապիզոնի էյալեթի կազմում էր և միայն հետագայում (բայց կոնկրետ չի նշում ե՞րբ — Ա. Մ.) է կցվել էրզրումին⁵: Այնինչ, վերոհիշյալ աղբյուրը նման բան չի հաղորդում. ընդհակառակը, վկայում է, որ 1831 թ. Շա-

բին Կարահիսարը էրզրումի էյալեթի լիվաներից էր¹: Այն, որ այդ վարչամիավորը էրզրումին ենթակա լիվա էր, հավաստում է նաև Հ. Ղազարյանի օգտագործած մեկ այլ աղբյուրը՝ Ինճիճյանի «Աշխարհագրությունը»: էրզրումի լիվաները թվարկելիս Ղ. Ինճիճյանը չի հիշատակում Շաբին Կարահիսարի անունը, սակայն հաջորդ նախագասություններից մեկում ավելացնում է, որ «... էյալեթն էրզրումայ՝ ունի ընդ իրև և գերկողեան փաշայութին Գարահիսարի շապին...»²: Սակայն, քանի որ այն ընկնում է պատմական Փոքր Հայքի տարածքում, Ինճիճյանը, որը Հայաստանի նոր ժամանակաշրջանի վարչական պատկերը ըստ պատմական բաժանման ներկայացնող հեղինակ է, նրա մասին խոսում է համապատասխան տեղում³, մի հանգամանք, որը վրիպել է Հ. Ղազարյանի ուշադրությունից և հիմք հանդիսացել այն ենթադրության, որի համաձայն Շաբին Կարահիսարը դարասկզբին չի եղել էրզրումի էյալեթի կազմում:

Շաբին Կարահիսարի ընդարձակ լիվան զգալիորեն տարբերվել է նահանգի մյուս լիվաներից: Ինճիճյանի հաղորդմամբ այնտեղ «... երբեմն նստի միւսէլլիմ, որ փոքր է պատուով և երբեմն երկողեան (երկնշան — Ա. Մ.) փաշայ»⁴: Դա նշանակում է, որ այն կատարում էր թուրքական կառավարության կողմից մյուսեւլլիմի պաշտոնով նշանակված կառավարչի ֆունկցիա և ժամանակի ընթացքում հզորանալով, ձեռք էր բերել երկնշանակ փաշայի տիտղոս, իր լիվան վերածել կիսանկախ իշխանության կամ ինչպես Բայազետի օրինակով նշեցինք՝ լիվա-փաշայության: Այսպիսով, այս վարչամիավորը, որ տնտեսապես և պատմականորեն կապված էր Սեբաստիայի հետ, պաշտոնապես մտնում էր էրզրումի էյալեթի մեջ⁵:

¹ Sê'u Belleten, 1951, № 60, էջ 628, ահ'ս նաև նույնի քարտեզը՝ մասշտ. 1 : 6000000:

² Ինճիճյան Ղ., Աշխարհագրություն, էջ 65:

³ Sê'u նույն տեղում, էջ 325:

⁴ Sê'u նույն տեղում:

⁵ Շաբին Կարահիսարը էրզրումի էյալեթի կազմում մնաց մինչև 1846 թ., տե՛ս Salname-i Devlet-i Aliyi-i Osmaniye, Istanbul, 1265, էջ 80—81 և Birken A., նշվ. աշխ., էջ 148:

¹ Sê'u Մանր ժամանակագրություններ, հ. 2, էջ 549—550:

² Sê'u Belleten, 1951, № 60:

³ Sê'u Մանր ժամանակագրություններ, № 2, էջ 552:

⁴ Sê'u Խաշատուրյան Կ. Տ., Ծրզնկա գավառ, Բյուրակն, 1898, № 17, էջ 348:

⁵ Sê'u Ղազարյան Հ., նշվ. աշխ., էջ 48:

Շարին Կարահիսարի լիվա-փաշայությունից արևելք գտնու-
վում էր նահանգի մեկ այլ լիվա, որի մասին աղբյուրների
մեծ մասը լուծում է: Դա Կելիթն էր, լեռնային մի երկրամաս,
որ տարածվում էր Գայլ գետի վերին հոսանքի շրջանում: Նրա
անունը ածանցվում էր այդ գետի անունից և նրա աղավաղ-
ված տարբերակն էր՝ Գայլ գետ-Կելիթ: Այս լիվան հաճախ
հիշատակվում էր նաև Չիֆթլիկ ձևով, որի պատճառով ու-
սումնասիրողների մոտ կամ շրջանցվում էր կամ դիտվում
իրև Թիանշանյան նոր վարչամիավոր: Անշուշտ, ամերիկա-
ցի է. Սմիթի երկասիրության մեջ բերվող Չիֆթլիկը¹ նույն
Կելիթ լիվան է: Պատահական չէ, որ ուս գիտնորականների
կազմած քարտեզներից մեկում այն անվանվում է «Կելիթ-
Չիֆթլիկի սանջակ»²:

Երզնկայի լիվայից հարավ-արևելք, Դերջանից հարավ
գտնվում էր Քըղի լիվան, որի տարածքը հիմնականում ընկ-
նում էր համանուն գետի ավազանում: Այն բաժանվում էր
Վերին Քըղի և Վարին Քըղի կազաների, որոնց միջև բնական
սահմանն անցնում էր Սերմանց լեռների Քյոշմիր լեռնագա-
զաթով և Շեյթան-Դերեսի լեռնաշղթայով:

Ուսումնասիրվող նահանգի Բաբերդ լիվայից արևելք, էր-
զրումից հյուսիս Սպեր գավառն էր: Նրան ենթակա վարչա-
միավորներից մեկը, որը հավանաբար նահիե էր և գտնվում
էր նրա հարավում՝ էրզրումի գավառի սահմանակցությամբ,
կոչվում էր Օվա կամ Օվաճըզ (Հովտիկ), ամենայն հավանա-
կանությամբ՝ էրզրումի համանուն Օվայի հյուսիսային շա-
րունակությունը լինելու պատճառով³:

Սպերի լիվայից արևելք և հարավ-արևելք տարածվում էր
Թորթումի լիվան: Այն էրզրումի նահանգի եզակի գավառնե-
րից էր, որ իր ստեղծման ժամանակներից վարչական վերա-
բաժանման չէր ենթարկվել:

Հնագույն հայկական Բասենը բաժանվում էր երկու՝ Վե-
րին և Ստորին (Վարին, Ներքին) Բասեն կամ Մջնկերտ (նաև՝

¹ Տե՛ս Smith E., նշվ. աշխ., vol. I, էջ 112:

² Տե՛ս ЦГВИА, ф. 450, д. 415, Карта Трапезундского, Эрзерум-
ского пашалыков. М-6 1: 420000.

³ Տե՛ս Ինճիճյան Ղ., Աշխարհագրություն, էջ 94—95:

Մժնկերտ) լիվաների¹, որոնց հյուսիս-արևելքից հարավ-արե-
վելք ոլորապտույտ ընթացքով հիմնականում բաժանում էր
Արաքս գետը²: Վերին Բասենի կառավարիչ բեկը նստում էր
Հասան կալայում, իսկ Ստորին Բասենի բեկը՝ Խորասանում³,
ընդ որում, էրզրումի փաշայի հրամանով վերջինս պարտա-
վոր էր ենթարկվել Հասան կալայի կառավարչին, որը հա-
մարվում էր «գլխավոր իշխան երկոցունց Բասենոյ»⁴:

Բասենից հարավ տարածվում էր Խնուսի գավառը, որը
փաստորեն ենթարկվում էր ոչ թե էրզրումի, այլ Բայազետի
փաշային⁵: Վերջինս 18-րդ դարի 70—80-ական թվականնե-
րին, արյունալի կոիվներ մղելով Խնուսի բեյի դեմ, հարկա-
գրել էր նրան ընդունելու իր գերիշխանությունը: Սակայն
Խնուսի բեյը ևս բավական ուժեղ էր և իր հերթին իրեն էր են-
թարկում հարևան Թեքմանի, Վարդոյի և Կյոքսուի (նաև՝
Գյոքսու) բեյերին, որոնց վարչամիավորները առանձին նա-
հիեններ էին⁶: Ի դեպ, ինչպես երևում է բազմիցս հիշատակ-
ված թուրքական «Բելլեթեններին» կից ներկայացված քար-
տեզից, Վարդոն իրավաբանորեն շարունակում էր մնալ հա-
րևան Վանի էյալեթի Մուշի լիվա-փաշայության կազմում և
այժմ ենթարկվում էր Խնուսին, քանի որ Մուշի փաշան ժա-
մանակավորապես թուլացել էր և այն զիջել ուժեղ Բայազե-
տի փաշային ենթակա Խնուսի բեյին:

էրզրումի էյալեթի ամենաընդարձակ վարչամիավորներից
էր Բայազետի լիվա-փաշայությունը, որը ձգվում էր Խնուսի
Թեքման նահիեից մինչև Մեծ Արարատ և Պարսկաստանի
սահմանը: Հյուսիսից սահմանակից էր Կարսի էյալեթին և
Երևանի խանությանը, հյուսիս-արևմուտքից՝ Վերին և Ստո-
րին Բասեն լիվաներին, արևելքից՝ Պարսկաստանին և հա-
րավից՝ Վանի էյալեթին⁷: Փաստորեն ամբողջ լիվա-փաշա-

¹ Տե՛ս Ինճիճյան Ղ., Աշխարհագրություն, էջ 86, Belleten, 1951, № 60,
էջ 623—624 և Bikren A., նշված աշխատությունը, էջ 149—150:

² Տե՛ս Միրախորյան Մ., նկարագրական ուղեորություն, մասն Ա., էջ 20:

³ Տե՛ս История военных действий, ч. 1, с. 114.

⁴ Ինճիճյան Ղ., նշվ. աշխ., էջ 86—87:

⁵ Տե՛ս ЦГВИА, ф. 450, д. 276. Карта турецкой территории, м-б
1: 2700000, Лондон, 1833.

⁶ Տե՛ս Ինճիճյան Ղ., նշվ. աշխ., էջ 79, 83:

⁷ Տե՛ս История военных действий, ч. 1, с. 78—79.

յությունը շորս կողմից եզերված էր լեռնաշղթաներով և լեռնագագաթներով: Նրա տարածքը փոքրացվել էր միայն հարավում, քանի որ Խամուրի լիվայից անջատվել էր նրա հարավային խոշոր հատվածը՝ Անթաբը և անցել կիսանկախ Մանազկերտի բելուսթյանը: Դա երևում է Ղ. Ինճիճյանի մի հաղորդումից, որի համաձայն Մանազկերտի բելուսթյան սահմանը հյուսիսում հասնում էր մինչև Խալի Ցազի, արևմուտքում՝ Խնուսի Կյոքսու նահիեները¹: Նշանակում է վերջինիս հարող տարածքը, այսինքն՝ Անթաբը ևս մտնում էր բելուսթյան տարածքի մեջ: Ինճիճյանի հաղորդումը լրացնում է ռուս հեղինակի մի վկայությունը, ըստ որի Բայազետի լիվափաշայության հարավային սահմանն անցնում է Ալա դաղով (Մաղկանց լեռներ), իսկ արևմտյանը՝ նրանց շարունակությունը կազմող Կլիշ Գեղուկով²: Քանի որ Անթաբը գտնվում էր վերոհիշյալ լեռնաշղթաներից հարավ, բնականաբար չէր կարող լինել Բայազետի լիվափաշայության կազմում:

2. Էրզրում (Կարին) քաղաքը և նրա գավառը

18-րդ դարում սուլթանական կառավարությունը նոր ճիգեր գործադրեց ազգային շրջաններում թուրքական վարչակարգն ամրապնդելու ուղղությամբ: Նորանոր թուրք պաշտոնյաներ ու զինվորականներ ուղարկվեցին կայսրության քրիստոնեաբնակ նահանգները: Նրանց մեծ մասը հաստատվեց քաղաքներում և վարչական այլ կենտրոններում: Տնտեսական նկատառումներով սկսեցին քաղաքներ տեղափոխվել մեծ թվով գյուղացիներ: Էթնիկական այդ տեղաշարժերի հետևանքով Արևմտյան Հայաստանի որոշ քաղաքներում զգալիորեն աճեց թյուրքալեզու տարրը:

Ուրբանիզացիայի պրոցեսն ավելի ցայտունորեն նկատվեց էրզրումում: «Թաղք տաճկաց բազմացան, — գրում է Ինճիճյանը, — անդաստանք եղեն բնակարանք»³: Թուրքական կառավարության այդ քաղաքականության հետևանքով,

ըստ Պ. Չիխաչևի, 18-րդ դարում հայերի համեմատությամբ էրզրումում մահմեդականների թիվը աճել էր երկու անգամ ավելի արագ տեմպերով⁴:

Թուրք և թյուրքալեզու բնակչության (տաճիկների) բազմացման գործընթացն այնքան արագ և բուռն էր ընթացել, որ Ինճիճյանը ընկնելով չափազանցության մեջ, նրա թիվը քաղաքում դարասկզբին հասցրել էր 100 հազ. տան⁵: Այնինչ, թե յուրաքանչյուր ընտանիքում անդամների միջին քանակը հաշվենք թեկուզև հինգ հոգի, ապա նրանց թիվը պետք է կազմեր կես միլիոն, մի բան, որ հեռու է իրականությունից: Անկասկած, այստեղ տաճիկների թվաքանակի կողքը դրված «տուն» բառը պետք է կարդալ նույնքան բնակիչ: Սակայն եթե վերջիններիս թիվը պարզելու այդ տարբերակը բավական հավանական է, ապա հայերի համար՝ վստահություն չներշնչող: Աշխարհագիրը հայերի թիվը էրզրումում համարում է ընդամենը 18 հազար ընտանիք⁶: Ինչպես կտեսնենք այլ աղբյուրներից, հայերի մասին Ինճիճյանի տվյալները թեթևորի են: Փորձենք հիմնավորել այդ հետագա ժամանակի տարբեր աղբյուրների և հեղինակների հաղորդած տեղեկություններով:

Ըստ Ֆրանսիացի ուղեգիր ժողովրդի, 1805 թ. էրզրումն ուներ 70 հազար բնակիչ⁷: 1807 թ. աշնանը այնտեղ ժամանած մեկ այլ ֆրանսիացի՝ գեներալ Գարդանը այդ թիվը հասցնում է 130 հազարի⁸: Արևմտյան Հայաստանում ճանապարհորդած անգլիացի Ջեյմս Մորիերը, վերջինից մեկ տարի հետո լինելով էրզրումում, հաղորդում է, որ, տեղացիների վկայությամբ, քաղաքի մահմեդականների թիվը 50 հազար ընտանիք է, մոտավորապես՝ 250 հազար շունչ և շորսից հինգ հազար ընտանիք հայ⁹, «... բայց այս երկրում, — ավելացնում է Մորիերը, — մանրամասնությունները միշտ չափազանց կասկածելի են, և երեք անգամ պետք է զեղչել թուրքական

¹ Տե՛ս Чихачев П., ук. соч., с. 30.

² Տե՛ս Ինճիճյան Ղ., նշվ. աշխ., էջ 68:

³ Տե՛ս Ինճիճյան Ղ., Աշխարհագրություն, էջ 68:

⁴ Տե՛ս Jaubert P. Am., նշվ. աշխ., էջ 15:

⁵ Տե՛ս Հակոբյան Հ., Ուղեգրություններ, հ. 2., էջ 96:

⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 285:

¹ Տե՛ս Ինճիճյան Ղ., նշվ. աշխ., էջ 111:

² Տե՛ս История военных действий, ч. 1, с. 79—80.

³ Ինճիճյան Ղ., Աշխարհագրություն, էջ 68:

ընտանիքների հաշվառումից»¹: Եթե հետևենք անգլիացի ուղեգրի դիտողությանը, ապա թուրքերի թիվը կկազմի մոտավորապես 16 հազ. ընտանիք կամ 88 հազար շունչ, մի արդյունք, որ բավական մոտ է նրանց իրական թվին: Սրան գումարելով չորսից հինգ հազար հայ ընտանիքներին, յուրաքանչյուր ընտանիքում հինգ կամ վեց հոգի հաշվելով՝ 20 հազարից մինչև 30 հազար շունչ հայերին, կարողանում ենք ճշգրտել Մորիերի հաղորդած տեղեկությունը քաղաքի բնակչության թվի մասին. այն է՝ մոտավորապես 110 հազար մարդ:

Էրզրումում 50 հազար ընտանիք կամ 250 հազար թուրք բնակիչ լինելու տեղեկությունը կասկածի տակ է դնում նաև Մորիերի հայրենակից դիվանագետ Վ. Աուզլեյը, որին նույնպես 1812 թվականին էրզրումցիները շափազանցված տվյալներ են հաղորդել: Նա իրավացիորեն նշում է, որ նախորդ ճանապարհորդները, վարժված լինելով Պարսկաստանի քայքայվող ու կիսամայի քաղաքներին, զարմացել են էրզրումի եռուզեռով և փողոցներում խռնված մարդկանց բազմությունը: «Սակայն իմ մակերեսային նկատողությունը, — շարունակում է Աուզլեյը, — հեղինակություն (հիմք) չի տալիս ինձ նրանց թիվը նույնիսկ երկու հարյուր հազար համարելու»²:

Էրզրումի բնակչության մասին վկայություն կա նաև Ռոբերտ Քեր Փորթրի ճանապարհորդական հուշերում:

Նա գրում է. «Վերջիններից (հայերից — Ա. Մ.) տեղեկացա, որ քաղաքի բնակչության թիվը մոտավորապես 6000 քրիստոնյա է և 50 հազար մահմեդական»³: Նկատենք, որ այս անգամ ևս հայերը միտումնավոր իրականից նվազ են ցույց տվել իրենց թվաքանակը, որպեսզի կառավարությունը հնարավորություն չստանար կրկին բարձրացնելու հարկերը, մըտցնելու նորերը, մի բան, որ սովորական երևույթ էր թուրքիայի համար⁴:

¹ Տե՛ս Հակոբյան Ն., Ուղեգրություններ, հ. 2., էջ 285:

² Հակոբյան Ն., Ուղեգրություններ, էջ 485:

³ Porter R. K., Travels in Georgia, Persia, Armenia..., vol. 2, էջ 669:

⁴ Էրզրումի հայերը, ի տարբերություն մահմեդական բնակչության, հարկման էին ենթարկվում գյուղական ազգաբնակչության նման՝ ավելի ծանր և բազմաքանակ, տե՛ս История военных действий, ч. 1, с. 105—106.

1825 թ. Մաքդոնալդ Քիննեյրը և Ֆոնտանինն քաղաքի բնակչության թիվը նշում են 100 հազար¹, 1830 թվից առաջ Բրանտը՝ 130 հազար², Սմիթը և Դուայթը՝ 16878 ընտանիք կամ 80 հազարից 100 հազար շունչ, որից 11733 ընտանիքը մահմեդական, 3950 ընտանիքը կամ 19 հազարը՝ լուսավորչական (առաքելական), 645 ընտանիքը՝ կաթոլիկ հայ³:

Ուշագրավ տվյալներ են հաղորդում ուսու հեղինակները: Ըստ Ն. Ուշակովի էրզրումում կար «...80 հազարից 100 հազար մարդ արական սեռի, որից հինգերորդ մասը հայեր էին»⁴, 1829 թ. հունիսի 27-ին ուսական բանակի հետ էրզրում մտած Ա. Ս. Պուշկինը հիշում է. «Արզրումը համարվում է Ասիական Թուրքիայի գլխավոր քաղաքը: Նրանում հաշվվում էր 100000 բնակիչ, սակայն թվում է, որ այս թիվը խիստ շափազանցված է»⁵: Նույն օրերին էրզրումում եղած դեկաբրիստ Ա. Վ. Վեդենյապինն իր ավագ եղբորը՝ նույնպես դեկաբրիստ Ապոլոնին գրում է, որ քաղաքում «կա մոտ 25 հազար տուն: Բնակիչները՝ 1/3 հայեր են, 2/5 թուրք, 1/15 հրեաներ, քրդեր, լազեր, աջարներ, եզդիներ կամ սաֆիրներ և այլն, և այլն»⁶: Երեք ուսու հեղինակներից քաղաքի բնակչության իրական թվաքանակի ամենամոտ տեղեկությունները, ինչպես կտեսնենք, հայտնում է Ա. Ս. Պուշկինը, այսինքն՝ մոտ 100 հազար մարդ: Ինչ վերաբերում է այդ մեծությունը շափազանցված լինելու բանաստեղծի կասկածներին, այն արդյունք էր պատերազմի պատճառով մահմեդական բնակչության մի մասի փախուստի, քաղաքի տնտեսական կյանքի խաթարման հետևանքով ստեղծված դժգույն վիճակի, որը ոչ մի հիմք չէր տալիս կարծելու, որ ընդամենը մի քանի օր առաջ էրզրումը 100 հազարանոց քաղաք էր:

¹ Տե՛ս История военных действий, ч. 1, с. 112.

² Տե՛ս Линч X. Ф. Б., Армения, т. II, с. 263.

³ Տե՛ս Smith E., նշվ. աշխ., vol. I, էջ 127:

⁴ История военных действий, ч. 1, с. 111—112.

⁵ Пушкин А. С., Путешествие в Арзрум во время похода 1829 года, псс, т. VI, с. 470.

⁶ Ներսիսյան Մ. Գ., Դեկաբրիստները Հայաստանում, Երևան, 1959, էջ 264:

Արևելքի և հատկապես հայ ժողովրդի պատմությունը հրապուրված և տեղում պատմական աղբյուրներին հետամուտ եղած Ա. Վ. Վեդենյապինի հաղորդած տեղեկությունը 25 հազար ընտանիք (կամ մոտավորապես 125 հազար մարդ — Ա. Մ.), զգալիորեն մոտենում է էրզրումի բնակչության իրական թվաքանակին: Իսկ եթե հավատանք Ուշակովին, ապա երկու սեռին հավասար համարելով այդ թիվը պետք է հասցնենք 160 հազարից 200 հազարի, որ անշուշտ չափազանցություն է:

Հետագայի ուսումնասիրողներից շատերի կողմից բազմաթիվ կարծիքներ և տեսակետներ են հայտնվել քննարկվող հարցի մասին: Այսպես, հայ աշխարհագետ Մ. Մաղիկյանը բերում է 100 հազար թիվը¹: Սփյուռքահայ հեղինակ Ս. Մ. Մոցիկյանը կրկնում է նրան²: 80 հազարից 100 հազար է նշում թուրք պատմաբան Հալիլ Ինալչիթը³: Հ. Ղազարյանը, համագրելով վերոհիշյալ աղբյուրներից մի քանիսի տեղեկությունները, պնդում է, որ էրզրումում 19-րդ դարի առաջին երեսնամյակին ապրում էր նվազագույնը 130 հազար մարդ, որից 100 հազարը՝ թուրք և այլազգի, 30 հազարը՝ հայ⁴:

Այսպիսով, տարբեր աղբյուրների վկայությունները և ուսումնասիրողների կարծիքները էրզրումի բնակչության թվի մասին տատանվում են 56 հազարից 200 հազարի սահմաններում: Դրանցից առաջին խումբը (Ռ. Փորթրր, Պ. Ժոբեր) պնդում է հօգուտ 56—70 հազարի, երկրորդը (Ինճիճյան⁵, Գարզան, Մորիեր, Քինենյր, Բրանտ, Սմիթ, Պուշկին, Վեդենյապին, Մաղիկյան, Մոցիկյան և այլն)՝ 80 հազարից 130 հազարի, իսկ երրորդը (Աուզլեյ, Ուշակով)՝ 160 հազարից 200 հազարի: Ակնհայտ է, որ հեղինակների մեծամասնությունը պնդում է հօգուտ երկրորդ տեսակետի:

¹ Տե՛ս Մ. Մաղիկյան, Համառոտ աշխարհագրություն, Վենետիկ, 1857, էջ 139:

² Տե՛ս Ս. Մ. Մոցիկյան, Արևմտահայ աշխարհ, Նյու-Յորք, 1947, էջ 292—293:

³ Տե՛ս Islâm Ansiklopedisi, 4 cilt, İstanbul, 1964, էջ 342:

⁴ Տե՛ս Ղազարյան Հ., նշվ. աշխ., էջ 147:

⁵ Ինճիճյանի և մյուս հեղինակների տեղեկությունները ճշգրտելուց հետո ևս մտնում ենք այս խմբի մեջ:

Հարցը քննենք ավելի մանրամասնորեն: Դարի առաջին տասնամյակներին էրզրումը ոչ միայն Արևմտյան Հայաստանի, այլև Արևելքի խոշորագույն քաղաքներից էր, ուստի չէր կարող ունենալ թեկուզև 70 հազար բնակիչ, որ հանդիպում ենք Ժոբերի աշխատությունում: Վերջինս, լինելով նապոլեոն Բոնապարտի արևելյան նվաճողական քաղաքականության շատագույներից մեկը, չէր արժանացել թուրքական իշխանությունների հովանավորությանը, ուստի մազապուրծ փախել էր օսմանյան խոշոր քաղաքներից, այդ թվում՝ էրզրումից և անցել Պարսկաստան: Մի քաղաքում, որտեղ Ժոբերը ստիպված էր եղել հանդես գալ ծայտյալ վիճակում և լինել շատ կարճ ժամանակով, չէր կարող ստանալ կամ հաշվարկել ճիշտ թվական տվյալներ: Պատահական չէ, որ ի տարբերություն մնացած բոլոր աղբյուրների, Ժոբերը էրզրումի նման վաճառաշահ քաղաքը համարում է ոչ մի նշանավոր շենք շունեցող սովորական «թուրքական քաղաք»¹, մի բան, որը ևս խոսում է իրերի դրությունը նրա անտեղյակության մասին: Ռ. Փորթրի վկայության մասին արդեն նշեցինք, որ այն ևս շատ հեռու է օբյեկտիվ լինելուց և արդյունք է հայերի միտումնավոր սխալ տեղեկատվության:

Ինչ վերաբերում է Աուզլեյի չափազանցված տվյալներին, ընդգծվեց, որ այս հեղինակն ինքն է հակված կարծելու, որ Թուրքիայում ճշգրիտ վիճակագրություն լինել չի կարող և իր հերթին ուռճեցված է համարում Մորիերի արձանագրած այն տեղեկությունը, ըստ որի էրզրումն ունեցել է 250 հազար մահմեդական բնակչություն:

Ուշակովի հաշվումները, որոնք հավանաբար կատարվել են 1828—1829 թվականների ուս-թուրքական պատերազմի օրերին, երբ բնակչությունը մշտական տեղաշարժերի մեջ էր, նույնպես հիմք չեն էրզրումի արական սեռի բնակիչներին համարելու 80—100 հազար մարդ: Եթե անգամ այդ թիվը համարենք հավաստի, ապա երկու սեռի, ընդհանուրը չի կարելի հաշվել դրա կրկնակին, քանի որ Թուրքիայում և Ասիայի մի շարք երկրներում կանայք գրեթե միշտ թվով գիշել են տղամարդկանց²:

¹ Jaubert P. Am., նշվ. աշխ., էջ 5—15:

² Տե՛ս Ա. Երիցյան, Քե Տաճկական Հայաստանում որքան հայ կա, Փորձ, 1880, № 6—7, էջ 218:

Այսպիսով, կասկածից վեր է, որ քաղաքի բնակչության իրական թվաքանակը պետք է փնտրել երկրորդ խմբի հեղինակների հաղորդումների մեջ: Այստեղ աչքի է զարնում այն փաստը, որ սույն հեղինակների մոտ էլ գերակշռում է 100—110 հազար թիվը: Դրանում համոզվում ենք, երբ դուրս ենք բերում հիշյալ խմբի բոլոր տեղեկությունների միջին թվաքանական մեծությունը, այն է՝ մոտ 107 հազար մարդ: Եթե սրան էլ ավելացնենք սերասկյարի տրամադրության տակ եղած 1500 հոգիանոց կայազորը, որն հավանաբար աղբյուրներում անտեսվել է, կստանանք էրզրումի բնակչության մոտավոր թիվը՝ 108,5 հազարից 110 հազար մարդ: Ուրեմն 2. Ղազարյանի հաշվումները, որոնց համաձայն քաղաքն ունեցել է 130 հազար բնակիչ, չափազանցված են:

Փորձենք ստացված արդյունքից որոշել էրզրումի հայ բնակչության թիվը: Ինչպես տեսանք, բերված աղբյուրներից մի քանիստում նշվում է ամբողջ բնակչության մեջ հայերի հարաբերության թիվը, որը տատանվում է 1/5-ից 1/3-ի սահմաններում¹ և կազմում է մոտ 22 հազարից 33 հազար մարդ: Նշանակում է, այդ թիվը ամենայն հավանականությամբ պետք է լինի ամբողջ բնակչության 1/4 մասը, այսինքն՝ 27,5 հազար մարդ: Այս թիվը հաստատվում է նաև հայ հեղինակ Ն. Սարգիսյանի այն հաղորդումով, որ մինչև 1829—1830 թվականները էրզրումն ունեցել է շորսից հինգ հազար ընտանիք հայ բնակիչ²: Եթե համարենք այդ թվերի միջինը 4500-ը իբրև ամենահավանական մեծությունը և բազմապատկենք ընտանիքների անդամների միջին մեծությունով, որը քաղաքում ավելի ցածր է եղել՝ մոտ 6 հոգի, ապա կստանանք գրեթե նույն թիվը՝ ուղիղ 27 հազար, որն էլ եղել է ուսումնասիրվող ժամանակաշրջանում էրզրումի հայության մոտավոր թվաքանակը:

Ն. Սարգիսյանի վկայությամբ, էրզրումցի հայերի քանորդ մասը տեղաբնիկ չէր, եկել էր Արևմտյան Հայաստանի

տարբեր վայրերից և դբադեցրել նախկինում զանազան պատճառներով քաղաքից արտագաղթած հայրենակիցների տները¹: էրզրումը և նմանատիպ խոշոր քաղաքները, որտեղ ազգային և սոցիալական ճնշումը համեմատաբար թույլ էր, կյանքի ապահովությունն ու տնտեսական պայմաններն ինչ որ շահով տանելի, արդեն դառնում էին հայ գյուղացու համար հարստահարությունից փրկվելու կարծեցյալ վայրեր: Նորեկների թվում էին նաև քաղաքացի առևտրականներ և արհեստավորներ, հատկապես Արաբկիրից, Ակնից, Երզնկայից, Վանից, Բաբերդից և այլ քաղաքներից², որոնց գործունեության համար էրզրումում կային լայն հնարավորություններ: Ըստ Ինճիճյանի, բացի այս հայությունից, քաղաքի ճեպիո դռան կողմում ապրում էր նաև 50 ընտանիք հայ բոշա³:

Կարինի հնագույն բնակիչներից էին նաև հուլյները, որոնց թիվը 1809 թ. կազմում էր մոտավորապես հարյուր ընտանիք⁴ (մոտ 800 մարդ — Ա. Մ.): «Կա թերևս հազար պարսիկ, — վկայում է Ջ. Մորիերը, — որոնք ապրում են Քարվանսարայում և ղեկավարում կարավանով իրենց երկրի առևտուրը»⁵: Վեդենյայիսի վերը բերված վկայությունից երևում է, որ քաղաքում ապրել են նաև հրեաներ, որոնք նույնպես զբաղվել են տարանցիկ առևտրով: էրզրումի բնակչության մեջ սահմանափակ թիվ էին կազմում քուրդ հողատեր բեյերը, լազերը, աջարները, ասորիները, եվրոպացի առևտրականներն ու դիվանագետները և այլոք, որոնց ընդհանուր թվաքանակը չէր կարող անցնել մի քանի հազարից:

Այսպիսով, էրզրումը հիմնականում մահմեդական բնակչություն ունեցող քաղաք էր: Ընդհանուր «մահմեդական» անվան տակ միավորվող թվարկված ժողովուրդները, որոնք իշխանությունների կողմից նույնացվում էին թուրքերի հետ,

¹ Տե՛ս Սարգիսյան Ն., Տեղագրությունք ի Փոքր և ի Մեծ Հայս, էջ 68:

² Տե՛ս Մատենադարան, Կարապետ արքեպիսկոպոսի արխիվ, թղթ. 163ա, վ. 260, թ. 1:

³ Տե՛ս Ինճիճյան Ղ., Աշխարհագրություն, էջ 63:

⁴ Տե՛ս Հակոբյան Հ., Ուղեգրություններ, հ. 2., էջ 285, է. Սմիթը հույների թիվը համարում է 50 ընտանիք, որ թիչ հավանական է: Տե՛ս Smith E., նշվ. աշխ., հ. 1, էջ 127:

⁵ Հակոբյան Հ., Ուղեգրություններ, էջ 285:

¹ Տե՛ս է. Սմիթի, Ջ. Մորիերի, Ա. Վեդենյայիսի, Ուշակովի և 2. Ղազարյանի գրքերից վերը բերված համապատասխան հատվածները:

² Տե՛ս Սարգիսյան Ն., Տեղագրությունք ի Փոքր և ի Մեծ Հայս, էջ 76, համա.՝ նաև Միրախորյան Մ., նշվ. աշխ., էջ 140 էփրիկյան Ս., նշվ. աշխ., № 2, էջ 319 և այլն:

միասին կազմում էին մեծամասնություն: Եթե քաղաքի ողջ բնակչության թվից՝ մոտ 109 հազարից հանենք հայերի թիվը (27 հազար) և մնացած քրիստոնյաներին (հաշվելով մոտ 1—1,5 հազար), կստանանք թուրքերի, քրդերի, լազերի, աջարների և այլ մահմեդական ժողովուրդների ընդհանուր թիվը՝ մոտավորապես՝ 80 հազար: Այդչափ պետք է համարել քաղաքի մահմեդական բնակչության թիվը մինչև 1828—1829 թթ. ռուս-թուրքական պատերազմը¹: Բացի զինվորականներից և պաշտոնյաներից, ինչպես նշվեց, էրզրումում էին ապրում նաև թուրք հողատերեր, որոնք գյուղերում թողնելով հատուկ վերակացուներ, իրենք գերադասում էին տեղափոխվել քաղաք²:

19-րդ դարի առաջին տասնամյակներին էրզրումը Արևմտյան Հայաստանի ամենամարդաշատ քաղաքը լինելուց բացի, ամենախոշոր առևտրաարհեստավորական կենտրոնն էր: Նրա գլխավոր փողոցներում էին գտնվում հայ արհեստավորների բազմաթիվ արհեստանոցներն ու առևտրականների կրպակները: «Ծն ի նմա և բազմութիւն վաճառականաց մանաւանդ յազգէս հայոց, — գրում է Ինճիճյանը, — որոնց հաճախութիւն դաս է զերգիրում ի կարգս վաճառաշահ քաղաքաց օսմանեան տերութեան»³:

Օսմանյան կառավարությունը հսկայական շահույթ էր ստանում էրզրումով տարվող տարանցիկ առևտրից⁴: 1811—1812 թթ. գերմանացի Ֆրեյզանը գրում է. «էրզրումը Հայաստանի արևմտյան մայրաքաղաքն է, նմանապես պահեստը թուրքական առևտրի, որ այստեղից անցնում է Հնդկաստան»⁵: Արևմտյան Հայաստանի այլ վաճառաշահ քաղաքները՝ Ակնը և Արաբկիրը էրզրումում ունեին մշտական առևտրական ներկայացուցիչներ⁶: Կային առևտրական և դիվանագիտական

մարմիններ, որոնք թուրքիայի արևելքում ներկայացնում էին եվրոպական մի քանի երկրներ:

Այսպիսով, էրզրումի բնակչության աճը պայմանավորված էր սոցիալ-տնտեսական և քաղաքական մի շարք պատճառներով, պատճառներ, որոնք հատուկ չէին Ասիայի բազմաթիվ այլ քաղաքների և բնակավայրերի, որի հետևանքը նրանց ազգաբնակչության դինամիկայում խոշոր տեղաշարժերի բացակայությունն էր:

19-րդ դարի առաջին տասնամյակներին էրզրումի էյալեթի համանուն լիվայի տարածքում գտնվում էին ավելի քան 100 գյուղեր¹, որոնց մեծագույն մասը բնակեցված էր միայն հայերով, մյուս մասն ուներ խառը՝ հայ-թուրքական բնակչություն: Այդ գյուղերում թյուրքական ծագում ունեցող ժողովուրդները նախորդ ժամանակաշրջանում կայսրության գանազան շրջաններից տեղափոխված բնակիչներ էին: «էրզրումից այն կողմ (գեպի արևմուտք և հյուսիս-արևմուտք, — Ա. Մ.), գրում է Մ. Լիխուտինը, — նրանք (թուրքերը — Ա. Մ.), իբրև նվաճողներ գրավել են լավագույն դաշտավայրերը»²: Նրանց զգալի մասը չէր զբաղվում հողագործությամբ: Ոմանք էլ, որ նախկինում զինվորական ծառայության համար ստացել էին հողեր, պահպանելով հողային սեփականատիրական իրավունքը իրենց ձեռքում, տեղափոխվել էին էրզրում և ապրում էին այնտեղ³: Դրանք հիմնականում թուրք աղալարներն էին, որ հայ սակավահող և հողազուրկ գյուղացիությանը՝ մարաբաններին էին թողնում իրենց հողերը և ստանում բերքի 2/3-րդը: Թուրքական տարրի ներթափանցման հետևանքով հաճախակի էին դառնում հայ բնակչությանը կրոնափոխելու դեպքերը⁴: Աճում էր հայերնի մեջ օտար բառերի գործածու-

¹ Տե՛ս նույն միտքը Մասյաց Աղալնի, 1864, № 11, էջ 888:

² Տե՛ս Jaubert P. Am., նշվ. աշխ., էջ 102—103:

³ Ինճիճյան Դ., նշվ. աշխ., էջ 71:

⁴ էրզրումի առևտրի մասին տե՛ս նաև Чихачев П., Письма о Турции, с. 31, Линч Х. Ф. Б., Армения, т. II, с. 263.

⁵ Հակոբյան Հ. Ուղեգրություններ, 5. 2, էջ 410:

⁶ Տե՛ս Մատենադարան, Կարապետ արքեպիսկոպոսի արխիվ, թղթ. 163ա, Վ. 260, թ. 1:

¹ Տե՛ս Jaubert P. Am., նշվ. աշխ., էջ 102:

² Лихутин М., Русские в Азиатской Турции, с. 366.

³ Տե՛ս Ա.—Դո, նշվ. աշխ., էջ 168—169:

⁴ Մատենադարանի տարբեր արխիվներում պահվող փաստաթղթերից երևում է, որ կառավարության դրժամք նորեկ թուրք բնակիչները բռնություններ էին գործադրում հայ գյուղացիության նկատմամբ, պարտադրում բնորոնել մահմեդականություն (Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 181, Վ. 162բ, թ. 1):

թյունը, պաշտոնական աղբյուրներում վերանայվում էին հայկական տեղանունները կամ գործածվում թյուրքական հընչմամբ:

Էրզրումի լիվայի գյուղերը բաժանվում էին երկու խմբի՝ արևելյան և արևմտյան: Առաջինը, որ ավելի ընդարձակ տարածություն էր զբաղեցնում, տարածվում էր Եփրատ գետի ակունքների շրջանում՝ հյուսիսում հասնելով մինչև Տումլի (հաշափայտ), հարավ-արևելքում՝ Փալան-տյոթեն և էյերլի լեռները, իսկ արևմուտքում՝ Ալաջա և էվրենլի գյուղերը: Էրզրումի դաշտի արևմտյան մասում և Եփրատի աջակողմյան Սարչամ վտակի ավազանում ընկած էին լիվայի երկրորդ խմբի գյուղերը: Կարծում ենք, որ դրանք այդ ժամանակ երկու խոշոր նահիեններ էին, որոնցից առաջինի վարչական կենտրոնը Իլիջա, երկրորդինը՝ Աշկալա նշանավոր գյուղերն էին¹:

Իլիջա գյուղը, որ հայտնի էր հնագույն ժամանակներից, գտնվելով Կարինից Գերջան, Երզնկա, Բաբերդ տանող հայտնի առևտրական ճանապարհի վրա, դարձել էր ուսումնասիրվող էյալեթի և անգամ ամբողջ Արևմտյան Հայաստանի նշանավոր տնտեսական օջախներից մեկը: Գյուղի արագ զարգացմանը նպաստել էր նաև այն հանգամանքը, որ այնտեղ գտնվող հանքային տաք ջրերը², որոնք ունեին բուժիչ հատկություն, դեպի իրենց են ձգել նույնիսկ հեռավոր գավառների բնակիչներին: Դարասկզբին այն ուներ հարյուր տուն բնակիչ՝ «ըստ մեծի մասին յազգէս հայոց»³:

Իլիջա նահիեի ամենախոշոր գյուղը Կանն էր: Կարինից մի քանի կիլոմետր հյուսիս-արևմուտք գտնվող այս բնակավայրը ոչ միայն հողագործական, այլև արհեստագործական կենտրոն էր: Նրա արհեստագործական ապրանքները մեծ համբավ ունեին Էրզրումի շուկաներում: Հետաքրքիր է, որ տարբեր ժամանակներում Կանի բնակչության թիվը երբեք չէր իջնում 300—400 բնտանիքից (մոտավ. 2500 շունչ):

Կանից հյուսիս, Կարնո շամբի ձախ ափին ընկած էին հայկական Զիֆթլիկ, Սովուկ Ջերմուկ (Սառը Ջերմուկ), Շխնոց, Մուտուրկու, Քասամաձոր և այլ գյուղեր: Մուտուրկու գյուղը հայտնի էր նրանից ոչ հեռու գտնվող նշանավոր Ս. Լուսավորիչ վանքով, որը Էրզրումի նահանգի հոգևոր կենտրոնն էր: Այս խմբի գյուղերից հիշատակության արժանի է Գեղախոռը: Այն խոշոր գյուղ էր, որի «բնակիչք գրեթէ առհասարակ յազգէս հայոց, որք են գրաստապանք և ջորեվարք կամ խաթըր-ճիք ճանապարհորդացն էրզիռումայ»⁴:

Մուտուրկուից հյուսիս, հյուսիս-արևմուտք գտնվում էին Կրճնկոց (մինչև 1880-ական թվականներն ուներ ավելի քան 150 տուն հայ բնակիչ)⁵, Գրիչք, Ումուղում (Բաղնիք), Քարվոր գյուղերը: Այս մասը գավառի ամենախիտ բնակեցված շրջաններից էր: Միայն Ումուղումի արևմտյան կողմում միմյանց կպած տարածվում էին յոթ գյուղեր, որոնց անուններն անհայտ են, ուստի հետագայում ամայացած այդ վայրը կոչում էին «Բագնի» ընդհանուր և պայմանական անունով⁶:

Քարվոր գյուղից հյուսիս Մղկանց (Սողկանց), Օրան Գրիչք, Մճրոնք և հաշերենց գյուղերն էին⁴: Այս գյուղերից հյուսիս-արևմուտք գտնվում էր գավառի մեկ այլ խոշոր գյուղ՝ Երկնիստը: Այն իր անունը ստացել էր երկու հանդիպակաց բլրակների վրա գտնվելու պատճառով: Ուներ 500 ծուխ հայ բնակիչ⁵: Երկնիստի հյուսիսային հարևանը Տումլի լեռան հարավային ստորոտին ընկած հաշկավանքն էր, որն Արևմրտյան Հայաստանի հայտնի հոգևոր կենտրոններից էր:

Կարնո շամբի հյուսիսային ափին գտնվող արժանահիշատակ գյուղերն էին Մյուլթը, Գվնիկը, Պատիշենը, Օձնին (նաև Ողնի), Կարարզը (Ղարարզ, Կար Արծն): Նրանցից վերջինի շրջակայքում տարածվում էին միջնադարյան խոշոր Արծն քաղաքի ավերակները: 16-րդ դարում բնութայամբ մահմեդականացված Կարարզը նորից համալրվել էր հայ բնակիչներով:

¹ Ինճիճյան Ղ., նշվ. աշխ., էջ 78:

² Տե՛ս Քոսյան Հ., Բարձր Հայք, հ. Բ., էջ 57:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 67:

⁴ Տե՛ս նույն տեղում:

⁵ Տե՛ս Քոսյան Հ., Բարձր Հայք, հ. Բ., էջ 34:

¹ Տե՛ս ЦГВИА, ф. 450, оп. 276, Карта турецких территорий в Азии с обозначением границ..., М-6 1 : 2700000.

² Գյուղի անունը առաջացել է այդ ջրերի՝ ջերմուկի (թուրք.) անունից:

³ Ինճիճյան Ղ., Աշխարհագրություն, էջ 77:

րով և դարձել էր ավան՝ Դվնիկը ևս աչքի էր ընկնում բազմամարդությամբ: Ըստ պահպանված ավանդության, այդ գյուղաքաղաքն ուներ 700 տուն բնակիչ²: Ներկայացված գյուղերի շրջանում կային բազմաթիվ այլ գյուղեր, որոնք ևս հիմնականում հայաբնակ էին:

Այժմ համառոտակի կանգ առնենք Կարինից մոտավորապես 20—40 կմ հյուսիս, հիշատակված գյուղերից արևելք, Եփրատի վերին հոսանքի շրջանում սփռված հայկական գյուղերի նկարագրության վրա: Գեղախոռոց մինչև Երկնիստ ընկած բնակավայրերից արևելք, Կարին-Թորթում ճանապարհի երկայնքով, ձգվում էին Ձիթահող, Թվանչի, Հինձք, Արծաթի, Դինարիգոմ խոշոր գյուղերը: Հինձքի մոտ էր գտնվում նշանավոր Կարմիր վանքը, որի միջնադարյան կարմրագրմբեթ եկեղեցին հիացնում էր ճանապարհորդներին և անցորդներին:

Ձիթահողի, Հինձքի, Թվանչի, Արծաթիի դարասկզբի բնակչության մասին թվական տվյալներ չկան: Սակայն ավելի ուշ ժամանակաշրջանի առանձին ուսումնասիրողներ և ճանապարհորդներ տեղացիներից և 1830 թ. Ռուսական կայսրություն վերաբնակված գաղթականներից պարզել են, որ վերոհիշյալ և բազմաթիվ այլ գյուղեր մինչև գաղթը ունեցել են ստվար բնակչություն: Առաջ անցնելով նշենք, որ այդ գաղթից հետո բոլոր գյուղերը չգաղթեցին և եղան նաև այնպիսիները, որոնք քիչ տուժեցին գաղթից, այնուամենայնիվ, դրանցից յուրաքանչյուրի գաղթող բնակիչները կարողացան Անդրկովկասում հիմնադրել մի քանի գյուղ, մի հանգամանք, որը վկայում է նրանց սկզբնական հայրենիքում, այսինքն էրզրումի դաշտում բազմամարդ լինելու մասին:

Կարևո դաշտի հյուսիսարևելյան հատվածում, Եփրատի ակունքների շրջանում ընկած էին Կամպիր, Աղտաղտ, Դավթա, Քյոշք, Կիրակոսակ, Կյունկեորմեզ, Գարակյուպեկ, Ծաղկի, Կըզըլ-քիլիսե (հայերեն՝ Կարմիր եկեղեցի) գյուղերը:

Իլիջա նահիբի գյուղերի մի խումբ էլ գտնվում էր էրզրումից անմիջապես արևմուտք, դաշտի գրեթե կենտրոնական

մասում: Դրանցից էին Աղորենը, Կեսը (նաև՝ Կերզ), Բլուբը, Արշունին, Մյորդուլուկը, Յարմջան, Սնկառիճը, Սոգյուտուն և այլն:

Վերջապես, այս նահիբի գյուղերի մի շարք էլ ձգվում էր դաշտի ծայր հարավային երկայնքով՝ էյերլի լեռան արևմուտյան ստորոտից մինչև Հայտարի գյուղը և միավորում էր Խանակե, Յաղմջուկ (Յաղմուրճուկ), Թուզճի (Տուսճի), Թափա գյուղ, Մուխանտա, Քեկիրի, Գմբեթ, Յոզբեկ և Հայտարի գյուղերը:

Ինչպես նշվեց, էրզրումի դաշտի արևմտյան մասում և Արևմտյան Եփրատի Սարչամ վտակի հովտում գավառի երկրորդ նահիբն էր՝ Աշկալան կամ Աշխալան: Ի տարբերություն Իլջա նահիբի գյուղերի, այստեղ պատկերը մի փոքր այլ էր: Դեռևս ուշ միջնադարում հայտնվել էին թուրք վերաբնակիչներ, որոնք տիրացել էին հայկական մի շարք գյուղերի և այնտեղից արտաքսել բնակչությանը: Հալածանքներից խուսափելու համար, առանձին գյուղերի բնակիչներ էլ տեղափոխվել էին գավառի կենտրոնական շրջաններ՝ էրզրում քաղաքը և նրա շրջակայքի գյուղերը: Դրա հետևանքով մեծացել էին առևտրական ճանապարհների վրա ընկած Աշկալան, Ջինիսը, Բոնակապանը և Թոփալ-Չավուշը:

Աշկալան իր անունը ստացել էր գյուղում պահպանվող միջնադարյան ամրոցի (թուրք.՝ կալե-ամրոց) անունից: Այն գտնվում էր բարձրադիր բլուրների վրա, Եփրատի աջ ափին, էրզրումից Երզնկա կամ Բաբերդ-Տրապիզոն տանող առևտրական ճանապարհի վրա: Սակայն առևտրական ուղիների վրա գտնվելու հանգամանքը մյուս կողմից էլ նմանօրինակ գյուղերի համար դարձել էր պատուհաս: Նրանք ավելի հաճախակի էին ենթարկվում քուրդ ավազակախմբերի հարձակումներին ու թալանին:

Պարբերաբար կրկնվող ավերումների հետևանքով՝ 18-րդ դարի վերջին այնտեղի բնակչության թիվը 500 ընտանիքից կրճատվել էր մինչև 300 ընտանիքի¹, որոնց մեջ հայերից բացի արդեն կային նաև թյուրքական ծագում ունեցող բնակիչներ: Ընդամենը մեկ տասնամյակ անց՝ 19-րդ դարի սկզբին

¹ Տե՛ս Ինճիճյան Ղ., Աշխարհագրություն, էջ 77:

² Տե՛ս Քոսյան Ն., նշվ. աշխ., էջ 28:

¹ Տե՛ս Ինճիճյան Ղ., Աշխարհագրություն, էջ 78:

գյուղի բնակչության արտագաղթն այնքան էր ուժեղացել, որ 1807 թ., ըստ Գարգանի, մնացել էր 100 տուն¹: Ավելին, 1812 թ. Աշկալան անգլիացի Աուզլեին արդեն ներկայանում էր որպես փոքրիկ և աննշան գյուղ²: Ի դեպ, նույն տխուր բախտին արժանացան նաև նահիբի այլ գյուղեր, ինչպես Թոփալ-Չավուշը, որը այս գյուղախմբի լեռների հարավային փեշերին ընկած հայաշատ ավան էր³:

Աշկալայի գյուղերից հայտնի էր Ջինիսը: Այն հնագույն հայկական գյուղերից էր: Գտնվում էր նահիբի վարչական կենտրոնից հարավ-արևելք: 1809 թ. այնտեղ ժամանած Ջ. Մորիերը այն հիշում է իբրև անզուգական գեղեցկություն ունեցող հայկական մի հյուրասեր գյուղ⁴: «Շէն մեծո, — գրում է նրա մասին Ղ. Ինճիճյանը, — ... բնակիչք նորայ գրեթէ առհասարակ յազգէս հայոց և քանի ինչ տուն յունաց»⁵: «Գյուղի բնակիչները հաստատում են, — գրում է Վ. Շտրեկկերը, — որ գյուղում (Ջինիսում — Ա. Մ.) կար ավելի քան 300 տուն մինչև Պասկևիչի արշավանքը»⁶:

Աշկալայի մյուս հիշարժան գյուղերից էին Նարդիվանը, Բոնակապանը, Կարահասանը, Սարչամի և Շողան ձորերում գտնվող Մեծ Գաղտառիճը, Երկան Մասուրը, Սարչամը և այլքն: Նահիբն ուներ ավելի քան 50 գյուղ⁷: Թվարկված գյուղերից առանձնահատուկ դեր ուներ Բոնակապանը: 1813 թվականին վերաբերող մի վավերագրից երևում է, որ այն մարդաշատ հայկական գյուղերից էր⁸: Նրա բնակչության մի մասը թրքախոս էր, չնայած «... բարուք, սովորութեամբ և այլ հատկութեամբ աւելի հայոց կը նմանին...»⁹: Պարզ է, որ վերջիններս թրքացած հայեր էին:

¹ Տե՛ս Հակոբյան Ն., Ուղեգրություններ, հ. 2., էջ 95:

² Տե՛ս նույն տեղում, էջ 486:

³ Տե՛ս Ինճիճյան Ղ., նշվ. աշխ., էջ 78:

⁴ Տե՛ս Հակոբյան Ն., Ուղեգրություններ, էջ 289:

⁵ Ինճիճյան Ղ., նշվ. աշխ., էջ 78:

⁶ Штреккер В., Топографические очерки Верхней Армении. — «Известия Кавказского отдела», т. III, приложение, Т., 1874, с. 1.

⁷ Տե՛ս Ֆերուհյան Բ. Պ., Ծանապարհորդություն ի Բաբելոն ընդ Հայաստան յամի տեան 1847, Արմաշ, 1876, էջ 202—203:

⁸ Տե՛ս Մատենադարան, Կարապետ արք. արխ., թղթ. 163ա, վ. 39, թ. 1:

⁹ Եփրիկյան Ս., Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, № 1, էջ 415:

Այսպիսով, էրզրումի էյալեթի կենտրոնական լիվան Արևմտյան Հայաստանի ամենախիտ բնակեցված գավառներից էր և աչքի էր ընկնում մարդաշատ հայկական գյուղերով: Անգամ փոքր գյուղերում բնակվում էր միջին հաշվով 50 ընտանիք¹: «Գյուղերը բազմամարդ են, — կարդում ենք էրզրումի լիվայի մասին ռուսական աղբյուրներում, — յուրաքանչյուրն ունի ոչ պակաս 50, իսկ նրանցից մի քանիսը՝... 400 ծուխ»²: Ընդգծենք, որ բազմանդամ ընտանիքներով այս լիվան աչքի էր ընկնում ոչ միայն էյալեթում, այլև ամբողջ Արևմտյան Հայաստանում³:

3. Արևմտյան գավառներ

էրզրումի նահանգի բազմամարդ գավառներից էին Դերչանն ու Բաբերդը:

Ուշ միջնադարում հարավից նորանոր ցեղերի հայտնվելու հետևանքով Դերչանը, Արևմտյան Հայաստանի մի շարք գավառների նման, դարձավ քրդական ավազակային հրոսակախմբերի մշտական արշավանքների շրջան: Հայ բնակչության որոշ մասը հարկադրված ընդունեց մահմեդականություն⁴: Այս գավառը հատկապես տուժեց 1807—1809 թթ. քրդական մի քանի ցեղերի ավերիչ ասպատակություններից: Այն «...ղեյիների հարստահարությունների և քրդերի վերջին արշավանքների հետևանքով, — կարդում ենք ականատես Ջ. Մորիերի հուշերում, — բոլորովին անմարդաբնակ էր դառել, և տեղեկացանք, որ Մամախաթունը, ուր պետք էր, որ օթևանեինք այդ գիշերը, նույնպես ամայացել էր»⁵:

Թուրքական կառավարության թողտվությունից առատորեն օգտվող ավազակային ջոկատները շրջափակել էին գավառը, հսկողության տակ վերցրել բոլոր ճանապարհները: Հազիվ թե կարելի լիներ գտնել որևէ հայկական գյուղ, որի բնա-

¹ Տե՛ս История военных действий, ч. 1, с. 104.

² Известия Кавказского отдела, т. VI, № 2, с. 193.

³ Տե՛ս Ա—Դո, վանի, Բիթլիսի և էրզրումի էյալեթները, էջ 235:

⁴ Տե՛ս Ерицов А., Список населенных пунктов. //Известия Кавказского отдела, т. VIII, приложение, с. 94.

⁵ Հակոբյան Ն., Ուղեգրություններ, հ. 2., էջ 290:

կիշները ճաշակած չլինելն թալանի ու ավերածությունների դառնությունները: Ֆիզիկական բնաջնջումից ազատվելու ակնկալությամբ, բազմաթիվ հայ գյուղացիներ լքել էին իրենց բնակավայրերը և ապաստանել շրջակա լեռներում: Հենց ան-իշխանության այս ժամանակաշրջանում էլ անմարդաբնակ դարձան կամ բնակեցվեցին քրդերով Դերջանի մի շարք գյուղեր: Մամախաթունից աբստուտք ընկած Մոս, Ակ-Դոկան, Քիսմիձոր գյուղերը որոնք մի քանի ամիս առաջ հայաշատ շեներ էին, նույնպես արագորեն մարդաթափվեցին քրդական ցեղերի ավազակային ասպատակություններից հետո և 1809 թ. Ջ. Մարիերին ներկայացան իրրև անմարդաբնակ վայրեր¹: Սուաջին երկուսը այլևս չվերաշինվեցին, իսկ Քիսմիձորը բնակեցվեց քրդերով: Հայկական Բուն գյուղը, ըստ Պ. Ի. Ավերյանովի, վեր էր ածվել «... այդ սանջակի քրդերի սովորական հավաքատեղիի և գիշատիչների որջի, որոնք հարստահարում էին ամբողջ Դերջանի հովիտը»²: Թուրքական իշխանությունները ոչ միայն լուրջ միջոցներ ձեռք չառած Դերջանում և հայկական այլ գավառներում ստեղծված աղետալի վիճակը վերացնելու ուղղությամբ, այլև իրենց հերթին ուժեղացրին տեղական բնակչության ճնշումը³:

Գավառի նույնանուն վարչական կենտրոնը, որը թուրքերը վերանվանել էին Մամախաթուն, գտնվում էր Եփրատի և նրա ձախակողմյան Դերջան վտակի միախառնման տեղից արևելք: Այն էր գրումից Երզնկա և ավելի արևմուտք տանող առևտրական ճանապարհի վրա ընկած ոչ բազմամարդ գյուղաքաղաք էր: Կրկին քաղաք դառնալու գլխավոր խոչընդոտը, ինչպես նշվեց, իրար հաջորդող ավազակային արշավանքներն էին, որոնց հետևանքը անհրաժեշտաբար դառնում էր բնակչության արտագաղթը կամ կոտորածը: Մամախաթունի բնակչության վերահամալրումը հնարավոր դարձավ միայն 20-ական թվականներին: Ըստ է. Սմիթի հաղորդման, 1830 թ. միայն հայ

ընտանիքների թիվը նրանում հասել էր երկուսից երեք հազարի⁴: Դա նշանակում է, որ Մամախաթունը 20—30-ական թվականներին դարձյալ հայաշատ բնակավայր էր:

Դերջան գավառը վարչականորեն կազմող գյուղախմբերի մեծ մասն ընկած էր Եփրատի աջ ափին⁵: Դրանցից հայերով ամենախիտ բնակեցված էին Բագառիճ, Կարագուլակ նահի-ենները: Եփրատի ափին, ոչ ընդհանրապես տարածքում Բագառիճ հայկական գյուղի շրջակայքում գտնվող գյուղերի խումբը, դեպի Արևմտյան Հայաստան մահմեդական բնակչության զանգվածային բնակեցման պայմաններում, ամբողջ 19-րդ դարում մնաց գրեթե զուտ հայաբնակ շրջան: Ըստ գեներալ Պարդանի վկայության, անհամար ավերածություններ տեսաւ Բագառիճ ավան-ամրոցը (1807 թ.) դարձյալ ուներ 65 ծովս բնակիչ⁶: 20-ական թվականներին այս գավառում ստեղծված ժամանակավոր խաղաղ իրավիճակի շնորհիվ վերաշինվեցին Բագառիճը և նրա հարևան Առաջին (Վերին) Խաչողներ, Երկրորդ (Ներքին) Խաչողներ, Խաչիկ և այլ գյուղեր:

Դերջանի խոշորագույն գյուղերից էր Կարագուլակ կամ Կարակուլակը⁷: Նրա «...հարևան գյուղերում,— վկայում է է. Սմիթը,— հայերը բազմաթիվ են և շատերում էլ թուրքեր չկան»⁸: Այսօրինակ բնակավայրեր էին Վժանը, Բունը, Մանցը, Մաղկարին, Ապրանքը, Մարիզայան (Մարիկայա), Բրիչը, Գառնբերդակը, Բուլքը և այլն⁹: Անգամ Լակզի կամ Լակձոր լեռնային և լեզգիապատկան ու քրդախառն նահիեն, որն արտաքին աշխարհից կտրված մի շրջան էր,

¹ Տե՛ս Smith E., նշվ. աշխ., vol. I, էջ 115: Ի դեպ, Սմիթը ներկա դեպքում սխալմամբ Դերջանի վարչական կենտրոնը համարում է Քրդին: Շարադրանքից երևում է, որ խոսքը Մամախաթունի մասին է:

² Տե՛ս Колюбакин А. М., Материалы для военно-статистического обозрения Азиатской Турции, т. II, ч. II, с. 422.

³ Տե՛ս Հակոբյան Հ., Ուղեգրություններ, հ. 2., էջ 95:

⁴ Տե՛ս Smith E., նշվ. աշխ., հ. 1, էջ 114, Ինճիճյան Ղ., նշվ. աշխ., էջ 97, Հակոբյան Հ., Ուղեգրություններ, էջ 292:

⁵ Smith E., նշվ. աշխ., էջ 114:

⁶ Տե՛ս Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 208ա, վ. 2444, թ. 11բ:

¹ Տե՛ս Հակոբյան Հ., Ուղեգրություններ, հ. 2., էջ 291—292:

² Аверьянов П. И., Курды в войнах России с Персией и Турцией, с. 71.

³ Տե՛ս Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 95, տե՛ս նաև Чихачев П., նշվ. աշխ., с. 36.

ուններ հայկական գյուղեր¹, որոնց անունները առ այսօր մնում են անհայտ:

էրզրումի նահանգի արևմտյան մյուս գավառը՝ Բաբերդը զբաղեցնում էր Ճորոխ գետի ակունքների շրջանը: Նրա վարչական կենտրոն Բաբերդը մինչև 1829 թ. ամուր բերդաքաղաք էր: Հյուսիսից լազերի հարձակումների մշտական վտանգը ստիպում էր, որ այն ամրացվեր և վերածվեր անառիկ ամրոցի: Ուստի այն անընդհատ վերակառուցվում էր, ավելացվում էր նոր աշտարակների ու պարիսպների թիվը: Բաբերդի բնակչության մեծ մասը հայ արհեստավորներ էին, որոնք միավորվում էին տարբեր համաքարություններում²: Խաչես քաղաքի, այնպես էլ նրա գավառի բնակչության մեջ մեծ թիվ էին կազմում նախորդ ժամանակաշրջանում մահմեդականացված հայերն ու մասամբ՝ հույները, որոնց մի ոտվար հատվածը կեսկեսներ էին, այսինքն՝ կես հայ, կես օտարազգի և հաճախ, լազերի ասպատակություններից հետո մնալու նպատակով իրենց հայ-լազ էին համարում³:

Բնակչության այդ խոշոր հատվածը թեև դարեր առաջ առերես ընդունել էր մահմեդականություն, սակայն ծածուկ շարունակում էր դավանել հայ առաքելական եկեղեցուն, պահպանում էր լեզուն (առանձին դեպքերում կարող էր կորցնել այդ հատկանիշը), ազգային սովորությունները, կենցաղի առանձնահատկությունները: Այս գավառին քաջատեղյակ Մ. Արսւլանյանը գրում է. «Բաբերդի մահմեդական տարրին մեկ մասը հին հայերէ սերած է, սելճուքեան, պարսկական եւ օսմանեան տիրապետութեան օրով իսլամացած»⁴: Այս կապակցությամբ վկայակոչենք նաև նշանավոր աշխարհագիր Վախուշտի խոսքերը Բաբերդի «իրենց (հատուկ) վարք ու բար-

քով»¹ տարբերվող մահմեդական բնակչության մասին: Նույն միտքն է հայտնում նաև Ղ. Ինճիճյանը, «բնակիչք նորայ առհասարակ տունք իբր 2000, ըստ մեծի մասին տաճիկք», սակայն մասնագիտությամբ՝ «արուեստաւորք»²: Հանրահայտ է, որ թուրք բնակչության մեջ արհեստավորների ու առևտրականների թիվը շնչին էր: Տնտեսության այդ ճյուղերը գտնվում էին հայերի, հույների և քրիստոնյա այլ ժողովուրդների ձեռքում, մանավանդ այնպիսի քաղաքում, ինչպիսին էրզրումից Տրապիզոն և Սև ծովով Կ. Պոլիս ու Եվրոպա տանող տարանցիկ առևտրի ճանապարհի վրա բնկած Բաբերդն էր: Մինչև 1828 թ. նրա բնակչությունը աճեց և հասավ 3 հազար ծխի³:

18-րդ դարի վերջին տասնամյակներին և 19-րդ դարի սկզբին լազերի կազմակերպած արշավանքների հետևանքով ամայացան Բաբերդի մի շարք հայկական և հունական գյուղեր: Թերևս այն հանգամանքը, որ շատ բնակավայրեր վաստակել էին «Ավերակ», «Քարավերակ», «Հնձավերակ» և նման այլ անուններ, խոսում է այն մասին, որ այս գավառը տասնամյակներ շարունակ եղել է մշտական ասպատակությունների շրջան: Դադարել էին գործելուց միջնադարյան տասնյակ վանքեր ու եկեղեցիներ: Նրանցից ութն էլ վերածվել էին մզկիթների⁴: Այս ամենի հետևանքով ավելի արագացավ կեսկեսների թրթաքման գործընթացը: Դրանց գումարվեցին նաև թուրքական իշխանությունների նորանոր բռնությունները: Յուրաքանչյուր մահմեդականացված հայի կրկին քրիստոնեությանը վերադառնալու փորձին նրանք պատասխանեցին ազգային ու սոցիալական ճնշման ուժեղացմամբ: Օրինակ, Բաբերդում հարկադրաբար մահմեդականացրած մի հայ ազգիկա քրիստոնեության վերադարձնելու փորձը վերջացավ նրանով, որ տեղի հայկական թաղամասը զինված հարձակման են-

¹ Տե՛ս Ինճիճյան Ղ., նշվ. աշխ., էջ 110, Ерицов А., Список населенных пунктов. //Известия Кавказского отдела, т. III, приложение, с. 105—106.

² Տե՛ս Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 53, վ. 8, թ. 1:

³ Տե՛ս Սարգսյանց Լ., Այց Թուրքաց Հայաստանին, Մուրճ, 1889, դեկտեմբեր, էջ 1939: Ի դեպ, ըստ թուրքական պաշտոնական աղբյուրների միջնադարում Բաբերդի գավառը ամենամիտարր քրիստոնեաբնակ գավառներից էր (Miroglu I. XVI. Yüzyılda Bayburt Sancagi).

⁴ Արսւլանյան Մ., Բաբերդ և շրջակայքը, էջ 12:

¹ Տե՛ս Վրացական աղբյուրները, № 3, էջ 86:
² Ինճիճյան Ղ., նշվ. աշխ., էջ 95:
³ Տե՛ս 22 ԿՊՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 790, թ. 3:
⁴ Տե՛ս Ոսկյան Հ., Բարձր Հայքի վանքերը, Վիեննա, 1951, էջ 167—205, Փորձ, հունվար, 1880, էջ 144, Մատենադարան, Իզմիրլյանի արխ., թղթ. 14, վ. 615, թ. 2բ:

Թարկվեց թուրք զինվորների կողմից, որի հետևանքով տու-
ժեցին ևս 30 հայ բնակիչներ¹:

Լազերի ներխուժումները ծանր հետևանքներ ունեցան
հատկապես գավառի հյուսիսային բնակավայրերի համար:
Բաբերդից հյուսիս, հյուսիս-արևմուտք գտնվող Վարզահան
կամ Վարազահան ավանը ուղղակի քաբուքանդ եղավ: Նրա
մասին դարասկզբին արդեն աղբյուրներում կարելի էր հան-
դիպել որպես «ավերակ մեծ քաղաքի»², «նշանավոր հին քա-
ղաքի»³, նախկին «քաղարձակ գիւղաքաղաքի»⁴ և այլն: Գյու-
ղի ծերունիների հիշողության մեջ պահպանվել է (19-րդ դարի
80-ական յարին — Ա. Մ.) Վարզահանի նախկին ծաղկյալ վի-
ճակի պատկերը, երբ այն ունեցել է ութից տասը եկեղեցի և
2000—2500 տուն բնակիչ, մի հանգամանք, որ լիովին հաս-
տատվում է շրջակայքում եղած մեկ տասնյակի հասնող եկե-
ղեցիների ավերակներով և բնակավայրի նախկին տարածքի
ընդարձակությունը⁵:

Լազերի կողոպուտից և թալանից անմասն չմնացին նաև
Վարզահանի հարևան գյուղերը՝ Նիվը, Խարթը, Բաղնիքը,
Վանշենը, Օձտեղը, Սուրբ Թորոսը (Թորոսանց), Արմուտ-
լուն և վերջիններից հյուսիս, Բաբերդից Գյումուշխանե տա-
նող ճանապարհի երկայնքով ձգվող Բալախոռ, Արմանա և
այլ գյուղեր: Բալախոռի և նրա հարևան հայկական գյուղերի
բնակչության վիճակը ծանրացավ հատկապես այն ժամա-
նակ, երբ այս ամենին դումարվեցին Գյումուշխանեի և էր-
զրումի թեմական առաջնորդների միջև սկսված անիմաստ վե-
ճերը՝ նրանց նկատմամբ հոգևոր իշխանության իրավունքի
պահպանման համար⁶: Նույնիսկ այսպիսի պայմաններում
Բաբերդի լիվան շարունակում էր մնալ իբրև հայաշատ երկ-
րամաս: Աչքի ընկնող բազմաթիվ հայկական բնակավայրերից

¹ Տե՛ս Տեղեկագիրք գավառական հարստահարությունց, Մշակ, 1878, 29
օգոստոսի, էջ 1:

² Տե՛ս Ինճիճյան Ղ., նշվ. աշխ., էջ 95:

³ Տուտուխյան Հ. Հ., Բաղնշենի Պոլիս, Մասիս, 1886, հոկտ. 18, էջ 188:

⁴ Քաջունի Մ., Աշխարհագրություն հին և նոր Հայաստանյայց, էջ 241:

⁵ Տե՛ս Միրախորյան Մ., նկարագրական ուղևորություն, էջ 9—10:

⁶ Տե՛ս Մատենադարան, Կարապետ արք. արխիվ, թղթ. 163բ, վ. 524,
թ. 1:

էին Բլուրը, Բլրակը¹, Մեծ Գրչին, Էրթենիստը (Արքայանիստ),
Թումնան (Դումնա), Հնձավերակը, Հինտին (Հինդի), Սարա-
շիլը, Զուրմավանցը, Քարավերակը, Քսանթան, Քրիստին,
Խայեկը, Մեծ և Փոքր Լոռիները, Միրանին, Սինոռը (Սյու-
նուր)², Մազկակրակը, Փնջրկան (Բինչիրկե), Մամը³: Բա-
բերդից հարավ գտնվող գյուղերից էին Խուբսը, Մահաշուրը,
Ավերակը (էվերեկ), Լուսհոնքը, Կորը և այլն: Լուսհոնքը մեծ
ավան էր, որի թաղամասերը ինքնուրույն գյուղեր էին՝ հա-
մանուն, Բոշի, Վարին գյուղ, Քառոր, Բորդա, Բաղձոր և Զրա-
լըղ անուններով⁴:

Նահանգի արևմտյան շրջաններից ամենաընդարձակը Եր-
զրնկայի գավառն էր: Լիվայի վարչական կենտրոն Երզնկա քա-
ղաքը կառուցված էր Եփրատի աջ ափին՝ Էրզրումից Սեբաս-
տիա տանող առևտրական ճանապարհի վրա: Միջնադարում
ավելի քան 50 երկրաշարժեր⁵ տեսած այս քաղաքը, շնորհիվ
տարանցիկ առևտրի և արհեստագործության զարգացման,
18-րդ դարի 80-ական թվականների սկզբին դարձել էր Արև-
մուտյան Հայաստանի խոշորագույն բնակավայրերից մեկը:
Նրա ընդարձակ տարածքը բնակեցնում էր 8 հազար ծովս⁶
(40—45 հազար շունչ — Ա. Մ.), հիմնականում՝ հայեր, որոնք
ապրում էին քաղաքի հինգ թաղամասերում⁷:

1784 թ. հուլիսի 26-ին տեղի ունեցած աղետալի երկրա-
շարժից զոհվեց նրա բնակչության մեծագույն մասը⁸: Փրկ-
վեցին ընդամենը 500—600 ընտանիքներ⁹: Առավելապես տու-
ժեցին քաղաքի ս. Աստվածածին և ս. Սարգիս թաղամասերը:
Այս աղետի հետևանքով Երզնկան ժամանակավորապես կորց-

¹ Բլրակն ուներ 700 ծուխ հայ և հույն բնակիչ (Արտանյան Մ., Բա-
բերդ և շրջակայքը, էջ 29):

² Տե՛ս Ատրպետ, նշվ. աշխ., էջ 90—96:

³ Տե՛ս Ինճիճյան Ղ., նշվ. աշխ., էջ 97:

⁴ Տե՛ս Արսլանյան Մ., նշվ. աշխ., էջ 51:

⁵ Տե՛ս Ալիշան Ղ., Տեղագիր հայոց մեծաց, էջ 41:

⁶ Տե՛ս Ինճիճյան Ղ., Աշխարհագրություն, էջ 99:

⁷ Տե՛ս Ամատյան Ս., Երզնկա գավառ, Արևելյան մամուլ, 1886 մայիս,
էջ 229:

⁸ Տե՛ս Նոր Դար, 1889, 25 նոյեմբեր, էջ 3:

⁹ Տե՛ս Ինճիճյան Ղ., նշվ. աշխ., էջ 99:

րեց իր նախկին քաղաքական և տնտեսական նշանակութունը: Միայն 90-ական թվականներին և 19-րդ դարի սկզբներին, երբ Գյումուշխանեից, Բաբերդից, Ակնից, Կամախից, Արաբկիրից և Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներից այստեղ հաստատվեցին հայ, մասամբ՝ նաև թուրք, քուրդ և հույն վերաբնակիչներ¹, Երզնկան ի հայտ բերեց վերելքի նախանշաններ:

Թուրքական կառավարությունը, որը մտահոգված էր վաճառահան քաղաքի վերականգնումով, փորձեց առանձին միջոցառումներով նպաստել Երզնկայի աշխուժացմանը: Խրախուսվեց կայսրության տարբեր շրջաններից նորեկների գաղթը դեպի ավերված քաղաքը: Սակայն սկզբից ևեթ պետական հովանավորության արժանացան միայն թուրք գաղթականները: Նրանք իշխանությունների կողմից տեղավորվեցին Երզնկայի արևելյան թաղամասում²: Քաղաքի ողջ մնացած հայ բնակչությունը, հիմնականում առևտրականներ, ինչպես կարելի է դատել աղբյուրների կցկտուր տեղեկություններից, շատանալով որևէ օժանդակություն կառավարության կողմից, ստիպված եղավ օթևանելու դավառի այն խոշոր գյուղերում, որոնք համեմատաբար քիչ էին տուժել երկրաշարժից³:

Ինչևէ, քաղաքը վերականգնվեց միայն մասնակիորեն: Փոքրաթիվ թուրք նորաբնակ ընտանիքները ընդունակ չզբոսնվեցին վերականգնելու Երզնկայի խաթարված կյանքը և արդարացնելու սուլթան Համիդ 1-ի և մեծ վեզիրի սպասելիքները: Փաստորեն շուրջ երկու տասնամյակ Երզնկան մնաց իբրև կիսավեր գավառական քաղաք: Պատահական չէ, որ նույնիսկ 1806 թ. ապրիլին ֆրանսիացի ժոբերին այն ներկայացավ որպես սովորական «փոքրիկ քաղաք»⁴: Նույն վիճակը դարասկզբին արձանագրեց նաև պարսիկ հեղինակ Զահին Շիրվանին: Նրա վկայությամբ քաղաքն ուներ ընդամենը 2

հազար տուն բնակիչ¹, այսինքն, մոտավորապես՝ 10—12 հազար մարդ:

Սկզբնաղբյուրները և տպագիր գրականությունը² հնարավորություն են տալիս պարզելու, որ Երզնկաի գավառակում (առանց Բուլմորի — Ա. Մ.) եղել է միայն քրիստոնյա հայերով բնակեցված մոտ 50 գյուղ: Սակայն մինչև այդ գյուղերին անցնելը, կարևոր ենք համարում պարզություն մտցնել Երզնկա գավառակի մի այլ խումբ գյուղերի (Թիլ, Խախ, Վարդանշահ, Վասկերտ, Ճիմին, Վաղավեր, Գի (հնում՝ Այգի), Խորոնթաղ, Գերթաղ, Կեչուտեկ, Շոխա (Շող), Պահիկ և այլն) բնակչության ազգային պատկանելության հարցի մեջ: Ներքոհիշյալ աղբյուրներում և հեղինակների աշխատություններում նրանք հիշատակվում են իբրև թրքաբնակ գյուղեր:

Նախ ընդգծենք, որ վկայակոչվող նյութերը վերաբերում են 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբին, այսինքն՝ այն ժամանակաշրջանին, երբ գավառահայության ընդհանուր թիվը՝ թեև 19-րդ դարի համեմատությամբ փոքր էր, սակայն նրանց բնակավայրերի քանակը գաղթերի, պանդրխտության, բռնի մահմեդականացման հետևանքով՝ անհամեմատ նվազ էր: Ամենայն հավանականությամբ, այդ հայալքված կամ մահմեդականացած գյուղերի շարքում կարող էին լինել նաև վերոհիշյալ բնակավայրերը: Դրանում համոզվելու համար՝ մի քանի գյուղերի օրինակով քննության առնենք մեզ հայտնի աղբյուրների տեղեկությունները:

Ղ. Ինճիճյանը, խոսելով 18-րդ դ. վերջի և 19-րդ դ. սկզբի Երզնկա գավառի մասին, հիշատակում է ընդամենը չորս գյուղ, մի հանգամանք, որը խոսում է այս շրջանի վերաբերյալ նրա տեղեկությունների թերի լինելու մասին: Ըստ նրա, այդ գյուղերից երկուսը (Աջրկբաշ և Խոզնցիք) բնակեցված էին հայերով: Ինչ վերաբերում է մյուս երկուսին՝ (Ճիմին և Զարտազլը) աշխարհագետը լռում է³: Սակայն այդ մասին

¹ Տե՛ս Մասիս, 1886, սկստեմբեր 27, էջ 139 և Սյուրմենյան Գ., Երզնկա, էջ 193:

² Տե՛ս Ամատյան Ս., Երզնկա գավառ, Արևելյան մամուլ, 1886, հունիս, էջ 262:

³ Տե՛ս Jaubert P. Am., նշվ. աշխ., էջ 100—101:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 100:

¹ Տե՛ս Штреккер В., Топографические очерки Верхней Армении. //Известия Кавказского отдела, т. III, приложение, с. 1.

² Տե՛ս Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 208ա, վ. 2444, թ. 12, էփրիկյան Ս., Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, № 1, էջ 501, № 2, էջ 36, 125, Սյուրմենյան Գ., Երզնկա, էջ 74—81:

³ Տե՛ս Ինճիճյան Ղ., նշվ. աշխ., էջ 101:

բերված տողերի ուշադիր զննումը համոզում է, որ հեղինակը պարզապես ավելորդ է համարում կրկնել վերջինների հայրնակ լինելու հանգամանքը: Ճիմինի, որպես հանրահայտ գինեշատ ավանի մասին Ինճիճյանի հաղորդումը¹ վկայում է գավառում ոչ միայն խաղողագործության զարգացման մասին: Տնտեսության այդ ճյուղը Երզնկայի շրջանում հայտնի էր դեռևս հնագույն ժամանակներից, և բնականաբար, այն միայն հայ գյուղացիության մենաշնորհը կարող էր լինել: Դժվար չէ կոռահել, որ Ճիմինցիները իրենց հայրենակիցների, այսինքն՝ հայերի լավագույն ավանդույթների կրողներն էին:

Այս կապակցությամբ վկայակոչենք նաև գավառին քաջատեղյակ Գ. Սյուրմենյանին. «Ճիմին... բնակչություն ուներ, — գրում է նա, — բոլորն ալ թուրք: Մահմեդական չեն, ունեն հայկական շատ սովորություններ», նրանցից շատերը կրում են հայկական անուններ²: Դա նշանակում է, որ Ճիմինի հայերը դտնվում էին թուրքացման պրոցեսում: Հասկանալի է, որ 19-րդ դարի սկզբին նրանք դեռ հայեր էին կամ նոր էին բռնել թրքացման ուղին:

Թրքաբնակ լինելու մասին միևնույն թյուր կարծիքը կա նաև գավառի Շոխա կամ Շող գյուղի մասին: «Հոն կային թուրք տուններ, — կարդում ենք Գ. Սյուրմենյանի գրքում, — որոնք հայկական ազգանուն կկրեին: Կրավեր թե ատենին հոն քանի մը բարեկեցիկ հայ ընտանիք կը բնակեին եղեր, բայց տեղացի թուրքերու մոլեռանդութենեն ազատվելու համար իրենք ալ թրքացած են»³:

19-րդ դ. վերջին Երզնկայից արևմուտք ընկած այսօրինակ «թուրքական» գյուղերում եղած Ամատյանը գրում է. «Հոս ալ հայք աղոտ ու տխուր հիշատակներ թողնելով, անցեր, անհետացեր են»⁴, այսինքն՝ կամ արտագաղթել են կամ՝ թրքացել: Այս տողերը ևս խոսում են հօգուտ մեր այն պնդման, որ դարասկզբին մահմեդականացած և մահմեդականացող հայ բնակչությունը Երզնկա գավառում խիստ նկատելի էր

և բռնել էր թրքացման անդարձ ուղին: Այս երևույթը այնքան ակնհայտ էր, որ չէր վրիպում անգամ օտարերկրացիների ուշադրությունից: Անգլիացի ճանապարհորդ Դավիդ Հոգարթը նկատել է. «Կրոնափոխ դարձած բնակչություն մը, որոնք կապրին Հայաստանի բոլոր անկյունները իրենց հավատքը պահող մարդոց կողքին: Այս տեսակ «թուրքեր» կը գտնվին արևելյան Եփրատի արմունկին շուրջ, ամեն տեղ: ... Նման «թուրքեր» կը կազմեն Քեմախի (Կամախի — Ա. Մ.) գրեթե ամբողջ բնակչությունը և Երզնկայի բնակչության կեսը»¹: Հոգարթի խոսքերը հաստատում է նաև հայ հեղինակը. «... չկրնալով դիմանալ տիրող անիշխանության և կատարված բռնություններուն ու հալածանքներուն (այնտեղ բնակչության — Ա. Մ.) մեծ մաս մը կրոնափոխ եղած է իր ֆիզիկական գոյությունը պահելու համար»²:

Երզնկա գավառում թրքացած հայության գոյությունը հաստատող վկայությունների շարքը կարելի է լրացնել: Սակայն կարծում ենք, որ վերոհիշյալը ևս բավարար է համոզվելու այն հարցում, որ 19-րդ դարի առաջին տասնամյակներին ի թիվս քրիստոնյա բնակչություն ունեցող բազմաթիվ գյուղերի, կային այնպիսիները, որոնց բնակիչները կամ լիովին մահմեդականացել էին՝ պահպանելով հայ ազգային միշտ հատկանիշներ, կամ արտաքուստ ընդունելով իսլամը, իրականում գրեթե չէին տարբերվում հարևան քրիստոնյա հայերից:

1784 թ. երկրաշարժը մեծ վնասներ հասցրեց նաև Երզնկայի շրջակայքի գյուղերին: «Մերձակա գիւղորէք (Երզնկայի — Ա. Մ.), — պատմում է Ղ. Ինճիճյանը. — առհասարակ հանդերձ բնակչօք իւրեանց անհետ եղեն»³, պատմությանն անհայտ թողնելով անգամ իրենց անունները: Մասնակիորեն աղետից սուլած գյուղերը, ի տարբերություն քաղաքի, 19-րդ դարի սկզբներին արդեն ապրում էին համեմատաբար բարվոք տնտեսական կյանքով: Դրան որոշ չափով նպաստել էր այն հանգամանքը, որ երկրաշարժից հետո նրանցից շատե-

¹ Տե՛ս Ինճիճյան Ղ., նշվ. աշխ., էջ 101:

² Տե՛ս Սյուրմենյան Գ., Երզնկա, էջ 74, 192:

³ Նույն տեղում, էջ 76:

⁴ Ամատյան Ս., Եկեղյաց գավառ, Արևելյան մամուլ, 1889, սեպտ. էջ 173:

¹ Քեչեյան Ա., Պարսամյան Մ., Ակն և Ակեցիք, Փարիզ, 1952, էջ 155:

² Սյուրմենյան Գ., Երզնկա, էջ 192:

³ Ինճիճյան Ղ., Աշխարհագրություն, էջ 99:

րում օթեանած երզնկացի արհեստավորներն ու առևտրականները իրենց աշխույժ գործունեութեամբ տնտեսական վերելքի նախադրյալներ էին ստեղծել. «Շրջակա գյուղերում, — վկայում է ժողովրդը, — ապրում են քրիստոնյաներ, որոնցից ամենահարուստները զբաղվում են առևտրով...»¹: Միայլ կլինի կարծել, թե այդ առևտրականները գյուղացի հայեր էին: Նրանք վերոհիշյալ երզնկացիներն էին, որ այժմ տարանցիկ առևտրի գործը կազմակերպում էին մի քանի գյուղերում: Երզնկացիների մի մասն էլ անցել էր այգեգործությանն ու բանջարային կուլտուրաների մշակութայնը²:

Անտարակույս, այդ գյուղերից էր նաև մեզ ծանոթ Ճիմի-նը, որը բարվոք գյուղատնտեսություն ունեցող ամենամեծ ավանատիպ բնակավայրերից էր: Այն ընկած էր Երզնկայից արևելք: Ճիմիի հարևանությամբ գտնվում էր գավառակի մյուս հիշարժան գյուղը՝ Կարմրին: 1885 թ. այնտեղ եղած Ս. Ամատյանը արձանագրել է. «... ըստ ավանդության, երբեմն հարյուրավոր տուն բնակիչներ կպարունակեր, ... այժմ 31 տուն բնակիչ ունի»³: Ինչպես Արևմտյան Հայաստանի շատ գյուղեր, Կարմրին ևս դարասկզբին հարյուրավոր ընտանիք ունեցող և հետագայում նոսրացած բնակավայրերից էր:

Երզնկայից 3—4 կմ հյուսիս-արևմուտք գտնվող Մթննին բազմամարդ և զուտ հայաբնակ գյուղ էր: Այն ևս վերոհիշյալ երկրաշարժից հետո դարձել էր երզնկացիների գլխավոր հանգրվաններից: Ձեռք բերելով կալվածքներ, լծկան անասուններ՝ նրանք որոշ շահով բարելավել էին գյուղի տնտեսական վիճակը, այն դեպքում, երբ Արևմտյան Հայաստանի հայկական գյուղերի մեծ մասի բնակչությունը նույն ժամանակաշրջանում տակավին աղքատ ու ընշազուրկ էր:

Երզնկայից 12—15 կմ հարավ և հարավ-արևելք գտնվող Տաճրակ, էրկան (Երկան), Մահմուտցիք, Գյուլիչե, դաշտի հյուսիսային, հյուսիսարևելյան մասում ընկած Բթառիճ, Վերին և Վարին Զիֆթլիկներ, Խնձորեկ և մի քանի այլ խոշոր գյուղերից բացի, գավառակն ուներ մոտ շորս տասնյակ

այլ գյուղատիպ հայկական բնակավայրեր, որոնք աչքի չէին ընկնում առանձին բազմամարդութեամբ, և բնակչության տնտեսական կացության ու քաղաքական իրավազրկության պատճառով անընդհատ ենթարկվում էին աճող թուրք և քուրդ նորաբնակների ճնշմանը¹:

19-րդ դարի սկզբներին Երզնկայի գյուղական վայրերում թուրքերի և քրդերի (որոնք հայտնի էին կզըլբաշ՝ կարմրագլուխ անունով) թիվը անհամեմատ քիչ էր: Նրանց մոտ 20 գյուղերն ու քրդերին պատկանող ամառանոցները հիմնականում գտնվում էին Երզնկայի դաշտի շուրջը եզերող լեռնաձորերում և սարահարթերում:

Հայ բնակչության համար իսկական պատուհաս էին դարձել Դերսիմի շրջանից այստեղ հաստատված զազա ռազմատենչ ցեղերը: «Դրանք բոլորը կիսաբարբարոսներ են, — գրում է նրանց մասին Վ. Շտրեկկերը, — որ իրենց կրոնական հավատալիքներին կանգնած են ֆանատիզմի աստիճանի»²: Երզնկայից հարավ՝ Մնձուրի լեռներից մինչև էրզրումից հարավ-արևելք ընկած շրջանները գտնվում էին զազաների փաստական իշխանության տակ և չէին ենթարկվում թուրքական կառավարությանը: Թուրքական իշխանությունները՝ զազաներին հակապետական ապստամբություններից հետո պահելու նպատակով, նրանց թուլլատրել էին պետությանը վճարվող հարկերը գանձել տեղի հայ բնակչությունից: Օգտվելով դրանից, զազաները, Պ. Զիխաչևի վկայությամբ, այդ հարկերը հայերից գանձում էին հարյուրապատիկ անգամ ավելի: Սկզբնական շրջանում զազաներն ու քրդերը այդ անօրինությունները կատարում էին հայկական այն գյուղերի բնակչության նկատմամբ, որոնք գտնվում էին ցեղապետությունների տարածքում: Սակայն շուտով, իշխանությունների թողտվությամբ, քրդերի հանդեպությունն հասավ այնտեղ, որ այդ «կարգը» մտցվեց նաև Երզնկայի և էրզրումի միջև, Եփրատի ամբողջ հովտում³: Այդ կապակցությամբ Պ. Զիխաչևը ցավով

¹ Jaubert P. Am., նշվ. աշխ., էջ 100:

² Տե՛ս նույն տեղում, էջ 101:

³ Ամատյան Ս., Եկեղյաց գավառ, Արևելյան մամուլ, մարտ, 1890, էջ 136:

¹ Տե՛ս Ամատյան Ս., Եկեղյաց գավառ, Արևելյան մամուլ, 1890, մարտ, էջ 140:

² Штреккер В., Очерки Верхней Армении. //Известия Кавказского отдела, т. III, приложение, с. 6—7.

³ Տե՛ս Чихачев П., Письма о Турции, с. 35.

գրում է. «Տեղի թուրքական իշխանությունների աչքի առջև և թողտվություններ, այդպիսի, այսպես կոչված օրենքով իրականացվող կողոպուտից, հատկապես տուժում են հայկական գյուղերը»¹: Այս տողերը վերաբերում են 1858 թ.՝ այսինքն այն ժամանակներին, երբ կայսրությունում «գործում էին» թուրքահայատակ ժողովուրդների իրավունքները «պաշտպանող» 1839 և 1856 թվականների սուլթանական հրովարտականերով շնորհված օրենքները և հիմնականում վերջ էր դրվել քրդերի կիսանկախությանը: Հասկանալի է, թե որքան օրհասական էր քրդահայատակ գավառների հայության վիճակը 19-րդ դարի առաջին երեսնամյակին, երբ քրդական ցեղերն օգտվում էին համարյա լիակատար անկախությունից և հայկական գյուղերում ապրելու և նրանց բնակիչներին կամայական հարկման ենթարկելու կառավարական թողտվությունից: Պատահական չէ, որ այս պայմաններում նկատվեց հայ բնակչության քրդացման գործընթաց: Այն առանձնապես արագ ընթացավ Երզնկային և նրան հարավից հարող գավառներին ենթակա այն գյուղախմբերում, որոնք լեռնային ռելիեֆ ունենալու պատճառով կտրված էին հոծ հայկական բնակչություն ունեցող շրջաններից: Տվյալ դեպքում այդպիսի դառը ճակատագրի արժանացան Երզնկայի կազայի Գուզուջան (Խուզիջան, Կրզուջան), կամ Բոլոմոր և Կամախի կազայի Գուրուշայ նահիենները, որոնք դարասկզբին արդեն ունեին բավական թվով քրդացած հայ բնակիչներ: Սակայն հայ պատմագրության մեջ եղած այն տեսակետը, որ հատկապես Գուզուջանը դեռ 17-րդ դարում լիովին քրդացած էր, լուրջ կասկածների տեղիք է տալիս:

Ղ. Ինճիճյանը, ապա նրան նույնությամբ կրկնող Ս. էփրիկյանը², հիմք ընդունելով 17-րդ դարի թուրք հեղինակ Քյաթիբ Զելեբի մի երկտողը³, Երզնկայից հարավ-արևելք գրտնրվող Գուզուջան նահիեն համարել են բացառապես քրդա-

բնակ մի շրջան և հավանաբար սկզբնաղբյուրների պակասի պատճառով, չեն փորձել վեր հանել նրա իրական էթնիկական պատկերը:

Ինճիճյանից հետո Գուզուջանի մասին հաջորդ թուղթիկ վկայությունը պատկանում է ուսուցական բանակի պորուչիկ Սկալունին: Արևմտյան Հայաստանի բնակավայրերի և ճանապարհների մասին կազմած իր զեկուցագրում նա արձանագրում է, որ «Կուզուլլայի (իմա՝ Գուզուջանի— Ա. Մ.) 100 գյուղերից հինգը հայկական են»⁴: Ցավոք, նա բավարարվում է այսքանով, անգամ չնշելով այդ գյուղերի անունները: Ի տարբերություն վերոհիշյալ հեղինակների, 19-րդ դարի հայ հետազոտող Անդրանիկը մոռացված այս գավառի տեղագրության և բնակչության տեղաբաշխման փորձեր է կատարում: 1888 թ. ճանապարհորդելով Քրդի-Գուզուջան-Դերջան-Դերսիմ-Խարբերդ-Խոզաթ, այսինքն՝ զազա ցեղերով բնակեցված գավառներով, նա վկայում է, որ Գուզուջանում սփռված էին բազմաթիվ քրդական բնակավայրեր, գլխավորապես փոքրիկ ամառանոցներ, որոնք դրված էին ցեղապետ Շահ Հուսեինի տոհմի իրավասության տակ: Փոքրաթիվ հայ համայնքը ներկայացնում էին 10—15 գյուղեր: Նրանցից ամենամեծը՝ Ալթուն Հուսեինը բաղկացած էր 250—300 ծուխ հայ և ընդամենը 8—10 ծուխ քուրդ բնակիչներից⁵: Այն ուներ փոքրիկ ուսումնարան, հայկական եկեղեցի, լավ մշակված հողատարածություններ: Ալթուն Հուսեինի գյուղացիները համառ պայքար են մղել քուրդ ցեղապետերի դեմ: 60-ական թվականների սկզբին, երբ քուրդ բեկերը փորձել են զավթել գյուղի կալվածքները, գյուղացիներն իրենց քահանայի գլխավորությամբ դիմադրավել են՝ բողոքելով Կ. Պոլսի հայոց պատրիարքին և խնդրելով Բ. Դոան միջամտությունը:

Դժբախտաբար Գուզուջանի մյուս հայկական գյուղերի մասին այսպիսի մանրամասներ չեն պահպանվել: Ավելին՝ նրանցից շատերի անուններն առ այսօր հայտնի չեն: Մեր ձեռ-

¹ Чихачев П., Письма о Турции, с. 35.

² Տէ՛ս Ինճիճյան Ղ., Աշխարհագրություն, էջ 110, էփրիկյան Ս., Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հատ. Ա., էջ 530:

³ Զելեբին այդ մասին գրում է. «Կրզուջանի լիվան (17-րդ դարում լիվան էր — Ա. Մ.) լեռներով հարուստ է: Սրա բնակիչները Բեսյանի աշիրթի քրդերից են», տե՛ս Թուրքական աղբյուրները, հ. Բ., էջ 45:

⁴ Այդ հարյուր գյուղերի տակ հեղինակն ի նկատի ունի նաև քրդական ամառանոցները (ЦГВИА, ф. 450, ց. 77, էջ 56):

⁵ Տէ՛ս Անդրանիկ, Գերսիմ, էջ 6, 149:

⁶ Տէ՛ս նույն տեղում, էջ 7—8:

քի տակ եղած նյութերը հնարավորություն են տալիս որոշ բան ասելու Գուգուչանի մի քանի այլ գյուղերի մասին:

Գուգուչանի հաջորդ գյուղի անունը մեզ հաղորդում է Ին-ձիճյանը: Դա Բերկրին է: Աշխարհագետի վկայությամբ, այն ավերվել է Երզնկայի ամենաուժեղ երկրաշարժից՝ 1784 թ.: Ուսումնասիրվող ժամանակաշրջանին վերաբերող ոչ մի հիշատակություն չկա: Ենորհիվ Շտրեկկերի, պարզվում է, որ այն հետագայում վերականգնվել է և եղել է Ալթուն Հուսեփ-նից արևմուտք ընկած մեծ գյուղ¹:

Նույն Շտրեկկերի հաղորդած տեղեկություններից մեզ հաջողվում է պարզել նաև Գուգուչանի երրորդ գյուղի անունը՝ Կիզլի Մեջիդը (Կարմիր Մեջիդ), որը 19-րդ դ. 60-ականների վերջին Ալթուն Հուսեփից հյուսիս գտնվող «... մի քանի տուն ունեցող կիսահայկական, կիսաքրդական գյուղակ էր»²: Հասկանալի է, որ երեք-չորս տասնամյակում այն ոչ միայն հայաթափվել էր, այլև բնակեցվել քրդերով: Նահիբի 4-րդ և 5-րդ գյուղերի՝ Դանչեկի և Քիրունուղի անունները պահպանվել են Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի կազմած եկեղեցիների ցուցակներից մեկում³:

Վերջապես, այս նահիբի հայկական բնակավայրերից է եղել նրա կենտրոնավայր Բոլումորը⁴: Մյուս գյուղերի մասին, աղբյուրների անբավարարության պատճառով, դժվար է լուրջ խոսք ասել: Ամենայն հավանականությամբ, նրանք գտնվել են Դերսիմի (Մնձուրի) լեռների հյուսիսային փեշերին, որտեղ քրդական տարրն ավելի ուժեղ էր, և հայկական կյանքը կտրված էր Երզնկայից, Քրդիից, Դերջանից և հարևան հայկական համայնքներից, մի հանգամանք, որի հետևանքով այդ գյուղերում բնակիչները «... բոլորն ալ մայրենի լեզուն կպահեն քիչ մը աղավաղված (քրդախառն — Ա. Մ.) վիճակի մեջ»⁵, այն դեպքում, երբ հայաշատ Քրդիի լիվային սահմանակից Ալթուն Հուսեփը խոսում էր մաքուր հայերենով և

պահպանել էր իր ազգային կյանքի բոլոր կողմերը: Եթե այդ անհայտ գյուղերը ևս գտնվեին հայաշատ շրջաններին մոտ, բնականաբար չէին վրիպի ճանապարհորդների և ուսումնասիրողների տեսադաշտից և նրանց մասին կպահպանվեր որոշակի տեղեկություն:

Գուգուչանի էթնիկական ընդհանուր պրոբլեմների ուսումնասիրության տեսակետից հետաքրքրություն են ներկայացնում 1878 թ. Կ. Պոլսի հայոց պատրիարք Ն. Վարժապետյանի կողմից հայկական գավառների բնակչությանը վիճակագրելու համար Արևմտյան Հայաստան ուղարկված ՊողոսՆաթանյանի նյութերը: Նա առաջին հեղինակն է, որ ուշագրություն է դարձրել Գուգուչանի քրդացած հայության հարցին: Նաթանյանը նկատել է, որ այնտեղի գյուղերում կան «... խիստ սակավաթիվ հայ բնակիչներ քրդախառն, ասոնք ի վազուց կեսեն ավելի հայ լինելով ժամանակի բռնությունն՝ ստիպված են քրդաց հարիլ, որ այժմ հայերեն անգամ չեն գիտեր. բայց հայ ցեղե ըլլալին գիտեն»¹: Նույն հեղինակի վկայությամբ, ոչ վաղ անցյալում այստեղ եղել են «բազմահայ գյուղեր», որոնց բնակիչները, չցանկանալով ընտրել քրդացման ուղին, գաղթել են հարևան հայաստվար գավառները²: Հայ մեկ այլ հեղինակի՝ Սելյանի համոզմամբ, «Լուգուչանի զյւլպաշները... որ առայսօր (1895 թ.— Ա. Մ.) շարդում են օսմանյան բանակներին, թուրք չեն, այլ մոտ հայերին»³:

Տարբեր հեղինակներից բերված այդ վկայությունները հիմք են տալիս եզրակացնելու, որ նույնիսկ 19-րդ դարի երկրորդ կեսին Գուգուչանը զգալի թվով հայկական բնակավայրեր ունեցող գյուղախմբերից էր և պայքար էր մղում ազգային ինքնապահպանման համար, չնայած ուներ քրդացած հայ բնակչության մի ստվար հատված, որն արդեն քիչ բանով էր հիշեցնում իր նախկին ազգային պատկանելության մասին: Այսպիսով, 19-րդ դարի առաջին քառորդին Երզնկայի լի-

¹ Տե՛ս Штреккер В., ук. соч., МИзвестия Кавказского отдела, т. III, приложение, с. 21.

² Նույն տեղում:

³ Տե՛ս էջմիածին, 1965, № Բ—Գ—Դ, էջ 179:

⁴ Տե՛ս Коллюбакин А. М., Материалы, т. I, ч. II, с. 249.

⁵ Անդրանիկ, Դերսիմ, էջ 149:

¹ Տե՛ս Նաթանյան Պ., Արթուր Հայաստանի կամ տեղագիր Բալուա, Քարբերդու, Չարսանճագի, Ճապաղչուրի և Երզնկայու, էջ 159:

² Տե՛ս նույն տեղում:

³ Սելյան, Տահկա-Հայաստանի ազգաբնակչությունները, Մուրճ, 1895, հուլիս, էջ 959:

վայի համանուն կազան Արևմտյան Հայաստանի հայաշատ շրջաններից էր:

Եթե ամբողջ Երզնկայի կազայում հայերը մեծամասնություն էին կազմում մահմեդականների նկատմամբ, ապա լիվայի ընդարձակ մյուս գավառակում՝ Կամախում քրդերի թիվը եթե չէր գերազանցում տեղացիներին, ապա հավակնում էր մոտ ապագայում հասնել և անցնել նրանց:

Կամախի գավառակի միջով հոսող Եփրատը ոռոգում էր նրա հովիտներն ու ձորահովիտները՝ հողագործության և այգեգործության համար ստեղծելով նպաստավոր պայմաններ: Այս հանգամանքը մշտապես իր վրա էր հրավիրում Փոքր Ասիայի թուրքերի և Դերսիմի քրդերի ուշադրությունը: 18-րդ դարի երկրորդ կեսին, ի տարբերություն Հայաստանի մյուս գավառների, որոնցում թուրք և քուրդ վերաբնակիչները գերազասում էին հաստատվել հայկական գյուղերում, Կամախում նրանք կառավարության աջակցությամբ հիմնեցին նոր բնակավայրեր: Բանն այն է, որ Կամախի և Երզնկայի պատմական գավառները Հայաստանում քրիստոնեության բնօրրաններն էին և այնտեղ մահմեդական բնակչություն ստեղծելու խնդիրը նվաճված երկրամասում ամուր հաստատվելու կովաններից էր:

Այդ քաղաքականության հետևանքով, Կամախում բավական կարճ ժամանակամիջոցում ծնվեցին տասնյակ նոր թուրքական բնակավայրեր: Արագացավ հայերի մահմեդականացման գործընթացը: Կամախի գավառակում տեղի ունեցող այս երևույթները կարելի է նկատել Ինճիճյանի հետևյալ տողերից. «Ճոխացեալ է այս գավառ բնակությունս, բնակեալ ի հայոց մանավանդ ի տաճկաց, որք ըստ մեծի մասին դարձեալ են ի հայոց»¹՝ այսինքն թրքացել են հայերից: Մահմեդական հեղեղն այնքան ուժեղ է եղել, որ տեղի հայերի մի մասը, նույն հեղինակի վկայությամբ, ստիպված է եղել հեռանալ և հաստատվել Թեքիր Դաղի լեռներում²:

Կամախի հայկական և նորաստեղծ թուրքական ու քրդական բնակավայրերի կալվածքների ժառանգական իրավուն-

քը 18-րդ դարի վերջին անցավ Սաղըր օղու ցեղի ավագանու ձեռքը¹: Թուրք գաղթականության կենտրոն դարձավ հայկական հնագույն Կամախ ամրոցը: Հայ բնակչությունը մեծ խմբերով դուրս մղվեց այստեղից: Ինճիճյանը բերում է մի ուշագրավ վկայություն, որի համաձայն դարասեղաքին քաղաքը ունեցել է 6 հայկական եկեղեցի, 1500 ծուխ, հիմնականում՝ թուրք և 4000 ծուխ՝ կրկին տեղավորելու հնարավորություն²: Առաջին հայացքից կարող է այս տեղեկությունը թվալ հակասական. փոքրամասնության, այսինքն՝ հայերի համար 6 եկեղեցին կարող է թվալ շատ և 4000 ծուխ տեղավորելու հնարավորության մասին հաղորդումն ավելորդ: Սակայն բերված վկայությունից երևում է, որ մահմեդական եկվորների ներհոսքը որքան էլ զանգվածային է եղել, չի գերազանցել հայերի արտահոսքը: Նշանակում է, Կամախում 4000 ծուխ տեղավորելու հնարավորությունը ծագել էր իրենց բնակարանները լքած բազմաթիվ հայերի հեռանալու պատճառով, իսկ նրանց 6 եկեղեցիները թեև կանգուն էին, սակայն, զբրկված հայ համայնքի նյութական և հոգևոր աջակցությունից, կանգնած էին հանգչելու կամ մզկիթների վերածվելու վտանգի առջև: Հետևաբար, մահմեդական տարրերով Կամախի բնակեցումը ոչ միայն չխթանեց նրա տնտեսական և քաղաքական զարգացումն, այլև խոչընդոտեց այն քաղաք դառնալու օբյեկտիվ գործընթացը: Առաջ անցնելով նշեմք, որ հայ բնակչության արտագաղթի հետևանքով, թեև լինելով բավական ընդարձակ գավառակի վարչական կենտրոն և էրզրումից ու Երզնկայից դեպի Սեբաստիա, Ակն, Արաբկիր, Խարբերդ և այլ վաճառաշահ քաղաքներ տանող առևտրական ճանապարհի վրա ընկած բնակավայր, նույնիսկ ամբողջ 19-րդ դարի ընթացքում Կամախը մնաց իբրև փոքր գավառական բժրդաքաղաք:

Մահմեդական բնակչության ներհոսքի հետևանքով հայության արտագաղթ նկատվեց նաև Կամախի գյուղերից: Նորեկ թուրքերն ու քրդերը զավթեցին տասնյակ հայկական գյուղեր, ինչպես Կեսիկը, Բոսստին (Բոստնի — Ա. Մ.), Թանը,

¹ Ինճիճյան Ղ., Աշխարհագրություն, էջ 102:

² Տե՛ս նույն տեղում:

¹ Ինճիճյան Ղ., Աշխարհագրություն, էջ 101—102:

² Տե՛ս նույն տեղում:

Ճինառիճը, էրմենիքը (էրմենիկ, Արմենիկ), Լիճը, Խնձորին, Պահաձորը և այլն¹:

Այդուհանդերձ, Կամախի հայութիւնն ի հայտ բերեց զարմանալի կենսունակութիւն: Այն շարունակում էր հարատեւել՝ աչքի ընկնելով երեք խմբերով: Նրանցից առաջինը Կամախի շրջակայքի գյուղերն էին (Գառնի, Թավկներ, Թորղան, Մեծ և Փոքր Բագառիճներ, Գամեր², Հազարք, Բասլի (Վասլի), Բաղնիք և այլն): Մինչև մեկ տասնյակ և ավելի ծուխ ունեցող փաստաթի՞ բնակավայրեր էին Ավագ, Նշան, Լուսավորչի, Գառնի կամ Տիրաշեն, Սերովբեից և մի քանի այլ վայրեր:

Երկրորդ շրջանը Կամախի զավառակի և ամբողջ էրզրումի էյալեթի արևմտյան սահմանի մի մասը եզերող Գուրուշայ կամ Գուրիշայ նահիեն էր: Սկզբնաղբյուրներից հայտնի է, որ նրա գյուղերից Մեծ և Փոքր Արմատանները (Արմատան), Հասան-օվան, Ապուշտան, Տանձին և Թեղուտը, Դարսակին և Խարախայան³ Եփրատի աջակողմյան վտակներից մեկի վրա գտնվող հայաբնակ գյուղեր էին:

Կամախի մեկ այլ նահիեի՝ Կերճանիսի կամ Ռեփահիեի բնակավայրերից հայտնի էին Ռեփահիեն, Կերճանիսը, Հոռոփուլը, Մելիք Շերիֆը, Կարսագան⁴:

Այսպիսով, Կամախի կազան 19-րդ դարի առաջին երեսնամյակին Արևմտյան Հայաստանի այն շրջաններից էր, որն առավել քան կրել և կրում էր զանազան կողմերից եկող մահմեդական ժողովուրդների ճնշումը, որի հետևանքով ասիմիլացիան դառնում էր անխուսափելի: Միանգամայն իրավացի է Ս. Էփրիկյանն իր այն պնդման մեջ, որ «զավառակիս (Կամախի — Ա. Մ.) այլազգի բնակչաց մեծամասնութիւնը, ժամանակավ հայ քրիստոնյաներ էին...»⁵:

Սակայն չի կարելի կարծել, թե այստեղի հայութիւնը

հեշտութեամբ հաշտվել էր իր քաղաքական և տնտեսական իրավագուրկ վիճակի հետ և արագորեն տեղի էր տալիս թուրք և քուրդ ֆեոդալների ոտնձգութիւններին: Կամախի նահիեններից լեռնային և արտաքին աշխարհից կտրված Կերճանիսի և Գուրուշայի հայ գյուղացիները համառ պայքարի գնով կարողանում էին դիմակայել մահմեդական վերաբնակիչների ճնշմանը: Քուրդ ավագանին, իշխանութիւնների հանցավոր թողութեամբ կամայականորեն հարկման էր ենթարկում հայ բնակչութեանը և բռնութեամբ հարկադրում նրան հրաժարվելու իր հողատարածութիւններից: Այդպիսի դեպք նկարագրված է Մատենադարանի արխիվներում պահվող մի փաստաթղթում¹: 20-ական թվականներին քուրդ բեյերը բարձրացնում են Գուրուշայի հայկական գյուղերի հարկը, որոնց հավաքման մենաշնորհը նրանք ձեռք էին բերել իշխանութիւնների համաձայնութեամբ: Հասան-օվա գյուղի բնակիչների նախաձեռնութեամբ գավառի հայ գյուղացիութիւնը 1825—1826 թթ. ոտքի է կանգնում այդ անօրինութեան դեմ: Տեղի են ունենում հայ-քրդական ընդհարումներ: Ահա թե ինչ են գրում այդ մասին հայ հոգևորականները Կ. Պոլսի հայոց պատրիարքին. «բազում խռովութիւնս և աղմուկս լինի մեզ քրիստոնեիցս, զոր ոչ կարիմք պատմել»²: Փաստաթղթի բովանդակութիւնից զգացվում է, որ հակաքրդական ելույթներն այնքան հզոր են եղել, որ Բ. Դուռը Գուրուշայում հարկերի իջեցման մասին հատուկ կառավարական ֆերման է ուղարկել³: Միայն այսօրինակ ելույթների շնորհիվ Գուրուշայի, Կերճանիսի և ընդհանրապես Արևմտյան Հայաստանի ծայրամասային մյուս շրջանների հայ բնակիչները կարողանում էին պահպանել իրենց ազգային նկարագիրը և տնտեսական ու քաղաքական հարաբերական ինքնուրույնութիւնը:

19-րդ դարի առաջին կեսին էրզրումի նահանգի արևմտյան զավառներից թերևս ամենաաղքատիկ նույթերը վերաբերում են Երզնկայի լիվայից հյուսիս ընկած Կելիթին: Պահ-

¹ Ինճիճյան Ղ., Աշխարհագրութիւն, էջ 104—105:
² Գոմեր գյուղի մասին տե՛ս Արձագանք, 1891, 26 մայիս, էջ 165:
³ Տե՛ս Դիվան հայոց պատմութեան, հ. 12, էջ 540, Սրվանձտյանց Գ., Երկեր, հ. 2, էջ 476:
⁴ Տե՛ս Ա.—Գո, Վանի, Բիթլիսի և էրզրումի վիլայիթները, էջ 224, Պոնտական ուսումնասիրութիւնք, Վիեննա, 1919, էջ 339:
⁵ Էփրիկյան Ս. Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. Ա., էջ 178:

¹ Մատենադարան, Կարապետ արք. արխիվ, թղթ. 163բ. վ. 863, թ. 1:
² Նույն տեղում:
³ Տե՛ս նույն տեղում:

պանված մի քանի կցկտուր տեղեկութունները միաժամանակ բավական հետաքրքիր են և ուշադրութեան արժանի: Ղ. Ինճիճյանը գրում է, որ այն «Ունի գիւղօրէս իբր 100: Գիւղաքաղաք նորայ (այսինքն՝ Կելկիթը — Ա. Մ.) կամ մանավանդ աւան՝ հեռի է ի սևաստոյ (Սեբաստիա — Ա. Մ.) իբր 3 օթևանօք...»¹: Ապա հաղորդում է Չեմեն Դաղի լեռների շրջանում ամռան ամիսներին «թիւրքմանք» հայտնվելու մասին: Դա նշանակում է, որ այդ ժամանակաշրջանում տարբեր շրջաններից Փոքր Ասիայի տարածքը տեղափոխված թուրքական ցեղերը բնակութուն էին հաստատել նաև Կելկիթի գավառում: Կելկիթի մասին մյուս տեղեկութունը պատկանում է Է. Սմիթի գրչին: Ճանապարհորդելով Արևմտյան Հայաստանով՝ նա նշել է, որ Կելկիթի Շարիան կամ Շեհերան նահիեի բոլոր գյուղերում ապրում էր ընդամենը 300 տուն բնակիչ, որոնք ազգութեամբ թուրքեր էին, բացառությամբ՝ 8—10 տուն հույների: Ամբողջ գավառի մնացած 60 գյուղերի 1000 տուն² բնակիչների ազգութեան մասին է. Սմիթը տեղեկութուն չի հաղորդում: Վերոհիշյալից հետևում է, որ այս գավառը նոսր էր բնակեցված, այն դեպքում, երբ 17-րդ դարի կեսերին միայն Շարիանն, ըստ Հակոբ Կարնեցու, ուներ «... բազում գիւղք և աւանք և բնակիչք երկրիս Հայ բազում, Հոռոմք և Տաճիկք ևս», իսկ ամբողջ Կելկիթը «գիւղս բազում ձորամէջս, ...և...գիւղաքաղաք զԿարմրի, և բնակիչք երկրիս Հայք և Տաճիկք»³: Նշանակում է, որ 180 տարի անց այն հիմնականում զրկվել էր հայ բնակչութունից, դադարել մարդաշատ գավառ լինելուց: Սակայն այն հարցը, թե այնտեղ հայեր չեն եղել, չի հաստատվում այլ աղբյուրներով: Արդեն հիշատակված Կելկիթ, Կարմրի, ինչպես նաև Վերին Շարիան (Շեռեան) հայանուն բնակավայրերը⁴, Խնձորի⁵ և այլ գյուղեր ունեին հայ բնակիչներ: Հայեր ու հույներ կային

նաև Կիզարակ, Աջմեդե, Թարսու (Ստորին Տարսուն), Սեիդ-Բաբա, Սարիջա գյուղերում¹:

Էրզրումի նահանգի արևմտյան մյուս գավառը՝ Շաբին Կարահիսարը, որը զբաղեցնում էր ընդարձակ տարածք, աչքի չէր ընկնում բազմամարդութեամբ: Համեմատաբար հոծ բնակչութուն ուներ հայաշատ Կարահիսարի շրջանը, որը, դատելով նրա ընդարձակ տարածքից, հավանաբար կազա էր:

Լիվալի վարչական կենտրոն Շաբին Կարահիսար քաղաքն ընկած էր Գայլ գետի աջ ափից ոչ հեռու, քառազազաթ լեռան ստորոտին: Դարասկզբին նրա բնակչութունը 2400 ծուխ էր², որից 400-ը հայեր էին: Նրանք ունեին երկու եկեղեցի՝ ս. Ստեփանոս և ս. Աստվածածին³: Նույնքան՝ 400 ծուխ է հաշվում քաղաքի հայ բնակչութունը նաև վրացի ուղեգիր Գեորգի Ավալիշվիլին, որն այնտեղ եղել է 1820 թ.⁴: Նա վկայում է, որ հույների թիվը եղել է 30 ծուխ⁵: Թուրքերի թիվը մոտ մեկ տասնամյակ անց է. Սմիթը հաշվում է 1000 ընտանիք⁶: Ըստ երևույթին, մնացած հազար ընտանիքը լազեր, կեսկես հայեր ու հույներ էին: Գ. Ավալիշվիլին այդ հայ կեսկեսների մասին գրում է. նրանք «... գրեթե չգիտեին իրենց մայրենի լեզուն և խոսում էին թուրքերենի հետ խառն հայերենով»⁷:

Այսպիսով, վերը բերված թիվը՝ 2400-ը համապատասխանում է Շաբին Կարահիսարի ընտանիքների իրական թվաքանակին: Մեկ ընտանիքում միջինը հաշվելով 6 հոգի, կստանանք 19-րդ դարի առաջին տասնամյակներին Շաբին Կարահիսարի բնակիչների թիվը: Այն եղել է մոտավորապես 15 հազար (14400), որից մոտ 2400-ը՝ հայեր: 1830 թ. ի հաշիվ գյուղական բնակչության հայերը աճել էին և կազմել 550 ընտանիք⁸ կամ 3300 շունչ:

¹ Տե՛ս Поправки к «Списку населенных пунктов», //Известия Кавказского отдела, Т., 1884—1885, т. VIII, с. 17—18.

² Տե՛ս ЦГВИА, ф. 450, д. 532, л. 1.

³ Տե՛ս Ինճիճյան Ղ., Աշխարհագրութուն, էջ 326:

⁴ Ավալիշվիլի Գ., Ճանապարհորդութուն Քիֆլիսից Երուսաղեմ, Վրացական աղբյուրները, հ. Գ., էջ 217, հմտ. Smith E., նշվ. աշխ., հ. 1, էջ 108:

⁵ Տե՛ս Վրացական աղբյուրները, էջ 217:

⁶ Տե՛ս Smith E., նշվ. աշխ., էջ 108:

⁷ Վրացական աղբյուրները, էջ 217:

⁸ Տե՛ս Smith E., նշվ. աշխ., հ. 1, էջ 108:

¹ Ինճիճյան Ղ., Աշխարհագրութուն, էջ 103:

² Տե՛ս Smith E., նշվ. աշխ., հ. 1, էջ 110:

³ Մանր ժամանակագրութուններ, հ. 2, էջ 552: Խոսքը Վերին Շարիանի մասին է:

⁴ Տե՛ս Նույն տեղում:

⁵ Խնձորիի մասին տե՛ս Гиппус А. И., Статистические таблицы вилаетов Турецкой империи, лист № 2.

Շաբին Կարահիսարի մոտ, Գայլ գետի աջակողմյան վտակներից մեկի ափին գտնվող Թամզարա գյուղաքաղաքում կենտրոնացված էր գավառի հայության մյուս խոշոր հատվածը: «Բազմութիւն են աստ յազգէս հայոց, — գրում է Ինճիճյանը, — որոց են եկեղեցիք երկու, մին կոշի վարի եկեղեցի, և միւսն կոշի վանք սբ Գէորգայ անունով...»: Աշխարհագիրը բավարարվում է այսքանով և չի նշում Թամզարայի հայության կոնկրետ թիվը: Այս բացը լրացնում է դարձյալ է. Սմիթը: Ըստ նրա մի վկայության, Շաբին Կարահիսարից մեկ ժամ հեռու (մոտ 5—7 կմ — Ա. Մ.) գտնվող մի մեծ գյուղում ապրում էին «... 500 հայկական և 70 թուրքական ընտանիքներ, բայց մեկ այլ հաղորդման համաձայն ... գյուղում կային 500 հայկական և 50 հունական ծխեր»²: Ըստ երևույթի, քաղաքից ոչ հեռու գտնվող ամենախոշոր բնակավայրը Թամզարան էր, քանի որ այդ շրջանում այլ նմանօրինակ գյուղ չկար³:

Շաբին Կարահիսարի լիվայում իր հայկական դիմագիծը պահպանում էր հատկապես Ազդեհրապատ (նաև՝ Ազդարապատ, Ազդարովա) նահիեն, որն բնկած էր գավառի վարչական կենտրոնից հարավ և Սեբաստիայից հյուսիս-արևելք: 18-րդ դարի վերջին և 19-րդ դարի սկզբներին այս նահիեն արևմտահայ բազմաթիվ շրջանների նմանությամբ դարձել էր ավազակային ջոկատների կենտրոնակայան: Տրապիզոնի էյալեթից հարձակվող լազերի ջոկատները կողոպտում ու սրի էին քաշում տեղի բնակչությանն ու ճանապարհորդներին: Ուստի այս գյուղախումբը «... առ ահի աւազակաց թողեալ կայ անգործ»⁴: Այնուամենայնիվ, շարունակում է իր միտքը Ինճիճյանը «բազում են ի սմա բնակութիւնք հայոց, կամ խառն և կամ յառանձին գիւղօրէս»⁵: Նրանցից առավել կենսունակ էին նահիեի կենտրոն Ազդարը կամ Ազդեհրը (Սպիտակ քաղաք), Վերին և Վարին Այծպտեր, Մշակնոց, էսկի-

չեհիր, Քրդանոց, Արգավիս, Անդրեաս (էնդերես), Սիս, Ալամոնիկ, Բուրգ, Աղվանիս գյուղերը¹:

Ազդեհրապատ նահիեից հյուսիս-արևմուտք, Գոյունլու Հիսար կամ Գոյունսար, իսկ հարավ-արևելք Զաղապա նահիեներն էին, որոնք խիստ նոսր էին բնակեցված և գլխավորապես թուրքաբնակ էին²: Այնտեղի հայկական բնակավայրերի գոյության մասին ուսումնասիրվող ժամանակաշրջանում տեղեկություններ չունենք: Միայն բավական ուշ՝ 1878 թ. Գ. Սրվանձտյանցի հավաքած նյութերից պարզվում է, որ Գոյուն Հիսարում և նրա մի քանի գյուղերում (Մահմադ, Դեմիրճիլիկ, Լթառիճ, Տիշքոյոյիվ, Զիֆթիլիկ) ապրել են հինգ հարյուր հայեր³:

Էրզրումի լիվայից հարավ-արևմուտք, Դերջանից հարավ և Երզնկայից հարավ-արևելք գտնվող Քըզիի գավառը քիչ բանով էր տարբերվում արևմտահայ այլ գավառներից: Այստեղ ևս հիմնական հայ բնակչության կողքին աստիճանաբար նկատվում էր եկվոր քրդական ցեղերի ներկայությունը: Դարասկզբին քրդերի գերակշիռ մասը ամռանը հաստատվում էր լեռնային ամառանոցներում՝ յայլաներում և զբաղեցնում էր գլխավորապես Քյոշմիր և Շեյթան-Դերեսի լեռների շրջակայքը⁴: Թուրքական ծագում ունեցող բնակիչների թիվը աննշան էր: Նրանք բնակվում էին Վարին Քրդիի խառաբուլաթ, Զերմակ և Մերմակ գյուղերում⁵: Ի դեպ, վերջին երկուսը ոչ միայն ունեին հայկական անուններ, այլև հայաբնակ էին⁶: Գավառի բնակչության երրորդ փոքրաթիվ խումբը հուլյներն էին, որոնք կղզիացած ապրում էին Բարմակսըզ կամ Պարմակսըզ և Խուլանք գյուղերում: Ուշագրավ է, որ այս երկու գյուղերում ևս կային հայեր⁷:

¹ Տե՛ս Ինճիճյան Ղ., Աշխարհագրություն, էջ 327—328, Սրվանձտյանց Գ., Երկեր, հ. 2, էջ 163—165, Աղեքսանդրյան Ա., Եղվ. աշխ., էջ 357—358:

² Տե՛ս Ինճիճյան Ղ., Եղվ. աշխ., էջ 328:

³ Տե՛ս Սրվանձտյանց Գ., Երկեր, հ. 2, էջ 165:

⁴ Տե՛ս Ինճիճյան Ղ., Եղվ. աշխ., էջ 109:

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 109—110:

⁶ Տե՛ս Երիցով Ա., Список населенных пунктов. //Известия Кавказского отдела, т. VIII, приложение, с. 102.

⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 102, 104:

¹ Ինճիճյան Ղ., Աշխարհագրություն, էջ 326:

² Smith E., Եղվ. աշխ., հ. 1, էջ 108:

³ Տե՛ս Սրվանձտյանց Գ., Երկեր, հ. 2, էջ 162—165:

⁴ Ինճիճյան Ղ., Եղվ. աշխ., էջ 327:

⁵ նույն տեղում:

Հայկական բնակավայրերը, որոնք անվիճելի մեծամասնությունն էին կազմում, գտնվում էին հիմնականում Քրդի գետի երկու ափերին: Ամբողջ գավառի և Վերին Քրդիի կենտրոնավայր Քրդին, որ վեր էր խոյանում համանուն գետի աջ ափին գտնվող երկու բլուրների վրա և հայտնի էր նաև Քրդի-Գասապա անունով, պատկանում էր Արևմտյան Հայաստանի այն փոքրիկ քաղաքների թվին, որոնցում հայ բնակչությունը բացարձակ մեծամասնություն էր կազմում: Դրա գլխավոր պատճառն այն էր, որ գավառի վարչական ապարատը բաղկացած էր փոքրաթիվ քուրդ պաշտոնյաներից: Փոքրաթիվ քրդեր էին ապրում նաև շրջակա լեռներում: Միաժամանակ, Քրդիի գյուղերում սեփականատեր թուրքեր չկային, ինչպես և էրզրումի դաշտում, որոնք, ինչպես վերը նշվեց, իրենց գյուղերը թողնելով վերակացուներին, տեղափոխվում էին քաղաք: Դարասկզբին Քրդիի 500—600 ծուխ բնակիչներից 400 ծուխը հայեր էին²: Նրանք բնակվում էին ձորամիջում, որտեղ ամփոփված էր քաղաքի մեծ մասը: Հայերը, շնչին բացառությամբ, բոլորն էլ արհեստավորներ էին³:

Քաղաքից հյուսիս ընկած գյուղերն էին Տինեկը, Չոմակը, Հագասունը, իսկ արևմուտք՝ Սագաձորը, Սերկևիկը, Հարթիվը և այլն: Վերջինս ուներ 200 տուն հայ բնակիչ⁴: Քրդի գետի ձախակողմյան Օրոր վտակի վրա գտնվում էին հայտնի Օրոր և Աստղաբերդ գյուղերը: Վերջինիս 200 ծուխ բնակիչներից կեսը հայեր էին: 200 ծուխ միայն հայ բնակիչներ ունեցող բնակավայրերից էր նաև Օսնակը⁵:

Վարին Քրդիի ամենախոշոր գյուղերից էր նրա կենտրոնավայր Մելիքանը: Այն գտնվում էր Քյոշմիր լեռան հյուսիսարևելյան ստորոտին, Քրդի գետի աջ ափին, էրզրումից Քրդի

¹ Տե՛ս Մատենադարան, Կարապետ արք. արխ. թղթ. 163ա, վ. 78, ք. 1, Քաշունի Մ., Աշխարհագրություն հին և նոր Հայաստանյայց, էջ 243:

² Տե՛ս Штреккер В., Топографические очерки, //Известия Кавказского отдела, т. III, приложение, с. 18.

³ Տե՛ս Ատրպետ, 1878—1928, 50-ամյակ հայ հեղափոխության ոսկե հորեկյան, Լենինական, 1927 (ձեռագիր), էջ 14:

⁴ Տե՛ս Ինճիճյան Ղ., Նշված աշխատություն, էջ 107—108:

⁵ Տե՛ս նույն տեղում:

և իարբերդ տանող առևտրական ճանապարհներից մեկի վրա: Առևտրական այդ ճանապարհի մաքսատներից մեկը գտնվում էր Մելիքանում, որի եկամուտն այնքան մեծ էր, որ նրանից բաժին էր հանվում նաև էրզրումի փառային: Նույնիսկ 1784 թ. ավերիչ երկրաշարժից հետո, որի ժամանակ զոհվել էին հարյուրավոր մարդիկ, շնորհիվ իր տնտեսական նշանակության, Մելիքանը կրկին վերականգնվել էր և դարձել նշանավոր հայաշատ բնակավայր¹: Գավառակի 200 տուն հայ բնակիչ ունեցող գյուղերից էր գետի մյուս ափին գտնվող Ասինձը կամ Առուզը: Այն ևս մինչև վերջին երկրաշարժը բարգավաճ և մարդաշատ էր:

Վարին Քրդիի ամենամեծ բնակավայրերից էր Ղարաբեկը (Ղայաբեկ), որն ուներ 300 ծուխ միայն հայ բնակիչ². Նույն գավառի հյուսիսային սահմանագլուխը կազմում էին Վիմախոր, Մեծ և Փոքր Կարակայկան հայկական գյուղերը:

Բացի վերոհիշյալ բնակավայրերից, Քրդիի լիվան ուներ տասնյակ այլ հայկական գյուղեր, որոնք դեռ չէին ենթարկվել մահմեդական ժողովուրդներով բնակեցվելու սուլթանական կառավարության քաղաքականության ազդեցությանը: Այդպիսի բնակավայրերից էին Դարմանը, Առեկը, Ճերմակը, Հողեկը, Ճպուռգեղը, Խաչգեղը, Մեծ և Փոքր Գառկալ գյուղերը, Չանախչին³, Լիճիկը, Չիֆթլիկը, Կըզըլ Չիբուխը⁴, Բիլիշան⁵, Սեղանքը, Խաչատուրը և այլն⁶: Սակայն դարի երկրորդ կեսին այդ գյուղերում, հայերից բացի, արդեն կային նաև քուրդ բնակիչներ:

Քրդիի բնակչությունը փորձությունների ենթարկվեց 20-ական թվականներին: 1820 թ. Արևմտյան Հայաստանի գավառները ներխուժած Երևանի Հասան խանը հայ բնակչությանը պարսկական տերության սահմանները բռնագաղթեցնելու նպատակով իր հրոսակային բանակից մի զորագունդ

¹ Տե՛ս Ինճիճյան Ղ., Աշխարհագրություն, էջ 109:

² Տե՛ս նույն տեղում, էջ 110:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 106—108:

⁴ Տե՛ս էփրիկյան Ս., Նշվ. աշխ., հ. 2, էջ 356:

⁵ Տե՛ս Гиппиус А. И., ук. соч., лист № 1.

⁶ Տե՛ս Известия Кавказского отдела, т. VIII, с. 14, Ա—Դ, նշվ. աշխ., էջ 192:

հնուսի ու Թեքմանի վրայով ուղարկեց հեռավոր Քրդիի գա-
վառը: Ասպատակելով տասնյակ հայկական գյուղեր՝ պարս-
կական զորագունդը կարողացավ այստեղից ևս որոշ թվով
հայերի տեղահանել և գաղթեցնել դեպի Երևանի խանության
սահմանները¹: Գաղթեցված բնակչության մասին թվական
տվյալներ չկան: Սակայն քանի որ փոքրաթիվ պարսկական
զորագունդը, ըստ ամենայնի, ի վիճակի չէր մեծ թվով բնա-
կիչների բռնագաղթեցնել շնվաճված ու պարսկական սահմա-
նից բավական հեռու ընկած երկրամասով, ուստի կարելի է
եզրակացնել, որ քաղաքական այս իրադարձությունները Քր-
դիի գավառում էթնիկական լուրջ տեղաշարժերի պատճառ
չհանդիսացան: 1823 թ. Քրդիի քուրդ ցեղապետերը ապրա-
տամբեցին կառավարության դեմ: Իրենց պարենային կարիք-
ները հոգալու նպատակով նրանք սկսեցին թալանել գավառի
հայկական բնակավայրերը: Հայերից ոմանք հարկադրված
հեռացան այլ շրջաններ: Այդ օրերին էրզրումի թեմի առաջ-
նորդ Կարապետ արքեպիսկոպոսին հասցեագրած նամակնե-
րից մեկում կարդում ենք. «... Բ ամիսէ (փետրվար 1823 թ. —
Ա. Մ.) յաղբատ և խղճալի երկիրս մեր սարսափելի յերկիւղ
քրթաց (քրդաց — Ա. Մ.) և անօրինաց պատերազմին՝ կեն-
դանոյն մեռեալ եմք. թէ զասպան (խոսքը Քրդիի՝ Գասա-
պայի մասին է — Ա. Մ.), գիւղորայք բոլոր նահանգին. թա-
լանելով, յաբըշտակելով, աւերելով, պաշարեալ տիրեցին...»²:
Միայն այն ժամանակ, երբ հայկական կողմից գյուղե-
բուն արդեն ի վիճակի չէին կերակրելու քրդերին, նրանց ցե-
ղապետերը վայր դրեցին զենքը և հանձնվեցին թուրքական
իշխանություններին³: Սակայն դրանով վերջ չտրվեցին Քրդիի
հայության անլուր տառապանքներին: Հետագայում ևս, օգ-
տրվելով պատեհ առիթից, քրդերը շարունակեցին հակապե-
տական ելույթները՝ նյութական ու մարդկային նոր կորուստ-
ներ պատճառելով ամենից առաջ խաղաղ հայ բնակչությանը⁴:

4. Հյուսիսային և արևելյան գավառներ

էրզրումի նահանգի հյուսիսային անկյունը զբաղեցնում
էին միմյանց սահմանակից Սպեր¹ և Թորթում գավառները:
Նրանց հարավային սահմանները ձգվում էին մինչև էրզրու-
մի լիվա և նրանից բաժանվում Տումլի լեռնագագաթով, իսկ
հյուսիսում հասնում Պարխար լեռները: Սպերի արևմուտքում
Բաբերդի գավառն էր, Թորթումի արևելքում՝ Ախալցխայի
էյալեթի Օլթի և Նարիման գավառները:

Դարասկզբին Սպերի լիվան ուներ բազմազգ բնակչություն:
«Բնակիչը սորայ են յազգէս հայոց՝ տաճիկը և հոյնք. և լի
են գիւղօրէք և շէնք ի գավառիս...»²: Թուրքերը, որոնց մի
սովար մասն էլ միջնադարում մահմեդականացված հայեր
էին³, հիմնականում կենտրոնացած էին Սպեր (թուրք.՝ Իս-
պիր) բերդաքաղաքում: Այն ընկնում էր Ճորոխի աջ ափին և
ուներ 900 տուն⁴ կամ մոտ. 5000—6000 բնակիչ:

Գավառի տարածքը հավասարաչափ բնակեցված չէր:
Խիստ սակավաբնակ, անգամ անմարդաբնակ էին հյուսիսա-
յին և հարավային լեռնային շրջանները: Բնակավայրերը
սիռված էին հիմնականում գավառի միջին մասում՝ Ճորո-
խի երկայնքով ձգվող դաշտավայրում, որտեղ կային բարե-
նպաստ պայմաններ հողագործության և այգեգործության
զարգացման համար⁵: Հայկական գյուղերի առաջին փոքրիկ
խումբը գտնվում էր Սպերից հյուսիս: Դրանցից էին Նունու-
տը, Կարմրին կամ Կարմիրքը, Զագոսը (Մաղկունս, նաև՝
Զագկոս), Շահրխստանցը, Կաժը և այլն: Վերջիններից հյու-
սիս Ախալցխայի Կիսկիմ գավառն էր⁶: Կարմիրքը կաթուղիկ
հայերի խոշոր գյուղերից էր⁷:

¹ Իր հայտնի գյուղերից մեկի՝ Նունուտի անունով Սպերը երբեմն ան-
վանվում էր նաև Նունուտ, տե՛ս Ղ. Ինճիճյան, նշվ. աշխ., էջ 94:

² Նույն տեղում:

³ Տե՛ս Տաշյան Ն., Հայ բնակչությունը Սև ծովեն մինչև Կարին, էջ 47—
48:

⁴ Տե՛ս Ինճիճյան Ղ., նշվ. աշխ., էջ 94:

⁵ Տե՛ս Ա.—Դո, նշվ. աշխ., էջ 196:

⁶ Տե՛ս Ерицов А., Список населенных пунктов. //Известия Кав-
казского отдела, т. VIII, приложение, с. 86.

⁷ Տե՛ս Koch K., նշվ. աշխ., էջ 55—56:

¹ Տե՛ս Արարատ, 1889, 31 հունվար, էջ 41:

² Մատենադարան, Կարապետ արք. արխիվ, թղթ. 163բ, վ. 520, թ. 1:

³ Տե՛ս նույն տեղում:

⁴ Տե՛ս Аверьянов, նշվ. աշխ., էջ 67—68 և Դիվան հայոց պատմու-
թյան, հ. ԺԳ, Բ., 1915, էջ 173—186:

Ճորոխի աջ ափին էին ընկած Քարձոր, Թշաձոր (Տշաձոր, Դշաձոր), Մեծ Ագրակ, Վարիզոնց, Նշենուտ, Խոզաղբուր և տասնյակ այլ գյուղեր¹: Քարձորի և Թշաձորի բնակիչները բացի երկրագործությունից, զբաղվում էին մերձակա արծաթի հանքերի մշակություն²:

Սպերի գյուղերը աչքի չէին ընկնում բազմամարդություն³: Համեմատաբար մարդաշատ էին միայն Հունուտ³, Մեծ Ագրակ և մի քանի այլ գյուղեր⁴:

Մինչև 1830 թ. հայկական բնակչություն ուներ նաև սակավաբնակ Հովտիկ (Օվաճրգ) նահիեն: Այնտեղի գյուղերից պետք է նշել նրա կենտրոնավայր Բաշ-Օվազիկը, Բաշքենդը (Պաշ գյուղ)⁵ Վեքիսասը, Ագրակը, Ճիպոտը և այլն: Ուշագրավ է, որ նույնիսկ արևմտահայերի զանգվածային արտագաղթից հետո էլ նրանք ունեին հայ բնակիչներ⁶, թեև շատերը վերածվել էին ավերակների⁷: Հովտիկի բնակչության մեջ զգալի թիվ էին կազմում նաև մահմեդականացված հայերը՝ կեսկեսներ⁸:

Էրզրումի գավառներից միջնադարում բռնի մահմեդականացման կնիքը թերևս ամենաուժեղ կրում էր Սպերի հարևան Թորթումի լիվան: Միջնադարում զանգվածային կոտորածների, արտագաղթի և գավառի ամայացման վկայություն էին 120 եկեղեցիների և 10 վանքերի ավերակները⁹: Այսուհանդերձ, 19-րդ դարի սկզբներին Թորթումի մի շարք բնակավայրեր հայաբնակ էին: Դա երևում է Ինճիճյանի հետևյալ վկայությունից. «ունի վիճակ նորայ գիւէօրէս

¹ Տե՛ս Երիցով Ա., նշվ. աշխ., էջ 87:

² Տե՛ս Koch K., նշվ. աշխ., էջ 49—50:

³ Տե՛ս Գեղամյանց Հ., Կարապետ արքեպիսկոպոս, Փորձ, 1876, № 1, էջ 165:

⁴ Տե՛ս Ա.—Դո, նշվ. աշխ., էջ 196—197:

⁵ Այս գյուղը չպետք է շփոթել Ստորին Բասենի համանուն գյուղի հետ:

⁶ Տե՛ս Էփրեկյան Ս., Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. 2, էջ 300—301 և Ա.—Դո, նշվ. աշխ., էջ 174:

⁷ Տե՛ս Ատրպետ, Ճորոխի ավազանը, էջ 84—85 և Երիցով Ա., ук. соч., էջ 78:

⁸ Տե՛ս նույն տեղում:

⁹ Տե՛ս Տաշյան Հ., Հայ բնակչությունը Սև ծովին մինչև Կարին, էջ 77—79 և «Փորձ», 1880, հունվար, էջ 144:

իրև 30. ըստ մասին բնակեալ ի հայոց, և ըստ մասին ի տաճկաց»¹: Ինչպես Սպերում, այնպես էլ Թորթումում, որոնք առավել խոշոր շահերով էին կրում բռնագաղթի և մշտատև ավերումների ազդեցությունը, չկային բազմամարդ բնակավայրեր: Ինճիճյանի նշած 30 գյուղերից բացի, այս լիվանում կային ևս մի քանի տասնյակ այլ բնակավայրեր, ընդամենը՝ 70²: Սակայն նրանց մի մասը փոքրիկ յայլաններ կամ կիսավեր ու լքված բնակատեղիներ էին:

Գավառի կեսկեսների զգալի մասը գրեթե ոչնչով չէր տարբերվում մնացած հայ բնակչությունից: Նրանցից շատերն անգամ վարժ չէին խոսում թուրքերեն, իսկ ոմանք էլ ընդհանրապես չգիտեին այդ լեզուն: Մի մասն էլ խոսում էր թուրքերենի հետ խառն հայերենով³: Կարելի էր հանդիպել բազմաթիվ կեսկեսների, որոնք ունեին հայկական անուններ և ազգանուններ՝ միայն թուրքական օղլի վերջավորությունով (օրինակ՝ Կիրակոսօղլի, Պետրոսօղլի և այլն): Ճանապարհորդների այն հարցին, թե ինչ ազգություն են պատկանում, հետևում էր «իսլամ եմ» նրանց ազգության մասին ոչինչ չասող պատասխանը, տերմին, որի տակ Կ. Կոնի արտահայտությունը Թուրքիայում ընկալվում էր միմիայն օսմանլին՝ թուրք⁴:

Թորթումի համանուն վարչական կենտրոնը դարասկզբին փոքրիկ ավան էր: Նրանից հյուսիս ընկած Թորթում ամրոցը փաստորեն ավելի մեծ բնակավայր էր՝ ուներ 400 ծուխ⁵ (մոտավ. 2400 շունչ — Ա. Մ.) հայ և հայ-կեսկես բնակիչ⁶: Բազմամարդ բնակչություն ունեին միայն հայկական Նորաշեն, Քյոսա (Քիսիսա), Խախու, Շիփեկ, Վերին Լսկավ, Վերին գյուղերը: Քյոսան, որը գտնվում էր Թորթում ավանից հյուսիս, և նրանից հարավ ընկած Նորաշենը, իրենց շրջակայքում

¹ Ինճիճյան Ղ., նշվ. աշխ., էջ 93—94:

² Տե՛ս Քլիշան Ղ., Տեղագիր Հայոց Մեծաց, էջ 27:

³ Տե՛ս Տաշյան Հ., Հայ բնակչությունը Սև ծովին մինչև Կարին, էջ 78—82:

⁴ Տե՛ս Koch K., նշվ. աշխ., էջ 57—59:

⁵ Տե՛ս Ինճիճյան Ղ., նշվ. աշխ., էջ 93:

⁶ Տե՛ս Երիցով Ա., Список населенных пунктов, //Известия Кавказского отдела, приложение, с. 79.

միավորում էին գավառի հայկական գյուղերի մի ամբողջ շարք (Սխտորուտ, Պոչենց, Խաշուտ, Գեղիկ, Մեղուս, Վախթիրկանց, Վարդաշեն): Այդ ժամանակաշրջանում նրանց մի մասը կանգնած էր թրքացման վտանգի առջև: Համեմատաբար բարվոք վիճակում էին կաթոլիկական գյուղերը, հատկապես Նորաշենը, որոնք ստանալով ֆրանսիական հյուպատոսների և կաթոլիկ քարոզիչների որոշ աջակցությունը, կարողանում էին մասամբ հեռու մնալ բռնի մահմեդականացումից, սոցիալական բիրտ շահագործումից և բնակչության նկատվող արտագաղթի ընդհանուր միտումից¹: 1820—1823 թթ. պարսկա-թուրքական պատերազմի հետևանքով ի թիվս Արևմտյան Հայաստանի հյուսիսային այլ գավառների, սարսափելի ավերածությունների ենթարկվեց նաև Թորթումի գավառը: Ազգաբնակչության նոր խմբեր հեռացան այդ շրջաններից²: Կարևոր է նշել, որ տեղի հայ բնակչության մի մասը, լազերի բռնություններից ազատվելու համար հաճախ իրեն ներկայացնում էր ոչ միայն մահմեդական, այլև լազի Պատահական չէ, որ նրանց, ինչպես վերը նշվեց, հաճախ անվանում էին ոչ թե կեսկեսներ, այլ հայ-լազեր: Այսպիսի հայ-լազեր կային նաև Սպերի, Բաբերդի, Կելկիթի և Արևմտյան Հայաստանի այն գավառներում, որոնք սահմանակից էին Պոնտական լեռներում և նրանց փեշերին բնակվող լազերի բնակավայրերին³: Հայ-լազերով բնակեցված գյուղերի մի որոշ մասն էլ արդեն լիովին կորցրել էր նախկին հայկական դիմագիծը և փաստորեն վերածվել էր տիպիկ թուրքական բնակավայրերի: Այդպիսին էր, օրինակ, ուշ միջնադարում իբրև հայկական գյուղ հիշատակվող Սազերը⁴:

Բնականաբար, մահմեդականացման, բռնի ազգափոխության դրոշմը կրող յուրաքանչյուր գավառի, այդ թվում Սպերի և Թորթումի ազգաբնակչության թվակազմի և տեղաբաշխ-

ման պրոբլեմները քննարկելիս, չի կարելի աչքաթող անել բնակչության այն շերտերին, որոնք գտնվում էին կրոնափոխության և ասիմիլացվելու, այսինքն՝ անցումային փուլում¹:

Էրզրումի նահանգի արևելյան ընդարձակ հատվածը 19-րդ դարասկզբին Արևմտյան Հայաստանի ամենախիտ հայաշատ երկրամասերից էր: Հատկապես մարդաշատ էին Վերին Բասեն, Ստորին Բասեն, Ալաշկերտ (Նահինի հետ), Դիադին, Խամուր և Բայազետ գավառները:

Արաքս գետը իր ջրառատ վտակներով ոռոգում էր Բասենի դաշտի տասնյակ գյուղերի հողատարածությունները, հրաշալի պայմաններ ընձեռելով հացահատիկային կուլտուրաների մշակման համար, որը և տեղացիների գլխավոր զբաղմունքն էր: Բասենը տալիս էր նահանգից արտահանվող հացահատիկի հիմնական մասը: Պատահական չէ, որ երկու Բասենների բնակավայրերի մեծ մասը բաժին էր ընկնում Արաքսի բարեբեր հովտին, որի ընդհանուր տարածքը կազմում էր 170 քառակուսի վերստ²: Բասենի դաշտը եզերող լեռները նոսր էին բնակեցված և հիմնականում քրդաբնակ էին:

Բասենի, հատկապես Վերին Բասենի տնտեսական և քաղաքական զարգացմանը խորապես նպաստում էր Պարսկաստան—Էրզրում տարանցիկ առևտրական ճանապարհի վրա գտնվելու հանգամանքը: Հասան կալան, որը քաղաքատիպ ամրոց էր և համարվում էր կայսրության արևելյան նահանգների ամենաանառիկ ռազմական օբյեկտներից մեկը³, 1805—1806 թթ. ուներ 1700—1800 տուն (մոտավ. 10—11 հազար շունչ — Ա. Մ.) բնակիչ⁴: Նրանից մի քանի տասնյակ կիլոմետր հեռավորության վրա էր ընկած ամբողջ Բասենի բնակավայրերի մեծագույն մասը: Նրանք գլխավորապես մտնում էին Վերին Բասենի լիվայի կազմի մեջ:

¹ Քրիստոնյա հայերի բնակավայրերից տարբերելու համար մահմեդականացած հայերի և կեսկեսների բնակավայրերը աշխատության հավելվածում առանձնացրել ենք աստղանիշով:

² Տե՛ս ЦГВИА, ф. 450, д. 533, л. 7.

³ Տե՛ս Porter R. K., նշվ. աշխ., էջ 662, История военных действий. т. I, с. 112—113:

⁴ Տե՛ս Խնճիճյան Գ., նշվ. աշխ., էջ 87, Միրախորյան Մ., նկարագրական ուղևորություն, մասն Ա, էջ 23:

¹ Տե՛ս Տաշյան Հ., Հայ բնակչությունը Աև ծովեն մինչև Կարին, էջ 64—65:

² Տե՛ս Մատենադարան, Կարապետ արք. արխիվ, ք. 163բ, վ. 486, ք. 1:

³ Տե՛ս Սարգսյանց Լ., Այց Թուրքաց Հայաստանին, Մուրճ, 1889, դեկտեմբեր, էջ 123—124:

⁴ Տե՛ս Տաշյան Հ., Հայ բնակչությունը Աև ծովեն մինչև Կարին, էջ 66—67:

Այդ գյուղերի առաջին խումբը տարածվում էր Հասան կալայից հյուսիս և հյուսիս-արևելք և բացառապես հայաբնակ էր: Մեծ գյուղեր էին Օկուսին, Պատիճվանը, Ախան, էգեպատը: Դարասկզբին այս շրջանում հայտնվեցին թուրք բնակիչներ: Նրանց մի մասը հաստատվեց Ախայում, մյուսները կարողացան տեղ դառնալ վերջինիս հարևան Միատուն և ավելի հյուսիս գտնվող Սուրբ Օհան գյուղերին¹: Վերոհիշյալ մյուս գյուղերը և Հասան կալայից հարավ ընկած Ալվարը², Բլուրը, Թորդանը³, Հերթևը, Պլղասունը, Օրթիզը, Նապին, Կյուլուն միառժամանակ գերծ մնացին թուրքական վերաբնակեցումից: Պլղասունում հայերից բացի ապրում էին նաև հույներ⁴:

Վերին Բասենի հայտնի գյուղերից էին Քյոփրի-քյոյը (Կամուրջ), Ամրագոմը, Գոմաձորը, Մեծ Դուն և Փոքր Դուն: Առաջինը գտնվում էր Արաքսի հետ Վերին Բասենի տարբեր շրջաններից հոսող բազմաթիվ վտակների միախառնման վայրից ոչ հեռու:

Թուրքական բնակեցումը նկատվում էր նաև Վերին Բասենի կենտրոնական շրջաններում: Այսպես. Քյոփրի-քյոյից արևելք, Արաքսի ափին ընկած Գոմաձորի բնակիչները «... յառաջագոյն առհասարակ հայ էին, այլ այժմ թուրք ևս բնակին ի նմա»⁵: Նորեկ թուրք աղալարներից մեկը կարողացել էր նաև զավթել Գոմաձորի գեղջավազի պաշտոնը և կրում էր «Գոմաձոր օղլի» անունը: Նախկին հայկական Ավնիկ ամրոցի բնակիչները ևս այժմ թուրքեր էին⁶:

Արաքսի աջակողմյան հովտի հայկական գյուղերն էին՝

¹ Տե՛ս Ինճիճյան Ղ., Աշխարհագրություն, էջ 88:

² Ըստ Գարդանի 1807 թ. Ալվարն ուներ 50 տուն բնակիչ, տե՛ս Հակոբյան Ն., Ուղեգրություններ, հ. 2., էջ 98:

³ Թորդանն ուներ 100 տուն բնակիչ, տե՛ս Ինճիճյան Ղ., նշվ. աշխ., էջ 91:

⁴ Տե՛ս Ինճիճյան Ղ., նույն տեղում:

⁵ Նույն տեղում, էջ 88:

⁶ Տե՛ս Ալիշան Ղ., Տեղեկագիր Հայոց Մեծաց, էջ 40:

Եղանը¹, Իշխանը², Վերին Տոտին (Տոտվերան)³, Հարսնեքաբը, Խաչուն, Խոցավանցը, Թավոնցը, Յուզվերանը, Խոսրովերանը (Վերին Խոսրով), Ճիճագրակը, Արուճագրակը (Ալիճագրակ), Դելի Բաբան⁴ և այլն:

Թուրք բնակիչներ կային Վերին Բասենի ևս մի քանի գյուղերում: Սակայն նրանք տոկոսային հարաբերությամբ զիջում էին հայերին⁵:

Ստորին Բասենի ամենախոշոր բնակավայրերը Խորասանն ու Մժնկերտն էին: Առաջինը, դառնալով լիվայի վարչական կենտրոն, 19-րդ դարի սկզբին վերածվել էր գյուղաքաղաքի: Բնակիչների մեջ, ինչպես ամեն մի քաղաքատիպ բնակավայրում, հայերից բացի կային նաև թուրքեր: Նույն զավառի երբեմնի վարչական կենտրոն Մժնկերտը նույնպես ուներ խառը՝ հայ-թուրքական բնակչություն, ընդամենը 500 տուն⁶: 20-ական թվականների վերջին է. Սմիթը Մժնկերտը համարում է փոքրիկ քաղաք⁷:

Ստորին Բասենը թեև զիջում էր իր բնակավայրերի թվաքանակով Վերին Բասենին, սակայն նույնպես աչքի էր ընկնում բազմաթիվ, զուտ հայկական գյուղերով: Դրանցից էին Կարաքիլիսան, Աղափը, Վերին Ղարաբունդարը, Ճոասունը, Արմուտուն, Պաշգեղը և այլն⁸: Պաշգեղում, որը զավառի խոշորագույն գյուղերից էր, «... կան բազմութիւն բնակչաց յազգէս մերմէ (այսինքն՝ հայեր — Ա. Մ.), որք ունին և եկեղեցի»⁹: Արաքսի աջակողմյան բազմաթիվ վտակների վրա

¹ Գարդանը Եղան գյուղը հիշատակում է Հիասան ձևով: Այն ըստ նույն հեղինակի ունեցել է 60 տուն հայ բնակիչ, տե՛ս Ն. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. 2., էջ 98:

² Դարասկզբին Իշխանը ուներ 100—150 տուն բնակիչ, տե՛ս Ալիշան Ղ., Այրարատ, էջ 28:

³ Ըստ Ղ. Ինճիճյանի Վերին Տոտին ուներ 200 բնակիչ, տե՛ս Ինճիճյան Ղ., նշվ. աշխ., էջ 88:

⁴ Ըստ Գարդանի Դելի Բաբան ունեցել է 120 տուն բնակիչ (հայեր), տե՛ս Հակոբյան Ն., Ուղեգրություններ, հ. 2., էջ 99:

⁵ Տե՛ս Лихутин М., Русские в Азиатской Турции, с. 365.

⁶ Տե՛ս Ինճիճյան Ղ., նշվ. աշխ., էջ 91:

⁷ Տե՛ս Smith E., նշվ. աշխ., հ. 1, էջ 149:

⁸ Տե՛ս Ինճիճյան Ղ., նշվ. աշխ., էջ 92:

⁹ Նույն տեղում:

ընկած գյուղերն էին Զարսը (նակ՝ Մարս, Հարս), Արտաստը, Պետրեվանքը¹, Սանամերը, Կարաուրկանը և այլն²:

18-րդ դարի առաջին կեսին Բասենի երկու գավառներում հայ բնակչության ազգային տեսակարար կշիռը ավելի բարձր էր, քան 19-րդ դարի սկզբին: Այդ ընթացքում տեղի են ունեցել էթնիկական տեղաշարժեր: Նախ 1789—1790 թթ. յուրաքանչյուր շաբաթվա մեջ առնվազն երեք անգամ կրկնվող երկրաշարժերը հիմնահատակ ավերել էին բազմաթիվ բնակավայրեր³: Դրանցից մի մասը շէր վերաշինվել: Ստորին Բասենի Սալբորի գյուղը, որն ուներ 200 տուն հայ բնակիչ, դարասկզբին հիշեցնում էր մի մեծ ավերակակույտ⁴: Ինչպես վերոհիշյալ մի քանի լիվաներում (օրինակ՝ Երզնկայում), ավերված հայկական բնակավայրերին տեղ դառնալու ակնկալություններ օսմանյան կառավարությունը նոր թուրքական ցեղեր բնակեցրեց Բասենի դաշտում: Կարաբլիսան, որ խոշոր հայկական գյուղ էր, դարձավ բնակատեղի նաև թուրքերի համար: Զիթահանքը և Չուրուկը գրեթե լիովին անցան նրանց ձեռքը⁵: Թուրքական բնակեցումը ուժեղացավ հատկապես դարասկզբին: Այդ ընթացքում գյուղերից «... ոմանք քանդին, — պատմում է նորեկների արարքների մասին ժամանակակիցը, ուստի բնակիչները, — անդադար փոփոխին ի տեղուղէ ի տեղի, խոյս տուեալ... ի հարստահարութեանց թրքաց և քրդաց»⁶:

1808 թ. քրդերի ինքնուրույն վիճակին վերջ դնելու նպատակով թուրքական կառավարության ձեռք առած միջոցա-

¹ Անգլիացի ճանապարհորդ Առլդելը վկայում է, որ Պետրեվանքը, որը նա անվանում է Բեդրովաս, 1812 թ. ունեցել է «հունական ծեսին պատկանող» (այսինքն ուղղափառ հայեր — Ա. Մ.) 30 ընտանիք, երկու տուն հայ (այսինքն՝ հայ-լուսավորչական — Ա. Մ.) և հինգ տուն մահմեդական բնակիչ, տե՛ս Հակոբյան Հ., Ուղեգրություններ, հ. 2., էջ 477:

² Տե՛ս Ալիշան Ղ., Այրարատ, էջ 33—39:

³ Տե՛ս Բաճյան Ս., Նկարագրություն քաղաքին Կարնո և մեծ գետնաշարժին... Բազմավեպ, 1862, 1 հուլիս, էջ 207:

⁴ Տե՛ս Ինճիճյան Ղ., նշվ. աշխ., էջ 91—92:

⁵ Նույն տեղում:

⁶ Նույն տեղում: Այդ տարիներին Բասենում կարելի էր հանդիպել հայ գաղթականների կարավաններ (Jaubert P. Am., նշվ. աշխ., էջ 16—17):

ուումներն ավելի խորացրին երկրամասում տիրող քաղաքական անարխիան: Զկամենալով ենթարկվել իշխանություններին՝ քրդերը զենք վերցրին: Այդ պայքարում կրկին ունատակ գնացին հայկական գյուղերը: Հատկապես Ստորին Բասենի արևելյան շրջանների համար աղետալի եղան 20-ական թվականների սկզբի քաղաքական անցքերը՝ կապված պարսկա-թուրքական պատերազմի հետ: Բռնագաղթի ու կոտորածների հետևանքով մի քանի գյուղեր դարձան անմարդաբնակ վայրեր: Այդ շրջանը, որ հիմնականում ընդգրկում էր Կարսի էյալեթին սահմանակից Սողանլուղի լեռների հատվածը, ամայի վիճակում մնաց նաև հետագա տասնամյակներին: Սողանլուղի լեռնագագաթներից մեկի՝ Սուրբ խաչի շրջակայքը, որտեղ բազմաթիվ հայկական գյուղերի բնակատեղի էր, այժմ իր քանդված 6—7 եկեղեցիներով «... ամբողջ... լքեալ [էր] ու ամայի»¹: Ընդհանուր առմամբ այս ռեզիտնում այդպիսի վանքերի թիվը հասնում էր 11-ի²: «Բասենցիք — կարդում ենք արխիվային մի փաստաթղթում, — յորժամ անտառի մեջ փայտ բերելու երթալով կտեսնեն այս վանքերս ամայի և կիսաւէր շենքեր, որ քրդաց բնակարան դարձած են, կուլան, կողբան, կկսկծին և սրտերին արեան գետեր կվազեն...»³: Պարսկական բռնագաղթից անմասն չէր մնացել անգամ լավ ամրացված Հասան կայան: Պատահական չէ, որ 1820-ին, ըստ Ռ. Փորթրի «այս երբեմնի նշանավոր տեղի բնակչությունը չէր անցնում 3 հազարից»⁴:

Թուրքական բռնություններին հայ բնակչությունը պատասխանում էր պայքարի երկու եղանակով: Առաջինը, որ հատուկ էր արևմտահայ շատ գավառների, արտագաղթն էր: Խոսելով ամբողջ Արևմտյան Հայաստանում դարասկզբին ստեղծված ծանր քաղաքական իրավիճակի հետևանքով հայ բնակչության հարկադիր տեղաշարժերի մասին՝ Լեոն կանդ է անունում հատկապես Բասենի օրինակի վրա: «Բասեն գա-

¹ Ինճիճյան Ղ., նշվ. աշխ., էջ 91:

² Տե՛ս մանրամասն Մատենադարան, Զանազան հեղինակների արխ., Թղթ. 54, վ. 13, թ. 46—47:

³ Նույն տեղում:

⁴ Porter R. K., նշվ. աշխ., էջ 662: Ըստ նույն հեղինակի այդ երեք հազարից քրիստոնյա էր մեկ երրորդը, տե՛ս նույն տեղում:

վառի ազգաբնակչությունը, — գրում է նա, — բնաջնջումից ազատվելու միակ միջոց այն էր դարձրել, որ իր գյուղերը շարժական դրուժյան մեջ էր պահում, փոխելով նրանց մի տեղից մյուս տեղ և այսպիսով խույս տալով քրդական և թուրքական կեղեքումների մշտական վայրեր դառնալու դժբախտությունից»¹:

Սակայն Բասենի հայությունը մղում էր նաև ակտիվ պայքար: Ուշագրավ է, որ այն դեպքում, երբ Օսմանյան կայսրությունում քրիստոնյաները գրկված էին զենք կրելու, ձի նստելու, դատարանում վկայություն տալու և մի շարք այլ իրավունքներից, համառու տոկոսն բասենցիք ոչ միայն զենք էին պահում, այլև հռչակված էին նրա տարբեր տեսակների պատրաստման արհեստով, լավ ձիավորներ և քաջ կռվողներ էին²: Բասենի գյուղացիները զենքը ձեռքին հակահարված էին տալիս հարձակվող հրոսակախմբերին: Այդպիսի մի դեպքի ականատես է եղել Ջ. Մորիերը 1809 թ.: Երբ Ալաշկերտի մի քանի գյուղերի բնակիչներ քուրդ ցեղապետ Աբդուլա աղայի սփռած մահու ավերից փրկվելու համար գերադասել էին արտագաղթել, Բասենի Դելի Բաբայի բնակիչները վերադարձել էին իրենց բնակավայրը և պատրաստ սպասել վերջինիս ավազակային ջոկատներին³: Պատահական չէ, որ հարևան գավառներից հայ գյուղացիներ տեղափոխվում էին այստեղ՝ խույս տալով ֆիզիկական բնաջնջման վտանգից: 1820 թ., չնայած իր ծանրագույն տնտեսական ու քաղաքական վիճակին, Բասենի ազատատենչ հայությունը կարողացավ ընդունել դեպի Պարսկաստան Երևանի Հասան խանի բռնագաղթից մազապուրծ եղած ալաշկերտցի գաղթականների⁴:

Այսպիսով, Բասենի բնակչության համալրումը պայմանավորված էր ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական նախադրյալներով: Այդ լծակների ազդեցության տակ համեմատաբար կարճ ժամանակամիջոցում, հատկապես՝ դաշ-

տավայրային շրջանների բնակավայրերը կարողանում էին վերականգնվել և համալրվել: Հատկանշական է, որ 20-ական թվականների սկզբին պարսկական արշավանքներից ու հայ բնակչության բռնագաղթից յոթ-ութ տարի անց, մասնավորապես Վերին Բասենը կրկին դարձել էր նահանգի և Արևմտյան Հայաստանի խիտ բնակեցված գավառներից մեկը: Բնակչության ճնշող մեծամասնությունը հայեր էին¹: Էրզրումի նահանգի այլ գավառների գյուղերի ընտանիքների միջինի համեմատությամբ այստեղի ցուցանիշը, ըստ Կ. Կոխի, ավելի բարձր էր՝ հավասար էր 40-ի²:

Խնուսի լիվան իր Թեքման, Կյոքսու նահիեներով բնկած էր էրզրում և Վերին Բասեն գավառներից հարավ, Քրդիից արևելք: Հյուսիս-արևելքից մի նեղ հատվածով այն սահմանակից էր Բայազետի լիվա-փաշայությանը, իսկ հարավում ձգվում էր դեպի Վանի նահանգի հյուսիսային սահմանը:

Բազմաթիվ հայկական այլ գավառներին հատուկ լեռնային ունեցող ուներ նաև այս լիվան: Բինգյուլ (հնում՝ Բյուրակըն), Փալան-տյոքեն, Խամլեբերդ և մի քանի այլ լեռներ բնական սահմանով այն բաժանում էին հարևան վարչամիավորներից: Խնուս և Արաքս գետերի ջրբաժան լեռնագագաթներն էլ անջրպետում էին Խնուս Օվան (այսպես էր կոչվում գավառի կենտրոնական դաշտավայրային շրջանը) նրա լայնարձակ Թեքման նահիեից: Խնուսի գավառը Արևմտյան Հայաստանի ամենաչրառատ երկրամասերից էր:

Քրդիի նմանությամբ այստեղի կառավարումն իրականացնում էին փոքրաթիվ լեզգի բեյերը³: Խնուսի դաշտավայրային գյուղերը ևս հայաբնակ էին: Լեռնային շրջաններում մեծամասնություն էին կազմում քրդերը, իսկ թուրքեր ընդհանրապես չկային⁴:

18-րդ դարի կեսերին այս գավառն ավելի մարդաշատ էր: Սակայն դարի երկրորդ կեսին Խնուսի և Մանազկերտի բեյերի միջև սկսված արյունալի կռիվների հետևանքով տեղի

¹ Լեո, Հայոց պատմության նորագույն շրջան, մասն 2, Ե., 1927, էջ 11:

² Տե՛ս Մատենադարան, Զանազան հեղինակների արխիվ, թղթ. 54, Կ. 13¹, թ. 45—46:

³ Տե՛ս Հակոբյան Լ., Ուղեգրություններ, հ. 2., էջ 277—278:

⁴ Տե՛ս Արարատ, 1889, 28 փետրվար, էջ 113:

¹ Տե՛ս Ճանապարհորդություն ի նահանգն Կարուց, հեղինակ՝ Կ. Վ. Ս., Արարատ, 1879, 1 սեպտեմբեր, էջ 386:

² Տե՛ս Koch K., նշվ. աշխ., էջ 316:

³ Տե՛ս Ինճիճյան Ղ., Աշխարհագրություն, էջ 79:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 80:

ունեցան լուրջ տեղաշարժեր: Մանավերտի բնիկն օգնության եկած Բայազետի փառայի հրոսակները ոտնատակ տվեցին «զբազում սահմանս ինուսայ»¹: Այդ կոնվենտի ընթացքում հայաթափ եղան մի շարք հայկական գյուղեր (Արաբո, Խոնդուռ, Խասե, Խզլամատ, Մեծ Արթոֆ և այլն), որոնք մինչև 19-րդ դարի սկիզբը բնակեցվեցին քրդերով²:

Գավառի կենտրոն ինուս բերդաքաղաքը գտնվում էր նրա հարավում Բինգյուլ լեռնագագաթից արևմուտք: Բնակչությունը շատ չէր, ընդամենը 500 ծուխ, «ըստ մեծի մասին լեզկի, և մնացեալքն քուրդք նաև հայք»³: Ինչպես կարելի է նկատել, նկարագրված քաղաքական անցքերից հետո, գավառի կենտրոնավայրը այլևս չէր կարողացել վերականգնել իր հայկական դիմագիծը: Առևտրի ու արհեստների անկումն էլ տրնտեսական խթաններ չէր ստեղծում ինուսում հայ տարրի վերահամալրման համար⁴: Ուստի նրա բնակչության գերակշիռ մասը Կովկասից ներգաղթած լեզգիներն էին (որոնք գավառ էին գավառի փաստական իշխանությունը) և նրանց ենթակա քուրդ զինվորականները: Մակայն շուտով, 1810-ական թվականների սկզբներին, քաղաքական իրավիճակի որոշ կարգավորումից հետո, աստիճանաբար գյուղերից, հավանաբար նաև հարակից գավառներից եկած բնակչության հաշվին, ինուսի հայության թիվը կրկին աճեց: Հայերը նորից իրենց թվաքանակով գերազանցեցին եկվոր ժողովուրդներին՝ թե՛ ամբողջ գավառում և թե՛ նրա կենտրոնավայրում: 1813 թ. ինուսի գավառում եղած անգլիացի Մագդոնալդ Քիննեյրի վկայությամբ ինուսում ապրողները «... մերձակայ գիւղօրէից բնակիչներուն պէս հայք են»⁵:

Ուշագրավ է, որ իբրև հայաշատ գավառ ինուսը մնաց մինչև հայկական մեծ եղեռնը: Այսպես. դարի 80-ական թվա-

կաններին ինուսի դաշտի բնակչության մասին Ա. Մ. Կուլբակինը գրում է. «Այստեղի բնակչության գլխավոր զանգվածը բնակվում է ինուս գետի և նրա երկու ափերի ափերին, ինուսից հարավ-արևելք՝ Մանավերտի ճանապարհի երկայնքով: Այդ բնակչությունը գերազանցապես հայկական և հողագործական է: Շրջակայքի լեռները, հատկապես Բինգյուլի ստորոտները, թույլ բնակեցված են բացառապես քրդերով, որոնք զբաղվում են գերազանցապես անասնապահությամբ»¹: Ինչպես երևում է, ուսումնասիրվող ժամանակաշրջանից տասնամյակներ անց ինուսի գավառում հայերը շարունակում էին կազմել բնակչության մեծ մեծամասնություն, այն դեպքում, երբ այդ ընթացքում (1820—1822 և 1829 թթ.) տեղի էին ունեցել մի քանի արտագաղթեր:

Ինուսի դաշտի ամենահայտնի հայկական գյուղերն էին Արոսը (նաև Արուս), Էլպիսը, Սալորը, Հարամիկը, Շաբադինը, Գումանը, Կարաքյոփրուն, Բուռնազը, Լեք-Բուդաղը, Քաղքիկը և այլն: Վերջիններից հյուսիս-արևելք գտնվում էին Գունդուզը, Գևանդուկը, Կարաշոբանը և այլն²: Ամենաբազմամարդը ինուսում Չևիրմե և Կարաշոբան գյուղերն էին³: Նշանավոր գյուղերից էր Խոզլուն (նաև՝ Քոզլու)⁴:

Հայկական գյուղերի մի խումբ էլ գտնվում էր ինուսից հարավ-արևելք՝ Խամլեբրդ լեռան հյուսիսային ստորոտին: Դրանք էին նույն լեռան անունը կրող Խամլեբրդը, Կրզըլ ԱՏ-մեդը և Խալիլ-Չավուշը: Ուշագրավ է, որ բացի Լեք-Բուդաղից, Խալիլ-Չավուշից և Հարամիկից, մնացած գյուղերը զուտ հայաբնակ էին: Վերջիններում կային նաև քրդեր⁵: ինուսի դաշտում կար ընդամենը երկու քրդական գյուղ՝ Քրքիշ և Աղվեբան անուններով⁶:

¹ Колубакин М. А., Материалы, т. I, ч. II, с. 16, նույն միտքը տե՛ս նաև Մ. Քիննեյր, նշվ. աշխ., Մասյաց աղավնի, 1864, № 11, էջ 342:

² Տե՛ս վերոհիշյալ գյուղերի տեղագրությունը Koch K., նշվ. աշխ., էջ 354—366:

³ Տե՛ս Ինճիճյան Ղ., նշվ. աշխ., էջ 82:

⁴ Տե՛ս Jaubert P. Am., նշվ. աշխ., էջ 104:

⁵ Տե՛ս Մատենադարան, Չանազան հեղինակների արխիվ, թղթ. 54, վ. 13, թ. 3ա:

⁶ Տե՛ս Ինճիճյան Ղ., նշվ. աշխ., էջ 82:

¹ Տե՛ս Ինճիճյան Ղ., Աշխարհագրություն, էջ 81:
² Տե՛ս Մելիքյան Ե., Վիճակագիր ինուս (Հարթ) գավառի, էջ 8:
³ Ինճիճյան Ղ., նշվ. աշխ., էջ 82:
⁴ Ինուսցիների մի մասը գաղթել էր առևտրի ու արհեստագործության համար ալեյի նպաստավոր քաղաքներ, հատկապես էրզրում, տե՛ս Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 23, վ. 118, թ. 1:
⁵ Քիննեյր Մ., Ճանապարհորդություն ի Հայս, Մասյաց աղավնի, 1864, № 11, էջ 342:

Իր ազգային դիմագիծը տեղի հայությունը պահպանում էր շնորհիվ համառ ու դժվարին պայքարի: 1806 թ. Խնուսի դաշտում տիրող քաղաքական իրավիճակի մասին Պ. ժորբը գրում է. «... Հայաստանի այս մասում կառավարութայան իշխանությունը գրեթե աննշան է: Գյուղացիները զինված են և պատրաստ են պատասխան տալու քրդերի հարձակումներին, որոնց դեմ հաճախ կռիվներ են մղում և չեն վախենում ոչ սպառնալիքից, ... ոչ էլ մահից»¹: Նույն հեղինակը միանգամայն արդարացնում է Քոզլի (Խոզլու — Ա. Մ.) գյուղի բնակիչներին, որոնք հրաժարվում են օթևան տրամադրել ոչ միայն քրդերին, այլև պաշտոնյա թուրքերին և նրանց կողմից լիազորված օտարերկրացի ճանապարհորդներին, որովհետև նրանք «... չբավարարվելով ցույց տրված հյուրասիրութունից, հաճախ հեռանում են գյուղերից, պահանջելով վարձատրություն այն բանի համար, որ վնաս չեն հասցրել (նրանց — Ա. Մ.) գյուղին»²:

1812 թ. հոկտեմբերին քրդերն ապստամբեցին նաև Խնուսի գավառում: Նորից ոտնատակ գնաց հայ բնակչությունը: Սկսվեց «... փախուստք, աւար և աւեր, որ մայրն զմանուկն թողեալ հալածական եղեն»³: Խնուսի և նրա հարևան Բուլանուխ գավառի հայ բնակիչներից ոմանք «... հազիվ հազ՝ մազապուրօ և անձնագերծ՝ փախստեամբ անկան ի Կարինս»⁴: Բարեբախտաբար, ինչպես երևում է փաստաթղթի բովանդակութունից, Խնուսի գավառից այդ արտագաղթը զանգվածային չափեր չընդունեց և էականորեն չփոխեց երկրամասի էթնիկական պատկերը:

Բնակչության ազգային կազմը մի փոքր այլ էր Խնուսի, Թեքման և Կյոքսու նահիեններում: Ընդամենը երեք-չորս տասնամյակ առաջ Թեքմանն Արևմտյան Հայաստանի ամենախիտ բնակեցված հայկական շրջաններից էր⁵: Սակայն Խնուսի բեյի դեմ Մանազկերտի բեյին օգնության գնացած Բայազետի փաշան մահ ու ավեր սփռեց նաև Թեքմանում:

¹ Jaubert P. Am., նշվ. աշխ., էջ 104:

² Նույն տեղում:

³ Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, քղթ. 23, վ. 118, թ. 1:

⁴ Նույն տեղում:

⁵ Տե՛ս Линч X. Ф. Б., Армения, т. II, с. 319.

19-րդ դարի սկզբին «ի Թեքման, — վկայում է այդ դեպքերին հաջորդած ժամանակաշրջանում այնտեղ ստեղծված իրավիճակի մասին Ղ. Ինճիճյանը, — աստ և անդ (կան — Ա. Մ.) նաև բազում գիւղօրէք աւերեալք»¹: Տուժած գյուղերի վերականգնվելուն մեծապես խոչընդոտեցին 1805—1806 թթ. բազմիցս կրկնված քրդական ասպատակութունները: 1806 թ. այդպիսի ավազակային հարձակումներից մեկի ընթացքում Քյուլլիից մինչև Թաթոս ընկած հատվածում ավերվեցին մի շարք գյուղեր²: Պատահական չէ, որ նրանցից շատերը, ավերվելով, այլևս չվերաշինվեցին, պատմութայնը անհայտ մնացին անգամ իրենց անուններով: Թեքմանի Քյուլլի գյուղի մոտակայքում Ինճիճյանի տեղագրած «Ավեր քաղաքը» ոչ այլ ինչ էր, եթե ոչ մի քանի ավերված բնակավայրերի հավաքական անուն, մասնավանդ որ միջնադարում այդպիսի բնակավայր հայտնի չէ հիշյալ վայրում: Այդ կապակցությամբ ավելորդ չենք համարում մեջբերել Թեքմանով 20-րդ դարի սկզբին ճանապարհորդած Ա. Դոյի խոսքերը այստեղ անթիվ ավերակներ հանդիպելու մասին, որոնց ավերումը վերաբերում է հենց այս ժամանակաշրջանին՝ 18-րդ դարի վերջին և 19-ի սկզբին: «Անցնում եք այդ ամայի գավառներով (Թեքմանով և Խնուսով — Ա. Մ.), տեսնում հին-հին հիշատակներ և ձեզ թվում է, որ մի հնձող ձեռք անվերջ հնձում է այդ աշխարհը... հաճախ պատահում եք քարակույտերի, տեղ-տեղ դրանց թիվը մեծանում է, բազմապատկվում. այդ քարակույտերից յուրաքանչյուրը վկայում է մի սպանության մասին. տեսնում եք այդ բոլորը և սարսափած շտապում եք ժամ առաջ հեռանալ այդտեղից»³: 1820—1823 թթ. պարսկա-թուրքական պատերազմի ընթացքում Խնուսի և Թեքմանի շրջաններից կազմակերպվեց հայ բնակչության բռնագաղթ դեպի Պարսկաստան⁴:

Այս ամենից հետո 19-րդ դարի 20-ական թվականների երկրորդ կեսին Թեքմանի հայկական բնակավայրերը շարունակում էին գոյատևել և նրանցում եղած հայ բնակչութունը

¹ Ինճիճյան Ղ., նշվ. աշխ., էջ 83:

² Տե՛ս Jaubert P. Am., նշվ. աշխ., էջ 323:

³ Ա—Դո, վանի, Բիթլիսի և էրզրումի վիլայեթները, էջ 183:

⁴ Տե՛ս Արարատ, 1889, 31 հունվար, էջ 41:

դարձյալ գերազանցում էր քրդերին: Ա. Մ. Կոլյուբակինը գրում է. «Մինչև 1828—1829 թթ. պատերազմը այն (Թեքմանը — Ա. Մ.) բավական հոծ բնակեցված էր հայերով. այդ ժամանակ քրդերը կազմում էին բնակչության աննշան մասը»¹: Այդ ժամանակաշրջանում այստեղի հայտնի հայկական գյուղերից էին վերոհիշյալ Քյուլլին, Թաթոսը, ինչպես նաև Խանրեկին, Սյոլեմեզը և այլն: Նահիբի կենտրոնավայր Թաթոսն ամբողջ էյալեթում հռչակված էր ոչ միայն իր բազմամարդությունը, այլև հարուստ ու բարձրորակ աղահանքերով: Մյուս խոշոր բնակավայրը՝ Քյուլլին, իր նշանակությունը պահպանում էր շնորհիվ նրանով անցնող առևտրական ուղուց ստացված եկամուտների: Պատահական չէ, որ ոչ վաղ անցյալում Բայազետի փաշայի արշավանքներից հիմնահատակ ավերված այս գյուղն ուներ շուրջ 300 ծուխ հայ բնակիչ²: Ցավոք, աղբյուրների անբավարարության պատճառով հնարավոր չեղավ պարզել այս գյուղախմբի մյուս գյուղերի անունները³:

Մեզ անհայտ մնացին նաև Խնուսի լիվայի մյուս նահիբի՝ Կյոքսուի մի շարք հայկական բնակավայրերի անունները: «Են յայսմ վիճակի, — վկայում է սկզբնաղբյուրը, — 20 կամ 30 գիւղօրէք. ոմանք քրդաց, և ոմանք հայոց, յորոց մի է Քեշիշ վէրան գիւղ հայոց»⁴: Այլ. Երիցյանի ուսումնասիրությունների շնորհիվ պահպանվել է Կյոքսուի նահիբի ևս երեք գյուղի անուն՝ Կյոքսու, Յուկրաշեն (կամ Չուգրաշեն) և Քըրմեզի (կամ Քըրմիզա): Վերջինս, ըստ նույն հեղինակի, գտնվել է Կյոքսու գետակի և Խնուս գետի միախառնման տեղից ոչ հեռու և կարմրագույն աղի արդյունահանման պատճառով

ստացել է իր Քըրմեզի՝ կարմիր անունը¹: Ա. Մ. Կոլյուբակինի կազմած վիճակագրության և Խ. Լինչի կատարած հետազոտությունների շնորհիվ մեզ հայտնի է դառնում Կյոքսուի հայկական հինգերորդ գյուղի անունը՝ Կոբալ կամ Գոպալ²: Այսուհանդերձ, քանի որ ըստ Ինճիճյանի, Կյոքսուի գյուղերի ընդհանուր թիվը տատանվում էր 20-ից 30-ի սահմաններում և պետք է որ նրանցից գոնե 10-ը լինեին հայկական, զգալի թվով հայաբնակ գյուղերի անուններ մնում են անհայտ:

Ի մի բերելով վերը վկայակոչված տեղեկությունները ամբողջ Խնուսի գավառում ապրող ազգաբնակչության տեղաբաշխման ու ազգային կազմի մասին, գալիս ենք այն եզրակացության, որ հայերից հետո թվաքանակով երկրորդ տեղը զբաղեցնում էին քրդերը: Կարևոր է ընդգծել, որ շնայած վերջիններս բնակեցրել էին գավառի ընդարձակ լեռնային շրջանները, այնուամենայնիվ մեծ թիվ չէին կազմում: Նույնիսկ 20-րդ դարի սկզբին, երբ մի շարք տեղերում քրդերի մի մասը անցել էր նստակեցության և ստեղծել համեմատաբար ավելի մարդաշատ գյուղեր, Խնուսի լեռնաբնակ քրդերը շարունակում էին ապրել փոքրիկ և սակավաթիվ ամառանոց (յայլա) գյուղակներում: Այնտեղի «... քրդաբնակ գյուղակները, — հավաստիացնում է Ս. էփրիկյանը, — ընդհանրապես 2—3—4—5 տուներ բաղկացած են, իրենց ամենին բազմամարդ գյուղն հազիվ 20—25 տուն կը պարունակե»³:

Երրորդ տեղը բաժին էր ընկնում «լեզգիներին»՝ Կովկասից գաղթած լեռնականներին: Նրանք չնչին թիվ էին կազմում (ապրում էին միայն Չեիրմե և Լոք-Բուդաղ հայկական գյուղերում)⁴, սակայն լավ զինված էին, զբաղվում էին ավազակություններ ու տեղական բնակչության թալանով⁵: Նրանք

¹ Коллюбакин А. М., Материалы, т. I, ч. II, с. 116.

² Տե՛ս Ինճիճյան Ղ., նշվ. աշխ., էջ 83, Jaubert P. Am., նշվ. աշխ., էջ 103, 104: Այդ 300-ից 200-ը, ըստ Բրանտի, 1830 թ. գաղթեց Ռուսաստան Լինչ X. Փ. Բ., Армения, т. II, с. 244.

³ Ղ. Ալիշանի կարծիքով Թեքմանում 19-րդ դարի առաջին կեսին եղել են նաև Թեքման անունով ավան և Մանանաղի անունով գյուղ (Ղ. Ալիշան, Տեղագիր Հայոց Մեծաց., էջ 44), մի բան, որ չի հաստատվում այլ աղբյուրներով:

⁴ Ինճիճյան Ղ., նշվ. աշխ., էջ 84:

¹ Տե՛ս Ерицов А., Список населенных пунктов, //Известия Кавказского отдела, т. VIII, приложение, с. 110.

² Տե՛ս Коллюбакин А. М., Материалы т. 2, ч. 2, с. 172.

³ էփրիկյան Ս., Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. 2, գիրք Ա, էջ 185:

⁴ Տե՛ս Ինճիճյան Ղ., նշվ. աշխ., էջ 82:

⁵ Տե՛ս Koch K., նշվ. աշխ., էջ 263:

իրենց ձեռքն էին վերցրել ամբողջ լիվայի փաստական իշխանությունը:

Բայազետի լիվա-փաշայությունը 19-րդ դարասկզբին Արևմտյան Հայաստանի ամենահոծ և հայաշատ երկրամասերից էր: Համեմատաբար նոսր էին բնակեցված միայն Ալաշկերտի գավառի արևմտյան մասում ընկած Խալի-Յազի և նրա հյուսիսային մի անկյունը կազմող Մրկեզար¹ նահիեները: Լիվա-փաշայության տարածքը շրջափակող Հայկական Պար, Մաղկանց և մի քանի լեռնաշղթաների բնակելի շրջանում ապրող քրդերի մեծ մասը երկրամասի մշտական բնակիչներ չէին: Նրանք քոչում էին Պարսկաստան կամ վանի էյալեթի սահմանները², իսկ նստակյաց քրդերը յուրաքանչյուր գավառում մեկ կամ մի քանի հարյուր ընտանիք էին³: Տարբեր աղբյուրների տեղեկությունների համաձայն նրանց թիվը տատանվում էր 230-ից 300 ընտանիքի սահմաններում⁴: Քանի որ փաշայության վարչական ապարատը, ինչպես Խնուսում, ոչ թե թուրք պաշտոնյաների, այլ քուրդ ցեղապետերի ու բեկերի ձեռքում էր, թուրք բնակչություն այստեղ գրեթե չկար: Նույնիսկ մինչև 1853—1854 թթ. Բայազետի փաշայությունը զուրկ էր թուրքական տարրից: 1854 թ. ռուսական բանակի գեներալ-մայոր Մ. Լիխուտինը Ալաշկերտում եղած օրերին գրում է. «Ինչպես այստեղ, այնպես էլ ամբողջ Բայազետի փաշայությունում չկար ոչ մի օսմանլի, այսինքն իսկական թուրք»⁵:

¹ Տե՛ս Մրկեզարի բնակչության ազգային կազմի մասին Коллюбакин А. М., Материалы, т. II, ч. II, с. 350—354.

² Տե՛ս Շահբազյան Ն., Քուրդո-հայ պատմություն, էջ 186:

³ Տե՛ս Лихутин М., Русские в Азиатской Турции, с. 147.

⁴ Տե՛ս Smith E., նշվ. աշխ., հ. 2, էջ 270 և История военных действий, ч. I, с. 97. Մատենադարանում պահպանվող մի վավերագրի համաձայն այլազգիների (քրդեր, թուրքեր, իրանալեզու տարրեր և այլն) ընդհանուր թիվը Բայազետի լիվա-փաշայության վարչամիավորներում 320 տան էր (տե՛ս Մատենադարան, Ա. Հովհաննիսյանի արխիվ, թղթ. 244¹, վավ. 267, թ. 1): Վերը նշվածից երևում է, որ նրանց հիմնական մասը քրդեր էին: Կարևոր է ընդգծել, որ վերջիններիս որոշ մասն էլ տեղացիների վկայությամբ ուներ հայկական ծագում, տե՛ս Տեր-Պետրոսյանց Մ., Նամակ հին Բայազետից, Մշակ, 1878, 17 օգոստոսի, էջ 2:

⁵ Лихутин М., ук. соч., с. 302.

Այս վարչամիավորում խիտ բնակեցման գլխավոր պատճառը բնակլիմայական բարենպաստ պայմանների առկայությունն էր: Ալաշկերտի, Դիաղինի, Խամուրի լիվաները և Բայազետի լիվայի զգալի մասը մեկ տասնյակից ավելի գետերով ոռոգվող հացահատիկային, սևահողային շրջաններ էին: Ալաշկերտի հացահատիկը համարվում էր ամենաբարձրորակներից մեկը և գավառից արտահանվող գլխավոր մթերքն էր¹:

Թվարկված վարչամիավորների բնակչությունը ևս գերազանցապես գյուղաբնակ էր: Խոշոր քաղաք էր միայն փաշայանիստ Բայազետը: Այն գտնվում էր նահանգի ծայր արևելքում, Արարատի ստորոտին, պարսկական սահմանից ոչ հեռու: Գտնվելով ձորափի գառիթափ ժայռաբլուրների միջև և շրջափակված լինելով պարիսպներով, Բայազետը դարձել էր օսմանյան արևելյան ամենաուժեղ ամրոցներից մեկը: Բարձր ժայռի վրա վեր խոյացող փաշայի միջնաբերդը, ռուս սպաների կարծիքով «... բոլորովին անառիկ էր գրոհելու համար»²: Ըստ Ինճիճյանի, դարասկզբին Բայազետն ունեցել է մոտ 5 հազար տուն³ (մոտավ. 30 հազար մարդ — Ա. Մ.), որոնց ճնշող մեծամասնությունը հայեր էին⁴:

Լիվա-փաշայության մյուս վարչակենտրոնները՝ Ալաշկերտը (թուրք.՝ Թոփրակ կալա), Դիաղինը, Խամուրը և Կարաքիլիսան փաստորեն միայն խոշոր հայկական բերդադյուղեր էին: Ալաշկերտն ուներ ընդամենը 1300, իսկ Դիաղինը՝ 500—600 ծուխ բնակիչ⁵, որոնցից մահմեդականները շնչին թիվ էին կազմում⁶: Քրդական զինված ջոկատների հարվածների տակ և պարսկա-թուրքական ավերիչ բախումների պայ-

¹ Տե՛ս Малама Я. А., Средства продовольственные, Тифлис, 1876, с. 15.

² История военных действий, ч. 1, с. 89.

³ Տե՛ս Ինճիճյան Ղ., Աշխարհագրություն, էջ 114:

⁴ Տե՛ս Հակոբյան Ն., Ուղեգրություններ, հ. 2., էջ 269, Սերվբե Կարենցի, Ուղեգրություն Բաղդադից էջմիածին, էջ 158—159, История военных действий, ч. I, с. 90, Երեցյանց Ա., Ամենայն հայոց կաթողիկոսությունը, էջ 399:

⁵ Տե՛ս ЦГВИА, ф. 450, д. 539, л. 3 և Ինճիճյան Ղ., նշվ. աշխ., էջ 116—117:

⁶ Տե՛ս История военных действий, ч. 1, с. 91.

մաններում նրանք զրկված էին քաղաքներ դառնալու հնարավորությունից: Բացի այդ, գյուղացիների մոտ չկային դեպի այդ բնակավայրերը ձգտելու տնտեսական ու քաղաքական շարժառիթներ: Այդ ժամանակ նրանցից ոչ մեկը չէր առանձնանում իբրև արհեստագործական ու առևտրական կենտրոն և քիչ բանով էր տարբերվում գյուղական վայրերից: Սակայն, քանի որ Ալաշկերտը, Դիադինը և նմանօրինակ մյուս բնակավայրերը, որպես կանոն, ունեին միջնաբերդեր, տեղի բնյերի համար ծառայում էին իբրև նստավայրեր ու սովյալ գավառների ռազմակայաններ: Օտարների հարձակումների դեպքում նրանք առաջին հարվածը վերցնում էին իրենց վրա և ավելի էին տուժում, քան անպաշտպան գյուղական վայրերը: Այս հանգամանքը նույնպես խոչընդոտում էր ուրբանիզացիայի գործընթացը վերոհիշյալ գավառներում:

Էրզրումի նահանգի արևելյան գավառներից ամենախիտ բնակեցված էր Ալաշկերտը¹: Նույնիսկ նրա արևմտյան՝ Խալի Յազի նահիեն, որը ուսումնասիրվող ժամանակաշրջանին հաջորդած փուլում դարձավ սակավաբնակ և հիմնականում՝ քրդաբնակ մի շրջան, դարասկզբին աչքի ընկնող հայաշատ երկրամաս էր: Պատմական Բագրևանդի տարածքում գտնվող Ալաշկերտի, Նահինի, Խալի Յազիի վարչամիավորները բազմամարդ էին նաև այն պատճառով, որ նրանցում հայ ընտանիքների անդամների թվի միջին մեծությունը բարձր էր նահանգի միջինից և կազմում էր 10 մարդ²:

Ալաշկերտի Խալի Յազի նահիեն ձգվում էր Արևելյան Եփրատի (Մուրադ) աջակողմյան Շառիան վտակի երկայնքով³ և ուներ մոտ մեկ տասնյակից ավելի լեռնային և կիսալեռնային գյուղեր⁴: Նրանցից արժանահիշատակ էին Չադը, Բյուլուկ Բաշին և Աբուզեթը: Աբուզեթն ուներ մի քանի եկեղեցի, բազմաթիվ ճարտարապետական հուշարձաններ և նահիեում հռչակված էր ձիաբուծությունը⁵: Այստեղի գյուղերը մինչև

Ք Ա Ր Տ Ե Ջ Ն Ե Ր


¹ Տե՛ս ЦГВИА, ф. 450, д. 77, л. 28.

² Տե՛ս Գ. Ա., Վիճակագրական տեղեկություններ Հայաստանի բնակչության մասին, Մեղու Հայաստանի, 1882, 24 հունվար, էջ 2—3:

³ Տե՛ս Koch K., նշվ. աշխ., էջ 448, Ա—Դո, նշվ. աշխ., էջ 213:

⁴ Տե՛ս Հայկունի Ս., Բագրևանդ ջրաբաշխ գավառ, էջ 78—80:

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 82—83:






ՎԱՅՈՒՆ ԵՆՆԱԾԳԻ (ԲԻՆՈՒԿՈՒՄԻ ԷՅՈՒՆՏԻ) ԿԱՐԿՈՒՄԱՆ ՔԱՐՏԱԾՐԱԾԱՅԱՆ ԽՈՏԵՐՈՒՄՆԱԿԻ

Մ. Կ. ԱՍԿԱՆՈՎ


| ՊԱՅՄԱՆՈՒՄԱՆ ՆՇԱՆՆԵՐ | ՄԱՍԻՆՆԵՐ |
|---|---|
| — 1939 թ. տարածքային սահմաններ | ○ Էրզրումի կայանի շրջան |
| — Երզրումի կայանի տարածքային սահմաններ | ● Երզրումի կայանի շրջանի կենտրոն |
| — Զարավանգի կայանի տարածքային սահմաններ | ● Զարավանգի կայանի շրջանի կենտրոն |
| — Երզրումի կայանի կայանների | ● Երզրումի կայանի կայանների կենտրոններ |
| — Կայանների | ● Մեծ շարժարկի կայանների կենտրոններ |
| Երևանի կայանի տարածքային սահմաններ | ● Երևանի կայանի տարածքային սահմանների կենտրոն |

ՄԱՍՏՏԱՐ 1:2 000 000 Գործարկող Գեոգրաֆիկ Ա. ՄՈՒՐՈՒՍՅԱՆ







ԿԵԼԿԻՔԻ ԳԱԿԱՐ




ՄԱՐԻ ԿԱՌԱՎՈՐՈՒՄ




ՄԱՐԻ ԿԱՌԱՎՈՐՈՒՄ

ՄԱՏԻ ԵՎ ԹՈՒԹՅԱՆ ԳԱՎԱՐՆԵՐ



ԿԵՐԻՆ ԵՎ ԱՏՈՐԼ ԲԱՍԵՆՆԵՐԻ ԳԱՎԱՐՆԵՐ



ՅԱՂԱՊԻՒՌԻ ԵՎ ՎԱՍՄԱՆԻ ԿԱԶՄՈՒՄԸ ԻՂ ՎԱՍՄԱՆԻ



1820—1823 թթ. պարսկա-թուրքական պատերազմը բնակեցված էին գերազանցապես հայերով, մի հանգամանք, որը հաստատվում է հետագայում այնտեղ եկած քրդերի վկայությամբ և տեղում պահպանված այդ ժամանակաշրջանին վերաբերող հարուստ հնագիտական նյութով¹:

Իսլի Յազլիի ամենաարևելյան գյուղից՝ Աբուզեթից հետո սկսվում էր Ալաշկերտի դաշտը, որի մեջ հիմնականում ամփոփվող Ալաշկերտի և Նահինի կամ Կարաքիլիսայի նահիեներին բաժին էր ընկնում նույնիսկ ամբողջ լիվա-փաշայության բնակավայրերի մեծ մասը: Պատահական չէ, որ Ղ. Ինճիճյանը, դիմելով շափազանցության, այնտեղի գյուղերի ընդհանուր թիվը հասցնում է 500-ի², Ինչպես վերոհիշյալ աղբյուրները, այնպես էլ արխիվային վավերագրերը³ հաստատում են, որ Ալաշկերտի հիշյալ երկու նահիենների բնակիչները, անշշան բացառությամբ, հայեր էին:

Ալաշկերտի նահիեի արևմուտքում գտնվող գյուղերից կարելի է հիշատակել Զետկանը, Ռեմկանը, Շահնազարը (կամ Վերին գյուղ), Մարտոն (Վերին Մարտոյի), Խաստուրը (Հացտուր), Բյուրապատը, Աբասը և այլն: Նրանցից շատերը սկսած 1770-ական թվականներից արդեն մի քանի անգամ ավերվել էին քրդական խժժուժյունների հետևանքով: Սակայն դարասկզբին կրկին համարվել էին և դարձել կայուն բնակչություն ունեցող բնակավայրեր⁴: Միայն Խաստուրը 20-ական թվականներին ուներ 1000 երիտասարդ⁵:

Վերոհիշյալ գյուղերից արևելք՝ մինչև Արևելյան Եփրատի հետ Շառիանի խառնվելու վայրը գտնվող հայկական գյուղերըն էին Քարսիփանը (Հարսըհան), Դավոն, Զլկահանին (Զլկահանի), Զուրուկը, Բլուրը, Պոշեկը և այլն: Ամենամեծը կարավանային ճանապարհի վրա ընկած Զլկահանին էր⁶: Խոշոր գյուղ էր նաև Պոշեկը⁷: Գյուղերի այս վերջին շարքը մին-

1 Տե՛ս Հայկունի Ս., Բագրևանդ, էջ 82—84:
 2 Տե՛ս Ինճիճյան Ղ., նշվ. աշխ., էջ 116:
 3 Տե՛ս Մատենադարան, Զանազան հեղինակների արխ., թղթ. 54, վ. 132, թ. 28ա:
 4 Տե՛ս Հայկունի Ս., նշվ. աշխ., էջ 168:
 5 Տե՛ս նույն տեղում, էջ 180:
 6 Տե՛ս նույն տեղում, էջ 219:
 7 Տե՛ս Ինճիճյան Ղ., նշվ. աշխ., էջ 117:

չև 1820—1823 թթ. բարգավաճ վիճակում էր և ներկայացնում էր Արևմտյան Հայաստանի ամենահոծ բնակեցված շրջաններից մեկը¹:

Հիշատակված գյուղերից հյուսիս՝ մինչև Ալաշկերտ, Շառիանի ձախակողմյան տարբեր վտակների ափերին գտնվում էին այս լիվայի մի քանի այլ նշանավոր գյուղեր, ինչպես Մուլլա-Սուլեյմանը, Խոշիանը, Մսուրին (Մսուրցիք) և Շամիանը: 18-րդ դարի առաջին երեսնամյակին նրանք բոլորը հայաբնակ էին²: Բացառություն էր կազմում միայն Մսուրին, որտեղ կային նաև «հայկական շատ մի սովորություններ ունեցող քրդեր»³: 18-րդ դարի վերջերից արագորեն սկսեց աճել Մուլլա-Սուլեյման օտարանուն, սակայն զուտ հայաբնակ գյուղը: Հոռոմեական կաթոլիկ եկեղեցին այդ ժամանակվանից իր քարոզիչների միջոցով այն դարձրեց Արևմտյան Հայաստանի կաթոլիկական կենտրոններից մեկը: Քրդական և թուրքական հարստահարություններից զերծ մնալու մասին էր գրում Ֆրանսիական հյուպատոսի ճիզվիտների խոստումները մոլորեցրին Ալաշկերտի առաքելական մի քանի գյուղերի բնակիչների որոշ մասին և անձի ապահովություն ստանալու ակնկալությամբ ծայր թշվառության հասած մի քանի գյուղերի բնակիչներ ընդունեցին կաթոլիկություն⁴: Արևմտյան Հայաստանում հանդես եկավ էթնիկական տեղաշարժերի նոր դրդապատճառ. կարծելով, որ կաթոլիկական գյուղերն ավելի բարվոք ու ապահով վիճակում են, առանձին հայ գյուղացիներ, լքելով իրենց հայրենի գյուղերը, տեղափոխվեցին կաթոլիկական բնակավայրեր, հատկապես՝ Մուլլա-Սուլեյման, Քարսիփան, Կարասու և նրանցից բավական հեռու ընկած Նավիկ (Նահինի նահիե): Շուտով կաթոլիկների ձեռքն անցավ նաև Մուլլա-Սուլեյմանի առաքելական եկեղեցին: Տեղի առաքելական հայերի բողոքները ոչ մի արձագանք չգտան թուրքական իշխանությունների շրջանում⁵:

Ավելին. կառավարությունը ողջունեց հավաք բնակչություն ունեցող Ալաշկերտի գավառում հայ համայնքի երկատման փաստը և իր հերթին նպաստեց այդ գործընթացի խորացմանը: Ղ. Ալիշանի ձեռքի տակ եղած նյութերից պարզվում է, որ դեռ 1780 թ. կաթոլիկների թիվը Մուլլա-Սուլեյմանում հասնում էր 1500-ի, Քարսիփանում՝ 1000-ի, Իրիցու և Կարասու գյուղերում՝ 500-ի, Շահնազարում՝ 300-ի, ընդամենը՝ 4660 մարդու⁶: Հասկանալի է, որ դարի առաջին տասնամյակներին նրանց թիվը վերոհիշյալ գյուղերում ավելի շատ էր: Այսպիսով, շնայած ոչ էական, այնուամենայնիվ՝ նկատելի տեղաշարժերի քաղաքական պատճառներից մեկը դառնում էր կաթոլիկության տարածումը հայ իրականության մեջ³:

Կրկին անդրադառնանք Ալաշկերտի հայկական գյուղերին: Լիվայի գյուղերի մի խումբ էլ գտնվում էր նրա վարչական կենտրոնից արևելք, մինչև Նահին նահիեի հետ բնական սահման հանդիսացող Դուզլիշայ գետը: Այս խումբն ընդգրկող գյուղերի մեջ սովոր բնակչություն ունեին Խաչլուն, Ղայաբեկը, Քարձորը, Իրիցու գեղը, Ամատը, Հաջի Սաֆարը, Ճմիկանը, Խոշիանը և այլն: Նրանցից յուրաքանչյուրը մի քանի հարյուր տուն հայ ունեցող գյուղ էր: Վերջին երկուսը պարունակում էին 300-ից 500 տուն հայեր⁴: Նույնքան բնակիչ ուներ Աշխալա գյուղը⁵: Բացի թվարկված գյուղերից, լիվան ուներ ևս մի քանի տասնյակ այլ գյուղեր:

Ալաշկերտի դաշտի արևելյան մասը՝ Դուզլիշայ գետից մինչև Դիադինի լիվան, հարավում՝ Արևելյան Եփրատը, հյուսիսում՝ Հայկական Պարը կազմում էր Նահին կամ Կարաքիլիսա նահիեի տարածքը:

¹ Տե՛ս Лихутин М., Русские в Азиатской Турции, с. 326—327.

² Տե՛ս Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 535:

³ Խարված կաթոլիկ հայությունը շատացավ արևմտյան տերությունների և նրանց գործակալների խոստացած անձի ապահովությունը: Երբ 1820—1823 թթ. պարսկական բանակները ասպատակում էին հայկական գյուղերը, այդ թվում՝ կաթոլիկականները, նրանք ոչ մի քայլ չձեռնարկեցին կոտորածն ու բռնազաղթը դադարեցնելու ուղղությամբ, տե՛ս Հայկունի Ս., նշվ. աշխ., էջ 209:

⁴ Տե՛ս Հայկունի Ս. նշվ. աշխ., էջ 149, 236:

⁵ Տե՛ս Էփրեկյան Ս., Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. Ա., էջ 218:

¹ Տե՛ս Հայկունի Ս., նշվ. աշխ., էջ 209—223:

² Տե՛ս Սիմեոն Երևանցի, Զամբո, էջ 47:

³ Հայկունի Ս., նշվ. աշխ., էջ 106:

⁴ Տե՛ս Ալիշան Ղ., Այրարատ, էջ 533:

⁵ Տե՛ս Հայկունի Ս., նշվ. աշխ., էջ 100—101:

Այս վարչամիավորի բոլոր գյուղերը գտնվում էին նրա վարչական կենտրոն Կարաքիլիսայից արևելք և հյուսիս-արևելք: Ի դեպ, վերջինս էլ գյուղ էր, մյուսներից տարբերվում էր իր առանձին պաշտպանական ամրութուններով և ըստ Ջ. Մարիերի, հայ ու քուրդ բնակիչներ ունեցող բնակավայր էր:

Արևելյան Եփրատի ափով ձգվում էին Յոնջալու¹, Ղազի, Զիրո, Եկմալ գյուղերը: Նրանցից հյուսիս զուգահեռաբար ընկած էր նահիեի գյուղերի երկրորդ խումբը՝ Զաջուռ, Զամբրլու², Նավիկ, Խըտըր, Մանկասար, Փոխանցիկ, Քյուփղըրան և մի քանի այլ գյուղեր:

Գյուղերի երրորդ խումբն էլ գտնվում էր Կարաքիլիսայից հյուսիս և հյուսիս-արևելք, Դուզլիչայի ձախ ափին: Այն ներառում էր Երանոս, Վերին Դարափի, Ալեքսան և այլ գյուղեր:

Նահիևի հարևան՝ Խամուրի լիվայի բնակավայրերի գերակշիռ մասը բաժին էր ընկնում Արևելյան Եփրատի ձախակողմյան հովտին: Այս լիվան թեև բնակավայրերի թվաքանակով շատ էր զիջում նախորդ վարչամիավորներին, այնուամենայնիվ, հավաք հայություն ներկայացնող շրջան էր: Արժ հիշատակել Տիտան, Սոֆիան, Գյաուգյառ, Բուրջի Մանսուփ (Պորճի-Մասուր), Տամբատ, Կյուլասոր գյուղերը: Իբրև հայկական գյուղեր դրանք հայտնի էին դեռևս 18-րդ դարի սկզբներից³: Մինչև 1820-ական թվականների սկիզբը նրանցից յուրաքանչյուրում կարելի էր գտնել մի քանի հարյուր ծուխ հայ բնակիչ⁴:

Մարդաշատ էր նաև Մուրադ գետի ափամերձ այն հովիտը, որը մտնում էր Դիադինի լիվայի մեջ: Այստեղի առաջին խումբը ընդգրկում էր միջնադարյան նշանավոր Բագավան (նաև՝ ս. Հովհաննու, Ուլ-Քիլիսա) վանքի շրջակայքում ընկած Ալիկոր, Ղուժլուչա, Ղարաբազար, Սեյտո, Զուչան, Բուզաղի, Ներքին և Վերին Բոտի (Ծղեգիս) գյուղերը:

¹ Ըստ Գարգանի Յոնջալուն ուներ 120 տուն բնակիչ, տե՛ս Հակոբյան Լ., Ուղեգրություններ, հ. 3., էջ 99:

² Զամբրլուն 20-ական թվականներին 150 տուն էր, տե՛ս Հայկունի Ս., նշվ. աշխ., էջ 269:

³ Տե՛ս Սիմեոն Երևանցի, Զամբո, էջ 47:

⁴ Տե՛ս Հայկունի Ս., նշվ. աշխ., էջ 295—297:

Գյուղերի մյուս խումբը գտնվում էր Դիադինից հարավ՝ Արածանի գետի ափամերձների շրջանում և միավորում էր Միր-գաջան կամ Միրզաքյանդ, Ուլուքենդ, Թոխլուչա, Սորան, Մայետ, Գորանի, Մոլլաղայա, Շահվելետ և այլ գյուղեր:

Եվ, վերջապես, Բայազետի լիվա-փաշայություն արևելյան՝ Բայազետի գավառը ներկայացնում էր նահանգի մի առանձին հավաք հայություն և ուներ տասնյակ գյուղեր: Նրանցից առաջին հերթին աչքի էր ընկնում պատմական Արծափ գյուղը, որը գտնվում էր Բայազետ բերդաքաղաքից ոչ հեռու, նրանից հյուսիս-արևմուտք, Արծափաքար լեռան ստորոտին: Դարասկզբին Ժոբերի վկայությամբ այն «... հայկական մի մեծ ավան»¹ էր: 1808—1814 թթ. քրդական ասպատակությունների օրերին, շնորհիվ զինված պայքարի, այս գյուղը կարողացավ զերծ մնալ ավերածությունից և բնակչության արտագաղթից: Պատահական չէ, որ 1812 թ., երբ Բայազետի լիվա-փաշայություն բոլոր գավառների տասնյակ գյուղեր քրդական հրոսակախմբերի արշավանքներից վերածվել էին կիսավերակների, Արծափը 120 ծուխ բնակիչ ունեցող գյուղ էր²: Գավառի մյուս խոշոր գյուղը Բայազետին գրեթե կպած Զանկիզորն էր³ 300 ծուխ բնակիչներով⁴: Բայազետի շրջակայքում գտնվող մյուս հայկական գյուղերն էին՝ Քոթիսը կամ Կոտասը և Մարիամանան (Մեյրամ-Անա): Վերջիններից հարավ և հարավ-արևմուտք, մինչև Թոնդուրեկ լեռան հարավային փեշերը, սփռված էին Վարին Սուրբ Օհան, Քյաստակ⁵, Ինջայսու, Թափառիս, Ղարաքյանդ (Սևագյուղ) և այլ գյուղեր: Գավառի հարավարևելյան անկյունը զբաղեցնում էին Հալաճ, Գյուրջի Բուլաղ և Բագրկան գյուղերը:

Բայազետի գյուղերի մի մասն էլ խմբված էր Գայլատու գետի ափերին: Նրանցից էին Սարուբեղը (նաև Սարիբեկ),

¹ Jaubert P. Am., նշվ. աշխ., էջ 22:

² Տե՛ս Սերովբե Կարենցի, Ուղեգրություն Բագրդադից էջմածին, էջ 160—161:

³ Տե՛ս Ինճիճյան Ղ., նշվ. աշխ., էջ 114:

⁴ Տե՛ս Ֆերուհյան Բ. Գ., Ճանապարհորդություն ի Բաբելոն, էջ 165—166:

⁵ Ջ. Մարիերի մոտ Քյաստակը հիշատակվում է Քերթեկ ձեռք, տե՛ս Հակոբյան Լ., Ուղեգրություններ, հ. 2., էջ 268:

Բաբխանը, Խաչուն¹, Գյուլիջեն, Մոսունը, Քորունը, Տաճատին և այլն: Մոսունն ու Քորունը հայտնի կավագործական կենտրոններ էին: Բացի վերոհիշյալ բնակավայրերից, Բայազետի և նրա լիվա-փաշայության մյուս գավառներում կային բազմաթիվ այլ բնակավայրեր, որոնց մեծ մասը հայաբնակ էր²:

Լեռներում ցրված քրդական համայնքները չէին ներկայացնում հավաք ազգային միավոր: Այդպիսին, թերևս համարվում էր միայն Կարաթիլիսայի հյուսիսում՝ Հայկական Պարի սահմանակցությամբ ընկած Մրկեզար նահիեն³, Թուրքեր, ինչպես արդեն նշվեց, ամբողջ լիվա-փաշայությունում գրեթե չկային:

Այսպիսով, էրզրումի նահանգի բնակավայրերի տեղաբաշխման և նրանց ազգային կազմի ուսումնասիրությունը բերում է այն համոզման, որ թեև 19-րդ դարի սկզբին գավառների մեծ մասը հիմնականում հայաբնակ էր, սակայն ստեղծված քաղաքական անբարենպաստ պայմաններում հետզհետե ուժեղանում էին թյուրքալեզու և իրանալեզու ժողովուրդների ներհոսքի միտումները, երևույթ, որը պայմանավորված էր առաջին հերթին թուրքական իշխանությունների քաղաքական նկատառումներով, աստիճանաբար կազմում էր Արևմտյան Հայաստանի ժողովրդագրական զարգացման հիմնական ուղղությունը:

¹ Այս Խաչունը չպետք է շփոթել Արաշկերտի Խաչունի հետ: Ի դեպ, նույնանուն գյուղ եղել է նաև Դիարբեկի գավառի հյուսիս-արևմուտքում, սակայն նրա ազգային կազմի մասին մեզ տեղեկություններ չեն հասել, ուստի միայն նրա հայկական անունը բավական չէ այդ ժամանակ այն հայաբնակ համարելու համար:

² Տե՛ս նաև Ալիշան Ղ., Այրարատ, էջ 507—542:

³ Տե՛ս Ինճիճյան Ղ., նշվ. աշխ., էջ 118:

ԷՐԶՐՈՒՄԻ ՆԱՀԱՆԳԻ ՀԱՅ ԱԶԳԱՐԵԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿԸ ԵՎ ՆՐԱ ԴԻՆԱՄԻԿԱՆ 19-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԵՐԵՍՆԱՄՅԱԿԻՆ

1. Արևմտյան Հայաստանի ժողովրդագրության առանձնահատկությունները

Արևմտյան Հայաստանի, այդ թվում նրա կենտրոնական նահանգ էրզրումի ժողովրդագրության ուսումնասիրությունը պահանջում է անդրադառնալ արևմտահայերի թվաքանակի հարցին: Ըստ օսմանյան վեզիր Ռեհիս էֆենդիի զեկուցագրի, 18-րդ դարի վերջին քառորդին կայսրության ուսումնասիրության հարցը եղել են ամենաբազմաթիվը¹: Հիմնվելով գերմանացի վիճակագիր Գ. Հասելի «Եվրոպական երկրների վիճակագրական տարեգիրք-վիճակագրույց» ուսումնասիրության տվյալների վրա, Ե. Խաթանասյանն իր «Հայոց թիվը» աշխատությունում ներկայացնում է թուրքական տերության վիճակագրությունը, ըստ որի 1822 թ. թուրքերի թիվը հասել է 7555 հազարի, հայերինը՝ 1690 հազարի, քրդերինը և մահմեդական մյուս ժողովուրդներինը՝ 1 միլիոնի²: Այստեղ թեև հայերի, քրդերի և մնացած մահմեդական ժողովուրդների (թուրքմեններ, արաբներ, լազեր և ուրիշներ) թիվը ցույց է տրված իրականից նվազ, սակայն կարևոր է այն տեսակետից, որ հիմնականում ճիշտ է արտացոլում հայերի և քրդերի տոկոսային հարաբերությունը: Եթե ամբողջ կայսրությունում հայերը թվաքանակով գերազանցում էին քրդերին, ապա անշուշտ, իրենց մայր հայրենիքում՝ Հայաստանում, չէին կարող կազմել փոքրամասնություն, նշենք, որ վերոհիշյալ մեկ միլիոնի մեջ քրդերի հետ մտնում էին մահմեդական այլ

¹ Տե՛ս Թուրքական աղբյուրները, հ. Ա., էջ 239:

² Տե՛ս Խաթանասյան Ե., Հայոց թիվը, Բոստոն, 1965, էջ 7:

ժողովուրդներ: Ավելացնենք նաև, որ Կուչնիսկ այդ մեկ միլիոնը վիճակագրության հեղինակը՝ Հասելը դնում է կասկածի տակ, համարելով այն կրկնակի անգամ չափազանցված:

Գարասկզբին հայերի թվաքանակի մասին հաջորդ հիշատակության հեղինակը վրացի պատմիչ Իոանե Բագրատիոնն է, ըստ որի ամբողջ աշխարհի հայության թիվը եղել է երեք միլիոն²: Ակնհայտ է, որ բերված բոլոր թվական տվյալները ոչ թե լուրջ հետազոտության, այլ մոտավոր գիտարկումների ու ենթադրությունների արդյունք են: Ինչ վերաբերում է կոնկրետ Արևմտյան Հայաստանին, նրա հայության թվաքանակի մասին ճշգրիտ տվյալներ մեզ գրեթե չեն հասել: Սակայն պահպանվել են բազմաթիվ վկայություններ այն մասին, որ հայերը կազմել են իրենց հայրենիքի բնակչության մեծամասնությունը: «53° հորիզոնականից արևելք, — կարողում ենք արխիվային փաստաթղթերից մեկում, — առանձին հայկական գյուղերն ավելի հաճախակի են հանդիպում, էրզինջանից (Երզնկա — Ա. Մ.) սկսած (հայերը) կազմում են ամբողջ հյուսիսարևելյան սարահարթի կամ Մեծ Հայքի բնակչության նշանակալից մասը»³:

Այս միտքը լրացնում է Արևմտյան Հայաստանին լավատեղյակ Մ. Լիխուտինը. «Ասիական Թուրքիայի արևելյան մասում քրիստոնյաներ շատ կան»⁴: Այն, որ հայերը թվաքանակով գերազանցում էին Արևմտյան Հայաստանում ապրող մյուս ժողովուրդներին, պնդում է հայ աշխարհագետ Ղ. Ալիշանը⁵: 19-րդ դարի սկզբին Արևմտյան Հայաստանում հայերի թվաքանակի հաշվառման փորձ է կատարել Հ. Ղազարյանը, ըստ որի մինչև 1829—1830 թթ. գաղթը Թուրքական կայսրությունում ապրում էին երեք միլիոն հայեր, որոնցից շուրջ կես միլիոնը կենտրոնացված էր Կ. Պոլսում, Կիլիկիա-

¹ Տե՛ս Խաթանասյան Ե., Հայոց թիվը, Բոստոն, էջ 8:

² Տե՛ս Վրացական աղբյուրները, հ. 9., էջ 251:

³ ЦГВИА, ф. 450, д. 533, л. 51, с. 93.

⁴ Лихутин М., Русские в Азиатской Турции, с. 272.

⁵ Տե՛ս Ալիշան Ղ., Տեղագիր Հայոց Մեծայ, էջ 20:

յում և Փոքր Ասիայի հայաբնակ վայրերում, իսկ 2,5 միլիոնը՝ Արևմտյան Հայաստանում և նրան հարակից գավառներում¹:

Ակնհայտ է, որ աղբյուրները բավական ժլատ տեղեկություններ են հաղորդում կայսրությունում ապրող ժողովուրդների և Արևմտյան Հայաստանի հայերի թվաքանակի մասին և այդ ուղղությամբ առ այսօր չեն կատարվել լուրջ հետազոտություններ: Ինքնին պարզ է, որ նյութերն ավելի աղքատիկ են կամ ավելի ճիշտ՝ ընդհանրապես բացակայում են առանձին վարչամիավորների մասին, առավել ևս, որ անկաշուն վարչական բաժանումն անհնարին է դարձնում զանազանելու յուրաքանչյուր թվական տվյալի տարածքային շրջանակը: Ուստի վարչական առանձին միավորների բնակչության վիճակագրության միակ և գիտական մեթոդը մնում է գյուղերի անվանական հաշվառումը ըստ գավառների, նահանգների, ապա՝ ամբողջ Արևմտյան Հայաստանի: Այնուհետև, ըստ մեզ, միմիայն հաշվի առնելով յուրաքանչյուր բնակավայրում ընտանիքների և ընտանիքներում՝ անգամների միջին մեծությունը, հնարավոր կլինի պարզել ամեն մի վարչական միավորի բնակչության մոտավոր թվաքանակը: Սակայն այդ մեթոդը ևս, բնականաբար, ենթադրում է էթնիկական տարբեր միավորներին հաշվառելու բազմազան ձևերի ու եղանակների կիրառում, Արևմտյան Հայաստանի դեմոգրաֆիկ զարգացման առանձնահատկությունների գիտարկում, մի հանգամանք, որը պատմագրության մեջ ուշադրության գրեթե չի արժանացել և կեղծ վիճակագրությունների պատճառ է հանդիսացել: Դրանում համոզվելու համար դիմենք փաստերին և փորձենք վեր հանել ժողովրդագրական այն առանձնահատկությունները, որոնք հատուկ էին Արևմտյան Հայաստանին ուսումնասիրվող ժամանակաշրջանում:

18-րդ դարի վերջին քառորդին և 19-րդ դարի սկզբին Հայկական լեռնաշխարհի էթնիկական քարտեզը, ըստ Ին-

¹ Տե՛ս Ղազարյան Հ., նշվ. աշխ., էջ 161, Հայ ժողովրդի պատմություն, հ. 5, Ե., 1974, էջ 69—70:

ճիճյանի, ուներ հետևյալ պատկերը. «Բնակիչը նորա որչափ ինչ գտանին յազգես հայոց, գրեթե նոյնչափ գտանին և ի քրդաց. յետ սոցայ են օսմանեանք և թիրքմանք. գտանին ի մեծ հայս նաև բազում և էզիտիք, և ի տեղիս ասորիք, ... նաև վիրք ի հիւսիսակողն մեծին հայոց. իսկ յոյնք սակաւ՝ և այն մանավանդ ի փոքր հայս»¹:

Ինճիճյանի այս տողերից ստացվում է, որ այդ ժամանակաշրջանում պատմական Հայաստանի բնակչության հիմնական մասը հավասարապես կազմում էին հայերն ու քրդերը, իսկ վերոհիշյալ մյուս ժողովուրդները՝ ազգային փոքրամասնություններ էին: Եթե հեղինակի վերջին միտքը հիմնականում համապատասխանում է իրականությանը, ապա նույնը չի կարելի ասել Հայաստանում քրդերի հայերին թվաքանակով գրեթե չզիջելու մասին նրա առաջին պնդման վերաբերյալ: Քրդերի մասին աղբյուրներում հաճախ հանդիպող նմանօրինակ վկայությունների ստուգաբանման նպատակով պարզաբանենք մի քանի հարցեր:

Անշուշտ, արդեն ուշ միջնադարում քուրդ բնակչությունն Արևմտյան Հայաստանում զգալի զանգված էր ներկայացնում: Սակայն բերված օրինակում նրանց թիվը զգալիորեն չափազանցված է: Ինչպես նշվեց նախորդ գլխում, այդ ժամանակաշրջանում Հայաստանի հատկապես կենտրոնական և հյուսիսային գավառներում նրանց թիվն աննշան էր, իսկ այնպիսի վարչամիավորներ, ինչպիսիք էին Կիսկիմը, Թորթումը, Բերդագրակը, Խոտորչուրը, Բաբերդը, էրզրումը, Կելկիթը, Սպերը և այլն, զուրկ էին քրդական բնակչությունից: Ինչ վերաբերում է չափազանցություններին, նրանք ունեին մի քանի պատճառներ:

Նախ. քրդերն իրենց բազմահազար ուխարներով, զբաղեցնելով հսկայածավալ լեռնային արոտավայրեր, հոծ բնակչության պատրանք էին ստեղծում: Նրանց զբաղեցրած շրջանները կիսալեռնային և լեռնային արոտավայրեր էին և քիչ էին շարժում կիսանկախ և գրեթե միշտ զինված քրդե-

¹ Ինճիճյան Ղ., Աշխարհագրություն, էջ 14—15:

րից խորշող թուրք պաշտոնյաների, առավել ևս ուսու՝ և արևմտաեվրոպացի ուղեգիրների հետաքրքրությունը, որոնք էլ թուրքիայում, որպես կանոն, կազմվող վիճակագրությունների հեղինակներն էին: Ուստի, քրդերի մարդահամարը գլխավորապես կատարվում էր ըստ նրանց զբաղեցրած տարածքի և բնականաբար՝ չափազանցվում էր: Այնինչ, ուշադիր հետազոտությունը ցույց է տալիս, որ այդ լայնածավալ տարածքները համեմատաբար նոսր էին բնակեցված: Այնտեղ մշտական բնակավայրեր հիմնադրել հնարավոր չէր, քանի որ ցրտաշունչ ձմեռն ու անբարենպաստ կլիման լիովին բացառում էին դրա հնարավորությունը: Միայն ամռան ամիսներին Հայաստանի լեռնային յայլաններում (ամառանոցներում) մնալուց հետո, շատ քրդական ցեղեր աշնանը, երբ արդեն եղանակները ցրտում էին, վերադառնում էին իրենց մշտական բնակավայրերը, որոնք գլխավորապես ընկած էին համեմատաբար մեղմ կլիմա ունեցող շրջաններում՝ Հայաստանի հարավում և «Քրդստանում»²:

Երկրամասին անձանոթ ճանապարհորդները, որպես կանոն, Արևմտյան Հայաստանում ճանապարհորդում էին վաղ գարնանից մինչև աշուն, մասնավորապես Տրապիզոն—Բաբերդ—էրզրում—Խնուս—Մուշ—Վան երթուղիով: Նրանք Հայաստանի կենտրոնական շրջաններում, օրինակ՝ էրզրումի, Վերին և Ստորին Բասենների լիվաններում լինում էին ամռան ամիսներին, քանի որ այնտեղ ձմռանը ճանապարհները փակ-

¹ Քրդաբնակ շրջաններում «օտարերկրացու հանկարծակի հայտնվելը. — գրում է Զիխաչևը, — կարող է ընդունվել հրացանային կրակոցներով: Հովիտները նույնպես զինված են» (Чихачев П., ук. соч., с. 35). Մինևույն միտքը ընդհանրապես մասնեղական երկրների կապակցությամբ զարգացնում է Կ. Մարքը. «Քանզի դորանը ամեն մի օտարերկրացու համարում է թշնամի, ոչ ոք մահմեդական երկրում չի համարձակվում հայտնվել առանց զբուռնակալու միջոցների», տե՛ս Маркс К., Объявление войны. — К истории возникновения восточного вопроса. // Маркс К. и Энгельс Ф., соч., т. 10, с. 168.

² Առ այսօր գիտական գրականության մեջ չի տրված «Քրդստան» տեղանվան հստակ սահմանումը: Այժմ այն պայմանականորեն գործածվում է ներկայիս Թուրքիայի հարավարևելյան, Իրանի արևմտյան և Իրաքի հյուսիսային, հյուսիսարևելյան շրջանների համար, Лазарев М. С., Курдистан и курдская проблема, М. 1964, с. 19; его же Курдский вопрос, М., 1972, с. 24.

վում էին և լինում էին ուժեղ սառնամանիքներ: Ամռանը այդ գավառների լեռներում ապրող քրդերին հաշվառելով, ճանապարհորդներն աշնանն անցնում էին Հայաստանի հարավային շրջաններ, որտեղ ձմեռելու նպատակով միաժամանակ տեղափոխված էին լինում նաև նրանց արդեն «ծանոթ» քրդերը¹, և վերջիններս, բնականաբար իբրև տեղի բնակիչներ երկրորդ անգամ հայտնվում էին ուղեգիրների ճանապարհորդական նոթերում: Այսպիսով, անփութության և անգիտության պատճառով աղբյուրներում դարձյալ քրդերի թիվն արհեստականորեն աճում էր:

Անասնապահական զբաղմունքը ևս չէր պահանջում գյուղերի մեծացում: Մի քանի տասնյակ ծխից բաղկացած ձմեռանոցներում հնարավոր էր պահել հազարավոր ոչխարներ: Բավարարով՝ ուժ այդ վայրերի քրդական գյուղերի՝ և դուրսիների մասին ասպարեզում եղած ընդհանուր թվական տվյալներով, վիճակագիրները, դաշտավայրային գյուղերի օրինակով, հաճախ «պարզում էին» այդտեղի քրդերի թիվը, ընդ որում՝ անտեսելով յուրաքանչյուր գյուղում ընտանիքների, ընտանիքներում անդամների միջին թվաքանակի ցուցանիշներն ու տարբեր ազգությունների մոտ նրանց առանձնահատկությունները: Ի տարբերություն դաշտավայրային գյուղերի, որոնց բնակիչները գերազանցապես հայեր էին, լեռնային «... քրդական գյուղերը, — գրում է նրանց քաջածանոթ Ա. Գյուրջյանը, — առհասարակ շատ փոքր են: Ամենասովորականը հազիվ 10—15 տանից բաղկացած լինեին: Շատ էր պատահում նույնիսկ 3—5 տուն ունեցող գյուղեր ևս»²: Նույն հեղինակի վկայությամբ քրդական գյուղերը փոքր են նաև մեկ այլ պատճառով. նրանցում սովորական երևույթ դարձած միջցեղային բախումները, արյան վրեժի սովորույթը, հաճախակի սպանությունները, ստեղծելով կյանքի անապահով պայմաններ, դառնում էին քրդական գյուղերի քայքայման պատճառ³:

¹ Քուրք հեղինակ Ջեղեթի վկայությամբ, քուրք քրդերն հաճախ անցնում էին պետական սահմանը և ձմեռում Իրանում, տե՛ս «Քուրքական աղբյուրները», հ. Ա., էջ 308:

² Գյուրջյան Ա., Քրդեր, Լուսա, 1908, հունվար-փետրվար, էջ 96:

³ Տե՛ս նույն տեղում:

Այսպիսով, հատկապես քրդերի մասին եղած տեղեկությունները պահանջում են լուրջ ճշգրտում՝ դրանք գիտական շրջանառության մեջ դնելու համար:

Ի տարբերություն քրդական բնակչության, հայերի, Հայկական բարձրավանդակում ապրող այլ ժողովուրդների և թուրքերի մասին պահպանված տեղեկություններն ավելի արժանահավատ են: Դա պայմանավորված է նրանով, որ վերջիններս, հիմնականում ապրելով հարթավայրային շրջաններում, վիճակագրվելու տեսակետից ավելի մատչելի էին: Համեմատաբար դյուրին է հայ բնակչության թվաքանակի պրոբլեմը, քանի որ նրա մասին եղած օտար աղբյուրների հետ մեկտեղ, կան նաև հայկական նյութեր: Սակայն հայերի մասին եղած տվյալները ևս խիստ թերի են և ստուգման կարիք ունեն: Քանի որ պահպանված վիճակագրական բնույթի տեղեկությունները չեն արտացոլում բնակչության թվաքանակը ըստ շնչերի, այլ միայն ներկայացնում են բնակավայրերի ծխաքանակը, ուստի անհրաժեշտ է դառնում պարզաբանել այն հարցը, թե մոտավորապես որքան անդամ է ունեցել յուրաքանչյուր ընտանիք և արդյոք այդ ցուցանիշը չի տատանվել Արևմտյան Հայաստանում ապրող տարբեր ժողովուրդների մոտ:

Սկզբնաղբյուրներում պահպանված բազմաթիվ վկայությունների համաձայն, Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներում հայ ընտանիքների անդամների թիվը եղել է տարբեր: Սակայն ամենուր բազմանդամ ընտանիքներով ապրելը եղել է հայ ընտանիքի ամենաբնորոշ գծերից մեկը: 19-րդ դարի հայտնի պատմաբան Ալ. Նրիցյանը գրում է. «Քաղաքներում հազվադեպ կարելի է տեսնել 15 կամ 20 անդամներ ունեցող հայ ընտանիքներ, այն դեպքում, երբ ոչ քիչ թվով գյուղական ընտանիքներում հազվվում են 30, 40 և նույնիսկ 50 անդամներ»⁴: Մեկ այլ տեղ նույն հեղինակը պնդում է, որ պետք է «... ուշք դարձնենք այն իրողության, որ Հայաստանի մեջ երեսուն, քառասուն անդամներից բաղկացած տները սովորական են, իսկ որքան բազմանդամ է տունը, այնքան

⁴ Ерицов А., Опыт статистического очерка народонаселения Турецкой Армении, Тифлис, 1881, с. 29, տե՛ս նաև նույնի՝ «Թե Տաճկական Հայաստանում որքա՛ն հայ կա», Փորձ, 1830, № 6—7, էջ 218:

նա հարուստ է»¹: Երիցյանի կարծիքը կիսում է մեկ այլ հեղինակ՝ Գ. Դիեր. «Ընտանեկան բաժանումներն հայերի մոտ հազվադեպ երևույթ են: Նրանց ճնշող մեծամասնությունն ապրում է խոշոր ընտանիքներով (հաճախ հանդիպում են 20—25 անդամ ունեցող ընտանիքներ... երբ սահմանակալանների մոտ 10—12 հոգիանոց ընտանիքները խիստ հազվադեպ են), որոնց անդամները ենթարկվում են գեղջավազին»²:

Գր. Արծրունու հոդվածներից մեկում, որը գրվել է Արևմտյան Հայաստան կատարած անմիջական տպավորությունների տակ, կարդում ենք. «... այս ճանապարհորդության ընթացքում ես շատ սակավ հայ ընտանիք տեսա 5, 6, 7 հոգուց բաղկացած, բայց խիստ շատ 10, 15, 18, 20 և մինչև 40 և ավելի բաղկացած — ես համարձակ կարող եմ ասել, որ հայ ընտանեաց անդամների թիվը Հայաստանում երբեք միջին թվով 10-ից պակաս հաշվել չէ կարելի»³: Հայկական գյուղերում նահապետական ընտանիքներով ապրելն ունեն մի քանի առավելություն: Եթե անընդհատ տեղափոխությունների պատճառով քրդերին նպատակահարմար չէր ունենալ բազմանդամ ընտանիքներ⁴, ապա հողագործ հայերի համար այն քիչ թե շատ բարվոք պայմաններ խոստացող միջոց էր: Գյուղատնտեսական ծանր ու ծավալային աշխատանքների կատարումը սակավանդամ ընտանիքների համար գործնականորեն դառնում էր գրեթե անհնարին: Բացի այդ, թուրքիայում հայերի համար բազմանդամ ընտանիքը հողը շմասնատելու միջոց և անձնական ու գույքային անվտանգությունն ապահովող եզակի հնարավորություններից էր: Ուստի քաղաքներում, որտեղ ազգային և սոցիալական ճնշումն համեմատաբար թույլ էր, բազմանդամ ընտանիքներ ունենալու ձգտումը մեծ չէր:

¹ Երիցյան Ա., Բողոքականությունը Տաճկական Հայաստանում, Փորձ, 1879, № 2, էջ 109:

² Диев Г. А., Армянский вопрос в Турции, М., 1893, с. 43.

³ Գ. Ա., Վիճակագրական տեղեկություններ Հայաստանի բնակիչների մասին, «Մեղու Հայաստան», 1882, հունվար, էջ 3:

⁴ Քրդական ընտանիքների անդամների թիվը անվիճելիորեն զիջում էր հայ ընտանիքների թվին, տե՛ս Գյուրջյան Ա., նշվ. աշխ., էջ 96 և Արծրունի Գ., նշվ. աշխ., էջ 2—3:

Վերջապես, չպետք է մոռանալ, որ բազմանդամության հիմքում ընկած էր նաև սովորութային գործոնը¹, որի պահպանմանը մեծապես նպաստում էր այդ ժամանակաշրջանում բավական ամուր գյուղական համայնքի գոյությունը:

Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում պահվում է մի վավերագիր², որտեղ բերվում է Արևմտյան Հայաստանի տիպիկ գյուղերից մեկի բնակիչների ընդհանուր ցուցակը՝ բնակիչներից յուրաքանչյուրի անուն-ազգանունով և ընտանիքի անդամների թվով: Ըստ այդ ցուցակի, ընտանիքների անդամների միջինը 1829 թ. կազմում էր նվազագույնը 7 հոգի³: Նույն համոզմանն ենք գալիս, երբ ուսումնասիրում ենք 19-րդ դարի 2-րդ կեսին և 20-րդ դարի սկզբին կազմած վիճակագրական ցանկերը⁴:

Այսպիսով, գյուղական հայ ընտանիքների անդամների թիվը բաղադատելիս՝ միջինը պետք է ընդունել 8-ը: Միայն այս եղանակով՝ պարզելով արևմտահայ գյուղերի ընդհանուր թիվը և նրանցում ապրող ընտանիքների քանակը, կարելի է մոտավորապես որոշել ամբողջ երկրամասում կամ առանձին վարչամիավորներում եղած հայության մոտավոր թիվը:

Ինչ վերաբերում է քրդական ընտանիքների անդամների միջին թվաքանակին, ապա ինչպես վերը նշվեց, հասկանալի պատճառներով այն անհամեմատ ցածր է եղել: Հետազոտությունները ցույց են տալիս, որ հայերի համեմատությունում ցուցանիշը ցածր է եղել նաև Արևմտյան Հայաստանի մյուս, համեմատաբար բազմաքանակ բնակիչների՝ թուրքերի շերջանում: Սակայն հարկ է նշել, որ ինչպես մահմեդական շատ ժողովուրդներ, թուրքերը ևս ունեցել են բազմանդամ ընտանիքներ, որի վկայությունը բազմակնություն և հարեմի գոյության փաստն էր: Մյուս կողմից չպետք է մոռանալ, որ հա-

¹ Տե՛ս Թուրքիայի հայերը և իրենց դրացիները, գրեց Մ. Ա., Մարսիւ, 1890, էջ 2:

² Տե՛ս Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 69, վ. 512, Բ. 1—8:

³ Տե՛ս նույն տեղում:

⁴ Տե՛ս Դիվան Հայոց Պատմության, հրատ. Գ. Աղանյաց, դիրք ժԳ, Թիֆլիս, 1915, էջ 238—339, 475—486, Սրվանձության Գ., Երկեր, հ. 2, էջ 476—478 և այլն:

րեմներ ունեցել են գլխավորապես ունևոր դասի ներկայացուցիչները, որոնք կազմել են բնակչության փոքրաթիվ մասը: Իսկ աշխատավոր թուրք գյուղացին նյութական ծանր պայմանների պատճառով ի վիճակի չի եղել հարեմ պահելու: Եթե մի կողմից հարեմը եղել է թուրքական ընտանիքների բազմանդամության գլխավոր պատճառներից մեկը, մյուս կողմից՝ անհնարին է դարձրել երկու եղբայրների, առավել ևս հորեղբորորդիների համատեղ կյանքը միևնույն ընտանիքում և նրանց բաժանման պատճառ է դարձել: Դրանով պետք է բացատրել նրանց մոտ նահապետական ընտանիքների՝ գերդաստանների բացակայության փաստը: Այսպիսով, Արևմտյան Հայաստանի բնակչության մեջ հայերի ընտանիքների անդամների միջին ցուցանիշը բոլորից բարձրը էր՝: Այնպես որ, եթե գյուղաբնակ հայ ընտանիքների անդամաթիվը համարենք 8, ապա թուրքերինը պետք է լինի 6 կամ առավելագույնը՝ 7, իսկ քրդերինը՝ ավելի պակաս: Այս հանգամանքի անտեսումն էլ ստեղծված բազմաթիվ կեղծ վիճակագրությունների պատճառն էր:

Ժողովրդագրական բնույթի առանձնահատկությունների մեջ կարևոր է նաև այն, որ Արևմտյան Հայաստանում ժողովրդական գործընթացները պայմանավորված էին ոչ այնքան սոցիալ-տնտեսական, որքան քաղաքական դրդապատճառներով: Հետամնաց ֆեոդալական հարաբերությունների պայմաններում գյուղական համայնքի առկայությունը, որպես կանոն, խոչընդոտում էր տնտեսական լծակների ազդեցությամբ էթնիկական տեղաշարժերի հնարավորությունը, մինչդեռ քաղաքական գործոնները՝ կայսրության արևելյան շրջաններում ստեղծված քաղաքական անարխիան՝ մշտական ասպատակությունները, կյանքի անապահով վիճակը, բնակչության միգրացիոն գործընթացների գլխավոր պատճառներն էին:

1 Տե՛ս նաև Սարգսյանց Լ., Այց Թուրքաց Հայաստանին, Բիֆլիս, 1890, էջ 128:

2. Էրզրումի նահանգի հայ ազգաբնակչության բվախանակը 1828—1829 թթ. ուսուքուրական պատերազմի նախօրյակին

Էրզրումի նահանգի վարչաէթնիկական ակնարկից հետո, բնականաբար խնդիր է ծառանում խոսք ասելու հայ ազգաբնակչության թվաքանակի մասին:

Աշխատության հավելվածում բերված նահանգի հայաբնակ բնակավայրերի ցանկը, որը կազմել ենք ուսումնասիրության վերջում վկայակոչված աղբյուրների և գրականության բնական վերլուծության շնորհիվ, վկայում է, որ 19-րդ դարի սկզբին, երբ հայ բնակչությունը աչքի էր բնկնում առավել բազմաքանակությամբ, էրզրումի նահանգում հաշվվում էր մոտ հազար բնակավայր, որից 14-ը՝ քաղաք կամ քաղաքատիպ բնակավայր: Քրիստոնյա հայերի գյուղերի և ավանների թիվը անցնում էր ութ հարյուրից, իսկ միայն Բաբերդի, Երզնկայի, Սպերի և Թորթումի գավառների կիսամահմեդականացված (կեսկեսների) և մահմեդականացված հայերի հայանուն բնակավայրերը, ոչ լրիվ տվյալներով, հարյուրից ավելի էին: Ըստ առանձին գավառների պատկերը հետևյալն էր.

Աղյուսակ 1

| № | անվանումը | Քրիստոնյա հայերի բնակավայրերի թիվը | | Կեսկեսների և մահմեդականացված հայերի բնակավայրերի թիվը (միայն հայանուն) | |
|----|-----------|------------------------------------|-----------------------|--|-----|
| | | գյուղեր | քաղաքներ ¹ | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1. | Էրզրում | 128 ² | 1 | | 129 |
| 2. | Դերշան | 56 ³ | 1 | | 57 |

¹ Քաղաքների թվում հաշվված են նաև խոշոր քաղաքատիպ բնակավայրերը:

² Էրզրումի գավառի գյուղերի մեջ մտցված են նաև անհայտ, անանուն 7 բնակավայրերը, որոնք հայտնի էին ընդհանուր Բագին անունով: Մի քանի ծուխ հայ բնակիչ ունեցող գյուղերը՝ ինչպես Էրզրումի, այնպես էլ մյուս գավառների հայկական բնակավայրերի ցուցակներում չենք ներկայացրել:

³ Դերշանի Լակձոր նահիբի անհայտ անուններով հայկական գյուղերը չեն հաշվված:

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|------------------|-----|----|-----|-----|---|
| 3. Բարերդ | 66 | 1 | 12 | 79 | |
| 4. Ծրգնկա | 94 | 1 | 29 | 124 | |
| 5. Կելկիթ | 9 | 1 | | 10 | |
| 6. Շաբին | | | | | |
| Կարահիսար | 34 | 2 | | 36 | |
| 7. Քրդի | 74 | 1 | | 75 | |
| 8. Սպեր | 47 | 1 | 33 | 81 | |
| 9. Թորթում | 17 | — | 36 | 53 | |
| 10. Վերին Բասեն | 62 | 1 | | 63 | |
| 11. Ստորին Բասեն | 22 | 2 | | 24 | |
| 12. Կնուս | 53 | 1 | | 59 | |
| 13. Ալաշկերտ | 88 | — | | 88 | |
| 14. Խամուր | 23 | — | | 23 | |
| 15. Դիադին | 36 | — | | 36 | |
| 16. Բայազետ | 40 | 1 | | 41 | |
| Ընդամենը | 854 | 14 | 110 | 978 | |

Ինչպես նշվեց, բացառությամբ 1828—1830 թվականներին նահանգի մի քանի գավառներին վերաբերող վիճակագրությունների, այլ վարչամիավորների մասին աղբյուրներում ամբողջական ու լրիվ տվյալներ չկան: Սակայն այս հանգամանքը չի նսեմացնում այդ վիճակագրությունների նշանակությունը նաև նահանգի մյուս գավառների բնակչության հաշվառման հարցում: Մեզ քաջածանոթ է Ուշակովի հանձնախմբի հաշվառումներով, 20-ական թվականների երկրորդ կեսին՝ մինչև 1830 թ. հայերի զանգվածային արտագաղթը, էրզրումի նահանգի գյուղական բնակավայրերում ապրող ընտանիքների քանակը տատանվում էր 10-ից մինչև 50-ի սահմաններում¹, այսինքն՝ հավասար էր միջինը 30 ընտանիքի: Նույն միտքը կրկնում է Ֆ. Ֆոնտոնը², որն իր ձեռքի տակ ունեցել է Ուշակովի վերոհիշյալ աշխատությունը:

Սակայն, ինչպես ցույց կտրվի ստորև, 19-րդ դարի առաջին երեք տասնամյակների ընթացքում տեղի են ունեցել էթ-

նիկական տեղաշարժեր: Ուստի ամբողջ երեսնամյակի համար միանշանակ հաշվարկները հանգեցնում են սխալ հետևությունների: Մեկ գյուղում միջինը երեսուն ընտանիք լինելու ցուցանիշը վերաբերում է 20-ական թվականների վերջին, այսինքն այն ժամանակաշրջանին, երբ նահանգի մի շարք գավառներ, հատկապես արևելյան¹, նախորդ էտապում քաղաքական լծակների ազդեցությամբ զրկվել էին հոծ հայկական բնակչությունից և, բնականաբար, այնտեղի բնակավայրերի ծխերի միջին թվաքանակը նվազել էր: Հետևաբար, դարասկզբի համար հայկական գյուղերի ընտանիքների միջինը անպայմանորեն բարձր էր 30-ից և պետք է որ կազմեր ն. Ուշակովի և Ֆ. Ֆոնտոնի բերած առավելագույն թիվը՝ 50 ընտանիք: Այդ միտքը հաստատելու համար ավելորդ չէ վերհիշել էրզրումի գավառի գյուղերում ուս հետազոտողների կատարած զննումները. «Գյուղերը բազմամարդ են, յուրաքանչյուրում կա ոչ պակաս 50 ծուխ»²: Բայց, հաշվի առնելով, որ որոշ գավառների հայկական բնակավայրերի մի մասում բացի հայերից ապրում էին նաև թուրքեր, քրդեր և այլ ժողովուրդներ, դարասկզբին հայկական գյուղերի ընտանիքների միջին թվաքանակը կարելի է համարել 40-ը, առավել ևս, որ մեկ գյուղում 40 ընտանիք հայ լինելու օգտին են նաև խոսում Բասենում Կ. Կոխի կատարած հետազոտությունները³: Կրկին մեկ ընտանիքում ընդունելով 8 անդամ, կստանանք. նահանգի գյուղաբնակ հայերի տեղաբաշխման հետևյալ աղյուսակը⁴ (աղ. 2):

Այսպիսով, նահանգի գյուղական հայ ազգաբնակչության ընդհանուր թիվը ոչ լրիվ տվյալներով դարասկզբին հասնում էր մոտ 310 հազարի, որից ավելի քան 273 հազարը՝ քրիստոնյաներ: Գյուղական ազգաբնակչությանը ավելացնենք նաև քաղաքային բնակչությունը: Այդ նպատակով վերհիշենք մեր բերած վիպյությունները և կատարած հաշվումները նահանգի քաղաքների հայ բնակչության մասին, որը ի տարբե-

¹ Արևելյան գավառներում տեղի ունեցած էթնիկական ոչ հայանպաստ տեղաշարժերի մասին կրոսովի ստորև:

² Известия Кавказского отдела, т. 6, № 2, с. 193.

³ Տե՛ս Koch K., նշվ. աշխ., էջ 316:

⁴ Աղյուսակ 2-ը տես հաջորդ էջում:

¹ Տե՛ս История военных действий, ч. 1, с. 104.
² Տե՛ս Fonton F., նշվ. աշխ., էջ 186:

Աղյուսակ 2

| № | Գավառի անվանումը | Քրիստոնյա գյուղական հայության թիվը | Կեակեաների և մահմեդականացված գյուղական հայության թիվը | Ընդամենը |
|----------|------------------|------------------------------------|---|----------|
| | | | | |
| 1. | Էրզրում | 40960 | | 40960 |
| 2. | Դերջան | 17920 | | 17920 |
| 3. | Բաբերդ | 21120 | 3840 | 24960 |
| 4. | Երզնկա | 30080 | 9280 | 39360 |
| 5. | Կելիֆ | 2880 | | 2880 |
| 6. | Շաբին Կարահիսար | 10880 | | 10880 |
| 7. | Քըզի | 23680 | | 23680 |
| 8. | Սպեր | 15040 | 10560 | 25600 |
| 9. | Քորթում | 5440 | 11520 | 16960 |
| 10. | Վերին Բասեն | 19840 | | 19840 |
| 11. | Ստորին Բասեն | 7040 | | 7040 |
| 12. | Խնուս | 18560 | | 18560 |
| 13. | Ալաշկերտ | 28160 | | 28160 |
| 14. | Խամուր | 7360 | | 7360 |
| 15. | Դիաղին | 11520 | | 11520 |
| 16. | Բայազետ | 12800 | | 12800 |
| Ընդամենը | | 273280 | 35200 | 308480 |

րություն գյուղական ազգաբնակչության, բացառությամբ մի քանի քաղաքների (Բայազետ, Երզնկա և այլն), դարի ամբողջ քառորդի ընթացքում էական փոփոխություններ չի կրել: Արդյունքում կստանանք հետևյալ աղյուսակը.

Աղյուսակ 3

| № | Քաղաքներ | Հայ բնակչության թիվը | |
|----|------------------------------|----------------------|-------|
| | | ընտանիք | մարդ |
| 1 | 2 | 3 | 4 |
| 1. | Էրզրում | 4500 | 27000 |
| 2. | Դերջան ¹ | 2500 | 15000 |
| 3. | Բաբերդ ² | 1000 | 6000 |
| 4. | Երզնկա ³ | 900 | 5400 |
| 5. | Կելիֆ ⁴ | 100 | 600 |
| 6. | Շաբին Կարահիսար ⁵ | 400 | 2400 |

| 1 | 2 | 3 | 4 |
|-----------------------------|------|-------|-------|
| 7. Քամազարա | 500 | | 3000 |
| 8. Քըզի | 400 | | 2400 |
| 9. Խնուս ⁶ | 400 | | 2400 |
| 10. Սպեր ⁷ | 450 | | 2700 |
| 11. Հասան կալա ⁸ | 875 | | 5250 |
| 12. Խորասան ⁹ | 250 | | 1500 |
| 13. Մժնկերտ ⁹ | 250 | | 1500 |
| 14. Բայազետ ¹⁰ | 3000 | | 18000 |
| Ընդամենը | | 15525 | 93150 |

Այսպիսով, նահանգի 14 քաղաքներում և քաղաքատիպ բնակավայրերում 19-րդ դարի առաջին երեսնամյակին ապրում էր մոտավորապես 15 հազ. ընտանիք կամ 90 հազ. շունչ հայ: Ուրեմն, ամբողջ նահանգի հայ ազգաբնակչության թիվը կազմում էր մոտավորապես 400 հազար մարդ, այն դեպքում, երբ չեն հաշվված մի խումբ օտարանուն բնակավայրերի մահմեդականացված և կիսամահմեդականացված հայերը: Ստացված հաշվումներից հետևում է, որ ուսումնասիրվող նահանգի հայ ազգաբնակչության ճնշող մեծամասնությունը գյուղաբնակ էր, մի երևույթ, որը տիպական էր նաև

¹ Դերջանի բնակչությունը բերված է 1820-ական թվականների վերջի վիճակով՝ ըստ է. Սմիթի վկայության:

² Գարասկզբին Բաբերդի 2 հազար բնակչությունից հայերի թիվը (քրիստոնյա և մահմեդականացված) մոտավ. հաշվել ենք կեսի շափով՝ հազար ծուխ:

³ Գարասկզբին Երզնկայի 10—12 հազ. բնակչությունից հայերի թիվը հաշվել ենք կրկին կեսի՝ մոտ. 900 ծխի շափով:

⁴ Կելիֆի հայ բնակչությունը ենթադրաբար համարել ենք 100 ծուխ:

⁵ Այստեղ հայ կեակեաները չեն հաշվված, միայն քրիստոնյա հայերի թիվն է արտացոլված:

⁶ Խնուսի բնակչությունը հաշվել ենք մոտավ. 10-ական թվականների սկզբի վիճակով:

⁷ Սպերի ամբողջ բնակչությունից հայերի թիվը հաշվել ենք կեսի շափով:

⁸ Հասան կալայի ամբողջ բնակչությունից հայերը հաշվված են կեսի շափով:

⁹ Խորասանի և Մժնկերտի բնակչությունը հաշվել ենք մոտավորապես:

¹⁰ Բայազետի բնակչությունը հաշվել ենք 1807 թ. վիճակով՝ ըստ Գարգանի վկայության (Հակոբյան Հ., Ուղեգրություններ, հ. 2., էջ 101):

ամբողջ Արևմտյան Հայաստանի և առհասարակ ողջ Ֆեոդալական ու ազրարային Թուրքիայի համար:

Եթե ընդունենք, որ 19-րդ դարի առաջին տասնամյակներին Արևմտյան Հայաստանում 2,5 միլիոն հայ լինելու տեսակետը ճիշտ է, նշանակում է նրա 1/6 մասը բնակվում էր էրզրումի նահանգում: Իսկ ինչ վերաբերում է նահանգի տարածքում ապրող այլ ժողովուրդների նկատմամբ հայերի հարաբերակցությանը, աղբյուրների բացակայության պատճառով հնարավոր չէ ճշգրիտ հաշվումներ անել: Այլ ժողովուրդների հաշվառումը պահանջում է առանձին և մանրակրկիտ ուսումնասիրություն: Սակայն այս հարցում անվիճելի է այն, որ երկրամասի տեղական բնակչությունը՝ հայերը իրենց թվաքանակով գերազանցում էին ոչ միայն առանձին վերջրած Թուրքերին, քրդերին և այլոց, այլև ընդհանուր մահմեդական բնակչությանը:

Կապված 1807—1814 թթ. քրդական ցեղերի ավերիչ արշավանքների, 1820—1823 թթ. պարսկա-թուրքական պատերազմի ընթացքում պարսիկների կողմից դեպի Իրան և Արևելյան Հայաստան հայ բնակչության բռնագաղթեցման, մըշտատե համաճարակների և 1829—1830 թթ. դեպի Ռուսաստան նահանգի արևելյան և կենտրոնական մի խումբ գավառներից զանգվածային արտագաղթների հետ, հայերի թիվը զգալիորեն կրճատվեց: Այդ մասին կխոսվի ստորև:

Ինչպես արևմտահայ ամեն մի գավառի, այնպես էլ էրզրումի էյալեթի յուրաքանչյուր՝ հատկապես արևելյան վարչա-միավորի բնակչության էթնիկական տեղաշարժը, ինչպես նըշվեց, ամենից առաջ պայմանավորված էր քաղաքական նախադրյալներով: Դա առավել ցայտունորեն էր նկատվում Բայազետի լիվա-փաշայությունում: Այն գտնվում էր քրդական ցեղերի մշտական տեղաշարժերի շրջանում և ավելի շատ էր տուժում նրանց ասպատակություններից: Ի տարբերություն Արևմտյան Հայաստանի այլ գավառների, արևելյան գավառներում 19-րդ դարի սկզբներին երևան եկավ էթնիկական տեղաշարժերի նոր շարժառիթ, Ռուսաստանի արևելյան քաղաքականության ակտիվացումը ազատագրության հույսեր առաջացրեց հայ ժողովրդի արևելահայ և արևմտահայ հատվածների շրջաններում: 1804 թ. սկսված ռուս-պարսկական

պատերազմի ընթացքում ռուսական զորքերը Երկու անգամ (1804 և 1808 թթ.) պաշարեցին Երևանի բերդը: Այդ օրերին առանձին արևմտահայեր անհամբերությամբ էին սպասում Երևանի գրավմանը, որպեսզի գաղթեին Արևելյան Հայաստան, որտեղ նրանց համար սպասվում էր գույքի և անձի ապահովություն: Էջմիածնի կաթողիկոսական աթոռի համար պայքարող պարսկամեա Դավիթը, անհանգստացած Ռուսական կայսրության հովանավորությանը ձգտող Բայազետի, Ալաշկերտի, Դիադինի հայության արտագաղթելու մտադրությամբ, 1805 թ. կոչ էր անում իր օրինակով աջակցել պարսկական զորքերին և հրաժարվել Արևելյան Հայաստան գաղթելու մտքից²: Սակայն եթե այս անգամ Երևանի բերդի գրավման համար ռուսների ձեռնարկած անհաջող փորձերը և պարսկամետ տարրերի հակառուսական գործունեությունը կանգնեցրին դեպի ռուսական սահմանները շտապող հայերի մի մասին, ապա 1807 թ. երկրորդ կեսին, այնուամենայնիվ, գտնվեցին մարդիկ, որոնք տեղափոխվեցին Արևելյան Հայաստան³:

Էրզրումի նահանգի մի շարք գավառների մասին խոսելիս, մենք հաճախ կանգ ենք առել 1807—1809 թթ. և 1820—1823 թթ. քաղաքական իրադարձությունների վրա: Քանզի այդ անցքերը առավել քան այլ շրջաններում, իրենց ազդեցությունն են թողել նահանգի արևելյան գավառների էթնիկական տեղաշարժերի վրա, անհրաժեշտ ենք համարում այստեղ նրանց անդրադառնալ ավելի հանդամանալից:

1806—1812 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակաշրջանում, օգտվելով թուրքական բանակի անհաջողու-

¹ Երբ էրզրումում լուր է տարածվում, որ Երևանն առնված է, քաղաքից և շրջակա գյուղերից 200 հայ բնուանիքներ շտապում են դեպի ռուսական զորքը: Սակայն ճանապարհին, երբ պարզվում է, որ Երևանը դեռ գրավված չէ, գաղթականների խումբը ստիպված է լինում կանգ առնել Կարսում և սպասել դեպքերի հետագա զարգացմանը (ЦГИА Грузии, ф. 16, оп. 1, д. 436, л. 1—4. АКАК, т. 3, с. 525 և կես, Հայոց պատմության նորագույն շրջան, հ. 1, էջ 17—18):

² Տե՛ս Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, Թղթ. 16, վավ. 104, Թ. 1—2:

³ Տե՛ս ЦГИА Грузии, ф. 16, оп. 1, д. 436, л. 1—4; оп. 1, д. 1661, л. 1—5, АКАК, т. 3, с. 525.

Յյուններից, կայսրության արևելյան գավառներում նորից գլուխ բարձրացրին քրդական ավազակախմբերը և սկսեցին անպատիժ կողոպտել հայ բնակչությանը: Բայազետի Իբրահիմ փաշան քրդերին հնազանդեցնելու նպատակով ձեռք առավ որոշ միջոցառումներ, ի պատասխան որի, 1807 թ. ամռան վերջերին քրդական հրոսակախմբերն ուժեղացրին երկրի ավերումն ու ազգաբնակչության կեղեքումը: Ստանալով Քուրթիայի նկատմամբ թշնամաբար տրամադրված Երևանի Հասան խանի աջակցությունը՝ ապստամբ քրդերը շարժվեցին Բայազետի վրա: Հայերի շահերի կեղծ պաշտպան Իբրահիմ փաշան, փորձելով փրկել սեփական անձը, բախտի քմահաճույթին թողեց հայ գյուղացիությանը և պատասպարվեց Բայազետի միջնաբերդում: Պաշարելով Բայազետը, քրդական ջոկատները հայկական բնակավայրերը թալանելու հնարավորություն ստացան: Այդ օրերին Դիադինի գավառում եղած ֆրանսիացի Գարդանը վկայում է, որ քրդերը «գյուղերը թալանում ու ավերում են, բնակիչները, տղամարդիկ և կին, ստիպված փախուստի են դիմել համարյա մերկ»¹: Նոր գաղթականներ հեռացան Արևելյան Հայաստան (Արարատյան դաշտ) և Պարսկաստան, ոմանք էլ հանգրվանեցին Կեսարիայում, Զիտտայում և Հիջազում²: Բնակչության կոտորածից ու արտագաղթից զերծ չմնաց նաև պաշարված Բայազետը: 25—30 հազ. բնակիչ ունեցող քաղաքում, ըստ Գարդանի, 1807 թ. մնացել էր արդեն 3000 ընտանիք³, այսինքն՝ 15—20 հազ. մարդ:

Անեկանելի վիճակից դուրս գալու նպատակով հայ գյուղացիությունը դուրս եկավ զինված պայքարի, որի գլուխ կանգնեց Արծափ գյուղի բնակիչ Մանուկ Բանեյանը: 1808 թ. նրան հաջողվեց հավաքագրել ու զինել մինչև 1000 հոգուց բաղկացած ջոկատ և սանձահարել քրդական ավազակային առանձին խմբերի: Սակայն այս շարժումը լայն ծավալ չընդունեց, քանի որ Իբրահիմ փաշան այն անմիջապես ծառա-

յեցրեց իր նպատակներին: Այազկերտում ամրացած քրդական ջեղերից մեկի առաջնորդ Քիմուր բեկի դեմ պայքարի գլխավոր կազմակերպիչ համարելով Իբրահիմ փաշային՝ հայկական զինված ուժերի ղեկավարներն իրենց ջոկատները դրեցին նրա տրամադրության տակ: Սակայն Այազկերտի գրավման անհաջող փորձից հետո, վերջինս իր գայրույթը թափեց իրեն օգնող հայերի վրա: Հայ գյուղացիներից խլվեցին բազմաթիվ անասուններ, մեծ քանակությամբ հացամթերք: Փաշան հայերին կարգադրեց իրենցից իսկ խլված ավարը հասցնել ս. Հովհաննու (Ուլ Քիլիսա) վանքը: 1808 թ. վերջին և 1809 թ. սկզբին, ուժեղ սառնամանիքի պայմաններում 2000 հայ գյուղացիների ստիպեցին ձյան հաստ շերտից մաքրել դեպի Բայազետ նահանջող Իբրահիմի ճանապարհը: Շատերը ցրտահարվեցին կամ դարձան հաշմանդամներ: Հայ բնակչության մեծ կորուստների գնով Իբրահիմ փաշան հասավ Բայազետ: Նրան ոչինչ չէր մնում անելու, բացի բերդաքաղաքի ամուր պարիսպների ներսում խաբված հայերից խլված ավարի հաշվին երկարատև պաշարման անցնելուց²: Քրդական ջոկատները չհապաղեցին օգտվել հայ գյուղացիությանը կողոպտելու Իբրահիմի ընձեռած նոր հնարավորությունից: Ի թիվս բազմաթիվ հայկական գյուղերի, հիմնահատակ ավերվեց հայ ազատագրական պայքարի կենտրոն դարձած Ալիկոր գյուղը³: «Քրդերի արշավանքներից ամբողջ երկիրը բացարձակ ավերակ վիճակում էր գտնվում», — կարդում ենք դեպքերի ականատես Զ. Մորիերի ուղեգրություններում⁴: «Այնպես եղավ, — ավելացնում է ականատեսի լավատեղյակությամբ Պ. Մուրատյանցը, — որ յոթ տարի (1808—1814 թթ. — Ա. Մ.) գյուղերն ու դաշտերը Դիոզենեսի

¹ Տե՛ս Մուրատյանց Պ., նշվ. աշխ., էջ 38—39, 2. Հակոբյան, Ուղեգրություններ, 5. Զ., էջ 273:

² Տե՛ս Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 21, վավ. 62, թ. 1:

³ Ալիկորի ավերվելու մասին վկայում է անգլիացի Զեյնա Մորիերը (1809 թ.), որն այն հիշատակում է Ալաբու ձևով (Հակոբյան 2., Ուղեգրություններ, 5. Զ., էջ 272):

⁴ Նույն տեղում, էջ 273:

¹ Հակոբյան 2., Ուղեգրություններ, 5. Զ., էջ 100:

² Տե՛ս Մուրատյանց Պ., նկարագիր Ս. Հովհաննու վանուց և վիճակի նորին Բագրևանդա («Արարատ», 31 հունվար, 1839, էջ 37):

³ Տե՛ս Հակոբյան 2., Ուղեգրություններ, 5. Զ., էջ 101:

լապտերով ժուռ գայիր մի հայ մարդ չէիր կարող դառնել...»¹: Վերջիններին լրացնում է 1812 թ. մայիսի վերջին Բայազետի գավառում եղած Սերովբե Կարնեցին: «Այդ հովիտը, — գրում է նա, — բոլորովին չէր բնակեցված՝ լեռնականների (լեռնաբնակ քրդերի — Ա. Մ.) հաճախակի ասպատակությունների պատճառով»²: նույն հեղինակի վկայությամբ, 1812 թ. Բայազետում արդեն մնացել էր ընդամենը 12 հազ. բնակիչ³:

Քրդական ցեղախմբերի և Բայազետի փաշայի միջև արյունալի բախումների հետևանքով ստեղծված քաղաքական խառնաշփոթ վիճակը պահպանվեց մինչև 1814—1815 թթ., երբ էրզրումի սերասկյարից Բայազետի փաշայի պաշտոնը կաշառքով ստացած նոր փաշան՝ Բահլուլը, կարողացավ ժամանակավորապես հպատակեցնել կենտրոնախույս քրդական ցեղերին: Սակայն Բահլուլն էլ սերասկյարին պաշտոնի համար խոստացած կաշառքի արժեքն ու նրա կրկնապատիկը գանձեց Ալաշկերտի և Բայազետի հայությունից՝ ավելի վատթարացնելով նրանց վիճակը⁴: Պատահական չէ, որ Բահլուլ փաշայի իշխանության տարիներին նույնպես եղան խմբային գաղթեր, հատկապես դեպի Արևելյան Հայաստանի Ռուսաստանին անցած շրջանները: Արխիվային փաստաթղթերից երևում է, որ 1814 թ. Փամբակում ռուսական զինվորական իշխանություններն արևմտահայերից ստացել են Անդրկովկասի ռուսահպատակ մարզերը գաղթելու թույլտվության բազմաթիվ խնդրագրեր⁵: 1817 թ. Ալաշկերտի Կարասու գյուղից 12 ընտանիք գաղթել և հաստատվել է ավելի քան մեկ տասնամյակ առաջ Ռուսական կայսրության կազմի մեջ մտած Շիրակի Քյավթառու գյուղում⁶: Դեպի Շիրակի դաշտ մի նոր արտագաղթ էլ եղել է 1820 թ.⁷:

Ինչևհից, Բահլուլ փաշայի կառավարման մի շրջանում

¹ Մուրատյանց Պ., նշվ. աշխ., էջ 37:

² Սերովբե Կարնեցի, Ուղեգրություն Բաղդադից էջմիածին, էջ 155—156:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 158—159:

⁴ Տե՛ս Մուրատյանց Պ., նշվ. աշխ., էջ 39:

⁵ Տե՛ս ЦГИА Грузии, ф. 16, оп. 1, л. 1661, л. 1—5.

⁶ Տե՛ս «Արևելյան մամուլ», 1 ղեկտեմբեր, 1898, էջ 890:

⁷ Տե՛ս АВПР, ф. Главный архив III-6, л. 4, л. 14.

(1816—1820 թթ.) Արևմտյան Հայաստանի արևելյան գավառներում տիրեց ժամանակավոր խաղաղություն: Տարբեր շրջաններ ու երկրներ գաղթած բայազետցի և ալաշկերտցի գյուղացիների մեծ մասը վերադարձավ ու վերաշինեց իր բնակավայրերը: Սակայն խաղաղությունը երկար չտևեց. 1820 թ. վերջին սկսված պարսկա-թուրքական պատերազմը նոր ավերածություններ ու մարդկային զոհեր պատճառեց Արևմտյան Հայաստանի պարսկամերձ գավառներին: Պարսկական զորքը, նրա հետ նաև Երևանի Հասան խանի հրոսակները, ներխուժեցին պատմական Կոգովիտի և Բաղրևանդի տարածքը: Պաշարվեց Բայազետը, որտեղ իր հիմնական ուժերով փակվել էր Բահլուլ փաշան: Ցանկանալով հասնել վերջինիս թուլացմանը՝ Բարձր Դուռը, ինչպես նաև Վանի, Մուշի և Կարսի փաշաները, ոչ մի քայլ չձեռնարկեցին քաղաքի պաշարումը վերացնելու ուղղությամբ¹: Անպատասխան մնաց իրենց օգնելու մասին 1820 թ. դեկտեմբերին էրզրումի սերասկյարին ուղղած տեղի հայերի խնդրանքը², որոնց վիճակը օրեցօր դառնում էր օրհասական: Շուտով պարսկական բանակները գրավեցին Բայազետը և Ալաշկերտը, մտան Վանի նահանգի սահմանները, առիթից օգտված ավալյան քրդերը կոտորած ու կողոպուտ կազմակերպեցին հայկական բնակավայրերում: Քրդերին «պատժելու» նպատակով ուղարկված պարսկական զորքերն իրենց հերթին սկսեցին թալանել հայ գյուղացիներին: «Հեյդերանլի աշիրեթին հետապնդող իրանական զուլքերը, — գրում է դեպքերի ժամանակակից թուրք հեղինակ Զևեթը, — մեծ ավերածություններ արեցին, բազմաթիվ ռայաների (հայերի — Ա. Մ.) գերի վերցրին»³:

Ինչպես շուտով պարզվեց, պարսից շահը, որդեգրելով շահ Աբասի քաղաքական ծրագրերը, որոշել էր Արևմտյան Հայաստանից հայ բնակչության բռնագաղթ կազմակերպել դեպի Երևանի խանության գավառները: Ֆաթհալի շահը ցան-

¹ Տե՛ս Երեցյան Ա. Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի Հայք 19-րդ դարում, հ. Ա., էջ 404—405:

² Տե՛ս Մատենադարան, Կարապետ արքեպիսկոպոսի արխիվ, թղթ. 163ա, վավ. 402, թ. 1—2:

³ Թուրքական աղբյուրները, հ. Ա., էջ 313:

կանում էր 17-րդ դարի սկզբներին շահ Աբասի հայաթափած Երևանի խանությունը նորից հայացնել և շենացնել ի հաշիվ հարևան ախտյան պետություն՝ Թուրքիայի աշխատավոր հաչ բնակչության: Մրագրված էր նաև հայկական տարրը ստվարացնել Մակուի և հարակից այլ խանություններում: 1821 թ. պարսկական բանակը ձեռնամուխ եղավ վերոհիշյալ ծրագրի իրականացմանը: Երկու զորագնդեր՝ Հասան և Բոլի խաների գլխավորությամբ, սկսեցին տեղահանել էրզրումի նահանգի արևելյան գավառների հայ բնակչությանը: Հասան խանին հաջողվեց հիմնականում Բայազետի, Դիադինի, Վերին Բասենի, Խնուսի գավառներից մեծ թվով բնակիչների բռնագաղթեցնել Երևանի խանության տարածքը¹: Բռնագաղթից խիստ տուժեց նաև Բայազետ քաղաքը, որի բնակիչներից մի խումբ բնակեցվեց Արարատյան դաշտի Սարդարապատ գյուղում²:

Պարսկական երկրորդ զորագնդին շահաջողվեց անմիջապես տեղահանել և որոշված վայրը՝ Ատրպատական բռնագաղթեցնել Ալաշկերտի, Խամուրի, ինչպես նաև Վանի նահանգի գավառների բնակչությանը: Բոլի խանն այստեղ հանդիպեց զինված դիմադրության: Միայն համառ ջանքերից հետո պարսիկները կարողացան հավաքագրել ավելի քան 4 հազ. ընտանիք³: Երկարատև ու տանջալից երթից հետո գերիների կարավանը հասցվեց Դիադինի Ալիկոր և Ղումլուջա գյուղերի միջև ընկած վայրը: Հայ տարագիրներին հաջողվում է իրենց մասին տեղեկացնել ոչ հեռու գտնվող ս. Հովհաննու վանքի վանականներին: Վանքի միաբան վարդապետ Խաչատուր Աստվածատրյանը, անցնելով ոչ մեծ խմբի գլուխ, շտապում է գերիներին օգնության: Տեղի ունեցած կատաղի ճակատամարտում պարսիկները պարտվում են և դիմում փախուստի: Գերությունից ազատվածներին տեղափոխում են վանք: Շուտով պարսպապատ ս. Հովհաննու վանքը դառնում է անառիկ ամրոց: Զինվելով հնարավոր ամեն ինչով՝ այդ թվում՝ ինքնաշեն թնդանոթով, վանքի պաշտպանները 13 օր հերոսաբար հետ են մղում Բոլի խանի հարձակումները: Ոգևորված այս

հաղթանակներով՝ կրկին զինվում և ակտիվանում է Մանուկ Բանեյանի ջոկատը: Ինքնապահպանման համար սկսված ժողովրդական պայքարը նոր թափ է ստանում:

Լսելով Բոլի խանի անհաջողությունների մասին՝ Հասան խանը Երևանից վերադառնում է Բայազետ: Գործի ղեկով պարսից արքունիքի միջնադարյան հայտնի միջոցը՝ խաբեությունը, նա իր մոտ է «հրավիրում» Խաչատուր վարդապետին և ձերբակալում: Գազանաբար սրի են քաշվում շարժման շատ ղեկավարներ, որից հետո հակապարսկական ազատագրական շարժումը վայրէջք է ապրում: Պարսկական պատժիչ ջրկատներն ավերակների են վերածում շարժման ակտիվորեն մասնակցած գյուղերը՝ Ղումլուջան, Ղումլուպուջաղը և նոր վերաշինված Ալիկորը, իսկ դրանց բնակիչների մեծ մասին աքսորում Ջուջան գյուղը⁴: Կողոպտվում է ս. Հովհաննու վանքը, որի պատերի տակ հայ խիզախների մի խումբ հերոսաբար կոպում և զոհվում է:

Հայ ազատագրական պայքարի թուլացումից հետո, կանգ չառնելով խոլերայի հետևանքով սեփական բանակի կրած մեծ կորուստների առջև, Հասան խանը 1822 թ. շարունակում է վերոհիշյալ գավառների թալանն ու բնակչության գերեզմարությունը: Դեպի Երևանի ու Մակուի խանության տարածքը են գաղթեցվում ոչ միայն էրզրումի, այլև Վանի ու Կարսի նահանգների մի քանի գավառների բնակիչներ, որոնց մեջ մեծ թիվ են կազմում հայ օրիորդները⁵: Այդ ժամանակ հարյուր ընտանիքից բաղկացած մի նոր խումբ էլ բռնագաղթեցվում է Բայազետ քաղաքից: «Թեև շատ գավառներ ալ գերծ շմնացին անօրենի հարձակմունքեն, — գրում է Պ. Մուրատյանցը, — սակայն Բագրևանդինը՝ (Ալաշկերտի և Խամուրի գավառներ — Ա. Մ.) բոլորովին շաբաթացույց, ուր երկու տարի են ալ ավելի մարդ շիշխեց ոտք կոխել»⁶: Հայ տարա-

¹ Այդ ջոկատի համարձակ գործողությունների շնորհիվ հաջողվում է փրկել բազմաթիվ հայ գերիների, իսկ Մ. Բանեյանն արժանանում է ներսնու Աշտարակեցու շնորհակալական նամակին (Մատենադարան, Ն. Աշտարակեցու արխիվ, թղթ. 166, վավ. 762, թ. 32—34, վավ. 763, թ. 34):

² Տե՛ս «Արարատ», 28 փետրվար, 1889, էջ 115:

³ Տե՛ս Հայկունի Ս., Բագրևանդ, էջ 214:

⁴ «Արարատ», 31 մարտ, 1889, էջ 152:

¹ Տե՛ս Մուրատյանց Պ., նշվ. աշխ., էջ 41:

² Տե՛ս «Արևելյան մամուլ», 15 սեպտեմբերի, 1898, էջ 704—705:

³ Տե՛ս «Արարատ», 28 փետրվար, 1889, էջ 109:

գիրները հալվող կարավանները, կրելով անդուլ տառապանքներ, հասցվեցին Արարատյան դաշտ և Մակուի խանության սահմանները¹: Բռնագաղթից խուսափելու նպատակով բազրեանդից գյուղացիների մի խումբ ապաստանեց Մանազկերտում²: Ինչպես նշվեց նախորդ գլխում, բռնագաղթ և հարկադիր արտագաղթեր եղան նաև Բասենից, Խնուսի, Քրղիի և այլ գավառներից: Պարսիկները պաշարեցին էրզրումը և այն գրավելու համար կաշառեցին սերասկյարին: Միայն շնորհիվ քաղաքի հայ բնակչության համառ դիմադրության, իրանական զորքերը դադարեցրին պաշարումը և նահանջեցին³:

Այս անգամ ևս հայ գաղթականության ստվար զանգվածներ իրենց ազատագրության ուղին տեսան ռուսական տիրապետության տակ անցնելու մեջ: Բայազետում ապրող Արծրունիները տան ներկայացուցիչները փորձեր կատարեցին վերաբնակվելու Քիֆլիսում և կազմակերպելու տարբեր կողմեր բեկորվող հայության ներգաղթը Ռուսաստան⁴: Սակայն այդ ծրագիրը շիրագործվեց, քանի որ հնարավոր չեղավ պարսկական զորքերի կողմից գրավված և քրդերի ասպատակությունների թատերաբեմ դարձած երկրամասից կազմակերպել զանգվածային ներգաղթ, մանավանդ, որ այդ պլանները չէին կարող հավանություն գտնել թուրքական պաշտոնական շրջաններում, իսկ պարսից արքունիքը, իր հերթին, հայերին բռնագաղթեցնում էր պարսկահպատակ գավառներ: Այնուամենայնիվ, այդ օրերին գտնվեցին արևմտահայերի համարձակ խմբեր (հատկապես խնդրո առարկա գավառներից), որոնք, վտանգելով կյանքը, կարողացան դուրս գալ Ռուսաստանի նորահաստատ սահմանները: 1822 թ. Հովակիմ Լազարյանին հասցեագրած նամակում ռուսական տերության մարզերը գաղթած արևմտահայերի մասին ներսես Աշտարակեցին գրում

¹ Տե՛ս «Արարատ», 28 փետրվար, 1889, էջ 151—152: Ժամանակակից իրանական պատմագրության մեջ 1821—1822 թթ. պարսկական զորքերի կողմից հայերի զանգվածային բռնագաղթի փաստը լուրջության է մատնվում կամ տարագրված հայերը ներկայացվում են իբրև ուղիղագրիչներ:

² Տե՛ս Հայկունի Ս., նշվ. աշխ., էջ 165:

³ Տե՛ս Մատենադարան, ձեռագիր № 10195, Թ. 3:

⁴ Տե՛ս Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, Թղթ. 58, վավ. 188, Թիվ. 1:

է. «... ողորմելի բազմութիւնք աղքատաց մերազնեաց տարածելոց ընդ ամենայն սահմանս նշանակեալ կողմանս (Արևմտյան Հայաստանի արևելյան շրջանները — Ա. Մ.) առ ուր որ բարբարոսաց կուան եղեալ, ... բարբախտ զհամարեալ լինին որք մազապուրծ զանձինս և զընտանիւ զօրէն արկեալ... ընդ հովանեաւ դրոշակի կայսերական մեծութեան ամենայն ռուսաց ի Շիրակ գաւառ...»¹: Արխիվային փաստաթղթերից երևում է, որ 1822 թ. Շիրակի դաշտ գաղթածները մեծ թիվ են կազմել, ուստի նրանց տեղավորելու համար ռուսական զինվորական մարմինները հատուկ հանձնաժողով են ստեղծել, որի ջանքերով միայն Գյումրիում բնակեցվել է 500 ընտանիք²: Բացի Շիրակից, արևմտահայ գաղթականների մի խումբ հաստատվել է Լոռիում³: Այդ տարվա օգոստոս-սեպտեմբերին Թուրքիայի արևելյան շրջաններում ստեղծված տնտեսական և քաղաքական ծանր վիճակի հետեվանքով ռուսական սահմաններն են գաղթել մեծ թվով հույներ⁴:

Այսպիսով, մի քանի տարվա ընթացքում պարսիկների կազմակերպած գերեվարության, կողոպուտի, քրդական ցեղերի ասպատակությունների, համաճարակի պատճառով Բայազետի լիվա-փաշայության մի շարք շրջաններ դարձան սակավամարդ կամ լիովին հայաթափվեցին: Այդ հանգամանքն այնքան ակնառու էր, որ շէր վրիպում նաև օտարերկրացիների ուշադրությունից: Ֆ. Ֆոնտոնի և Ն. Ուշակովի ճիշտ գնահատմամբ, այդ գավառների բնակչության այդօրինակ նվազման պատճառը պարսիկների արշավանքներն ու հաճախակի կրկնվող համաճարակներն էին⁵:

Պարսկական բանակի հիմնական ուժերի հեռանալուց հետո, մինչև հաշտության պայմանագրի կնքումը (1823 թ.), Բայազետի լիվա-փաշայության փաստական տերը դարձան քուրդ ցեղապետերը: Նրանք շարունակեցին գյուղացիության

¹ Տե՛ս Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, Լազարյանների արխիվ, Թղթ. 105, գ. 13, վավ. 192, Թ. 1—2:

² Տե՛ս ЦГИА Грузии, ф. 16, оп. 1, д. 2973, л. 1—2, 4—7.

³ Տե՛ս АВПР, ф. Главный архив III-6, д. 4, л. 8.

⁴ Տե՛ս ЦГИА Грузии, ф. 16, оп. 1, дд. 2981, 2985.

⁵ Տե՛ս Fonton F., նշվ. աշխ., «История военных действий», ч. I, с. 88.

թալանն ու «ըստ հաճույս» հարկահավաքութիւնը: Մարդկային նոր գոհեր եղան սիպկանլի քրդական ցեղի առաջնորդ Սուլեյմանի արշավանքների հետևանքով, որոնք, ի թիվս թուրքահայատակ մի քանի գավառների, ծավալվեցին նաև պատմական Բագրևանդի տարածքում¹:

1807—1808 թթ. միջֆեռդալական, միջցեղային կռիվները և 1820—1823 թթ. պարսկա-թուրքական պատերազմը մարդկային ու նյութական մեծ կորուստներ պատճառեցին ամենից առաջ տեղական բնակչությանը՝ հայերին: Հենց այդ ժամանակաշրջանին պետք է վերագրել Ալաշկերտի դաշտի նավրուզ, Քարվչուր, Գումբեթ (Գմբեթ), Թորգոմներ, Վերանցիկ գյուղերի վերացումը, գյուղեր, որոնք հիշատակվում են նաև XVIII դ. Միմեոն Երևանցու «Ջամբո» աշխատությունում²: Բազմաթիվ գյուղեր բնակչության գերեզմարությունից հետո երկար ժամանակ մնացին ավերակ ու ամալի վիճակում³:

Այս իրադարձությունների ընթացքում Ալաշկերտի, Բայազետի ու հարակից մյուս գավառների գյուղերի մի խումբ էլ ավերվելուց ու հայաթափվելուց հետո, բնակեցվեց մասնաբաժանված ժողովուրդներով: 1822 թ. դատարկված հայկական Կյուլասոր և Ալիկոր խոշոր գյուղերում հայտնվեցին պարսիկներ, Տամբատում՝ թուրքեր, Չուրուկ, Մարտո և վերջիններիս շրջակայքում գտնվող ութ գյուղերում՝ քրդեր⁴: Է. Սմիթի՝ Կարաբիլիսայում հիշատակած պարսիկների հայտնվելը⁵ հավանաբար նույնպես տեղի ունեցավ այս ժամանակաշրջանում:

1823 թ. հաշտության կնքումից հետո տիրեց ժամանակավոր խաղաղություն⁶: Քանիցս տարագրված Բայազետի, Ալաշ-

կերտի, Դիադինի և Խամուրի հայություն մի մասը հետզհետե վերադարձավ լքված բնակավայրերը: Արևմտահայ գաղթականների վերադարձն արագացավ հատկապես 1827 թ., երբ մեկ տարի առաջ սկսված ռուս-պարսկական պատերազմի հետևանքով պարսկական իշխանությունները զրկվեցին 20-ական թվականների սկզբին Արևելյան Հայաստանի գավառները գաղթեցված հայությունը տեղում բռնություններ պահելու հնարավորությունից: Որոշ բայազետցիներ ու ալաշկերտցիներ այդ ժամանակ անցան պարսկա-թուրքական սահմանը և վերահաստատվեցին իրենց բնակավայրերում: 1827 թ. գարնանը, երբ ռուսական զորքերը ճոր հաղթանակներ տարան պարսիկների նկատմամբ և պաշարեցին Երևանի բերդը, Հասան խանը, համոզվելով, որ հայերը կարող են շարունակել օգնություն ցույց տալ ռուսներին, փոխեց իր վերաբերմունքը Արևմտյան Հայաստան վերագառնալու ցանկություն ունեցող բնակչության նկատմամբ: Նա՝ ոչ միայն շխոշընդոտեց վերջիններիս վերադարձը. այլև զենքի ուժով նրանց հարկադրեց անցնել թուրքական սահմանը: «Երկիր Արարատեան է իբրև ամայացեալ, — կարողում ենք այդ օրերին գրված արխիվային վավերագրերից մեկում, — իմն անմարդաբնակ ցարդ՝ գալով (Հասան խանը — Ա. Մ.), վարեալ ամենայն բնակչաց հայոց... ի սահման օսմանցուց ընդ հարաւ ի գավառն Պայազդիտո(յ)»¹: Հայ ժողովրդի երկու հատվածների անհամար տառապանքների այդ հեղինակը, եթե հինգ-վեց տարի առաջ արևմտահայերին բռնագաղթեցնում էր Արարատյան դաշտ, ապա այժմ այնտեղից տեղահանում և Արևմտյան Հայաստանի գավառներն էր «վերադարձնում» ոչ միայն նրանց, այլև արևելահայերին: Միայն Մանուկ Բանեյանի ջոկատի ջանքերով և ռուսական բանակի շնորհիվ է, որ պարսիկներին շահջողվեց զանգվածային նոր տարագրություն կազմակերպել Արևելյան Հայաստանից Արևմտյան Հայաստան²:

Այսպիսով, երբ 1827 թ. աշնանը Երևանի խանություն տարածքը գրավվեց ռուսների կողմից, արևմտահայ գաղթա-

¹ Տե՛ս «Արարատ», 31 մարտ, 1889, էջ 152—153:
² Տե՛ս Միմեոն Երևանցի, Ջամբո, էջ 47:
³ Տե՛ս Հայկունի Ս., նշվ. աշխ., էջ 236:
⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 165, 217, 296, Ֆերուհյան Բ. Պ., Ծանապարհորդութիւն ի Բաբելոն ընդ Հայաստան յամի տեառն 1847, էջ 167:
⁵ Տե՛ս Smith E., նշվ. աշխ., հ. 2, էջ 284:
⁶ Այդ խաղաղությունը խիստ հարաբերական եղավ: Քրդերի ավարառությունը շարունակվեց: 1824 թ. փետրվարին նրանք քանիցս ավերեցին Ուշ Քիլիսայի վանքը և նրա համանուն գյուղը, իսկ բնակչությունը ցրվեց տարբեր կողմեր (Մատենադարան, Կարապետ արքեպիսկոպոսի արխիվ, թղթ. 163 բ. վավ. 613, թ. 1—2):

¹ Մատենադարան, ն. Աշտարակեցու արխիվ, թղթ. 166, վավ. 772, թ. 39բ — 40ա:
² Տե՛ս նույն տեղում, վավ. 762, թ. 33—34:

կանները հնարավորութուն ստացան վերադառնալու իրենց բնակավայրերը: Սակայն նրանց մի մասը, չկամենալով նորից կրել դժվարություններ և բռնել հետդարձի ուղին, մնաց տեղում՝ սգներակներով վերածված հայրենի բնակավայրերի փոխարեն նախընտրելով ռուսական տիրապետության տակ անցնող երկրամասը: Այնուհանդերձ, շատերը վերադարձան Արևմտահայաստան: Ըստ արխիվային փաստաթղթերի, 1827—1828 թթ. ընթացքում վերադարձած հայերի թիվը Բալայգետի լիվա-փաշայությունում հասավ 3522 մարդու: Գրեթե անմարդաբնակ դարձած Ալաշկերտ գյուղաքաղաքի բնակչությունը մինչև 1828 թ. սեպտեմբերի վերջը, այսինքն՝ այդ տարում սկսված ռուս-թուրքական պատերազմի հետևանքով ռուսների կողմից այս շրջանների գրավումը, կազմեց 314 ընտանիք (302 հայկական, 12 մահմեդական)², Բալայգետինը՝ 1325-ից մինչև 1331 հայ ընտանիք, 300 մահմեդական ընտանիք³: Մինչև տարեվերջ, օգտվելով ռուսական զորքերի ներկայությունից, վերադարձան նոր գաղթականներ: Բալայգետում հայ բնակչության թիվը հասավ նախ 1487⁴, ապա՝ 1735 ընտանիքի (ավելի քան յոթ հազար մարդ)⁵: Ինչևիցե այս տեղաշարժերից հետո էրզրումի նահանգի նշված գավառներում ազգաբնակչության նախապատերազմյան՝ 1820 թ. թվաքանակը չվերականգնվեց: Այսպես, ռուս վիճակագիրների տվյալներով 1828 թ. սեպտեմբերին Բալայգետի, Գիագինի, Խամուրի և Ալաշկերտի գավառներում ապրում էր հազիվ 3190 հայ ընտանիք և 550 մահմեդական ընտանիք, որը միայն արական սեռից կազմում էր 18 հազ. մարդ⁶ (երկու սեռից մոտ 36 հազ. մարդ), այն դեպքում, երբ դարասկզբին,

ինչպես նշվեց, միայն Բալայգետ քաղաքն ուներ մոտ 25—30 հազ. բնակիչ: Պատահական չէ, որ յուրաքանչյուր 2 քառ. վերստի վրա ապրում էր արական սեռից ընդամենը 15 մարդ: Վերոհիշյալ տեղեկությունները չնչին տարբերությամբ հաստատվում է մեկ այլ վիճակագրությամբ, որի համաձայն նույն տարածքում 1828 թ. սեպտեմբերի 27-ի վիճակով ապրում էր 3203 հայ ընտանիք, 300 տաճիկ ընտանիք (թյուրք) և 40 ընտանիք եզդի²: Համեմատաբար խիտ բնակեցված Բալայգետի լիվայի 817,5 քառ. վերստի վրա ապրում էր 2635 ընտանիք, որի մեծ մասը, ինչպես վերը նշվեց, բաժին էր ընկնում քաղաքին, իսկ մնացածը՝ 20 հայկական, 4 թուրքական և 6 քրդական գյուղերին³:

Հիմնականում այսպիսին էր վիճակը էրզրումի նահանգի արևելյան և մասամբ՝ կենտրոնական գավառներում 1828—1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի նախօրյակին և նրա սկզբնական շրջանում:

3. Հայ ազգաբնակչության տեղաշարժերը Էրզրումի նահանգում 1829—1830 թթ.

1813 թվականին Ռուսաստանի և Պարսկաստանի միջև կնքված Գյուլիստանի հաշտությունը, որով Պարսկաստանը ճանաչում էր Անդրկովկասի մի շարք շրջանների անցումը ռուսական տիրապետության տակ, երկար շարժեց: Անգլո-ֆրանսիական հովանավորների դրդմամբ պարսկական զորքերը 1826 թ. Պարսկաստանի գահաժառանգ Աբաս-Միրզայի հրամանատարությամբ հանկարծակի ներխուժեցին Անդրկովկաս: Սկսվեց նոր ռուս-պարսկական պատերազմը:

1826—1827 թվականների ընթացքում ռուսական զորքերը կարողացան ոչ միայն լիկվիդացնել պարսիկների ժամանակավոր հաջողությունները, այլև, տանելով մի շարք վճռական

¹ ՏՆ՝ս ЦГИА Грузии, ф. 2, оп. 1, д. 2462, л. 6. Ի դեպ, բացի հայերից, այդ տարիներին այս գավառներում հաստատվեցին նաև 538 մահմեդականներ և 200 եզդիներ (նույն տեղում):
² История военных действий, ч. 1, с. 91.
³ ՏՆ՝ս ЦГИА Грузии, ф. 2, оп. 1, д. 2462, л. 3 և 22 ԳԱԱ պատմության ինստիտուտի արխիվ, Լեոյի անձնական № 1 ֆոնդ, ց. 1, գ. 20, ք. 1:
⁴ ՏՆ՝ս ЦГИА Грузии, ф. 2, оп. 1, д. 2462, л. 6.
⁵ ՏՆ՝ս История военных действий, ч. 1, с. 88, 90, Fonton F., նշվ. աշխ., էջ 184, Ս. էփրիկյան, Բալայգետ («Քաղաքակառուց», 1901, № 2, էջ 64):
⁶ ՏՆ՝ս История военных действий, ч. 1, с. 87—88, Fonton F., նշվ. աշխ., էջ 184:

¹ ՏՆ՝ս История военных действий, ч. 1, с. 88, 90, Fonton F. նշվ. աշխ., էջ 184:
² ՏՆ՝ս 22 ԳԱԱ պատմության ինստիտուտի արխիվ, Լեոյի անձնական № 1 ֆոնդ, ց. 1, գ. 20, ք. 1: Այլ տվյալներով վերոհիշյալ շրջա գավառներում հայ բնակչության թիվը եղել է 5 հազար ընտանիք (Մատենադարան, Ա. Հովհաննիսյանի արխիվ, թղթ. 2441, վավ. 267, ք. 1):
³ ՏՆ՝ս История военных действий, ч. 1, с. 88.

հաղթանակներ, գրավեցին Արևելյան Հայաստանի մի ընդարձակ մասը կազմող Երևանի և Նախիջևանի խանությունների տարածքը: 1827 թ. հոկտեմբերի 1-ին հայ կամավորների գործուն մասնակցությամբ գեներալ Պասկևիչի զորքերը գրավեցին Հայաստանում պարսկական տիրապետության ամենաուժեղ ռազմական օբյեկտը՝ Երևանի բերդը: Շահական Պարսկաստանի պարտությունը դարձավ անխուսափելի: Ռուսական զենքի հասցողությանը մեծապես նպաստեցին նաև 1821—1823 թթ. Բայազետի լիվա-փաշայության սահմաններից Արևելյան Հայաստան բռնագաղթեցված հայերը: Պատերազմն ավարտվեց 1828 թ. փետրվարի 10-ին կնքված Քուրքմենչայի հաշտության պայմանագրով, Երևանի և Նախիջևանի խանությունները միացվեցին Ռուսաստանին: Պարսկաստանից շուրջ 40—45 հազար հայեր 1828 թվականի ընթացքում գաղթեցին և հաստատվեցին Ռուսաստանին անցած Երևանի և Նախիջևանի նախկին խանությունների տարածքում, մասամբ՝ Զանգեզուրում, Մեղրիում, Ղարաբաղում և Արևելյան Հայաստանի այլ գավառներում:

Առ այսօր պատմագրության մեջ անուշադրության է մատնվել այս գաղթի հետ կապված մի ուշագրավ դրվագ: Ուսումնասիրողների կարծիքով, Արաքսից հարավ՝ Պարսկաստանին թողնված շրջաններից Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացվող երկրամասերը գաղթած հայերը եղել են միայն պարսկահայեր, կամ ավելի ճիշտ՝ արևելահայեր: Այնինչ, մանրազնին ուսումնասիրությունը համոզում է, որ նրանց մի փոքրաթիվ մասը արևմտահայեր էին և ինչպես նշվեց, Պարսկաստանում հայտնվել էին 1821—1823 թվականներին՝ Բայազետի, Ալաշկերտի, Դիազինի, Խամուրի և հարակից այլ գավառներից ղեպի Պարսկաստան Աբաս-Միրզայի կազմակերպած բռնագաղթի հետևանքով: Սկզբում թուրքական, ապա նաև պարսկական բռնատիրության դառնությունները ճաշակած այդ հայության մեծ մասը տեղացիների հետ նախընտրեց Ռուսաստանի տիրապետության տակ անցած Արևելյան Հայաստանը: Նրանց հիմնական մասը, որ կենտրոնացված էր Մակուի խանության գյուղերում, տեղափոխվեց նորա-

ստեղծ Հայկական մարզի հյուսիսային շրջաններ՝ մասնավորապես Սևանա լճի շրջակայքի գյուղերը¹:

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու ակտը ոգևորությամբ ընդունվեց արևմտահայության կողմից: Արևմտահայ զանազան գավառներից ստացվեցին բազմաթիվ նամակներ՝ ուղղված գեներալ Պասկևիչին, Եփրեմ կաթողիկոսին և Ներսես Աշտարակեցուն, որոնցում հեղինակները իրենց նվիրվածությունն էին հայտնում Ռուսական տերությանը և խնդրում իրենց ևս «ազատագրել» թուրքական լծից²: Այդ օրերին Արևմտյան Հայաստանում եղած ռուս զինվորականներից մեկը գրում է. «Կարելի է հաստատապես ասել, որ մեր զորքերի թուրքիա ներխուժելու դեպքում, իրենք հանձինս հայերի կհանդիպեն հուսալի դաշնակիցներին»³:

Քուրքիայի և Ռուսաստանի միջև հարաբերությունների հետագա սրումը հանգեցրեց պատերազմի: Սկսվեց 1828—1829 թթ. ռուս-թուրքական պատերազմը: 1828 թ. ամռան ամիսներին ռուսական բանակները տարան մի շարք հաղթանակներ: Գրավվեցին ստրատեգիական նշանակություն ունեցող քաղաք-ամրոցներ Կարսը, Ախալքալաքը և Ախալցխան: Օգոստոսի երկրորդ կեսին ռուսական բանակի Երևանյան ջոկատը գեներալ Ճավճավաձեի հրամանատարությամբ մտավ էրզրումի էյալեթի արևելյան գավառները:

Բայազետի և հարևան լիվաների հայերը բազմակողմանի օգնություն ցույց տվեցին ռուսական զորքերին: Արծափեցի Մանուկ Բանեյանը կարողացավ նորից զինել և դուրս բերել կամավորական մի ջոկատ⁴: Շնորհիվ հայ կամավորների ակտիվ գործողությունների և քաղաքի հայության աջակցության,

¹ Տե՛ս Լալայան Ե., Նոր Բայազետի գավառ կամ Գեղարբունիք, Յզգագրական հանդես, 1908, № 2, գիրք 18-րդ, էջ 129—130:

² Տե՛ս ЦГИА Грyз. ССР, ф. 2, оп. 1, д. 2038.

³ ЦГВИА, ф. 450, д. 533, л. 52.

⁴ Ռուսական հրամանատարությանը գրած նամակը, որում Բանեյանը հայտնում էր ուսներին օգնելու իր պատրաստակամության մասին, ընկնում է Բայազետի Բեհլուլ փաշայի ձեռքը: Բանեյանը նեղաբար կանչվում է վերջինիս մոտ և ենթարկվում մահապատժի: Այնուամենայնիվ, ջոկատը կարողանում է միանալ ռուսներին և արագացնել Բայազետի գրավումը, (տե՛ս Արարատ, 1889, № 1—12, էջ 196—197):

նուսները օգոստոսի 28-ին գրավեցին Բայազետը¹: Այդ մասին Ա. Գրիբոեդովը գրում է. «Անհնարին է նկարագրել այստեղի բնակիչների, մեծ մասամբ հայերի հրճվածքը, որոնք դուրս էին եկել դիմավորելու հաղթողներին», մուսուլմանների երկարատև, տանջալի լծից իրենց ազատագրողներին»²: Տեղում կազմավորված 500 մարդուց բաղկացած հայկական կամավորական ջոկատն աճեց և դարձավ 2000-անոց զունդ³:

Շուտով, զենքերալ ճավճավաձեի հրամանով հայկական հեծելազորը գրավում է Գիսդինը, իսկ Խամուրից Բայազետ եկած հայերը իրենց ամրոցի բանալիները հանձնում են ուսական հրամանատարությանը: Դեպքերի այսօրինակ զարգացմանից դժգոհ, էրզրումի սերասկյարը կարգադրում է այրել Ալաշկերտի հայկական գյուղերը, նրանց բնակիչներին բռնագաղթեցնել: Ռուսական զորքերի առաջխաղաղամբ հաջողվում է նոր գերեվարությունից փրկել հարյուրավոր հայերի: Թուրք և քուրդ ասկյարները կարողանում են տեղահանել և ավերել միայն մի քանի գյուղ: Հատկապես ողբերգական է լինում Զլկահանի գյուղի բնակիչների ճակատագիրը: Նրանց մի մասը զոհվում է ճանապարհին, իսկ մյուս մասը՝ գերեվարվում: Սեպտեմբերի 12-ին ուսական զորքերն ու հայ կամավորական խմբերը մտնում են Ալաշկերտ, որի գրավումով ամբողջ Բայազետի լիվա-փաշայության տարածքն ընկնում է ուսանների ձեռքը:

1829 թ. գարնանը, ստանալով օգնություն Անգլիայի, Ֆրանսիայի և Ավստրո-Հունգարիայի կառավարող շրջաններից, թուրքերը վերսկսում են ռազմական գործողությունները և անցնում հակահարձակման: Սակայն տնտեսական ու քաղաքական ծայրատիճան քայքայման հասած Թուրքիան անկարող է լինում դիմակայել ուսական զորքերին:

Հունիսի 19—20-ին Սողանյուղի լեռներում ուսաները նոր հաղթանակ են տանում: Հունիսի 24-ին գրավվում է Վերին

Բասենի վարչական կենտրոն Հասան կալան, Ա. Ս. Պուշկինի խոսքերով ասած՝ «Արզրումի բանալին»¹: Հասան կալայի գրավումով ձախողվում է Բասենի հայ գյուղացիությանը գերեվարելու էրզրումի սերասկյարի ծրագիրը:

Ռազմական գործողությունները մոտենում են էրզրումին: Համոզված լինելով, որ հայերը կարող են անցնել ուսաների կողմը, սերասկյարը նրանց կոտորելու առիթ է փնտրում: Տեղահանվում և էրզրում են քշվում շրջակայքի տասնյակ գյուղերի հայ բնակիչներ: Թուրք զինվորների հսկողությամբ նրանք հարկադրված են լինում խրամներ փորել և ամրացնել քաղաքի պարիսպները: Հալածանքների է ենթարկվում էրզրումի հայ հօգևոր թեմի առաջնորդ Կարապետ արքեպիսկոպոսը²: «Գազազած ուսանների զորքի սովարությունից, — գրում է Ն. Գեղամյանցը, — օսմանցիները, նրանց կրոնամուլ մոլլաները, կատաղի «ղարաղելիները», լեռնեցի «լազերը», սրերը ձեռքերն առած շրջում էին փողոցներում և սրախողիմեան (բարդուղիմեոսյան — Ա. Մ.) գիշերին»³: Բարբախտաբար, այս վիճակը երկար չի տևում: Համոզվելով, որ դիմադրությունն անիմաստ է, սերասկյարը Պասկելիչին է ուղարկում քաղաքի բանալիները: Հունիսի 27-ին առանց մարտի ուսական բանակը մտնում է էրզրում: էրզրումից հետո ուսաները գրավում են Խնուսը, Քրդին, Դերջանը, Բաբերդը: Արևմտյան Հայաստանի մի խոշոր հատվածն ընկնում է ուսական գերիշխանության տակ: Փախած կամ տեղահանված հարյուրավոր հայեր հնարավորություն են ստանում վերադառնալու իրենց հայրենի բնակավայրերը:

Պասկելիչի կարգադրությամբ էրզրումում կազմվում է նահանգային ժամանակավոր վարչություն, որի կառավարիչ է նշանակվում զենքերալ Պանկրատը: Դերջանի լիվայի վար-

¹ Տե՛ս Потто В., Кавказская война, т. 4, Тифлис, 1888, с. 28.

² Պարսամյան Վ. Ա., Գրիբոեդովը և հայ-ուսական հարաբերությունները, Երևան, 1947, նշվ. աշխ., էջ 96—97:

³ Տե՛ս Новые документы о переселении персидских и западных армян в 1828—1830 гг. Գրառ.՝ Մ. Գարբիյան, Բանբեր Հայաստանի արխիվների, 1977, № 9, էջ 12:

¹ Տե՛ս Пушкин А. С. Путешествие в Арзрум во время похода 1829 года. // Пушкин А. С., Полн. собр. соч., изд. 4-ое, т. VI, с. 466.

² Տե՛ս Գեղամյանց Ն., Կարապետ արքեպիսկոպոս, Փորձ, 1876, № 1, էջ 176—182:

³ Նույն տեղում, էջ 184:

շական կառավարումը ուսաների հսկողութեամբ դրվում է տեղի կազմի էմին էֆենդիի տրամադրութեան տակ¹։

Չհաշտվելով կրած ծանր պարտութունների հետ՝ 1829 թ. զարնանը թուրքական հրամանատարությունը Վանի փառաշային հրամայում է անցնել հարձակման Բայազետի ուղղությամբ։ Էրզրումում կազմակերպվում են հակառուսական խռովություններ։ Օգտվելով առիթից, որ Պասկևիչը հիմնական ուժերով գտնվում էր Բաբերդում, քրդերը կողոպտում ու ավերում են Էրզրումի, Դերջանի, Խնուսի, Քրդիի հայկական գյուղերը²։ Կամայականորեն բարձրացվում են հարկերը։ Իսմայիլ բեկի հրամանով Դերջանի գավառից 250 հայ մանուկներ առևանգվում են և թշվում Կ. Պոլիս³։ Քրդերին զսպելու նպատակով Էրզրումից գավառներ են ուղարկվում ռուսական փոքրաթիվ ջոկատներ ու հայ կամավորներից կազմված մի զունդ⁴։

Այդ օրերին հատկապես ծանր էր Ալաշկերտի, Նահինի, Դիադինի և Խամուրի հայ գյուղացիության վիճակը։ Նրանց բնակավայրերը ավերվում են դեպի Բայազետ շարժվող Վանի փառաշայի զորքերի կողմից։ Հունիսի 20-ին թուրքերը պաշարում են Բայազետը, որի պաշտպանությունը իրենց վրա են վերցնում փոքրաթիվ ռուսական կայազորն ու հայ աշխարհազորայինները։ Բայազետի հայ և ռուս պաշտպանները կարողանում են անառիկ պահել քաղաքը՝ փրկելով այնտեղ պատսպարված շրջակա գյուղերի հայ բնակչության խոշոր խմբերին։ Ռուսական պաշտոնական աղբյուրների վկայությամբ, Բայազետում «հայերը կովում էին ու մեռնում ինչպես հերոսներ»⁵։ Փաստերի համադրությունից պարզվում է, որ մինչև 1829 թ. վերջը Բայազետում մեծ թվով հայերի զոհվելու ու շարունակվող համաճարակի հետևանքով այնտեղի բնակիչների բնտանիքների թիվը մոտ 1500-ից իջել է 1143-ի⁶։

¹ ՏՆ՝Ս ՍԳՎԻԱ, ֆ. ՎՄԱ, ձ. 1046, լ. 14.

² ՏՆ՝Ս Ավերյանով Ս. Ի., լուս. սոչ., ռ. 66—68.

³ ՏՆ՝Ս ՍԳՎԻԱ, ֆ. ՎՄԱ, ձ. 1046, լ. 15.

⁴ ՏՆ՝Ս Նույն տեղում, թ. 14 և Գեղամյանց Ե., Պատմական քաղաքներից, ս. 4, էջ 367։

⁵ Սոտո Վ. Геройская защита Баязета, 2-е изд., ՍՊԵ., 1879, ռ. 6—23.

⁶ ՏՆ՝Ս ՍԳՎԻԱ Գրուզի, ֆ. 2, օպ. 1, լ. 2594, լ. 4.

1829 թ. հուլիս-օգոստոսին Բալկանյան ճակատում ռուսների ձեռք բերած խոշոր հաջողությունները ստիպում են սուլթան Մահմուդ 2-րդին հաշտություն խնդրելու։ Սակայն Ռուսաստանը չի կարողանում օգտվել հաղթանակի պտուղներից։ Անգլիան, Ֆրանսիան և Ավստրո-Հունգարիան, որոնք չէին ուզում տեսնել Ռուսաստանի դիրքերի ամրապնդումը Բալկաններում և Արևմտյան Հայաստանում, ռազմական և դիվանագիտական ճանապարհներով ստիպում են հաղթող կողմին համաձայնվելու թուրքերի համար անհամեմատ ձեռնտու հաշտության պայմաններին, որը կնքվում է 1829 թվականի սեպտեմբերի 2-ին Ադրիանապոլսում։ Ռուսական կայսրությանն են անցնում սևծովյան մի քանի նավահանգիստներ, Ախալցխա և Ախալքալաք քաղաքները։ Արևմտյան Հայաստանի գրավված մյուս գավառները վերադարձվում են թուրքիային¹։ Ադրիանապոլսի պայմանագրից միամտաբար մեծ ահնկալություններ ունեցող հայ ժողովրդի հուսահատական վիճակի մասին Պոտտոն գրում է. «Այստեղ, Հայաստանի ճիշտ սրտում, այդ հաշտության մասին լուրը խորը հուսահատության մեջ է դրել ամբողջ մի ժողովուրդ, որը դեպի իրեն է ձգում իր դարավոր արձավիրքներով և բոցավառ սրբատառուչությամբ, որ նպաստել է ռուսական զենքի հաջողությանը և վերջապես այն լուսավոր հույսերով, որոնք նա իր ապագայի համար կապել է ռուսական իշխանության հետ»²։

Օսմանյան կայսրության լծի տակ հեծող հայության վիճակը դառնում է օրհասական։ Թուրքական հրամանատարությունը իր կրած պարտությունների գլխավոր պատճառը համարում էր հայերի գավառաճանությունը և պատրաստ էր, ռուսական զորքերի հեռանալուց հետո, հաշվեհարդար տեսնել նրանց հետ։ Մոլեռանդ մահմեդական հոգևորականությունը դեռ ռուսական բնակիչների ներկայության պայմաններում կոչ էր անում պատժել «գլխավորներին», հրահրում էր քրդա-

¹ Ադրիանապոլսի պայմանագրով անցնող ռուս-թուրքական սահմանագիծը տՆ՝Ս ՍԳՎԻԱ, ֆ. 450, ձ. 403. Генеральная карта пашалыков Баязетского, Каресского, Ахалцыхского и части Арзерумского для объяснения границ 1829 г.

² Սոտո Վ., Кавказская война, вып. 4-й, т. IV, ռ. 471.

կան ավազակախմբերին՝ կողոպտելու հայկական և հունական գյուղերը:

Նիկոլայ I-ին 1829 թ. հոկտեմբերին հղած իր հանրահայտ զեկուցագրում¹ Պասկևիչը ևս հայտնում էր կնքված հաշտությանից հետո Ասիայում ռուսների հաղթանակներին մեծապես նպաստած հայությանը սպառնացող վտանգի մասին և խնդրում թույլտվություն և միջոցներ Ռուսաստանում ապրել ցանկացող հայերի և այլ քրիստոնյաների գաղթը կազմակերպելու համար: Ցանկանալով ստվարացնել Պարսկաստանից և Թուրքիայից Ռուսական կայսրությանն անցած տարածքների հայ աշխատավոր բնակչության թիվը՝ ռուսական կառավարությունն այդ ծրագիրն արժանացրեց հավանության:

Հայ պատմագրությունը բազմիցս անդրադարձել է 1829—1830 թթ. արևմտահայերի գաղթի պատմությանը: Ա. Պերպերյանի, Ծ. Գեղամյանցի, Գ. Աղանյանցի, Մ. Միրախորյանի և այլոց կարծիքով, այդ գաղթը հիմնականում հետևանք է եղել ռուսական զինվորական շրջանների և էրզրումի հայ հոգևոր թեմի առաջնորդ Կարապետ արքեպիսկոպոսի հորդորանքների²: Պահպանված արխիվային վավերագրերից երևում է, որ այն սկիզբ է առել նաև ժողովրդական լայն զանգվածներից և, հասնելով ռուսական ռազմական մարմիններին, կազմակերպված բուլջի է ստացել: Ստանալով հաշտության պայմանագրով գրավված տարածքները Թուրքերին թողնելու լուրը՝ հազարավոր հայեր ռուսների հորդորների տակ ցանկություն են հայտնում գաղթել ռուսական տերության սահմանները: Գաղթելով Ռուսաստան, իրավացիորեն նկատել է լեոն «... հայ ժողովուրդը ինքնաբերաբար, իր սեփական բնազդի թելադրությամբ միակերպ էր լուծում իր ֆիզիկական գոյության պահպանման առեղծվածը, ... ռուսաց տիրապետության տակ գոնե կյանքի և գույքի երաշխավորություն էր»³:

¹ Sб'у ЦГВИА, ф. ВУА, д. 1019, л. 3.

² Sб'у Պերպերյան Ա., Պատմություն հայոց, էջ 71, Գեղամյանց Ծ., Կարապետ արքեպիսկոպոս, Փորձ, 1876, № 1, էջ 187, Աղանյանց Գ., Կարնո գաղթը, Թ., 1891, էջ 4—5, Միրախորյան Մ., Նկարագրական ուղեվորություն, էջ 140—141:

³ Լեո, Հայոց պատմության նորագույն շրջան, մաս 2, էջ 15:

Գաղթելու թույլտվություն ստանալու ակնկալությամբ, էրզրումում ռուսական զորքերի հրամանատար Պանկրատևի, Բայազետում՝ գեներալ Ռեուտի և ռուս այլ բարձրաստիճան զինվորականների հասցեով ստացվում են խնդրագրեր: Պասկևիչի կարգադրությամբ Թիֆլիսում կազմվում է դաղթականական կոմիտե, որը որոշ աշխատանք է կատարում գաղթողներին նյութական միջոցներ տրամադրելու և նրանց նոր վայրերում տեղավորելու համար:

Արդեն 1829 թ. հոկտեմբերին, շսպասելով գաղթի պաշտոնական թույլտվությանը և ռուսական կառավարության նյութական և ռազմական օգնությանը, Բայազետի, Ալաշկերտի, էրզրումի և մի քանի այլ լիվաններից, Կարսի էյալեթից գաղթականների առանձին խմբեր բռնում են գաղթի ճանապարհը: Թուրքական դարավոր լուծն արդեն այնքան անտանելի էր և Ռուսաստանում բարեկեցիկ կյանք գտնելու խաբեկանքն այնքան մեծ, որ, զոհելով շարժական գույքի մի մասը¹, 1829—1830 թթ. ձմռան սառնամանիքների պայմաններում, կրելով բազմաթիվ դժվարություններ, ոմանք անցնում էին ռուս-թուրքական նորահաստատ սահմանը և բնակություն հաստատում Արևելյան Հայաստանի ռուսահպատակ շրջաններում: Այսպես, 1829 թ. վերջին էրզրումի լիվայից Փամբակի գավառն են տեղափոխվում 59 ընտանիք հայ կաթոլիկներ, Բայազետի շրջակա գյուղերից Հայկական մարզ՝ 200 ընտանիք²:

Ռուսական հրամանատարության և հայերի փոխադարձ համաձայնությամբ տարբեր գավառներից գաղթողների համար նախատեսվում է բնակության մի շրջան: Էրզրումի, Բասենի, Բաբերդի, Դերջանի կողմերից գաղթողների համար բնակության վայր է նշանակվում Ախալցխայի էյալեթից Ռու-

¹ Գաղթողների մեջ կային նաև այնպիսի խոշոր հողատերեր, որոնք զոհեցին հսկայական քանակությամբ ունեցվածք: Օրինակ՝ բաբերդցի Հարություն Սեդրոսյանի թողած անշարժ գույքը կազմում էր 150 գյուղ, 10 քարաբնե տուն, 6 այգի, 2 քարվանսարա և այլն: Sб'у ЦГИА Грузии, ф. 2, оп. 1, д. 2594, л. 82.

² Sб'у Новые документы о переселении персидских и западных армян в 1828—1830 гг., РЗУ, 1977, № 3, էջ 21:

սաստանին անցած հատվածը¹: Բայազետի, Ալաշկերտի, Դիա-
դինի, Խամուրի լիվաներից եկողներին բայազետցի Գ. Արծ-
րունու և Վրաստանի հայոց հոգևոր թեմի առաջնորդ Ներսես
Աշտարակեցու խորհրդով որոշվում է բնակեցնել Սեանա լճի
ավազանում²:

Չմոռան նախապատրաստություններից հետո, 1830 թ. վաղ
գարնանը սկսվում է արևմտահայերի զանգվածային գաղթը:
Ռուսական կայսրության մերձակա շրջաններից՝ պատմական
Բագրևանդից և Կարսի էյալեթից գաղթին անցավ բավական
կազմակերպված³: Կարսեցիները բնակվեցին Գյումրիում, Շի-
րակի դաշտում և Թալինի շրջակայքում, բայազետցիներն ու
ալաշկերտցիները՝ Սեանա լճի շրջակայքում, մասամբ նաև՝
Սուրմալուում, Դարաշիշակում, Ապարանում և Փամբակում:

1830 թ. մայիսի 15-ից սկսվում է էրզրումի, Բաբերդի,
Դերջանի, Քըղիի, Սպերի, Վերին և Ներքին Բասենների, Թոր-
թումի, Խնուսի (հատկապես՝ Թեքման նահիեի) գավառների
հայ բնակչության մի մասի գաղթը: Էրզրում — Հասան կալա-
ճանապարհով, — վկայում է դեպքերի ականատես է. Սմի-
թը, — «այս առավոտ հայ գաղթականները շարժվում են դե-
պի Ռուսաստան: Էրզրումից մինչև Վրաստան ճանապարհ-
ները լցված են քրիստոնյա գյուղացիներով: Դրանք էրզրու-
մի դաշտի գյուղացիներն էին: ... Չկար էրզրումի փաշայու-
թյան մի մաս, որտեղից փախուստ չլիներ, բացի էրզինջա-
նից... Իսպիրի և Թորթումի մի մասից»⁴:

¹ Տե՛ս Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 257, վ. 1, թ. 1:
Ի դեպ, Ախալցխայի էյալեթի հյուսիս-արևելյան շրջանները Ռուսաստանին
անցնելուց հետո, այդ վարչամիավորը կազմալուծվում է: Թուրքիային մնա-
ցող Ախալցխայի մյուս գավառները միացվում են էրզրումին, տե՛ս Sal-
name-i, Devlet-i, Aliyi-i, Osmanie, 1265, էջ 45:

² Տե՛ս Դարբինյան Մ., Արևմտահայերի 1829—1830 թթ. գաղթը, ՊՔԸ,
1974, էջ 94:

³ Տե՛ս Դարբինյան Մ., նշվ. լաշխ., ՊՔԸ, 1974, № 2, էջ 94—95:

⁴ Smith E., նշվ. աշխ., հ. 1, էջ 124—140: Երզնկայից գաղթ գրեթե
չեղավ, քանի որ տեղի միջլիվա շաշի Հասան փաշան կարողացավ հար-
կադրել հայերին հրաժարվելու գաղթելու մտադրությունից, տեղում մնալու
դեպքում երաշխավորելով անձի ապահովություն (տե՛ս Մատենադարան,
Կարապետ արք. արխ., թղթ. 1639, վ. 1). Թորթումի և Սպերի առանձին
շրջաններից գաղթ չլինելու պատճառն էլ այն էր, որ հաշտությունից ան-

Տեսնելով, որ երկրամասը զրկվում է հայ աշխատավոր
գյուղացիությունից, հմուտ արհեստավորությունից ու առև-
տրականներից, Բ. Գուռը փորձեց տարբեր միջոցներով ար-
գելք հանդիսանալ գաղթին: Կառավարության դրդմամբ
Կ. Պոլսի հայոց պատրիարքարանից, Արևմտյան Հայաստան
ուղարկվեց Բարգուղիմեոս եպիսկոպոսը: Սակայն գաղթող-
ներին հետ վերադարձնելու նրա բոլոր փորձերն անհաջողու-
թյան մատնվեցին: Էրզրումի նոր սերասկյար նշանակված
Հաշի փաշան դիմեց Պանկրատևին՝ պահանջելով միջոցներ
ձեռք առնել հայերի գաղթը դադարեցնելու համար¹: Թուրքերը
դիմեցին նաև այլ միջոցի. սկսեցին տարածել լուրեր, թե հայ
հոգևորականությունը, օգտվելով ռուսական զորքերի ներկա-
յությունից, բռնություններ տեղահանում է բնակչությանը և
ստիպում գաղթել Ռուսաստան²: Թուրքական լրտեսներին
«հերքելու» նպատակով՝ Պանկրատևը էրզրումում և էյալեթի
այլ բնակավայրերում փակցնել տվեց հայտարարություններ,
որոնցում կրկին բնակչությանը հիշեցվում էր «որ ամեն մի
բնակիչ իրավունք ունի ազատորեն մնալու նախկին բնակա-
վայրում կամ բնակվելու ցանկացած վայրում»³:

Էրզրումից և նրա կենտրոնական լիվաներից հայ գաղթա-
կանների հոծ խմբերը, որոնց թիվը հասնում էր մոտավորա-
պես 7 հազ. ընտանիքի, զանազան պատճառներով, նշանակ-
ված վայրը՝ Ախալցխա հասան միայն մի քանի ամիս հետո⁴:
Նրանց որոշ մասն էլ մնաց Գյումրիում և Շիրազի դաշտի
գյուղերում ու Փամբակում: Գաղթականների այս խոշոր զանգ-
վածը հիմնականում հաստատվեց Ախալցխայի, Ախալքալա-
քի և Մավկայի շրջաններում: Գաղթականական կոմիտեի ցու-
ցումով, արհեստավորներն ու առևտրականները բնակեցվե-
ցին քաղաքներում, իսկ գյուղացիները՝ գյուղական վայրե-
րում:

միջապես հետո ուսանելու այնտեղից դուրս էին եկել, իսկ թուրքական իշ-
խանությունները զենքով ստիպել էին հայերին մնալու տեղերում (Մատե-
նադարան, Կարապետ արք. արխիվ, թ. 163գ, վ. 1173, թ. 1:

¹ Տե՛ս ЦГВИА, ф. ВУА, л. 1046, л. 20.

² Տե՛ս ԲԶԱ, 1977, № 3, էջ 19:

³ Նույն տեղում:

⁴ Մանրամասն տե՛ս Աղանյանց Գ., Կարևո գաղթը, էջ 25—28:

Որքա՞ն էր արևմտահայ գաղթականների թիվը: Պասկևի-
չին հասցեագրած Վրաստանի զինվորական նահանգապետ
Ստրեկալովի հաշվետվությունից երևում է, որ մինչև 1830 թ.
հոկտեմբերի 10-ը ամբողջ Արևմտյան Հայաստանից Անդրը-
կովկաս գաղթած հայերի (մասամբ՝ հունիների) թիվը հաս-
նում էր մոտավորապես 14 հազ. ընտանիքի կամ ավելի քան
83 հազ. մարդով: Նույն փաստաթղթի համաձայն, էրզրումի
և շրջակա գավառներից գաղթածների թիվը կազմում էր 7154
ընտանիք կամ մոտ 40 հազ. մարդ, իսկ Բայազետի լիվա-
փաշայության բնակավայրերից եկածներինը՝ 4215 ընտանիք
կամ՝ մոտ 25290 մարդ²:

Այս հարցում փորձենք մտցնել որոշ ճշտումներ: Թվական
տվյալների համադրությունից երևում է, որ եթե էրզրումի և
նրան հարևան գավառներից գաղթած հայության թվաքանա-
կի մասին տեղեկությունը, որը ներկայացված է էրզրումում
գաղթականների գործերով զբաղվող գեներալ Պանկրատևի
կազմած ցուցակների հիման վրա, համապատասխանում է
իրականությանը, ապա Բայազետի լիվա-փաշայության տա-
րածքից 4215 ընտանիք գաղթելու վերաբերյալ տվյալը՝ շա-
փազանցված է: Այսպես, վկայակոչված նույն զեկուցագրում,
Բայազետից և նրա շրջո գավառներից գաղթածների մասին
նախքան այդ վկայությունը, որը ներկայացրել են Հայկական
մարզի կառավարիչ Վ. Բեհբութովը և գաղթականներին ու-
ղեկցող ենթասպա Արղութինսկին (Արղության), կա նաև
մեկ այլ՝ անուշադրության մատնված տեղեկություն՝ 2528
ընտանիք կամ 14948 մարդ: Այն արդյունք է գաղթականների
ճշգրիտ հաշվառման և ներկայացված է շուրջ երեք տարի
Բայազետում ու նրա գավառում ապրած և իրերին քաջատեղ-
յակ գեներալ Ռեուտի կողմից: Ինչպես երևում է փաստա-
թղթի բովանդակությունից, Վ. Բեհբութովի տվյալը գոյացել
է արևմտահայ տարբեր գավառներից Հայկական մարզ գաղ-
թած հայերի թվից, որոնց մեջ բայազետցիներից ու ալաշ-

կերտցիներից բացի, եղել են մեծ թվով էրզրումցիներ, բա-
սենցիներ, կարսեցիներ, վանեցիներ և այլն: Ուստի, Հայկա-
կան մարզում հաստատված բոլոր գաղթականներին Բայա-
զետի լիվա-փաշայության բնակիչներ համարելը հանգեցնում
է յուրջ սխալների: Հօգուտ Ռեուտի հաշվարկների և մեր պնդ-
ման կան նաև այլ փաստարկներ:

Տարբեր վիճակագրությունների հիման վրա վերը ցույց
տրվեց, որ 1828 թ. սեպտեմբերի վերջին լիվա-փաշայու-
նում ապրում էր մոտ 3200 հայ ընտանիք և, բնականաբար,
այնտեղից մեկ-երկու տարի անց չէր կարող արտագաղթել
4215 ընտանիք, այն էլ այն դեպքում, երբ 1829 թ. ընթաց-
քում բնակչության թիվն ավելի էր նվազել հունիսին՝ Բայա-
զետի պաշտպանության ընթացքում և սաստկացած համա-
ճարակի հետևանքով: Եթե անգամ ընդունենք, որ 3200 ըն-
տանիք լինելու տեղեկությունը իրականից պակաս է հազա-
րով, դարձյալ հնարավոր չի լինի աչքաթող անել այն իրողու-
թյունը, որ 1829—1830 թթ. գաղթել են ոչ բոլորը և տեղում
մնացած հայերի (իհարկե նաև տարբեր գավառներից եկած-
ների) հաշվին Բայազետի, Դիարդինի, Խամուրի և Ալաշկեր-
տի գավառները երկար ժամանակ մնացել են իբրև Արևմտյան
Հայաստանի հայահավաք շրջաններ¹: Վերջապես, թույլ տրը-
ված սխալը աչքի է զարնում նաև այնտեղ, որ 1829—1832 թթ.
կամերալ ցուցակագրության տվյալների համաձայն միայն
Հայկական մարզում, այսինքն՝ Բայազետի գավառներից գաղ-
թածների հանգրվանած երկրամասում, բնակչություն են հա-
տատել 3682 ընտանիք կամ 21666 արևմտահայեր²: Հայտնի
է, որ նրանց մեջ, բացի բայազետցիներից ու ալաշկերտցի-
ներից, մեծ թիվ են կազմել նաև Արևմտյան Հայաստանի այլ
գավառներից եկած գաղթականները, հատկապես կարսեցի-
ները, էրզրումցիները, բասենցիները, վանեցիները և այլն:
Նույնիսկ Հայկական մարզում հաստատված բոլոր 3682 ըն-
տանիք արևմտահայերին Բայազետի գավառների բնակիչներ
համարելու դեպքում, չենք ստանում 4215 ընտանիք: Հաս-

¹ Տե՛ս ЦГИА Грузии, ф. 2, оп. 1, д. 2594, л. 314—315, հմմտ.
Новые документы о переселении персидских и западных армян в
1828—1830 гг. *РЗУ*, 1977, № 3, էջ 20—21:

² Տե՛ս նույն տեղում:

¹ Տե՛ս ЦГВИА, ф. 450, д. 77, л. 28.

² Տե՛ս Шопен И. Исторический памятник состояния Армянской
области в эпоху ее присоединения к Российской империи. СПб.,
1852, с. 539—540, 639—642.

կանալի է, որ այս գավառներից գաղթած հայության թիվը շափազանցված է և իրականում կազմել է մոտ 2500 ընտանիք կամ 15 հազար մարդ: Հետևաբար, 1829—1830 թթ. Արևմտյան Հայաստանից գաղթել է ոչ թե 14 հազ. ընտանիք կամ 85—90 հազ. մարդ, ինչպես ընդունված է պատմական գրականության մեջ¹, այլ ընդամենը՝ մոտ 12300 ընտանիք կամ 74 հազ. մարդ, որից 9682 ընտանիք (7154 + 2528) կամ 58 հազ. շունչը՝ էրզրումի նահանգից: Նշենք նաև, որ գաղթածների թվում էին նաև հույներ² և եզդի քրդեր³:

Ի՞նչ նշանակություն ունեցավ 1829—1830 թթ. արևմտահայերի զանգվածային գաղթը: Խնդրի քննությանը պետք է մոտենալ Արևմտյան Հայաստանում գաղթից հետո ստեղծված իրավիճակի և Անդրկովկասում հայերի բնակեցման հետևանքով տեղի ունեցած էթնիկական և սոցիալ-տնտեսական տեղաշարժերի տեսանկյուններից:

Փորձենք Արևմտյան Հայաստանում գաղթի հետևանքները վերլուծել էրզրումի էյալեթի օրինակով, քանի որ այն այդ խոշոր տեղաշարժերից ամենատուժած երկրամասերից էր: Ինչպես վերը նշվեց, էրզրումի նահանգից գաղթականների ամենահոծ խմբերը հեռացան էրզրումի, Վերին և Ներքին Բասենների, Ալաշկերտի, Բայազետի գավառներից: Գաղթից հետո այդ շրջաններում կարելի էր հանդիպել տասնյակ հայալքված բնակավայրեր: Հատկապես հայազրկվել էին այն բնակավայրերը, որոնք ազգային կազմով միատարր չէին և ավելի անմիջականորեն ու ավելի խիստ պայմաններում էին կրում ազգային ու սոցիալական ճնշման դառնությունները: Եթե այստեղի բնակավայրերի մի մասը հետագայում կրկին

¹ Տե՛ս Երեցյանց Ա., Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի Հայք 19-րդ դարում, հ. Ա., էջ 442, Գեղամյանց Ե., Պատմական քաղվածքներ, պրակ 4, էջ 376, Գրիգորյան Զ. Տ., Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին և նրա պատմական նշանակությունը, Երևան, 1978, էջ 298, Հայ ժողովրդի պատմություն, հ. 5, Երևան, 1974, էջ 191 և այլն:

² Հույների գաղթի մասին տե՛ս ЦГИА Грузии, ф. 16, д. 10766, ф. 2, дд. 1990, 2542, 2575, 2594 և այլն:

³ Տե՛ս ЦГИА Грузии, ф. 2, д. 2236, Մատենադարան, Ն. Աշտարակեցու արխ., թղթ. 166, վ. 906, թ. 104 և Народы Кавказа. Этнографические очерки АН СССР, т. II, М., 1962, с. 602—603.

բնակեցվեց, ապա գտնվեցին նաև այնպիսիները, որոնք մեկընդմիջտ կորցրեցին իրենց հայ բնակիչներին՝ անցան քրդերի ու թուրքերի ձեռքը կամ էլ դարձան անմարդաբնակ վայրեր:

էրզրումը զրկվեց հիմնականում հայ առևտրականներից և արհեստավորներից, որոնք, ինչպես հայտնի է, Թուրքիայում մեծ դեր ունեին տնտեսության համապատասխան ճյուղերի զարգացման գործում: Մատենադարանի արխիվային վավերագրերից մեկի համաձայն, էրզրում քաղաքից գաղթածների թիվը կազմում էր 3200 ընտանիք¹, այսինքն՝ մոտավորապես 20 հազար մարդ: «էրզրում քաղաքը, — հանդիպում ենք այդ օրերին գրած գեներալ Պանկրատևի զեկուցագրերից մեկում, — կորցրեց իր բնակիչներից ամենաաշխատասեր մասը, այնպես, որ թուրքերը դժվարանում են վերաշինել իրենց ջրախողովակները և զբաղվել հասարակ արհեստներով»²: Նույն դառը ճակատագրին արժանացան նաև էյալեթի մի քանի այլ քաղաքներ: Բայազետի հայ բնակչության թիվն այնքան էր նվազել, որ տեղում մնացած հայերը կազմում էին ընդամենը 190 ընտանիք³ և թվաքանակով գրեթե հավասարվել էին փոքրաթիվ քրդերին⁴: է. Սմիթի վկայությամբ, այդ ժամանակ Դիադինում մնացել էր երեք, Խորասանում՝ հիսուն, Մժնկերտում՝ քսանյոթ հայ ընտանիք, իսկ Հասան կալան լիովին հայաթափվել էր⁵: Ամայի և սակավամարդ վայր էր դարձել Բաբերդը⁶:

Սակայն որքան էլ պատկառելի էր էրզրումի և Արևմտյան Հայաստանի արևելյան էյալեթների քաղաքներից գաղթած բնակիչների զանգվածը, գաղթողների մեծագույն մասը բա-

¹ Տե՛ս Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 64, վ. 506, թ. 1 և թղթ. 68, վ. 411, թ. 1:

² Новые документы о переселении персидских и западных армян в 1828—1830 гг.

³ Տե՛ս Smith E., նշվ. աշխ., հ. 2, էջ 270:

⁴ Տե՛ս Վազներ Մ., Ճանապարհորդություն ի Հայաստան, թարգ. Փ. Ճամճյան, Վիեննա, 1851, էջ 141:

⁵ Տե՛ս Smith E., նշվ. աշխ., հ. 1, էջ 140, 146—148, հ. 2, էջ 270, 272:

⁶ Տե՛ս Потто В., Кавказская война, т. IV, с. 442.

ժին էր ընկնում գյուղացիությանը: 1830 թ. աշնանը այդ շրջանների հարյուրավոր հայկական գյուղեր անմարդարնակ ու լքված գավրիներ էին: Շատերում զգալի նվազել էր հայ բնակիչների թիվը: Գյուղերի մի ամբողջ խոշոր խումբ էլ զավթվել էր Ախալցխայի էյալներից Ռուսաստանին անցած զավառներից եկած մահմեդականների կողմից¹: Նախկինում մարդաշատ գյուղեր Մոլլա-Սուլեյմանում և Խաստուրում մնացել էին 25-ական, Իրիցու գեղում՝ 10—12, Ալիճագրակում՝ 10 ընտանիք հայ² և այլն: էրզրումի Արշունի, Խնուսի Քյուլլի և Քաթոս ու մի շարք այլ գյուղեր, զավթվելով քուրդ, թուրք բնակիչների կողմից, մեկընդմիջտ զրկվեցին հայկական տարրից³: Այսպես. անգլիացի ուղեգիր Բրանտը այդ կարգի գյուղերից մեկի՝ վերոհիշյալ Քյուլլի մասին 1888 թ. հիշում է. «Այնտեղ նախկինում կային շատ հայ ընտանիքներ: Ինձ ասացին, որ 200-ը էմիգրացվել են Վրաստան և այժմ, այս ավերակների մեջ ապրում են ավելի քան 15 մահմեդական ընտանիքներ»⁴: Քյուլլիից ոչ հեռու ընկած Քաթոսը բնակեցվեց թրքացած քրդերով⁵: Մի քանի տասնամյակ անց ամբողջ Քեքման նահիեն, որը Խնուսի գավառի երեքմեկի հայաշատ գյուղախմբերից էր, գրեթե լիովին դարձավ քրդաբնակ⁶:

Տեղում մնացող հայ գյուղացիության մի փոքրաթիվ մասը, վախենալով թուրքերի վրեժխնդրությունից և հավատալով անձի ապահովություն ստանալու պապական քարոզիչների հորդորանքներին, ինչպես վերը նշվեց, ընդունեց կաթոլիկություն: Այդ երևույթը հատկապես նկատելի էր Ալաշկերտի դաշտի գյուղերում⁷:

Օսմանյան կառավարությունը, տեղի թուրք և քուրդ ֆեոդալներն իրենց տնտեսական վնասները սկսեցին հոգալ ի հաշիվ շգաղթած հայ գյուղացիության: Բարձրացվեցին հարկե-

րք, տասնյակ հայկական գյուղեր տարբեր մեքենայությունների ճանապարհով զավթվեցին թուրք և քուրդ աղալարների կողմից¹: Ռուսաստանին անցած շրջաններից եկած մահմեդական բնակչությունը հիմնականում հաստատվեց Վերին և Ստորին Բասենների, էրզրումի, Քորթումի և Սպերի դատարկված հայկական գյուղերում²:

Այսպիսով, արևմտահայերի զանգվածային այս գաղթը Արևմտյան Հայաստանի, հատկապես նրա արևելյան շրջանների համար ունեցավ ծանր հետևանքներ: Տասնյակ հազարներով կրճատվեց հայ բնակչության թիվը, ուժեղացավ ազգային և սոցիալական ճնշումը, անկում ապրեցին արհեստներն ու առևտուրը, անմշակ վիճակում թողնվեցին հազարավոր հեկտար հողատարածություններ:

Այսուհանդերձ, Արևմտյան Հայաստանում ստեղծված սոցիալ-տնտեսական և քաղաքական ծանր կացությունը չի կարելի համարել միմիայն վերոհիշյալ գաղթի անմիջական հետևանք: 1828—1829 թթ. պատերազմական գործողությունների ընթացքում մի խումբ հայկական բնակավայրեր ավերվեցին թուրքական բանակի և քուրդ ավազակախմբերի կողմից, նրանց բնակիչների մի մասը գերեվարվեց, քշվեց Փոքր Ասիայի խորքերը կամ ոչնչացվեց: Ռուսներին համառ դիմադրություն ցույց տված Բաբերդը Պասկևիչի կողմից վերածվեց ավերակների, իսկ բնակչության մեծ մասը՝ 11 հազար մարդ, այդ թվում հայեր, զոհվեց, իսկ մյուս մասը՝ ցրվեց զավառի գյուղերը³: Բազմաթիվ հայեր սրի քաշվեցին թուրք սակյարների ու մոլլաների ձեռքով էրզրումի փողոցներում և

¹ Տե՛ս Մատենադարան, Չոնազան հեղինակների արխիվ, թղթ. 54, վ. 13¹, թ. 50, և վ. 13², թ. 20—21:

² Ռուսաստանին անցած շրջաններից զավթած մահմեդականների թվի մասին աղբյուրներում ավայնիք չկան: Սակայն, դատելով 1828—1829 թթ. առգմական գործողությունների ժամանակ մահմեդական բնակչության մի մասի ֆիզիկական ոչնչացման և Արևմտյան Հայաստանում նրանց մի այլ հատվածի բնակվելուց հետո լուրջ էթնիկական տեղաշարժերի բացակայության փաստից, կարծում ենք, որ վերջիններս ստվար զանգված չեն կազմել:

³ Տե՛ս Մատենադարան, Սենեքերիմ Տեր-Հակոբյանի արխ., թղթ. 74թ. վ. 84, թ. 1, Սերեկեց, Ի Հայաստան ճանապարհորդության արկած մը, Արևելյան մամուլ, 1876, էջ 297, Պերպերյան Ա., Հայոց պատմություն, էջ 206—207:

¹ Տե՛ս ЦГВИА, ф. ВУА, д. 1109, л. 1—12, Smith E., նշվ. աշխ., գ. 1, էջ 120—149, գ. 2, էջ 268—306:

² Տե՛ս Smith E., նշվ. աշխ., գ. 2, էջ 288—289:

³ Տե՛ս Բազմավեպ, 1907, № 9—10, էջ 470:

⁴ Линч Х. Ф. Б., Армения, т. II, с. 244.

⁵ Տե՛ս Колубакин А. М. Материалы, т. I, ч. II, с. 126.

⁶ Տե՛ս Линч Х. Ф. Б., Армения, т. II, с. 319.

⁷ Տե՛ս Smith E., նշվ. աշխ., գ. 2, էջ 289:

գյուղերում 1829 թ. մայիս-հունիս ամիսներին: Քրդական հրոսակներին զոհ գնացին հարյուրավոր անմեզ հայեր Քըզլի, Խնուսի, Ալաշկերտի, Դիաղեհի, Բայազետի և այլ գավառների գյուղերում: Քիչ թիվ չէին կազմում նաև այն կամա-վորները, որոնք կովելով ռուսական բանակում, զոհեցին սեփական կյանքը: Վերջապես, բնակչության նվազմանը նպաստեց 1827—1829 թթ. սարսափելի ժանտախտը, որը հնձեց հատկապես էրզրումի, Բասենի և Բայազետի գյուղերի բնակչությանը: 1827 թ. օգոստոսին սկսված ժանտախտի պատճառով էրզրումից հայ գաղթականների մի քանի խումբ հեռացավ զանազան կողմեր, հատկապես՝ Արևելյան Հայաստան և Թիֆլիս¹: Ժանտախտը սաստկացավ հատկապես սեպտեմբերին և հիմնականում ընդգրկեց էրզրումի և Բասենի դաշտերը: «Ի սեպտեմբերն 15-էն մինչև 29-ըն, — կարդում ենք մի փաստաթղթում, — օրն քսան մարդ, քսանհինգ, կամ երեսուն. ի սոյն ախտէս վտանգեալք մեռանին»²: Համաճարակը շարունակվեց նաև հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին և մարդկային նոր զոհեր պատճառեց այդ գավառների բնակչությանը³: Անշուշտ, վերը նշված պատճառներով ևս պետք է բացատրել Արևմտյան Հայաստանում 30-ական թվականների սկզբին ստեղծված սոցիալ-տնտեսական և քաղաքական ծանր կացությունը:

Ինչ էթնիկական հետևանքներ ունեցան վերոհիշյալ տեղաշարժերը Արևմտյան Հայաստանի համար: 1829—1830 թթ. գաղթից մեկ և կես տասնամյակ հետո անցկացրած պաշտոնական մարդահամարի տվյալներից երևում է, որ Օսմանյան կայսրության ասիական մասում հայերը կազմում էին մոտ 2 մլն մարդ⁴:

1854 թ. ապրիլին հրատարակած «Պատերազմի հայտարարումը: Արևելյան հարցի ծագման պատմության շուրջ» հոդվածում Կ. Մարքսը գրում է. «Օսմանյան կայսրությունում

¹ Տե՛ս Մատենադարան, Կարապետ արք. արխիվ, թղթ. 163գ, վ.վ. 1010, 1012, 1013, 1016, և Վազներ Մ., նշվ. աշխ., էջ 170:

² Մատենադարան, Կարապետ արք. արխիվ, թղթ. 163գ, վ.վ. 1022, թ. 1:

³ Տե՛ս նույն տեղում:

⁴ Տե՛ս Համբարյան Ա., Արևմտահայերի թվաքանակի հարցի շուրջ, ԲՆՀ, 1969, № 2, էջ 93:

կան 13730000 ուղղափառ հույներ, 2400000 հայ, և 900000 կաթոլիկ»¹: Այլ տեղեկությունների կամ հաշվումների համաձայն, այդ ժամանակ արևմտահայերի թիվը մոտ 3 մլն էր²: Նշանակում է՝ 19-րդ դարի առաջին քառորդի համեմատությամբ, դարի կեսին, այնուամենայնիվ, հայ բնակչության որոշ աճ նկատվել էր, թեև վերոհիշյալ գաղթի ընթացքում տասնյակ հազարավոր մարդիկ արտագաղթել էին:

1830 թվականից հետո հայ բնակչության թվական գերազանցությունը եկվոր էթնիկական տարրերի նկատմամբ, պահպանվեց նաև Արևմտյան Հայաստանի այն նահանգներում, որոնք ամենից շատ տուժեցին արտագաղթից: Մեր հաշվումներով դարասկզբին կոնկրետ էրզրումի նահանգում, ոչ լրիվ տվյալներով, ապրում էին ավելի քան 400 հազ. քրիստոնյա և մահմեդականացրած հայեր, իսկ 1820—1830 թթ. ընթացքում արտագաղթել է կամ համաճարակների հետևանքով մահացել, զոհվել կամ սպանվել քրդերի ձեռքով շուրջ հարյուր հազար մարդ, ապա միայն վերոհիշյալ նահանգում հայերի թիվը պետք է նորից անցներ 300 հազարից:

Արդեն 1830—1831 թթ. սկսվեց մի նոր գործընթաց, որը ամբողջ 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին տասնամյակներին դարձավ Արևմտյան Հայաստանի ժողովրդագրական զարգացման զլխավոր ուղղությունը: Պատմական Հայաստանի տարբեր, հիմնականում՝ արևմտյան և հյուսիսային գավառներից հայ բնակչությունն սկսեց հոսել դեպի Ռուսաստանի նորահաստատ սահմաններին մոտ ընկած գավառները, մասնավորապես՝ Բասեն, Ալաշկերտ, Նահին, Բայազետ: Բանն այն է, որ Ռուսաստանին հարակից շրջաններում ազգային և սոցիալական ճնշումն անհամեմատ թույլ էր և պետական սահմանն անցնելու հնարավորությունն ավելի մեծ³,

¹ Маркс К., Объявление войны. — К истории возникновения восточного вопроса //Маркс К. и Энгельс Ф., соч., т. 10, с. 171.

² Տե՛ս Մատենադարան, կաղաքայինների արխ., թղթ. 108, գ. 96, վ. 82, թ. 16, «Բանասեր», Կ. Պոլիս, 1851, № 11, էջ 496—497, Շահնազարյանց Կ., Մրազիբ պատմության Հայաստան աշխարհին/Կոտեև հայոց աշխարհին, Թիֆլիս, 1863, օգոստոս, էջ 613:

³ Տե՛ս Մատենադարան, Զանազան հեղինակների արխ., թղթ. 54, վ. 132, թ. 23բ:

որի համար բնակչության հստակությունն արևմուտքից արևելք ձեռք էր բերում քաղաքական երանգ: Անգամ գաղթի ամենաթեթև օրերին Հայաստանի մի քանի գավառներից առաջին գաղթականները տեղափոխվեցին դեպի արևելք և հարավ-արևելք և բնակվեցին գաղթածների գյուղերում: Այսպես, 1830 թ. Համշենից եկած մի խումբ բնակիչներ հաստատվեցին էրզրումի դաշտում և վերաշինեցին ընդամենը երկու ընտանիք մնացած Կրզըլ-թիրխա գյուղը¹:

Առաջին հայացքից թվում է, թե արևմտահայերի գաղթից հետո Թուրքիայում ընդունված ղշաղուլթյան սովորույթի «արտոնությունից» օգտվող քրդերը Բայազետի, Ալաշկերտի և էրզրումի հարավարևելյան գավառների հայալքված գյուղերում, դառնալով միանձնյա տերեր, պետք է այսուհետև անցնեին նստակեցություն, հրաժարվեին կիսաքոչվորական կենցաղից: Սակայն պորտաբույծ կյանքին սովոր քուրդ ցեղապետերը ոչ միայն չհրաժարվեցին քոչվորությունից, այլև շարունակեցին գաղթից տուժած հայկական գյուղերի պարբերական կոչոպուտն ու ղշալի «իրավունքով» հայկական օջախներում «հյուրընկալվելու» պրակտիկան: Հետևաբար, քրդախառն գավառներում դատարկված գյուղերի մեծ մասը քրդաբնակ չդարձավ: Քրդերի թիվը 30—40-ական թվականներին վերոհիշյալ լիվաներում դարձյալ չգերազանցեց մի քանի հարյուր ընտանիքից: Մարդաթափված գավառների մի մասը, ինչպես նշվեց, նորից հայացավ Արևմտյան Հայաստանի զանազան շրջաններից եկած նորեկների հաշվին: Հայ բնակչության վերաբնակեցումը հատկապես արագ ընթացավ պատմական Բագրևանդում: Այդ երևույթը ճիշտ ըմբռնած Ս. Հայկունին հետագայում գրում էր. «Բագրևանդայ համար ընդհանուր սովորութիւն դարձած է, թերևս պատմական ժամանակներէ մնացած. երբ յեղափոխական մի շարժում կը պատահի (հիմնականում ի նկատի ունի ոռւս-թուրքական պատերազմները — Ա. Մ.), ժողովուրդն խոյս կտայ, երբ խաղաղութիւն կը լինի, տակաւ առ տակաւ նոր ժողովուրդ որոյ տեղն կը բռնեն, տեսնելով պատուական ջրեր, բերրի հող,

հագուով, սրտով կը կապուին, կը մնան մինչև մի քրդական կամ պարսկական և կամ օսմանյան խլրտում յառաջ գայր, ժողովրդական խաղաղ վիճակ վրդովէր, որով կստիպուէին իւրեանց նախորդաց օրինակին հետեիլ, խոյս տայ»¹:

Իհարկե, միաժամանակ սխալ կլիներ կարծել, որ Արևմտյան Հայաստանի Ռուսական կայսրությանը սահմանամերձ գավառներում անմիջապես գաղթից հետո վերոհիշյալ գործընթացը մեծ մասշտաբներ ընդունեց: 30-ականների սկզբին նրա վերաբերյալ կարելի էր խոսել միայն իբրև նոր սկզբնավորվող միտումի մասին: Սակայն, որ այն արդեն նկատելի էր, երևում է թեկուզև ժամանակի ականատես բողոքական քարոզիչ է. Սմիթի ճանապարհորդական նոթերից: Նա 1830 թ. ամռանը՝ զանգվածային գաղթի օրերին ցավով արձանագրում է երկրամասի դատարկվելու փաստը և մտավախություն ապրում, որ հայերի շրջանում այդ պատճառով բողոքականություն տարածելու իրենց ձեռնարկումները կարող են մնալ անարդյունք: Բայց շանցած մեկ տարի՝ 1831 թ. ապրիլին, երբ արդեն առաջին հայ վերաբնակիչները վերաշինում էին լքված բնակավայրերը, ռեզոլված ամերիկացի քարոզիչը գրում էր. «Մենք չենք կասկածում, որ հայ բնակչությունը նորից կհավաքվի այստեղ և (այն — Ա. Մ.) կարող է դառնալ քարոզչական գործունեության համար կարևոր կենտրոն»²: 30-ական թվականներին թողնված հայկական գյուղերը դանդաղորեն վերաշինվում էին նաև Անդրկովկաս տեղափոխված գաղթականների այն փոքրաթիվ մասի կողմից, որն ընկնելով ոռւսական տիրապետության տակ, և չգտնելով սպասված բարվոք վիճակը, վերադարձել էր իր բնակավայրը³:

¹ Հայկունի Ս., Բագրևանդ, էջ 120—121: Առաջ անցնելով նշենք, որ այս գործընթացը 19-րդ դարում այնպիսի ծավալային շահեր ընդունեց, որ արդեն դարի վերջին տասնամյակներին Ռուսաստանին սահմանամերձ գավառներում նորեկ հայ բնակիչները թվաքանակով գերազանցեցին տեղացիներին և նրանց բարբառի ազդեցությամբ փոխվեց անգամ այնտեղի, հատկապես՝ Բագրևանդի գավառաբարբառը, տե՛ս նույն տեղում, էջ 240:

² Smith E., նշվ. աշխ., հ. 2, էջ 306:

³ Տե՛ս Մատենադարան, Կարապետ արք. արխ., թղթ. 163գ, վ. 4216, թ. 1, վ. 1223, թ. 1, թղթ. 163դ, վ. 1331, թ. 1—3, վ. 1403, թ. 1, թղթ. 163ե, վ. 78, թ. 1, վ. 68, թ. 1, վ. 79, թ. 1, վ. 90, թ. 1, և ЦГИА Гр.-ЗНХ, ф. 11, д. 418, док. 713, ф. 2, оп. 1, дд. 3396, 4587, 4619.

¹ Տե՛ս էփրեկյան Ս., Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. Ա., էջ 492:

Ի՞նչ հետևանքներ ունեցավ արևմտահայերի ներգաղթը Անդրկովկասի համար: Թուսական կառավարության ցույց տված բավարար օգնության բացակայության պատճառով, նորաստեղծ Հայկական մարզ և Անդրկովկասի այլ շրջաններ գաղթած արևմտահայերին պահանջվեցին տարիներ՝ իրենց նոր հայրենիքում հարմարվելու, նոր տներ կառուցելու, տրնտեսություն հիմնելու համար: Ենորհիվ քրտնաջան աշխատանքի արդեն 30-ական թվականների կեսին գաղթականների մեծագույն մասը կարողացավ հաղթահարել բազմաթիվ դժվարություններ և ամուր հաստատվել նոր վայրերում:

Պարսկական և թուրքական տիրապետությունների ժամանակաշրջանում Անդրկովկասի քրիստոնյա բնակչության թիվը զգալիորեն նվազել էր: Թուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմների օրերին ոչնչացվել էր տեղի բնակչության մի մասը: Հատկապես շատ էր տուժել Արևելյան Հայաստանը, որն ընդամենը մի քանի տասնամյակ առաջ հայաշատ երկրամաս էր: Յուրաքանչյուր մահալում կարելի էր գտնել ընդամենը մի քանի հայկական գյուղ, որոնք անմասն էին մնացել բնակչության բռնադադթի, ոչնչացման պարսկա-թուրքական «միջոցառումներից»¹: Նույն վիճակն էր Ախալքալաք, Ախալցխա քաղաքներում և նրանց շրջակա գյուղերում²: Արևմտահայերի 1829—1830 թթ. դանգվածային գաղթից հետո Անդրկովկասի մի շարք գավառների էթնիկական պատկերը էականորեն փոխվեց: Տասնյակ հազարավոր պարսկահայերի և արևմտահայերի ներգաղթի հետևանքով Արևելյան Հայաստանում քրիստոնյաները տոկոսային հարաբերությամբ նորից գերազանցեցին մահմեդականներին: Գլխավորապես Բայազետի, Ալաշկերտի, Դիաղինի և մասամբ Խամուրի լիվաններից եկած բնակչության հաշվին վե-

¹ Ավգալբեկյան Խ. Հ., Հողային հարցը Արևելյան Հայաստանում, Ե., 1959, էջ 15:

² Ախալցխան, ըստ Ինճիճյանի, մինչև գաղթը՝ դարասկզբին ուներ 30 հազ. տուն բնակիչ, որ պետք է հասկանալ նույնքան բնակիչ: Ախալքալաքի բնակչությունը բաղկացած էր 600 ծովա հայերից և վրացիներից (Ինճիճյան Գ., Աշխարհագրություն, էջ 124, 127): 1828—1829 թթ. ոսղմական գործողությունների, լազերի հարձակումների հետևանքով հին Ախալցխան ավերվել էր (Դարբինյան Մ., Նշվ. աշխ., ՊՔԷ, 1974, № 2, էջ 98), իսկ Ախալքալաքը դարձել էր անմարդաբնակ (Լալայան Ծ., Երկեր, հ. 1, էջ 39):

րակենդանացան Սևանա լճի շրջակայքի գավառները: Բայազետ քաղաքից գաղթած հայ արհեստավորներն և առևտրականները լճի ափին հիմնադրեցին քաղաք, որը հետո վերանվանեցին Նոր Բայազետ: Գյուղացիները շենացրին տասնյակ գյուղեր: Էրզրում քաղաքի գաղթականները Ախալցխայի հին թաղամասի դիմաց, Փոցխով գետի աջ ափին, որտեղ բանջարանոցներ էին, հիմնադրեցին նոր և ընդարձակ մի թաղամաս: Ի տարբերություն հին քաղաքի, նորը, որը կոչվում էր Պլան, կառուցվեց նախապես մշակված հատակագծի համապատասխան: Նոր Ախալցխայի հիմնադրման հանդիսավոր արարողությունը տեղի ունեցավ 1830 թ. օգոստոսի 15-ին՝ ռուսական զորքերի կողմից քաղաքի գրավման տարեդարձի օրը: Եուտով էրզրումցի արհեստավորներն իրենց բարի համբավը հաստատեցին նաև Ախալցխայում՝ այն դարձնելով Անդրկովկասի խոշորագույն արհեստավորական քաղաքներից մեկը: Արհեստավորներն Ախալցխայում ստեղծեցին Անդրկովկասի խոշորագույն արհեստավորական համբալուծություններից մեկը²:

1831 թ. Ախալցխայից մի քանի ընտանիք էրզրումցի գաղթականներ տեղափոխվեցին Ախալքալաք: Քանի որ հին քաղաքն ավերվել էր, իսկ բնակչության մեծ մասը արտագաղթել էր կամ ոչնչացվել, նրանք բերդի հարավային կողմում կառուցեցին բնակարաններ, փուռ, սրճարան՝ հիմնադրելով նոր Ախալքալաքը: Ենորհիվ Կարսից եկած գաղթականների, Շիրակի փոքրիկ Գյումրի գյուղը ևս 19-րդ դարի երկրորդ կեսին վերածվեց նշանավոր առևտրաարհեստավորական քաղաքի:

Արևմտահայ գյուղացիների ջանքերով շենացան Անդրկովկասի և Արևելյան Հայաստանի հարյուրավոր գյուղեր³: Մշակվեցին ամայի և անմշակ դարձած հողատարածություններ,

¹ Տե՛ս Ղաֆաղարյան Կ., Նյութեր Ախալցխայի հայ համայնքի պատմության վերաբերյալ, ՊՔԷ, 1967, № 1, էջ 128:

² Տե՛ս Մատենադարան, Հ. Աբրահամյանի արխ., թղթ. 99, վ. 41, թ. 1—2:

³ Միայն Ախալքալաքի գավառում գաղթականները վերաշինեցին կամ հիմնադրեցին մոտ 50 գյուղ (Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, էջ 110):

կառուցվեցին շրանցքներ, տնկվեցին այգիներ ու պարտեզներ:

Այսպիսով արևմտահայերի զանգվածային այս գաղթը խոշոր նշանակություն ունեցավ Արևելյան Հայաստանի և Անդրբլուզիայի ալլ շրջանների տնտեսության զարգացման համար: Անցնելով ցարական Ռուսաստանի տիրապետության տակ՝ արևմտահայերը շաղատագրվեցին սոցիալական և ազգային հարստահարությունից: Ազգությունների բանտ հանդիսացող հրկիրը նրանց համար չէր կարող դառնալ ազատության վայր, այն դեպքում, երբ ինքը՝ ռուս ժողովուրդն ապրում էր սոցիալական դաժան շահագործման և քաղաքական ռեակցիայի պայմաններում: Սակայն Ռուսաստանում հայ գաղթականները ազատվում էին ֆիզիկական ունշացման վտանգից և ազգային ու սոցիալական ճնշման ամենաբիրտ ու վայրենի եղանակներից, ձեռք բերում անձի, գույքի համեմատական ապահովություն, հաղորդակից դառնում տնտեսապես և մշակութային կյանքով անհամեմատ բարձր կանգնած ժողովրդի հետ:

ՎԵՐՋԱԲԱՆ

Նվաճված բազմաթիվ երկրների օրինակով, 16-րդ դարի առաջին կեսին օսմանյան թուրքերը Արևմտյան Հայաստանում ևս կարողացան վերջնականապես հաստատել նոր վարչակարգեր: Ստեղծվեցին մեծ ու փոքր վարչամիավորներ՝ էյալիթներ (նահանգ), լիվաններ կամ սանջակներ (գավառ), կազաններ (գավառակ) և նահիեներ (գյուղախումբ): Արևմտյան Հայաստանի տարածքում կազմավորված նահանգներից իր տնտեսական և ռազմաքաղաքական նշանակությամբ առանձնացավ էրզրումի նահանգը: Այն 19-րդ դ. սկզբին տրոհվում էր 16 գավառների՝ էրզրում, Դերջան, Բաբերդ, Երզնկա, Կելիթ, Շաբին Կարահիսար, Քըղի, Սպեր, Թորթում, Վերին Բասեն, Ստորին Բասեն, Խնուս, Ալաշկերտ, Դիադին, Խամուր և Բայազետ, այսինքն՝ հիմնականում ընդգրկում էր պատմական Բարձր Հայքը, մի քանի գավառներ Այրարատից, Տայքից, Տուրուբերանից, Աղձնիքից և Փոքր Հայքից:

Դարասկզբին թուրքական պետության ընդհանուր ճգնաժամի պայմաններում վարչական ենթակայությունը հաճախ կրում էր ձևական բնույթ: Առանձին գավառների կառավարիչներ՝ փաշաներ, բյեյեր հրաժարվում էին ընդունել իրենց ենթակայությունը նույնիսկ զորեղ էրզրումի էյալիթի վալիսերասկյարից և օգտվում էին փաստական անկախությունից: Այդպիսի պաշտոնյաներից էր նաև Բայազետի փաշան:

Ուշ միջնադարում տեղի ունեցած էթնիկական տեղաշարժերի հետևանքով էրզրումի գավառները կորցրել էին բնակչության ազգային միատարրությունը և ունեին էթնիկական խալտաբղետ դիմանկար: 19-րդ դ. սկզբին նահանգի գավառները, ըստ այնտեղ ապրող ժողովուրդների թվական փոխհարաբերակցության, բաժանվում էին մի քանի խմբի.

ա) Կենտրոնական և Հյուսիսային գավառներ, որոնք զբւ-

խավորապես ունենին հայ-թուրքական բնակչություն (էրզրում, Բաբերդ, Կելիֆ, Շաբին Կարահիսար, Սպեր, Թորթում, Վերին Բասեն):

բ) Արևմտյան գավառներ, որտեղ հայերից ու թուրքերից բացի բնակվում էին նաև քրդեր (Դերջան, Երզնկա):

գ) Գավառներ, որոնք ձգվում էին նահանգի հարավային երկայնքով և ունեին առավելապես հայ-քրդական բնակչություն (Քղզի, Խնուս, Ալաշկերտ, Խամուր, Դիադին, Բայազետ):

Հայ-թուրքական բնակչություն ունեցող գավառներում, բացառությամբ Կելիֆի և Շաբին Կարահիսարի որոշ նահանգների, հայ բնակչությունը կազմում էր մեծամասնությունը, ինչպես էրզրումի և Բասենի դաշտերում և Բաբերդի գավառում: Սպերի և Թորթումի բնակչության մեջ թուրքերի նկատմամբ հայերի թվական գերազանցությունը լուծվում էր միայն նախորդ դարերում մահմեդականացված հայության մի ստվար մասի հաշվին, որը կրում էր կեսկեսներ անունը և, գտնվելով թրքացման աստիճանում, մի շարք հատկանիշներով դեռ նույնանում էր հարևան քրիստոնյա հայերի հետ: Հայ կեսկեսները, որոնք որոշ գավառներում հայտնի էին նաև հայ-լազեր անունով, իրենց զգացնել էին տալիս էրզրումի գավառի արևմուտքում և նահանգի հյուսիսային գրեթե բոլոր վարչամիավորներում:

Երկրորդ խմբի գավառներից ամենաընդարձակում՝ Երզրնկայում, հայերին բաժին էր ընկնում դաշտավայրային գյուղերի մեծ մասը, որոնք գրեթե առանց բացառության կրում էին հայկական անուններ: Այդ գյուղերի մի մասում, ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, բնակիչները ոչ թե թուրքեր էին, այլ հայ-կեսկեսներ: Ի տարբերություն Երզնկայի դաշտի հայ-կեսկեսների, որոնք պահպանել էին իրենց ազգային դիմագիծը, Կամախի գավառակում մահմեդականացված հայերը շատ քիչ բանով էին հիշեցնում իրենց նախկին ազգային պատկանելությունը: Ուստի, պատահական չէ, որ այս գավառի արևմտյան շրջաններում՝ ի հաշիվ վերջնականապես թրքացած շերտերի, թուրքական տարրը դարձել էր բնակչության մեծամասնությունը: Հետազոտությունները ցույց են տալիս, որ Գուզուջան կամ Բուլումոր գյուղախումբը, որը

գրականության մեջ համարվում էր զուտ քրդաբնակ շրջան, ունեցել է մի շարք հայկական բնակավայրեր: Դերջանի գավառում հայերն ու թուրքերը տեղաբաշխված էին Եփրատ և Դերջան գետերի հովիտներում, իսկ քրդերը, ինչպես և հյուսիսկովկասյան նորեկ լեռնականները՝ կակձոր նահիեում:

Երրորդ՝ հարավային խմբի գավառները (բացառությամբ Քղզիի) քրդական դերբեխությունների տարածքում գտնվելու պատճառով, անհամեմատ հեռու էին մնացել թուրքական ծագում ունեցող էթնիկական տարրերով բնակեցվելու կառավարական «միջոցառումներից»: Մյուս գավառներում, որպես կանոն, վարչական ապարատը ներկայացնող թուրք պաշտոնյաներին այստեղ փոխարինում էին քուրդ ցեղապետերը: Բացի այն, որ այս գավառներում թուրքեր գրեթե չկային, քրդերը, որոնք զենքի ուժով իրենց ձեռքում էին պահում փաստական իշխանությունը, նույնպես սակավաթիվ էին: Նրանք այդ շրջաններում հայտնվում էին գարնանը՝ իրենց անասունները լեռնային մարգագետիններում արածեցնելու նպատակով, իսկ ձմռանը հեռանում էին հարավ կամ Պարսկաստան: Պատահական չէ, որ ամբողջ Բայազետի լիվա-փաշայությունում մշտական քուրդ բնակիչների թիվը չէր անցնում 300—400 ընտանիքից: Ուստի, վերոհիշյալ խմբի գավառները ոչ միայն էրզրումի նահանգի, այլև ամբողջ Արևմտյան Հայաստանի ամենահավաք և հայաշատ շրջաններից էին:

Ազգային ու կրոնական ճնշման, տնտեսական հարկադրանքի, օտար էթնիկական խմբերի մշտական տեղաշարժերի պայմաններում, հայ բնակչությունը երկու եղանակով էր լուծում իր ինքնապահպանման խնդիրը.

ա) ակտիվ միջոցներով, երբ զենքը ձեռքին դիմակայում էր թուրքական իշխանությունների և նրանց թողտվությունից օգտվող նորեկ թուրքերի և քրդական ավազակային ջոկատների մշտական ոտնձգություններին (Գուզուջանի նահիե, Խնուսի, Վերին Բասենի, Բայազետի, Դիադինի, Ալաշկերտի և այլ գավառներ),

բ) պասիվ, երբ թողնում էր իր բնակատեղիները և արտագաղթում տարբեր երկրներ: Նման պայմաններում հայությունը շարունակում էր մնալ երկրամասի բնակչության մեծամասնություն:

Հետազոտութիւնները բերում են այն համոզման, որ դարակգրին (մինչև 1807—1809 թթ.) ստեղծված համեմատաբար խաղաղ ժամանակաշրջանում, ուսումնասիրված նահանգում ոչ լրիվ տվյալներով հաշվվում էր քրիստոնյա և հայկեկեսնների հայանուն մոտ հազար բնակավայր՝ 400 հազ. բնակչութամբ: Ըստ առանձին գավառների, այդ ժամանակ պատկերը հետևյալն էր.

Աղյուսակ 4

| № | Գավառի անվանումը | Հայ բնակչության թիվը |
|----------|------------------|----------------------|
| 1. | Էրզրում | 67960 |
| 2. | Դերջան | 32920 |
| 3. | Բարեբրդ | 30960 |
| 4. | Նորաբակ | 44760 |
| 5. | Կելկիթ | 2480 |
| 6. | Շարին Կարահիտաբ | 16280 |
| 7. | Քըզի | 25440 |
| 8. | Սպեր | 28300 |
| 9. | Թորթում | 16960 |
| 10. | Վերին Բասեն | 25090 |
| 11. | Ստորին Բասեն | 10040 |
| 12. | Խնուս | 20960 |
| 13. | Ալաշկերտ | 28160 |
| 14. | Խամուր | 7360 |
| 15. | Դիարի | 11520 |
| 16. | Բայազետ | 30360 |
| Ընդամենը | | 400990 |

Նախորդ դարերում քաղաքական լծակների ազդեցությամբ բնակչության բնականոն աճի արգելակման, էթնիկական դիմահեղման երևույթները կրկնվեցին նաև 19-րդ դարի առաջին քառորդին: 1806—1814 թթ. քրդական միջցեղային բախումների, կառավարական զորքերի և քրդական ապստամբական ջոկատների միջև արյունալի կռիվների, Տրապիզոնի նահանգից լազերի մշտական հարձակումների և հատկապես 1820—1823 թթ. պարսկա-թուրքական պատերազմի ընթացքում, ազգաբնակչության բռնագաղթի, կոտորածի հետևանքով նկա-

տելիորեն նվազեց հայ բնակչության թիվը: Միայն Բայազետի լիվա-փաշայութիւնում, 1828 թ. դարակգրի համեմատությամբ, այն կրճատվեց կեսի շահով:

1828—1829 թթ. ռուս-թուրքական պատերազմը թուրքական լծից ազատագրվելու հույսեր առաջացրեց արևմտահայության շրջանում, որի մասնակցությամբ ռուսական զորքերը գրավեցին Արևմտյան Հայաստանի, այդ թվում՝ Էրզրումի նահանգի կենտրոնական և արևելյան մի շարք գավառներ: Սակայն եվրոպական խոշոր տերութիւնների ճնշման տակ 1829 թ. սեպտեմբերին Թուրքիայի հետ Ռուսաստանի կնքած հաշտության պայմանագրով նվաճված շրջանները թուրքերին թողնելու լուրը մեծ հուսահատություն առաջացրեց հայության շրջանում: Չկամենալով մնալ թուրքական տիրապետության տակ՝ մոտ 75 հազար արևմտահայեր նախընտրեցին արտագաղթը և հաստատվեցին Անդրկովկասից Ռուսաստանին անցած մարզերում: Թեև 1829—1830 թթ. արևմտահայ գաղթականների հիմնական մասը (մոտավ. 9,6 հազ. ընտանիք) բաժին էր բնկնում Էրզրումի նահանգին, այն կրկին մնում էր Արևմտյան Հայաստանի ամենահոծ հայաբնակ վարչամիավորներից մեկը:

1828—1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքում և նրանից հետո, թուրքահպատակ ժողովուրդների, առաջին հերթին՝ հայերի աչքում ավելի աճեց «ազատարարի» դերը ստանձնած Ռուսաստանի հեղինակությունը: Պատահական չէ, որ ամբողջ 19-րդ դարի ընթացքում և 20-րդ դարի սկզբներին նորանոր հայ գաղթականներ, վտանգելով իրենց կյանքը, կրելով մեծ դժվարություններ, հեռացան դեպի Ռուսաստան: Նրանց բնակատեղիների մի մասը բնկավ թուրք և քուրդ նաբաբների ձեռքը, իսկ մյուս մասը բնակեցվեց արևմտյան շրջաններից եկած հայ գյուղացիներով, երևույթներ, որոնք դարձան Արևմտյան Հայաստանի էթնիկական տեղաշարժերի գլխավոր ուղղությունը մինչև 1915 թ. ցեղասպանությունը:

ՀԱՎԵԼՎԱԾ

ԷՐՋՐՈՒՄԻ ՆԱՀԱՆԳԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ

1. Էրզրումի (Կարինի) գավառ¹

Էրզրում (վարչ. կենտրոն), Ալաջա, Աղավեր, Աղորեն, Աղտաղտ, Ամբաղուկ, Աշխալա, Ապրհնտի, Առնբար, Արծաթի, Արշունի, Բազնի (միավորված յոթ գյուղեր են), Բազկառիճ, Բենիկ (Բինկա), Բերձոր, Բլուր, Բրունակապան, Բրդոնք, Գառվոր, Գարակյուպեկ (Խառակյուպեկ, Ղարակյուպեկ), Գարապատ, Գեղախոռ, Գմբեթ (Կյումպեթ), Գոմեր, Գոմք, Գրիչք, Դավթա, Դինարիգոմ, Դվնիկ, Դերեգճուկ (Թավրիգճուկ), Երկան Մասուր (Երկան Մանսուր), Երկնիստ, Զերեվանք (Միրանավանք), Զերտիկե, Էսեվանք, Էվրենլի, Ըղտաձոր, Թազա գեղ (Նոր գյուղ), Թասաձոր, Թարգունի, Թափա գյուղ (Թեփե գյուղ), Թեքե դերեսի (Թեքահոյիստ), Թիթիկիր (Դրիկիր), Թոսիկ, Թորղան, Թոփալ-Չավուչ, Թվանչ, Թուզճի (Տուսճի), Իլիջա (Ջերմուկ), Լիճ, Խանակե, Խաչերենց, Խաչկավանք, Խառապեկ (Խառապեխ), Մաղկի, Մղկանց (Մաղկանց), Մվանց, Կամպիր, Կան, Կարահասան (Ղարահասան), Կարարդ (Կար Արծն, Ղարարդ), Կենեփե (Կանեփ), Կես (Կեզ, Կերզ), Կրզըլ-քիլիսա, Կիրակոսակ, Կյուլեորեն, Կյունկեորմեզ, Կտավերանք, Կրճնկոց, Հայտարի, Հասան Մանսուր, Հինծիկ, Հինձք, Զիթահանք, Զիթահանք, Ղալափա (Կալափա), Ղուշլի (Խուշլի), Մեկ Մանսուր, Մեծ Գաղտառիճ, Մճրոնք (Մճրոնք), Մյորդուլուկ, Մյուլք, Մուխանտա, Մուտուրկու, Յաղճուկ, Յարբաջա, Յոզքեկ, Յոնջալի, Նարդիվան, Նորշեն (Նորաշեն), Շակալ, Շահ Մանսուր, Շիփեկ (Շեփեկ), Շիւնոց, Շողիկ, Շոշիկ (Շաշեն), Չըրըրի, Զիֆթիկ, Պատիշեն, Պալեն բերդիկ (Գալլմբերդիկ), Զիբազ, Զինիս, Զրմուտ (Զրմուտ), Սարգորան, Սալաձոր, Սարլամի (Սերլամի), Սնկառիճ, Սոգյուտլու, Սոս, Սոլուկ Զերմուկ, Տանձիկ, Տանձուտ, Ումուդում (Բաղնիք), Փոշիկ (Փոշիկ), Փոքր Գաղտառիճ, Քարվոր, Քելեվուտ (Գալլահոյիստ), Քյոշք (Քոշք), Քյոսե-Մեհմատ, Քնկիրի, Օճնի, Օրան Գրիչք, Օրթիգի:

2. Դերջանի գավառ

Դերջան (Մամախաթուն, վարչ. կենտրոն), Աբաղձոր (Աբեղաձոր), Ակ-Դոկան, Աղաղիր, Ապրանք, Աստույի գոմ, Բազառիճ, Բեղրան, Բրիչ, Բուլք, Բուն, Գառնբերդակ, Գյոքղաղ, Գոմձոր, Գոնկա, Դավո, Դվնիկ, Էրեկ

¹ Մի քանի ծուխ հայ բնակիչ ունեցող Աղա Խաչըխը Բերենը և Այնալը կալա, ինչպես և մի քանի այլ գյուղեր շեն մտցված էրզրումի գավառի հայաբնակ գյուղերի ցանկի մեջ:

(Ագարակ), Էսպիվերիկ, Թառու, Թոխլան, Խաչ, Խաչիկ, Խաչողներ Արշին (Վերին), Խոչողներ Երկրորդ (Ներքին), Խառիխ, Խնձորի, Խումլ, Մաղկարի, Կարազուլակ (Ղարալուլախ), Կոնչա, Կոտուր (Կոթեր), Հյաշեն (Աուշեն), Հերանի, Հերանի մյուս, Հողակ, Ղաշախ, Ղարաբազ, Ղարահունեհեններ, Ղարուղլ (Կուրուղլ), Մանթարա, Մանց, Մեղուս, Միտուն, Մոս, Մոտույի Գոմ, Նորշեն, Չամուղբեր, Չանախի, Չիւնոց, Ռբատ, Սարիղայա, Վարդուկ, Վժան, Քալմզի, Քիսմիձոր, Յախավել:

3. Բաքերդի գավառ

